



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

ԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐ



ԷԴԻՏ ՊՐԻՆՏ
Իրատարաբանություն
EDIT PRINT
Publishing House

Երևան 2012

ՀՏԴ 891.981-3 Նժդեհ
ԳՄԴ 84Ը-4
Ն 661

Հրատարակիչներ՝ Էդիթ Պրինտ,
Մամիկոնէից տարօնականների ուխտ հանրային կառույց

Գարեգին Նժդեհ
Գ 661 Գրական երկեր / Գարեգին Նժդեհ - եր., Էդիթ Պրինտ 2012 թ. 216 էջ:

Կազմեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց Ռաֆայել
Համբարձումեանը, խմբագիր՝ Վահան ծայրագոյն վարդապետ Օհանեան:

Գարեգին Նժդեհի գրական գործերը առաջին անգամ տպագրուել են 2003 թ. ուր զետեղուած էին 1910...1918 թթ. Այսրկովկասի մամուլում նրա հրատարակած չափածոյ ու արձակ քերթուածները, ասոյթները, էպիգրամներ և այլ բնոյթի գործեր: Սոյն հատորեակը, ներառելով նաև Վենետիկի Ս. Ղազար կղզում պահուող նրա աւելի քան քառասուն նարայայտ քերթուածները, դառնում է Գարեգին Նժդեհի 1903...1919 թթ. զուտ գրական ժառանգութեան ամենաամբողջական ժողովածուն: Ժողովածոյի մէջ, որպէս Գ. Նժդեհի պատկերաւոր անզուգահէօր մտածողութեան նմուշներ, զետեղել ենք նաև նրա մօտ 450 ասոյթ և մտամատուց, որոնք քաղուած են հայ գրականութիւնն ու լեզուամշակոյթը զօրաւորող նրա տարբեր գրուածքներից:


ՀՏԴ 891.981-3 Նժդեհ
ԳՄԴ 84Ը-4

Մամիկոնէից տարօնականների ուխտ հանրային կառույց
Էդիթ Պրինտ

Հրատարակութեան ծախսերը հոգացել են՝ «Էդիթ Պրինտ»-ը,
հանրային գործիչ, բժիշկ Սերժ Մկրտչեանը,
պարսկահայ բարեգործ Վարուժան Կիրեղեանը

ISBN 978-9939-52-623-2

© Էդիթ Պրինտ, 2012



Մուտք

Նժդեհը (Գարեգին Տեր-Յարութիւնեան) ծնունդ է 1886 թ. հին փոմարով յունարի 20-ին, այսօր գործող փոմարով՝ փեպրուարի 1-ին, Նախիջեանի գաւառի Կզնուփ գիւղի Ս. Աստուածածին եկեղեցու քահանայ Եղիշ Տեր-Յարութիւնեանի ընտանիքում, որի հայր Սահակը փրացու էր, մահացել է 1955 թ. դեկտեմբերի 21-ին Ռուսաստանի Վլադիմիրի բանփոմ: Նժդեհէնց ցեղը, որին կզնուփցիները «Գուլջէնք» էին անուանում, 1829-1830 թթ. գաղթել է Պարսկահայքի Սարմաստ գաւառի Ղզըլջայ (Կիզիլձայ) գիւղից:

Հիմնուելով Առոյի ՆԺԴԵՀ աշխատութեան վրայ, Գ. Նժդեհի բոլոր կենսագրականներում նրա ծննդեան օրը նշուած է յունարի 1-ը: Ճշգրտմը կատարում են՝ հիմնուելով 1916 թ Գարեգին Նժդեհի ձեռնամբ լրացուած և զօրավար Սմբատի ստորագրութեամբ հաստատուած՝ Նժդեհի «ժառանգական ցոցակ»-ի վրայ (Պատմաբանասիրական հանդէս, Երեւան, 2001թ., թիւ 1): Բանի որ Ռուսաստանը նոր փոմարին անցաւ միայն 1918 թ. յունարի 1-ին, ոստի մինչեւ 1918 թ. այդ երկրում ծնուածների համար ամսաթիւը նշում էր հին փոմարով, իսկ 1918 թ. յունարի 1-ից յետոյ՝ հին փոմարով նշուած թուին անկացում էր 13 օր, որպէսզի հաշուարբը ճիշտ լինի: Գ. Նժդեհը ծնունդ է 1886 թ. յունարի 20-ին, իսկ 1800 թ. մարտի 1-ից մինչեւ 1900 թ. փեպրուարի 28-ը կատարուած իրադարձութիւնների փարբերութիւնը ոչ թէ 13 օր է, այլ 12 օր (Բաղայեան Հ., Օրացոյցի պատմութիւն, Երեւան, 1970 թ., էջ 168): Ըստ այդմ՝ արդի փոմարով նրա ծննդեան օրը դառնում է յունարի 20-ին գումարած 12, այն է՝ փեպրուարի մէկ (1886 թ. յունարը ունէր 31 օր, եթէ յունարի 20-ին գումարում է 12 օր, դառնում է փեպրուարի 1):

Գարեգին Նժդեհի կենսագիրների ուշադրութիւնից մինչեւ 2002 թ. դուրս էին մնացել 1910-1919 թթ. Այսրկովկասի հայկական պարբերական մամուլում («Ընկեր», «Խաթարալա», «Հորիզոն», «Պատրանի» (Թիֆլիս), «Արեգ» (Բաքու), «Աշխատանք», «Զանգ» (Երեւան), «Ժայռ» (Ալեքսանդրապոլ, այժմ՝ Գիւմրի) և այլ թերթերում տպագրուած նրա գրական գործերը, որոնց մի նշանակալի մասը առանձին գրքոյկով առաջին անգամ հրատարակուել են 2003 թ. (Գարեգին Նժդեհ, Գրական երկեր, կազմող՝ Բախարար Յովակիմեան, խմբագիր՝ Ռ. Համբարձումեան, Երեւան, 2003 թ., 96 էջ): Գրքում զեպրեղուած էին Այսրկովկասի 1910-1919 թթ. մամուլում Գարեգին Նժդեհի հրատարակած չափածոյ ու արձակ բանաստեղծութիւնները, ասոյթները, էպիգրամներ և այլ բնոյթի գործեր, ինչպէս նաեւ ՀՀ Եղիշէ Չարեանցի անուան գրականութեան և արուեստի թանգարանում պահուող անտիպ չորս արձակ բանաստեղծութիւնները, որոնք պահուողներից յայտնարեւել էր թատրագէտ Բախարար Յովակիմեանը: Սոյն ժողովածոյին յաւելում են նաեւ

Վենետիկի Ս. Ղազար կղզու վանքում պահուող նրա ատելի քան քառասուն նորայայտ գործերը, որոնց բնագրից գրեթե չպարբերուող լուսապատճենները 2011 թ. սկզբին Մխիթարեան միաբանության անդամ հայր Վահան ծայրագոյն վարդապետ Օհանեանը փրամաղորեց ինձ, որը յանձնեցի ՀՀ պե-
րական դիւանապետու եւ նշուած թանգարան: Սոյն հապորեակը, ներառելով նաեւ Վենետիկի Ս. Ղազար կղզում պահուող նորայայտ գործերը, դառնում է 1903-1919 թթ. Գարեգին Նժդեհի գրած արձակ եւ չափածոյ քերթուածների ամենամաւրոջական ժողովածոն:

Գարեգին Տէր Ծարութիւնեանի Նժդեհ ծածկանունով առաջին սպորա-
գրութիւնը հանդիպում է 1903 թ. գրած իր ուրանաւորներում: «Դարդունի»
գրական ծածկանունը նա առաջին անգամ գործածում է 1907 թուականի յու-
լիսին Սոֆիայից մօրն ու եղբօրը գրած նամակում: «Սիրելի՛ մայր, որքան
նրախ եմ, որ դու ինձ այսքան փոխոր ու փրկում ես ծնել: Ինձ կնքած քահա-
նան շար է սխալուել, որ անոնս «Դարդունի» չի դրել»: 1906 թ. հոկտեմբե-
րի 15-ին Սոֆիայի սպայական ուսումնարանից մօրը եւ Լևոն եղբօրը գրած
նամակում նա յայտնում է. «Շուրով լոյս պիտի տեսնեն իմ քանասպետո-
թիւնները, թոով 70, որոնց մի մասը գրել եմ Սոֆիայի ազապ մթնոլորտում»:
Նշուած շրջանում Գարեգին Նժդեհի գրած արձակ քերթուածներից երկու-
սը պահպանուել են մօրը եւ եղբօրը, ինչպէս նաեւ հարսնացո Նիեմիայի
գրած անթուակիր նամակներում: Քանի որ դրանց բնագրերը դաւաքննչա-
կան մարմինները բռնագրուել էին, դաւրական գործում մնացել են միայն
ոռուերէն թարգմանութիւնները, որոնք 2002 թ. հայերէտի է վերածել Նժդեհի
քրոջ թոռ Արմէն Բաբայեանը՝ հեղինակի ոճին բաւական մօր: Այսպիսի
սի մամուլում Գարեգին Նժդեհի՝ Գ. Դ., Գ., Գար. Դարդունի, Գ. եւ Գար.
Նժդեհ սպորագրութիւններով փայագրուած չափածոյ եւ արձակ քանասպետ-
ոթութիւնների եւ գրական այլ գործերի ընդհանուր քանակն անցնում է յիսու-
նից: Քանի որ նրա մի քանի արձակ քերթուածները որոշ փոփոխութիւննե-
րով վերափոխուել են, դա թարգմարգէտ Բ. Յովակիմեանին օգնել է պարգելու
նաեւ Գ. Նժդեհի Studiosus (Istudiosus) ծածկանունը (նա այդպէս է սպորագրել
«Խաթաբալայ»ի 1911 թ. համարներում փայագրուած մի քանի արձակ քանաս-
պետութիւններն ու աւոյթները եւ մի էպիգրամը)**:

Գարեգին Նժդեհը չափածոյ եւ արձակ քերթուածներից բացի գրել է նաեւ
ւ ձօներ, մահախօսականներ եւ այլ բնոյթի գործեր: Նրա արձակ քանաս-

* Տե՛ս «Ղախիջեան» շաբաթաթերթ, Երեւան, 2001, թիւ 20, էջ 4: Ռ. Համարածու-
մեան, Գարեգին Նժդեհ, կենսագրական յանելումներ, անփոխ գրութիւններ եւ
խորհրդածութիւններ, Երեւան, 2005 թ., էջ 377:

** Գարեգին Նժդեհ, Գրական երկեր, Երեւան, 2003 թ., փն Բախարար
Յովակիմեանի յառաջաբանը:

պետութիւնները, օրինակ՝ մօրը նսիրած սքանչելի գործը, «Մինիպարի»,
«Հովի սէրը», «Մեռնող սրտի հեքիաթը», «Կամաւոր գոյգը», «Յուզած ծո-
վը», նաեւ ազապամարտի հերոսներին նսիրած վեղծները, անպարակոյս,
հայոց գրականութեան այդ տեսակի ընտիր գործերից են՝ արժանի յապուկ
ուսումնասիրութեան: Նորայայտ ձեռագիր այն գործերը, որոնց մէջ անըն-
թեռնելի բառեր կան, հայր Վահան Օհանեանի օգնութեամբ վերականգնել
եմ ըստ բովանդակութեան, դրել անկիւնաւոր փակագծերի մէջ, իսկ չպար-
գուածները փակագծերում նշել եմ բազմակէտերով: Աննշան միջամպու-
թեամբ պահպանել եմ նրա ոճը, ուղղագրութիւնը, որը երբեմն միապետակ չէ:
Օրինակ՝ այդ ուրանաւորներում Գ. Նժդեհը դժբախտ բառը գրել է դժբաղդ,
ճամփորդը՝ ճամբորդ, օջախը՝ օձաղ, ճամփան՝ ճամբայ, յարծունը՝ յարձուն,
թարթիչը՝ թարթիճ, թրթռալը՝ թոթռալ, դժոխքը՝ դժողք, մահասարսուռը՝
մահասառսուր, յասմիկը՝ յայսմիկ, թնդանօթները՝ թնթանօթներ, քանդելը՝
քանթել, յուշերովը՝ յոյշերով, խոժոռը՝ խոժոր, հոգեվարքը՝ հոգեւարք,
առագաստիկը՝ Արագաստի, զարհուրիքը՝ զարուրիք, խոսպացուածը՝
խօսպացուած, ձողիկը՝ ձողիկ, կրթնածը՝ կրթնած, նշոյլը՝ նշուլ, Աստուածը
եւ նէրը երբեմն գրում է ւ-ով եւ այլն, ինչպէս իր ժամանակ էր ընդունուած:
Ծարմար նկարեցի ուղղագրութիւնը թողնել նոյնը:

Նիւթերը հիմնականում դասաւորել եմ ըստ ժամանակագրական հեր-
թականութեան: Գրքի վերջում գրական գործերի ծանօթագրութիւնների թո-
ւագրումը վերաբերում է իւրաքանչիւր քանասպետութեան հերթական թո-
ւահամարին:

Պէտք է արձանագրուի այն իրողութիւնը, որ Գարեգին Նժդեհի գրաւոր
ամբողջ ժառանգութիւնը, պայտնութիւն եւ իմաստասիրութիւն-զաղափար
լինելոց զապ, հայոց ոսկէդարեան պայտնիների երկերի հանգոյն անվե-
րապահօրէն գեղարուեստական գրականութիւն է նաեւ: Մեր գրականագի-
տութիւնն ու լեզուաբանութիւնը այս բացարձակ չուսումնասիրուած խնդիրը
պէտք է հիմնաւորապէս ուսումնասիրի եւ Գարեգին Նժդեհի գեղարուեստա-
կան սրեղծագործութիւնն ու լեզուամշակոյթը, իբրեւ 20-րդ դ. հայոց լեզուի եւ
գրականութեան եզակի ու աննման երեւոյթ, մութի Հայոց գրականութեան
դասագրքեր: Հարցի հեւրագօտութիւնը թողնելով մասնագէտ-գրականա-
գէտներին, արձանագրեմ մի քանի իրողութիւններ:

ա. Գարեգին Նժդեհի գրաւոր ամբողջ ժառանգութիւնը, լինելով
նրա հանձարի փայլապակումներից մէկը, իր պարկերաւոր մրածո-
ղութեամբ, անկասկած, գեղարուեստական գրականութիւն է: Նրա ամ-
բողջ գրաւոր խօսքը, որպէս գեղարուեստական արժէք եւ մրածողութիւն,
հայոց Ոսկէդարեան փեղեղահաննչ գրականութեան վերածնունդը, վերա-

կանգնումն ու շարունակությունն է 20-րդ դարում:

բ. Ինչպես յայտնի է, հայոց ժողովրդական բանահյուսության եւ գրաւոր քերթութեան առանձնայատկութիւնները ուսումնասիրելու համար գրականագիտութիւնը հայոց գրականութեան միաւորները բաժանում է «սիրոյ մասին», «հայրենիքի մասին», «մայրական սիրոյ մասին», «պանդխտութեան մասին» եւ այլ տեսակների: **Գարեգին Նժդեհի գրաւոր ժառանգութիւնը**, որի հիմնական մասը ժողովրդին ազգային գիտակցութեամբ օժտելու, Հայաստանի պետականութիւնը վերականգնելու, բռնագրաւուած տարածքները ազատագրելու եւ հայրենասիրութեան մասին են, **անկասկած հայ գրականութեան մէջ նոր ուղղութիւն սկզբնաւորող յոյժ եզակի երևոյթ է: Գրական այդ ժառանգութիւնը, իբրև 20-րդ դարի հայոց գրականութեան մի ինքնուրոյն եւ խրայայարուկ տեսակ ուսումնասիրելու համար, նրա իսկ սրեղծած բառով առաջարկում եմ կոչել «հայրենասիրական»:**

գ. Իբրև հայոց գրականութեան մէջ գոյութիւն ունեցող առանձին տեսակ, հայրենասիրական գրականութիւնը պէտք է ունենար եւ, բարեբախտաբար, ունի ներկայացուցիչներ, որոնցից առաջինը Գարեգին Նժդեհի ամենամտերիմ ընկեր եւ զինակից, 20-րդ դարի հայոց իմաստասիրութեան մեծագոյն դէմք Հայկ Ասատրեանն է, որի գրութիւնները նոյնպէս իրենց պատկերաւոր մտածողութեամբ եւ շնչով գեղարուեստական գրականութիւն են: Գարեգին Նժդեհի հիմնադրած գրական ուղղութեանը մօտեցող գործեր կարելի է համարել նաեւ Յովհաննէս Շիրազի մասիւներգութիւնը, Պարոյր Սեւակի «Եռանայն Պարարագ»ից հալոսածներ եւ «Եղիցի յոյս» ժողովածոյի քաղաքական առանձին քերթութիւններ, նաեւ Յակոբ Օշականի, Մուշեղ Իշխանի եւ մի քանի այլ սփիւռքահայ գրողների որոշ գործերը:

դ. Արձանագրեմ նաեւ, որ հայոց նոր ժամանակների պատմութիւնը չի կարող վկայակոչել մէկ ուրիշ մեծութիւն, որի բառերն այդքան բազմաբովանդակ, փարողունակ ու լիցքաւոր լինէին, ինչպէս Գարեգին Նժդեհին: Բերեմ մի քանի օրինակ. նա հայոց ազգային գաղափարաբանութիւնը ամփոփել-խորհրդել է մի քանի բառերի մէջ՝ **Ազգ, Հայրենիք, Տեղակրօնութիւն-Տարօնականութիւն, Հայրենասիրութիւն**: Նրա վերոնշեալ բառերը պարփակում են ամբողջ ժամանակաշրջաններ, փիլիսոփայութիւն, գործնականութիւն ու ծրագիր: Նրա բառերը, ոճերը, պատկերաւոր անզուգահիշ մտածողութիւնը եւ ընդհանրապէս գրաւոր խօսքը վեմամացնում, զօրացնում ու պերճացնում են մեր մայրենին ու անպայման նաեւ՝ հայոց գրականութիւնը: Այբբենական յաջորդականութեամբ բերում եմ Գարեգին Նժդեհի սրեղծած բառերի ոչ լրիւ ցանկը, մօտ հարիւրինսուն բառ, որ 15 տարիների ընթացքում քաղել եմ իր երկերից, նամակներից, յօդուած-

ներից, մարտակոչներից, բանասիրական նամակներից ու այլ գրութիւններից. ահա վարութիւն, ահա վարօր, ամենագիտականութիւն, ամենամիութիւն, ամօթափառ, անագատունակ, անասնահոգի, անապաշխար, անդորրաւէտ, անզիղջ, անկապաշտ, անհայաստան («Տեղակրօնը չի հաշտուիլ անհայաստան կեանքի հետ»), անձնավկայութիւն, անշնչելի, անցեղաճանաչ, աշխարհածուփ, ապագօր, ապառաժահիմն, առհաւութիւն, առօրէպաշտ, աւանդագահ, աստուածագարդ, արիադաւան, արդիւնագօր, բաժանատիրութիւն, բազմադէտ, բնօրէն, բռնամահ, բռնաւորող, գեղատխոր, գողուղի, գրավաստակ, գրչամարտ, գօտելոյժ վիճակ, գերապրել («գերապրեց հայր»), դաւակից, դաւամիտութիւն, դարձնթաց, դիակնացած, դիւանձոութիւն, դիւապետութիւն, դժոխագգի, դղրդագին քայլեր, դրօշատէր, եօթնվէրք, եսաթափ, եսամերժ, երկարօրէն, երկրասող, երջանկատու, զոհալոծար, զօրոյթ, ընկերադաւութիւն, թեւատ, թշուառաբանել, թրքագիրք («ոռակավարների-պարտադրած «դասագրք»ի մլջ, անլի ճիշդը՝ թրքագրքի մէջ ասուած է...»), թրքօրոյշելիզմ, թրելի, ժամանակասպանութիւն, ինքնագօր, ինքնանկարող, ինքնախորթացում, ինքնահսկայացում, իրարակերութիւն, խեղաբարոյ, խորարթուն, խորհողութիւն, կարծայուշ, կիսամտաւորական, կորովաթափ, կրկիսապաշտական, կուսակցաւեր, հակառակայորդոր, հակացեղակրօնութիւն, համագաղութայնացնել, հայրենաքանդութիւն, հայօրէն, հանրապարտադիր, համահայ, հայրենակրօն, հայրենատէր, հայրենատիրութիւն, հայաբարոյ, հայաթշնամի, հաւաքափառ, հարուածախոյս լինել, հացապաշտ, հզօրագօր, հզօրանք, հնարակեղծ, հոգելսզում, հոգեհաշմ, հոգեգիծ, հպարտանք, հրաբերան, ճարտարելու կարողութիւն, ճշմարտագանց, մահամերժ ոգի, մահապատրաստ, մահարուէստ, մանրագործ, մանրօրէն, մշտնջենաւորող, մշտնջենաւոր, մրափողութիւն, յաւերժաշունչ, յաւիտենագիր, յորդեռանդ, նախանձալի (նախանձով լի, Ռ. Հ.), նեղհաւատ, նենգագործ, նիւթակրօն, նուաստախոհ, շինարարել, շնացեղ, ոգեթափ, ոգեսպան, ողջապահիկ, ոճրառատ, չարահամբաւել, չարամեկնել, չարաբուետտ, չէկայաչարչար, պաշտօնապղծութիւն, պայքարունակ, պատկերամարտիկ, պատմաճանաչ, պատրապաշտ, պարասաւաէր, պղծադաւան, պղծաբանել, ջանապաշտ, ստամտաւորական, ստահայրենասիրութիւն, ստրկագրաստային, վայնասող, վայրաբանութիւն, վատահամբաւ, վատահամբաւել, վատականուէր, վեմաբան, վեմախոհ, տառապապաշտ, տարօնականութիւն, տարօնաշունչ, տգիտանք, տկարոգի, ցանցատաթիւ, ցեղադաւ, ցեղադրոշմ, ցեղագագցիկ, ցեղախոյս, ցեղակամ, ցեղակրօն, ցեղակրօնացում, ցեղակնիք, ցեղել, ցեղահաղորդ, ցեղահայիտութիւն, ցեղահանձար, ցեղահոգ, ցեղամարդ, ցեղամերժ, ցեղայնօրէն, ցեղանորոգ, ցեղաճանաչ, ցեղայայտութիւն, ցեղաշարժում, ցեղապահ, ցեղապսակ, ցե-

դաստան, ցեղավար, ցեղել, ցեղիմաստութիւն, ցեղուրաց, ցնորապաշտ, ու-
ժապաշտ, ուղնհարթում, փառագարդէլ, փարոսօրէն, փառատաճար, փա-
ռապսակ, փոխառիկ, փութավճիռ, ուժաստեղծ, քաջայոյս եւ այլն:

1

ԴԺԲԱՂԴ

ազատ ծնեց, ազատ մեծցաւ
սէգ սարերի միակ որդին.
անցան դարեր, բայց նա մոռցաւ,
էն անուշիկ՝ օրեր անգին...
անցան դարեր, անցան տարիք,
սարի որդին յիշեց նախկին
«ազատ ժամեր, ուր էք, եկէք»
ախ էր քաշում խոր վշտագին...:

Ա - Ինչպէս եղաւ, էլ չը գիտեմ
հաւատայ որ հրաշք ասեմ
դարերի Մարդ փոխուեց այնպէս՝
իր կեանքում որ չէր կասեա...
Չէր դիտել վեհ, վեր երկնքի
սիրուն աստղեր արև լուսնի
նոցա ոսկի արծաթ շողեր
մութ ու խաւար սև սև ամպեր.
բարձր անհուն կապոյտ կամար
աստծու տուն էն սք. վայրը...:
ելաւ գնաց անքիծ մտքով
օդ ու ամպի խիտ ծալքերով,

Ասեց՝ «Գնամ աչքով տեսնեմ
ինչ կայ չկայ մըտիկ անեմ»,
հասաւ ասեց. «Լուսին արև
հով ծիածան բարև, բարև,
հով երկնայիններ՝ ամպ աստղեր
եկայ՝ ապրեմ ձեզ հետ ընկեր...»

Ասեց թէ չէ, թնդաց կամար՝
տարերք երկնին ժողվան իրար.

Դժբանք.

Անշարժ ծնող. աչքալու ինչպես
 Այն անտես ինչ որ ասես.
 Անպատի Գուտն ինչպես ինչպես
 Ինչ անպատի ասես անպատի...
 Անպատի Գուտն. անպատի Գուտն.
 Անպատի Գուտն ինչպես անպատի
 Գուտն Գուտն. անպատի Գուտն
 Անպատի Գուտն ինչպես անպատի...

Ա. - Բնական էլ ինչ Գուտն
 Գուտն ինչպես անպատի անպատի
 Գուտն ինչպես անպատի անպատի
 Գուտն ինչպես անպատի անպատի
 Գուտն ինչպես անպատի անպատի
 Գուտն ինչպես անպատի անպատի
 Գուտն ինչպես անպատի անպատի
 Գուտն ինչպես անպատի անպատի
 Գուտն ինչպես անպատի անպատի
 Գուտն ինչպես անպատի անպատի

Դժբանքի բանաստեղծության ձևագրի սկիզբը:

Անշարժ ծնող. աչքալու Գուտն
 Գուտն ինչպես անպատի անպատի.
 Գուտն ինչպես անպատի անպատի
 Գուտն ինչպես անպատի անպատի.
 Գուտն ինչպես անպատի անպատի.
 Գուտն ինչպես անպատի անպատի...

Անշարժ ծնող. աչքալու Գուտն
 Գուտն ինչպես անպատի անպատի.
 Գուտն ինչպես անպատի անպատի.
 Գուտն ինչպես անպատի անպատի.
 Գուտն ինչպես անպատի անպատի.
 Գուտն ինչպես անպատի անպատի.
 Գուտն ինչպես անպատի անպատի.
 Գուտն ինչպես անպատի անպատի.
 Գուտն ինչպես անպատի անպատի.
 Գուտն ինչպես անպատի անպատի...

- Գուտն ինչպես անպատի անպատի
 « Գուտն ինչպես անպատի անպատի.
 « Գուտն ինչպես անպատի անպատի.
 « Գուտն ինչպես անպատի անպատի... »

Անշարժ ծնող. աչքալու Գուտն
 Գուտն ինչպես անպատի անպատի.

Դժբանքի բանաստեղծության ձևագրի երկրորդ էջը:

տիրեց աղմուկ գրոյց ձայներ...
Թէ որոտմունք, փայլ, կայծ, շանթեր...
որ միաբերան միասին
հաւաքեցին խեղճի գլխին՝
«ո՛հ չենք ուզում, դուն չես արժան»
«թող միշտ մնանք քեզնից բաժան»
«դէ՛հ շուտ գնան, շուտ հեռացիր,
էլ այդպէս՝ մի համարձակիր...»:

-Եկաւ դժբաղդ տխրած նստեց.
«Է՛հ ի՛նչ անեմ» իրան ասեց,
«գուցէ երկինք իրա համար,
ունի օրէնք, հաշիւ՝ համար...»:

Բ Անցան օրեր ու շաբաթներ,
անցան ամիս ու տարիներ,

Դժբաղդ ասեց՝ «Սար, ձոր ընկնեմ
գնամ երկրում ի՛նչ կայ տեսնեմ...
խօ երկնքում չէ՛ որ այնտեղ,
կայծ որոտում, շանթ կայ ահեղ...»
ու շտապեց ծովի ափին
ծփում էր ջուր, հետ ալիքին
խաղում էր նաւ, հսկայ նաւեր
լեցուն հազար ու բիւր մարդեր,
որ ամէն էլ զուարթ, ուրախ,
երգում, պարում, ասում անվախ
ու ալիքներ կատղած ծովին
հեզիկ նայում նրանց կամքին...
«միթէ այսքան մարդկանց միջում
ինձ համար էլ տեղ չի լինում...»
մտքով անցաւ ու ձայն տուեց՝
«է՛յ նաւաստիք, խնդրեմ ասեց
թող տուէք ինձ որ ես էլ գամ
ձեր մի ընկեր էլ ես դառնամ...»

- Խեղճ դժբաղդի խօսք բերանն էր
որ ալիքներ, ծով փրփուրներ
կատղեցին ու ծփացին
մինչի հասան վեր ամպերին.
շարան շարան ծովայիններ

Չորս կողմից տուին ձայներ.
«Խնդիրք մ՛ընդիրք այստեղ չկայ
գլուխդ շուտ առ հեռու՛ն գնայ...»
- Կատղած ծովի խոր յուզմունքից
խեղճի լեղին վախից պատռեց,
իսկոյն կծիկ այնպէս դրաւ
որ ուր գնալն էլ չիմացաւ...:

Եկաւ էլի լռիկ նստեց
«Է, ի՛նչ անեմ իրան ասեց.
«գուցէ ծովն էլ իրա համար,
ունի օրէնք, հաշիւ համար...»

Գ Էլի դարեր, էլի ժամանակ
դժբաղդ նստեց անխօս մեռակ,
երկնքից, ծովից յոյս կտրած
նրանց տեսնել աչքը փակած
խորհեց՝ «Գնամ երկիր մտնեմ
գիւղ ու քաղաք շրջեմ տեսնեմ...»
-Մի օր վաղ արև չի ծագել,
գօտիկ փալաս՝ կապել հագել
մի ձեռին ցուպ, պաշար շալկած
ցեխոտ տրեխ ոտքում քաշած՝
«Է՛յ դուռ դրկից մնա՛ք բարեաւ...»
ասեց դժբաղդ ու հեռացաւ...

Սուս ու փուս գլուխը կախ
սրտում պահած միշտ անցած վախ,
կտրեց սարեր, դաշտեր դուրան
մինչ հասաւ մի քաղաքի դրան՝

այդ քանդակէ շքեղ շինած
տեսաւ թէ չէ մնաց ապշած.
երկար դիտեց, վերջ սիրտ արեց
որպէս գեղջուկ գինք ներս քշեց...
Մի փողոց էր որ անցկացաւ
առ ու ծախսի մեյդանը մտաւ
տեսաւ լիք լիք բեռներ ուտեստ,
Մարդիկ տանում բերում համեստ
ոչ մի մարդ չը կէր* տրտում
ասես մի բան հոգս քաշում...:
- Խեղճը ինկաւ աչքի թէ չէ
հասնող եկաւ «Բեռներս էյ
տանես, բերես, միշտ շալակես
Խօսք ու գրոյց լաւ է չ'անես...»:

Բեռ ու բեռներ իրար քամակ
որ դուրեցին խեղճի շալակ
այնքան գնաց, այնքան մնաց,
արհին քրտինք ոտքից չըռաց...:
ինչպէս եղաւ, մի ճար գտաւ
Բեռան տակից մէկ դուրս պրծաւ,

Իսկոյն մտաւ մի հրապարակ
որ շքեղ էր, մեծ ու արծակ,
իսկ մէջտեղում հսկայ արծան
սեպանում էր ժայռի նման՝
ձեռքում առած հրացան, սուր
նա թափում էր սարսափ հուր,
նրա չորս կողմ շղթայ բռնած
Թնդանօթներ լոկկ կանգնած
ամէն մի մարդ անցկենալիս՝
վէն սիրով գլուխ էր տալիս...:
դժբաղդ ընկած ցուպին վրայ
մնջիկ, լուռ դիտում էր, նրա
դէպի երկինք, մեկնած վերև
խայլուն սուր այն, կրակ արև,

թէ ինչ էր դա ինչ հանելուկ
խեղճ դժբաղդին էր նա ծածուկ...:
- Այդ ժամանակ անցնող դարձող
մարդ, կին, երեխայ, կոյր հարբող
նա հրում էր խեղճ ճամբորդին
որ կանգնել էր ճամբի միջին...:

Հէնց նոյն ժամին մարդկանց ծովից
հազար վարդէ մի հոտ բուրեց՝
բուրմունքի հետ երևաց լոյս,
մի աննման՝ գեղուհի կոյս,

Ծամեր գանգուր ու խոպոպիկ
մի հրեշտակ, մի սիրունիկ,
աչքեր, ունքեր հաւսար կլորակ
կասես ինքն էր փայլուն լուսնեակ...:
գմայլուած դժբաղդի աչքին
ինկաւ թէ չէ սէգ գեղուհին...
խորհրդաւոր արծան մոռցաւ
խելքը գլխից էլ հեռացաւ...
սիրոյ ցնորք քաղցր երագներ
պաշարեցին խեղճի մտքեր՝
էլ կուում էր ու կատաղում,
այն անտակ անծայր ծովում
միշտ երգում էր ու նա խօսում.
«ամի գեղուղին, իմս է լինում...»

Լսեց ամբոխ ու կատաղեց
տուն տեղից շտապեց, վազեց.
«ձէնդ կտրի, վատ անախտան,
իսկի դուն չես կոյսին արժան...
ոչ քաղաքին յարմար վայել
և մեզանում գէթ մարդ ընկեր...»
-այո, այո, խոր արծագանք
նոյնպէս տուին ծով ու երկինք,
ու անծանօթ զօրեղ ձեռքեր
յուզուած մարդին բերին վեր՝

* Չկար:

էն պայլուկ կոկոն՝ Կարմիր վարդ
որ իմ կողքին չի թփռում, ծաղկում
քնքոյշ էջերի՝ կեանքի գարդ
երբ չի ստանում սիրոյ աճում

ինձ համար նա հոտ չի բուրում,
ոչ մի համբոյր՝ քաղցր անուշ,
իմ փրփրադէզ վառ սրտում
նա չի գտնում՝ կեանք, սէր, անուշ...

ոհ այն թերթեր, անմեղ սիրունիկ
խամրում թափում են ձեռէ ձեռ
էն վեհ հոտ բուրում անուշիկ
ցրում ցնդում է՝ օդ ու լեռ...:

*օգոստոս 20 1903 թիս
Նժդեհ*

շրջապատած թուր ու սրով
տարին շքեղ մի փողոցով՝
փողցի կողքին ցրի ինկած
եկեղեցիք, թատրոն, կանգնած,
ելնող մտնող ամէն տեսնող
մարդ, կին, տղայ, աղջիկ դիտող,
ձայն էր տալիս «Դէհ շուտ գնա
որ գլուխդ՝ ողջ քեզ մնայ...»:

խեղձի ցուպը ոչինչ չարեց
հալա գլխին բալա՞ բերեց,
մի քանի վերք, քանի տեղով
նա ստացաւ սուր ու թուրով,
ծեծած, ջարդուկ ու վիրատր,
ճամբու դրին խեղձ ուղևորը...:

- Վրէժխնդիր՝ ոխը սրտին
գնանց անվախ սարի որդին
«ո՛ր օրէնք չէ, այլ բռնութիւն»:

** Փորձանք (բացատրութիւնը՝ Գ. Նժդեհի):*

միակ ներկայ սբ. սրբութիւն...»:

Գ - Ամպ ու զամպ պատել է երկրին
ոչ արևիկ կայ, ոչ էլ լուսին,
չի փշում զեփիւն՝ մեղմ զով հովիկ
կայ կայծ, որոտում, կայ փոթորիկ,

Սար, ձոր, դաշտեր չորացել ցամքել
երևում է գիւղ՝ քաղաք անտառներ
բռնած կրակ, բոց, ծուխ, անդադար
չունի մի վերջ կամ մի օր դադար...:

Սև սարալանջի մօտ եզերքում
հազար ու մի փլատակներում
կանգնում է դէռ մի խրճիթիկ նեղ՝
խեղձուկ դժբաղդի միակ տուն տեղ...:

Նա ընկել էր օձաղի կշտին
շուրջ առած պառուին, ծերուկին
ախ ու վախ քաշում, միշտ տքտքում
գլխին եկած նրանցն էր պատմում:

Նա պատմում էր երկնքից ծովից
թէ երկրից, գիւղ ու քաղաքից,
պատմում էր՝ մի հսկայ արձանից
մի աննման գեղուիկ կոյսից...:

Ասում էր ու խիստ վրէժխնդիր
որ այնքան մարդեր տուին վերքեր
և ոչ մէկը չը թողեց նրան
խաղաղ հանգիստ ապրի ինք - իրան:

Նա ասում էր. աշխարհ էք տեսել
էն ո՞ր աստուած՝ ասել է խօսել
«թէ պէտք է մնալ միշտ խեղձ, գերի,
լինել գրաստ, ամէն օտարի...»:

էլ մարդ չմնաց երկրումը,

ոչ ծովերում, ոչ էլ երկնքում՝
որ դիմեցի, ասացի խնդրեմ
թողէք ինձ էլ ձեզ հետ ապրեմ:

Փոխան խնդիրքիս թուք, մուր առի,
այնքան էլ վերքեր սուր ու թուրի
որ ոչ մի տեղս սաղ չի մնաց
խեղձուկ վիճակս դէպ վատ գնաց...:

-Վատ կը գնամ, ասին ծերունիք
հին հին դարերից՝ խօսող պատմիչք,
վայ կը լինի խնդրողին վիճակ
թէ անպատիւ ամէն ժամանակ...:

Չի եղել երբէք, որ աշխարհում
թէ ծովերում, կամ վեր երկնքում,
խնդիրքներով գէթ մի անգամ տան
մարդի ուզած կամ աղերսած բան...:

Ո՛ր է իրաւունք, դու՛ն չես գտնում
երբ մի ոյժ չունես քո ձեռքումը,
դա օրէնք է, աշխարհի օրէնք
եթէ չը գիտես՝ կը մնաս հէք...:

Էն հսկայ արձան դու ասացիր,
մի հերոս է է՛ն քաղաքին տէր
որ բազուկներով, իր սուր թրով
առեց նրան, տէր դարձաւ ոյժով...:

Իսկ աննման կոյսիկ գեղուհին
էն հրեշտակիկ, էն նազելին,
շէն աշխարհի էն խօրտու լուսին
նա արժան է կտրիճ հերոսին...:

Արշալոյս էր, սև սարի դռշին
մուրճի հարած լուեց ուժգին,
նրա կրծքից, գլորեց դէպ ցած
մի սև ու կոշտ մի կարծր զանգւած:

Սարի կողքին պլպլաց կրակ,
ամպի տակից պլպլաց լուսնեակ,
կրակի միջից շարժեց հուժկու
մի փայլուն, մի հրեղէն լեզու...:

Հսկայ տղամարդ նորան գրկեց
անվերջ համբոյր վրէն դրոշմեց՝
եկ փրկարար, ո՛ր իմ միակ յոյս
դէհ բացւէք ամպեր, թող փայլի լոյս...:

-Շողաց արև ու ցոլաց ընկաւ
հպարտ սարից դէպի ներքև,
շողի հետ անվեհեր անյողողող
սարից իջաւ՝ կտրիճ տղամարդ:

Թնդաց երկիր, թունդ իրարանցում
ընկաւ լեռ, դաշտ, թէ գիւղ քաղաքում
թնդաց երկինք, ծով ու ովկեան
հետաքրքիր դիտեցին տեսան...:

Քանդակագարդ քաղքի դրան
պահապաններ ուշաթափ ինկան
գետնի վրայ՝ շարժեց լարձուն
կարմիր հեղուկ – թնամու արին:

Դողաց երկիր, դող իրարանցում
ինկաւ քաղաք, թէ ծով երկնքում,
որ անվեհեր հսկայ տղամարդ՝
կռիւ էր մղում անվախ, անվհատ:

Անչափ արին՝ թափեց անդադար
տուն, շէնք, ապարանք, այրեց հաւասար,
հոյակապ քաղաք դարձուց ատեր,
կարմիր ներկուեցին ամբողջ գետեր:

Էլ ազատ մտաւ հրապարակ

ամէն մի մարդ խոնարհուեց արագ,
լուռ խոր գլուխ և կախեց արծան
այն ամեհի երկաթէ հսկան:

Շտապեց ամբոխ - «Կեցցէ հերոս,
արժան է քեզ մեր գեղուհի կոյս,
այն նազելի քնքոյշ սևահեր,
ծով, ցամաքի երկնային դասեր...»:

Բացուեց երկինք, ծով, ջուր, ցամաք
ու փայլեցին՝ լուսին արեգակ,
թնդաց աշխարհ, մի աստղիկ ցոլաց
վեր եթերքից նա այսպէս ասաց.

«գնամ ապրէ՛ր կտրիճ հերոս
Քեզի վայել՝ գեղուհի կոյս
էն աննման սար, ձոր ու դաշտեր
որին ընդմիշտ, դու կը ցանկայիր...»:

Անցան դարեր, անցան տարիք,
սարի որդին յիշեց նախկին
«ազատ ժամեր, ո՛ր էք, եկէ՛ք»
ախ էր քաշում խոր վշտագին...:

Նժդեհ
5 օգոստոս, 1903 թիս

ՄԻՐՏՍ ԵՐԳՈՒՄ Է ԱՅՍՊԷՍ

Թողէք ինձ, ինչպէս շերամն է հիւսում իր բոժոժը, ինքս պատ-
րաստեմ իմ գերեզմանը:

Եթէ իմ երգը ձեզ դուր չի գալիս, ասէ՛ք՝ «հեռացիր».

Քեզ համար տեղ չկայ մեզ մօտ:

Կգնամ ես այդ դէպքում թափառելու աշխարհով...

Մարերով ու հովիտներով երգելու իմ վիշտը:

Եթէ այդ ժամանակ էլ տեղ չճարի ինձ ընդարձակ դաշտում...

Կմտնեմ ես իմ գերեզմանը:

Սօփ. 1906 թ. հոկտեմբեր

ԱՅՈ, ՄԵՐ ԱՇԽԱՐՀՆ ԱՅՍՊԻՍԻՆ Է

Ուզում ես թռչել, թռչել վեր, անելի վեր, հեռու... Դէպի արևը,
բայց այս անգութ աշխարհը ջարդում է թևերդ ու ձեռքերդ և
ստիպում սողալ.

Ուզում ես ազատ լինես, Աստուծոյ ստեղծած աշխարհին նա-
յես ազատ, բայց այդ անսիրտ աշխարհը* քեզ վրայ ծանր լուծ է
դնում, վերածում է ստրուկի և ստիպում է սողալ...

Ա՛խ, այդ անասուած ու անգութ աշխարհը,

Ա՛խ, ես կուզենայի որևէ մեկն ինձ ասէր...

«Բայց մի՛ մոռացիր, որ այս աշխարհն օրերից մի օր պիտի
մեռնի»:

Ա՛խ, եթէ ես ունենայի այնպիսի ձեռքեր, որպէսզի ինքս կարո-
ղանայի բացել կամ փակել Արևի երեսը, ես Արևից լոյսն ու ջեր-
մութիւնը կվերցնէի, որպէսզի այդ «աշխարհը» մեռնէր խաւարի
ու ցրտի մէջ:

Սօփ. 1911 թ.

ԻՄ ԵՐԳԸ

Լեռները... Ես սիրում եմ այդ անմահ իգիթներին, որոնց բարձր ու բաց ճակատներն ամէն օր կարմիր արշալոյսն է ոսկեգօծում, տխուր վերջալոյսը համբուրում...

Ես սիրում եմ այդ անյաղթ տիտաններին, որոնք գրանիտ կրծքերը կեանքի փոթորիկներին դէմ տուած լուռ ու արհամարհօրէն մեր աշխարհին կնայեն...

Ես սիրում եմ լեռները՝ Ազատութեան այդ սրբազան գահերը, և ամէն օր մեռնող արևի վերջին ճառագայթների հետ ես թողնում եմ բանդը, ցաւի ու տառապանքի աշխարհը և մտքերով տեղափոխում եմ նրանց բաշերին...

Գնում եմ ազատասէր արծւի պէս նրանց ազատ կատարներին թառելու... Գնում եմ երազելու... Գնում եմ պլալան աստղերի միստիկ երգը լսելու...

Գիշեր է... Լեռան կատարէն՝ գրանիտ գահիս բարձունքէն ատելութեամբ ու ցասկոտ կնայեմ այն սև աշխարհին, որը դարեր շարունակ խունկ է ծխել՝ պաշտել անարդարութեան, բռնութեան... Անհաւասարութեան անսուրբ աստուածներին...

Աշխարհը... Ո՛հ, այդ նամարդ մայրը, որի լի ստինքները միայն կարող հզօրները կծծեն, որի առասպելական կարողութիւնները միայն երջանիկները կվայելեն...

Աշխարհը, ուր մերկն ու սովածը, անտէրն ու անճարը... ուր ճակատագրի խորթ ու գրկուած որդիները տեղ չունեն, փայ չունեն...

Հոգիս կապստամբէ, մտքերս կըմբոստանան այդ մարդակեր աշխարհի դէմ... Այն աշխարհի, որը հազարամեակների տարածութեան վրայ հալածել է, նահատակել... խաչել սիրոյ, արդարութեան ու ազատութեան վսեմ իդեալի քարոզիչներին...

Ես կարմիր վրէժով բռնուած, գահիս բարձունքէն՝ լեռան կատարէն կուզեմ հարայ տալ, կանչել ու ասել.

- Էյ գիտի նամարդ աշխարհ, որդիներիցդ մէկը կուլայ, կտողայ, որովհետև միւսը չափից դուրս կուրախանայ: Մէկն իր օրը սևով ու ցաւով կանցկացնէ, որովհետև միւսը ոսկէ անօթներից կուտէ... կխմէ... որովհետև միւսը չափից դուրս կշռայլէ... Եւ դու կտեսնես այդ ճչացող անարդարութիւնը, այո՛, կտեսնես ու

կլռես... անօթ քեզ:

Գիշեր է... Լուսինը սև հագած իր թևերի տակն է առել ծովն ու ցամաքը...

Այդ լուռ ու տխուր ժամին հոգիս աստղերի անխօս երգը կլսէ, խորհրդաւոր լուսութեան հետ կգրուցէ...

Քնել է և բախտաւորն ու անբախտը... մոռացել է և ցաւը և ուրախութիւնը... Ա՛խ, քնէք աշխատութեան, թշուառութեան տանջուած որդիներ, քնէք ցաւից հիւծուած, քաղցից մաշուած, սև կարիքի ճիրաններում հեծող ու լացող նահատակներ...

Քնէք բոլորդ, որոնց ջախջախել է կեանքը, խաբել բախտը, որոնց օրը սևով է սկսում, Գողգոթայով վերջանում...

Ա՛խ, քնէք, որ մի վայրկեան ձեր դարդերն էլ մոռացւեն...

Ես սիրում եմ խաւարը, անհունօրէն սիրում գիշերը, որը գթաշատ մօր նման իր թևերի տակն է առնում, իր սրտին սեղմում, իր կրծքի վրայ տեղ տալիս, հանգիստ տալիս կեանքի անողորմ կռում ընկած վիրաւորներին ու յաղթածներին...

Ա՛խ, իշխէ, իշխէ սրբազան խաւար... երկարիր գիշեր...

Բայց, աւանդ, խաւարը թուլանում է, մօտ է արշալոյսը... Շուտով նորածին արևի անդրանիկ ճառագայթները թշնամու նման ներս կթափուեն մեր աշխարհը և յաղթած խաւարը փախուստի կդիմէ...

Կբացի լոյսը, կզարթնի կեանքը... Դարձեալ մի տեղ հարուստի կուշտ ծիծաղ, միւս տեղն աղքատի սոված լաց... Մի տեղ սև սուգ, միւս տեղն ուրախութիւն...

Դարձեալ անհաւասարութիւն, դարձեալ անարդարութիւն...

1910 թ.

ԳԻՒՂՆ Է ՁԵՁ ԿԱՆՉՈՒՄ

Գիւղը՝ ցաւի ու տառապանքի էն աշխարհը, որի յաւերժական հիւրն է բռնակալ կարիքը, աղքատութիւնը, դառնութիւնը... որի նահատակ որդու կեանքը անվերջ մարտիրոսութիւն է, անծայր Գողգոթա...

Էն սար դարդի, էն ծով ցաւի տէր գիւղն է ձեզ կանչում...

Գիւղը՝ երկնքի ու երկրի կողմից մոռացած էն աշխարհը, որի արիւն-քրտինքով ձեռք բերած մի կտոր հացը անխիղճ աղան է տանում, անհոգի վաշխառուն խլում... որի որդին իրաւագուրկ ստրուկ է օրօրոցից մինչև գերեզման...

Հօր կուակների լծի տակ հեծող ու լացող էն գիւղն է ձեզ կանչում...

Գիւղը՝ մաճ ու մաճկալների էն վերան աշխարհը, որի բազմաչարչար որդին «քար ու քօլ»-ի հետ կկուէ, կքրտնէ, կքրտնէ մէկ էլ, կքրտնէ եօթն անգամ և այսպիսով հողից հաց կքամէ...

Աշխարհը կերակրող, աշխարհը հարստացնող էն քրտնաջան գիւղն է ձեզ կանչում...

Գիւղը՝ բախտի էն խորթ ու անբախտ որդին, որը գերմարդկային աշխատանք կթափէ, քարից-ապառաժից հաց կքամէ, գիշատիչ աղաների կոկորդը կլցնէ, քսակը կհարստացնէ... Իսկ ինքը միշտ սոված, ընտանիքը տկուր, իր կեանքն անյոյս, խրճիթն անլոյս...

Էն վերան ու անգուման գիւղն է ձեզ կանչում...

Գիւղը, հէյ, գիւղը՝ խաւարի ու յետամնացութեան մագիլներում խարխափող էն աշխարհը, որի անբախտ գլխին տգիտութիւնը իր սև դրօշն է պարզել, էն աշխարհը, որ մանուկ սերունդը իր դպրոցական տարիները պատերի տակ է անցկացնում, էն անգիրք, անուսուցիչ, էն անդպրոց գիւղն է ձեզ կանչում...

Ձեզ, այն բոլորին, որոնք գիտեն լուսաւորել, ուսուցանել...

Որոնք գիտեն մի ճար, մի ճանապարհ ցոյց տալ խաւարի ճանկերում խարխափող գիւղին:

Ձեզ, նահատակ գիւղացիութեան անկաշառ ու ինտելիգէնտ բարեկամներին, խաւար ու յետամնաց գիւղն է կանչում...

Գիւղը...

ՄԻՆԻԱՏՈՒՐ

Մայիսեան հրաշագեղ առաւօտներից մէկն էր, երբ տիեզերքի Արարիչը մօտեցաւ երկնքի դռներին՝ նորագարթ երկրի աղօթքը լսելու...

Գեղեցիկ էր այդ օրը, գեղեցիկ կոյսի կոկոն կրծքի նման, կոյսի առաջին սիրոյ նման...

Գեղեցիկ էր այդ օրը, անհուն գեղեցիկ...

Բնութեան հրաշագեղ տաճարի մէջ երգում էին փետրաւոր երգիչները, բուրում էին, խունկ ծխում ծաղկապատ դաշտերը, աղօթում տիտան լեռները... Եւ քար, և ծաղիկ, և թուփ, և թռչնիկ՝ համայն բնութիւնը պատարագ էր մատուցում, երկնաւոր Արքայի անունն օրհնում...

Եւ բարձրանում էր հիմնը բնութեան կրծքից... Դէպ երկինքը, դէպ երկնքի դռները...

Գեղեցիկ էր այդ օրը, երագօրէն գեղեցիկ...

Աստուած տեսաւ ու սիրեց այդ օրը... Աստուած սիրեց ու ցանկացաւ յաւերժացնել այդ օրը...

Եւ կանչեց նա հրեշտակներին ու այսպէս խօսեց.

- Սիրեցի ես այս օրը և կամենում եմ ստեղծել մի կոյս, որը նման լինի այս օրին... Բերէք, բերէք ինձ մի գոյգ վարդեր՝ կոյսին - այտեր, մի գոյգ աստղեր՝ կոյսին աչքեր, մի գոյգ ամպեր՝ կոյսին յօնքեր... չինարից՝ բոյ, բլբուլից ձայն բերէք կոյսին...

Հրեշտակները կատարեցին Արարչի կամքը:

Այսպէս Աստուած սիրեց ու յաւերժացրեց Մայիսեան հրաշագեղ օրը՝ ստեղծեց Կոյսին:

1911 թ.

ՏԻՈՒՐ ԱԿԿՈՐԴՆԵՐ

Աստղերը, էն վառվռուն աստղերը
Խորհրդօրէն ու տխուր ինչ են փսփսում,
Ո՞ւմ դարդն են լալիս երկնքի աչքերը,
Ո՞ւմ մահն են ողբում անվերջ, անդադրում...

Քամիները, էն ազատ քամիները՝
Խենթ ու լալահառաչ ինչո՞ն են փոթորկում,
Ինձ պէս հալածում են այդ ըմբոստ ոգիները,
Որ հանգիստ չունեն այս սև աշխարհում:

Առանկը, էն առակը քաղցրահնչին
Ինչո՞ն է մորմոքում, ինչո՞ն է լալիս օրնիբուն,
Ա՛խ, նա էլ գիտէ, որ այս ցաւ աշխարհում
Ամէն ինչ մեռնում է, մոռացում...

1911 թ.

ՆՈՒԷՐ ԱՐ - ին

Ջրկէք Սուլթանին անգամ թագից ու գահից, իշխելու իրաւունքից, և նա կհաշտուի իր նոր դրութեան հետ: (Ինչպէս Համիդը, Մահմեդը, Մանուէլը):

Ջրկէք պոետին գրչից ու քնարից, գրելու և երգելու իրաւունքից՝ նա էլ կհաշտուի իր նոր դրութեան հետ ու հեշտութեամբ չարչիութեամբ կգբաղւէ: (Ինչպէս զրկել է իրեն պ. Յով. Թումանեանը):

Բայց փորձեցէք զրկել Արծին լեռների էն ազատ բաշերից և նա՝ ազատութեան ու հպարտութեան էն խենթ սիրահարը յաւէտ կփակէ աչքերը...

1911 թ.

ՉԷ, ՉԷ,...

Չէ, չէ, ես չեմ տայ նրա անունը:
Իսկ եթէ կուզէք իմանալ, թէ որքան աստածային է իմ սիրածը՝ վերցրէք Պրոմէթէյի հպարտութիւնը, Արծւի ազատասիրութիւնը, անլացրէք Իրանի սիրանւէր Լեյլիի սիրտը, և կստացւի Նա՝ երազներիս էն արև թագուհին...

1911 թ.

Ա-Ի ԱԼԲՈՄՈՒՄ

Նախանձնում եմ էն լնո գիշերին,
Պատուհանիդ տակ երգող մեղմ
Ջեփիւռին...

Նախանձնում եմ էն լնո գիշերին
Քունդ, էյ փերի, քունդ պահպանող
անմեղ հրեշտակին...

Նախանձնում եմ էն ուշ գիշերին
Քեզ, էյ նազ հուրի, քեզ այցի եկող
անուշ երագին...

1911 թ.

ՄԻՐԵԼԻ ԳԵՐՈ

Այո՛, ընկեր, նամանրդ է մեր աշխարհիլը... կուզես թռչել, թռչել միշտ դէպի բարձր, բայց այդ անասուած աշխարհը կկտրէ թևերդ, կկտրէ թևերդ՝ սողալ կստիպէ...

Կուզես լինել ազանտ, ազատ, ինչպէս Աստուած երկնքում, բայց այդ Աստուած աշխարհը վզիդ ծանր լուծ կդնէ, կստորացնէ քեզ...

Կուզես նոր խօսք, ազատ խօսք ասել այդ սողացող ու լծասէր աշխարհիլին, բայց նա կփշրէ գրիչդ, կսանձէ լեզուդ՝ լռել կստիպէ...

Այո՛, ընկեր, նամանրդ է մեր աշխարհը... Սակայն ինչ, պարզել արդեօք, յուսահատութեան անսուրբ դրօշը...

«Մնաք բարձր» ասել են արևի պէս վսեմ փայլուն, էն փայփայած մեր երազ-իդէալներին...

Սակայն ի՞նչ, երես դարձնել կեանքից ու աշխարհից... օգնութեան կանչել ֆալագին...

Ո՛չ, ընկեր, ո՛չ, հազար անգամ ո՛չ... Չմոռանանք, որ կեանքը կոհի է, աշխարհիլը՝ կուադաշտ, մարդը՝ մարտիկ... Ընկեր, երկու դրօշներ են ծածանում կուադաշտ աշխարհիլում - Բարու ու Չարի դրօշները: Երկու հակամարտ բանակներ են բախում կուադաշտ աշխարհիլում - Լոյսի ու Խաւարի բանակները...

Թո՛ղ խոզա-մեշանական կեանքի սիրահարները թողնեն կուադաշտը... թո՛ղ իդէազուրկ նիթակրօնները նետուն...

Իսկ դու և քեզ նմանները, որ ուխտել էք եօթն անգամ աշխարհիլ գալ և եօթն անգամ էլ խաչերից ամենածանրը շալակած՝ յանուն նիթական իդէալի Գողգոթա բարձրանալ...

Իսկ դու և քեզ նմանները, որ սիրեցիք մարդուն, անտէր-անձարին և Ձեր հերոսական սրտի դմները լայն բացիք սրանց ծով ցալի առաջ...

Դուք, Լուսոյ ասպետներդ անվհատ շարունակէք Ձեր կոհիւր, Ձեր տաք իդէական-բարոյական կոհիւր Խաւարի դէմ... Եւ յաղթութիւնն ապահոված է:

1911 թ.

ԱՖՈՐԻԶՄՆԵՐ

Կնատեաց փիլիսոփայի

Մահը կնոջ պատկերով է մեր աշխարհը մտել:
Եթէ մարդուս մայրը կին չլինէր, մարդս անմահ կլինէր:
Որքան գեղեցիկ, այնքան անսիրտ է կինը:
Ես չեմ հաւատում, որ կին կոչած էակը հոգի ունի:
Ըստ իս, կինը հոգեզուրկ մի մարմին է. ընդունակ զարթեցնելու մեր մէջ միայն և միայն կրքերից ամենաստորը-անասնասեռականը:

Վայ քեզ, եթէ կինդ չափազանց գեղեցիկ է:

Ցան ու արցունքը կնոջ հետ են մեր աշխարհը մտել:
Կանանց ցեղից միայն Եւան էր, որ մտքով չէր դաւաճանել իր ամուսնուն:

Կանայք ապրում են միայն մարմնով և մարմնի համար:

Միայն իդէալական պարզութեան մէջ ապրող կինը կարող է բարոյական և առաքինի լինել:

Կինը - դա Պանդօրեան արկղն է՝ չարիքների հարազատ մայրը:
Միայն քեզ չի պատկանում կինդ, եթէ նա օծուած է արտակարգ գեղեցկութեամբ:

Երբ ճառում են կնոջ քաղաքական, հասարակական, գեղագիտական իդէալների մասին - ես ծիծաղում եմ միայն: Միթէ շրթնային իդէալից զատ կինն ուրիշ իդէալ էլ ունի:

Կնոջ սէրը - դա նրա սեռական տենչն է, ֆիզիկական կարօտը:
Շատ կանանց համար պոռնկագիր Արցիբաշևն ատլի բարձր է, քան Տոլստոյը, հեշտասէր Օվիդիոսը, քան Պլատոնը:

1911 թ.

«ՄԱՀԻԱՆ ԵՐԳԵՐ»—ԻՑ

(Ե. Գրիգորեանի շիրիմի առաջ)

Մահ, ո՞վ աշխարհաւեր Ոգի, որի անունից դողում է և օրօրոցի էն մանուկը նորածին, և դաշտի էն ծաղիկը նորաբաց, և էն արքան հպարտ, և էն արևը լուսաբեր...

Մահ, ո՞վ միակ անմահը համայն տիեզերքում, որի դէմ անզօր է իմ հոգին ապստամբ, և իմ գրիչն ազատագոռ, և իմ սէրը ծով...

Աւանդ, լուսնի տակ չգտայ մի ճանապարհ, որը դէպ թո թագաւորութիւնը՝ դէպ գերեզմանատուն չտանէր...

Վահ, և մարդ, և արև, և ծաղիկ... Համայն տիեզերքը բոլոր ճանապարհներով դէպ թեզ՝ դէպ թո թագաւորութիւնն են գալիս...

Գալիս եմ և ես...

Գալիս եմ, անիծելով անունդ, ո՞վ ամենայադթ ու ամենապան Ոգի...

1911 թ.

ԻՄ ՄԱՐԳԱՐԷՆ

Ջոհաբերիք, զոհաբերիք, զոհաբերիք... Ջոհաբերիք անվերջ, առանց մնացորդի:

Ջոհաբերիք հէնց զոհաբերելու համար, Տո՛ւր, տուր ամէնն, ինչ որ ունիս: Տուր յետ չստանալու համար... Միրիք ու սովորիք զոհաբերել ու տանջել երջանկութեան ու բաւականութեան լուսափայլ ժպիտն երեսիդ:

Ջոհաբերիք ու տանջիք անվերջ և դու կմօտենաս Աստծուն՝ դու կդառնաս մարդ Աստուած: Այդպէս է պատգամում իմ Մարգարէն իր հրեղէն պատգամն:

Սոռացիր թեզ:

Միրիք թշուառին, ծառայիք սրան— թող քո Աստուածն թշուառի Աստուածն, քո ցանն թշուառի ցան լինի:

Յանուն թշուառի մոռացիր քո երջանկութեան ձգտիլն, երբ հազար-հազարներին սև ցան է ընկերանում, բռնակալ կարիքն նեղում:

Այսպէս է պատգամում իմ Մարգարէն իր երկաթ խօսքն:

Եղիք հպարտ...

Գոյութիւնդ քարշ տալու համար մի սողալ, մի ստորանալ և մի ստիր...

Մի ստիր նաև... եթէ անգամ համոզած ես, որ ստելով դու կփրկես քո կեանքն... Ստել նշանակում է հայիոյել ճշմարիտն, ստել նշանակում է դադարել Մարդ լինելուց:

Եղիք ազատ...

Խոնարհիք ձակատդ միայն իդէալիդ առաջ... Միայն իդէալիդ ազատ գերին եղիք...

Հոգուդ արծալային թևերով թռիք իդէալիդ գագաթներն ազատ, ուր թագաւորում են Գեղեցիկն. Վեհութիւնն ու Աստուած...

Եղիք բացարձակ...

Եւ ոչ մի գիջում... Յանցանք է գիջելն: Ջիջել նշանակում է ամօթալի պարտութիւն կրել, թոյլ, ստրուկ լինել...

Կամ Մարդ, կամ ոչինչ...

Այսպէս է պատգամում իմ Մարգարէն իր ազատ խօսքն...

Ջգուշացիք կնոջից...

Մարդս Աստուած էր, երբ դեռ ծանօթ չէր կնոջ հետ: Կինն՝ մարդկային հրեղէն միտքն միշտ դէպ տափարակ, կեանքի ցեխն քաշող այդ նողկալի էակն, որ դարերի անվերջ տարածութեան վրայ սողացել է առանց իդէալի, առանց վեհութեան...

Կինն՝ որի հետ, որի պատկերով մահն ու արիւնն մեր աշխարհ մտան...

Փախիք կնոջից...

Այսպէս է պատգամում իմ Մարգարէն իր հրեղէն խօսքն:

Եւ հոգիս ուռչում է ու բացում իր թերն:

1911 թ.

ԱՇՆԱՆ ԱԼՔՈՄԻՑ

Մեռնող բնութեան անապատ կրծքին
Անվերջ, յուսահատ աշունն է լալիս...
Քամին է վայում տխուր, լալագին
Տերնն է դողում, ծաղիկն է մեռնում...

Անկեանք, անարև իմ հիւանդ կրծքին,
Անվերջ, յուսահատ տխրութիւնն է լալիս...
Ախ, յոյզերս են մարում, երազներս մեռնում,
Աշուն, ցուրտ աշուն է և իմ հոգում...

1911 թ.

ԷԼ ԻՆՁ ՄԻ՛ ԱՍԷՔ

Էլ ինձ մի ասէք՝ «Մերն է ապագան»,
- Այդ անյոյս խօսքերն էլ ինձ մի կրկնէք...
Չարին էր անցեալը, Չարին ապագան.
Էլ չեմ հաւատում, էլ ինձ մի ասէք...

Էլ ինձ մի ասէք՝ «Մերն է յաղթութիւն»,
Այդ խաչած խօսքերն էլ ինձ մի կրկնէք.
Խաւարն է յաղթել, յաղթել է լոյսին.
Էլ չեմ հաւատում, էլ ինձ մի ասէք:

Էլ ինձ մի ասէք, էլ ինձ մի խնդրէք
Կանաչ յուսաբեր վառ գարուն երգել,
Գարուն չի գալիս, էլ մի սպասէք,
Ձմեռը, մահաբեր ձմեռն է յաղթել...

1911 թ.

ԱՅՈՐԻՉՄՆԵՐ

Ո՞ր է արդարութիւնը.
- Այնտեղ, ուր չկայ մարդ կոչած էակը:

* * *

Էգերի մէջ ո՞րն է ամենասուրբը.
- Կինը:

* * *

Աստուածների ու գերմարդկանց ճակատագիրն է - լինել մե-
նակ:

* * *

Չգիտեմ, Աստուած ինչն է կանանց լեզու տուել: Միթէ լեզուն
տրուած է միայն ու միմիայն ստելու համար:

* * *

Մեռցրէք մուգիկան ու պօէզիան և մեր աշխարհը կդառնայ
խոզանոց:

* * *

Չգիտեմ, Աստուած կայ թէ ոչ, բայց կուզէի, որ Նա լինէր: Եթէ
նա կայ՝ ես անմահ եմ*:

* * *

Որքան զարգացած, այնքան ստոր է կինը:

* Այս աստիճի տակ «Ժառթարալայ»-ի իմբացիր Գասպարի Կալիպրուզովը՝
Աստուածարար Երիցեանը անելացրել է. «Կայ, մաշ, կայ, - Աստուած գիտենայ,
կայ»:

• • •
Եղի՛ր բացարձակ: Եւ ո՛չ մի զիջում: Զիջել նշանակում է ամօ-
թալի պարտութիւն կրել: Յանցանք է զիջելը:

• • •
Անարդս հրեշտակ էր, երբ կնոջ հետ դեռ ծանօթ չէր:

• • •
Ինչ է կեանքը, եթէ ոչ երկու ուժերի մէջ կատարած մի ան-
միտ ու անխիղճ խաղ: Ուժեր, որոնցից մէկն ստեղծագործում է,
շինում, իսկ միւսը՝ կործանում, քանդում:

• • •
Այո՛, կեանքը կռիւ է: Կռիւր պահանջում է զէնք: Բայց նամարդ
է նա, որն այդ զէնքը դժոխքից է վերցնում:
Ստել՝ նշանակում է դադարել մարդ լինելուց:

• • •
Հերոսը նա է, որն իր կեանքի ընթացքում «այո»-ի տեղ «ոչ» և
«ոչ»-ի տեղ «այո» չի գործ ածել:

• • •
Ո՛ւմ ծնունդ են օծութիւնը, աղւէտութիւնը, դաւաճանութիւնը...
Կնոջ:

• • •
Ո՛վ է ամենատղորմելի մարդը.
- Նա, որը հաւատում է կանանց:

1911 թ.

ԴՈՒՔ ԳԻՏԷՔ

Դուք գիտէ՛ք այն սէրը,
Որով զեփիւռը ծաղկին,
Ծաղիկը զեփիւռին է սիրում...

Դուք գիտէ՛ք այն սէրը,
Որով ցօղը ծաղկին,
Ծաղիկը ցօղին է սիրում...

Կամ գիտէ՛ք այն սէրը,
Որով շողը ծաղկին,
Ծաղիկը շողին է սիրում:

Եւ այդ սիրով, ծաղկի սիրով,
Ցօղի սիրով, շողի սիրով,
Ես սիրում եմ երագով...

1911 թ.

ԽԵՆԹԻ ԱԿԿՈՐԳՆԵՐ

Անեզր, անյատակ ովկեան է սիրտս
 Եւ հազար գետեր հազար ցաւ շալակած՝
 Դէպ ովկեանն են գալիս, դէպ սիրտս գալիս...
 Գալիս են գետերը, ցաւաբեր գետերը...

Անտէր, անձարի սրտից են գալիս.
 Անտէր, անձարի ծով ցաւը բերում,
 Գալիս են գետերը...
 Ա՛հ, թող գան, թող բերեն.

Թող սրտիս տիեզերական Մեծ ցաւը բերեն...
 Անհաշտ, անխաղաղ ովկեան է սիրտս...
 Եւ գոռ մրրիկը խենթութիւն շալկած՝
 Դէպ ովկեանն է գալիս, դէպ սիրտս գալիս...

Գալիս է մրրիկը խենթութիւն շալկած,
 Ազատ ու ապստամբ հոգիներից է գալիս,
 Ազատ հոգիների խենթութիւնն է բերում...
 Գալիս է մրրիկը...

Ա՛հ, թող գայ, թող բերէ,
 Թող հոգուս տիեզերակործան
 Խենթութիւնը բերէ...

1912 թ.

ԷՊԻԳՐԱՄՆԵՐ

Տիկ. Լ.—ի վրայ
 Չինարը քեզ բոյ, վարդենին այտեր,
 Թունաւոր օձը հոգի է տւել
 Շուշանը քեզ հոտ, մայիսը ժպիտ,
 Բիզէի Կարմենը քեզ սիրտ է տւել:

* * *

Օր. Ս.—ին
 Դա Բաքոսի քրմուհին է,
 Կէս օրիորդ, կէս տիկին է,
 Մարմնով գեղ,
 Հոգով տգեղ:

* * *

Յ.—ի վրայ
 Սա է՛լ է մշակ, սա է՛լ գործիչ,
 Բութ ու ստոր ունի գրիչ,
 Վատ գրող,
 Լաւ քանագող:

* * *

Հին...Ն.—ի վրայ
 Հոգու, մտքի, խղճի տեղ
 Գործում է կոկորդն այստեղ,
 Մտքով աղքատ հարուստներ,
 Ախտով հարուստ աղքատներ:

* * *

Թ.-ի վրայ
Պարոն կնոթս, շատ ես կրկնում.
- «Այս ինչ տիկինը կարօտս է քաշում»,
- «Այն ինչ օրիորդը սիրովս այրում»:
Գիտեմ Դոն Ժուան, ճիշտ ես ասում.
Բայց գիտեմ, որ այդ բանում
Կինդ քեզնից յետ չի մնում:

* * *

Տիկ. Ա.-ի վրայ
Միրելի է, երբ լսում է
Ատելի, երբ խօսում է
Մարմնով ազատ,
Հոգով աղքատ:

* * *

Օր. Ն.-ի վրայ
Չքնանդ ես, դիպե՞ղ որպէս մայիս,
Տաք ու այրող որպէս յուլիս,
Եւ անհաստատ որպէս ապրիլ՝
Անխիղճ, դու շատերին ես խաբել:

1912 թ.

ԿԻՆԸ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

(Մտքեր)

- Մենք՝ կանայքս, չգիտեմ ինչու միշտ էլ վախենում ենք միայն այն տղամարդկանցից, որոնք իսկապէս բոլորովին էլ սոսկալի չեն:

- Եթէ տղամարդիկ մեզ լաւ ճանաչէին, մենք շատ աւելի յաճախ կկործանւէինք և բաթմիշ կլինէինք:

- Կնոջը հասարակութեան մէջ համբուրել նրան անպատել է նշանակում, իսկ մեկուսի համբուրելը - նրան բաւականութիւն պատճառել:

- Մենք՝ կոթսետ, նրա համար ենք գործածում, որպէսզի գէթ դրանով կարողանանք մեր թշուառ իրանները պաշտպանել մեզ կլանելու պատրաստ հազարաւոր ձեռքերից:

- Եթէ կանայք քմահաճոյ չլինէին, տղամարդիկ տխրութիւնից ուղղակի կմահանային:

- Մեր թուլութիւնը - մեր ոյժն է:

- Չկայ մի այնպիսի կին, որը տղամարդին միայն իր խելքովը կարողանար հմայել:

- Տղամարդիկ մեզնից պահանջում են անմեղութիւն, մինչդեռ մենք այդպիսի բան երբէք էլ չենք պահանջում նրանցից:

- Չափից դուրս ճարտարախօս տղամարդիկ մեր ճաշակին չեն համապատասխանում:

- Մեզ համբուրելիս մենք դողում ենք, սակայն երբ մեզ այդ բանը չեն անում, մենք աւելի խիստ ենք դողդողում:

1912 թ.

ՏԱՊԱՆԱԳԻՐ

Ծաղ.—ի յիշատակին

Անցորդ, Նա սիրում էր — էն հպարտ, էն արծիւ պատանին...

Էտո՞ն մարդաբնակ վայրերից, բնութեան խորհրդատր փափսոցին ունկնդիր՝ Սա սիրում էր մի թփի տակ երազել, երազել մենակ...

Սա սիրում էր և մորմոքը լալկան առակի, և հառաչը վայող ու հեծկլտող քամիների...

Սա սիրում էր աշունն, անցորդ, աշունը միստիկ, երբ մեռնող բնութեան անարև կրծքին տերևն է դողում, ծաղիկը մեռնում...

Այստեղ, անցորդ, այս գեղատխուր հողաթմբի տակ հող դարձող պատանին սիրում էր...

Սա սիրում էր լեռները՝ ազատութեան գրանիտէ էն գահերը, որոնց ամպոտ կատարներին և յաճախ իր հպարտ ճակատին արևի առաջին համբոյրն էր ընդունում...

Սա սիրում էր և՛ արշալոյսը պուրպուր, և՛ վերջալոյսը տխուր... և՛ երգն անխօս ու անձայն ոսկեշող աստղերի...

Սա, անցորդ, սա սիրում էր — էն հպարտ, էն արծիւ պատանին...

Դու լալի՞ս ես, անցորդ...

1912 թ.

ԻՆՉՈ՞Ւ ԵՍ ՏԻՈՒՐ

— «Ինչո՞ւ ես տխուր», — հարցրի ես ծաղկից:

— «Ես էլ պիտ թառմիմ, ես էլ պիտ մեռնիմ»
Ասեց ծաղիկը և տխուր հեկեկաց...

* * *

— «Ինչո՞ւ ես տխուր», — հարցրի ես Աստղից:

— «Ես էլ պիտ մեռնիմ, ես էլ պիտ մեռնիմ»
Ասեց Աստղիկն ու տխուր պլպլաց:

* * *

— «Իսկ դու, հեյ սիրտ իմ սգուր»:

— «Ա՛խ, ես էլ անմահ չեմ՝ ես էլ պիտ մեռնիմ»
Ասեց սիրտս ու տխուր մորմոքաց...

1912 թ.

ՅՈՒՍԱՀԱՏ ԱԿԿՈՐԴՆԵՐ

I

Ա՛խ, արևն ինչո՞ն է այնպէս սանոն, այնպէս գունանտ,
 Եւ իմ սիրտը՝ այնպէս մռանլ անապատ...
 Կեանքն ինչո՞ն է այնպէս տզեղ, անյոյս...
 Եւ աշխարհը՝ այնպէս նեղ, անլոյս...
 - Ա՛խ, ես էլ չեմ սիրում՝ իմ սիրտն է սառել,
 Եւ էլ չեմ երգում՝ Մուսաս է մեռել...

II

Տեն էն ծաղիկը՝ այնպէս չքնանդ, այնպէս անո՞ւշ
 Արարչի ձեռքով կարծես լինի խնամած
 Եւ էն Կոյսը՝ այնպէս մատանդ, այնպէս քնքո՞ւշ
 Երկնքի համար կարծես լինի ստեղծած...
 - Բայց, ա՛խ, մի օր, վաղ թէ ուշ նրանք էլ չեն լինի,
 Մէկը կթառամի, իսկ միւսը՝ կմեռնի...

1912 թ.

ԱՂՕԹՔԻ ԵՐԳԵՐԻՑ

Եւ եկայ ես...

Լոյս երազներով ես քո դուռն եկայ...

Եկայ պատմելու, թէ ինչպէս փորձեցի երևակայել աշխարհն
 առանց քեզ... և յանկարծ սառեց Արևը, մեռաւ Երգը, անէացաւ
 Գեղեցիկը... Եւ ինձ մենակ զգացի, մենակ անապատ աշխար-
 հում... Մենակ Աստծոյ պէս...

Եւ եկայ ես...

Եկայ պատմելու, թէ ինչպէս է՛ն լուռ ու տխուր գիշերին կրակ
 կարօտով դռներիդ մօտեցայ, վշտացած հրեշտակի պէս գլուխս
 քարին դրի, լացի ու հեռացայ...

Եւ եկայ ես...

Ա՛հ, եկայ պատմելու, թէ ինչպէս է՛ն քնաթաթախ դաշտերում
 բնութեան միստիկ տաճարի մէջ ծունկի իջած՝ մխացի ես, ար-
 ցունքով աղօթեցի քեզ համար...

* * *

Եւ եկայ ես...

Լոյս երազներով ես քո դուռն եկայ...

ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ

Եւ եկայ ես...

Լոյս երազներով ես քո դուռն եկայ...

Եկայ պատմելու, թէ ինչպէս փորձեցի երևակայել աշխարհն առանց քեզ... և յանկարծ սառեց Արևը, մեռաւ Երգը, անէացաւ Գեղեցիկը... Ես ինձ մենակ զգացի, մենակ անապատ աշխարհում... Մենակ Աստծոյ պէս...

Եւ եկայ ես...

Եկայ պատմելու, թէ ինչպէս էն լնո ու տխուր գիշերին դռներիդ մօտեցայ, վշտացած հրեշտակի պէս [գլուխս] քարին դրի, լացի ու հեռացայ...

Եկայ պատմելու, թէ ինչպէս էն [ցողա]թաթախ դաշտերում, լուսեան [թևերի] տակ ծունկ իջած՝ աղօթեցի ես...

Ա՛հ, իմ առաջին աղօթքն էր [դա]...

Առաջին անգամն էր խոնար[իում] իմ ճակատը հպարտ: Առաջին [անգամն էր] լռում իմ հպարտութիւնը տիտ[ան]...

Աղօթում էի ես...

Մայր երկրի ծաղկազարդ [կրծքին] ընկած՝ աղօթում էի ես՝ մխրում, այրում...

Երազներիս էն արև թագուհու, էն ծաղկի, էն աստղի համար... տիեզերքի համար, հոգուս միստիկ խորանում [իմ] անձայն ու անխօս աղօթքն էր [մխում]...

Հոգուս հետ մխում էր եւ սար,

[և] քար, և ծառ, և ծաղիկ...

Աղօթում էինք մենք - ես և տիեզերքը...

Ժամանակի անծայր անապատով [երկնային]

վայրկեանների կարաւանն է անցնում...

Ճակատիս վրայ էլ չկան ամպեր,

լազուր է ճակատս...

Հոգուս վրայ էլ չկայ գիշեր, լոյս է

իմ հոգին...

Երջանիկ եմ, ատելի քան Աստուած,

երջանիկ...

* * *

Մտնում է գիշերը...

Աղօթքիս վերջին շշուկների [հետ]
քարձրանում եմ ես...

Երկնքի դռներից Արարիչն է ինձ
ժպտում.

Հաշտութիւն, հաշտութիւն...

Հաշտեցինք մենք - ես և Ա[ստուած]...

1912 թ.

ԻՄ ԱՂՕԹՔԸ

Նւէր Լեյլիին

Եւ եկայ ես...

Լոյս երազներով ես քո դուռը եկայ... Եկայ պատմելու, թէ ինչպէս փորձեցի երևակայել աշխարհն առանց քեզ և յանկարծ սառեց արևը, մեռաւ Երգը, անէացաւ գեղեցիկը... Եւ ինձ մենակ զգացի, մենակ անապատ աշխարհում... մենակ Աստծոյ պէս...

Եւ եկայ ես...

Եկայ պատմելու, թէ ինչպէս էն լուռ ու տխուր գիշերին դռներիդ մօտեցայ վշտացած հրեշտակի պէս գլուխս քարին դրի, [լացի] ու հեռացայ...

Եկայ պատմելու, թէ ինչպէս քնաթաթախ դաշտերում, լուսեան թևերի տակ ծունկ իջած՝ աղօթեցի ես:

Ա՛հ, իմ առաջին աղօթքս էր դա... Առաջին անգամ էր խոնարհում իմ ճակատը հպարտ: Առաջին անգամն էր [լռում] իմ հպարտութիւնը տիտան...

Աղօթում էի ես...

Մայր երկրի ծաղկազարդ կրծքին ընկած՝ աղօթում էի ես՝ մխրում, այրում...

Երազներիս էն արև թագուհու, էն ծաղկի, էն աստղի համար... տիեզերքի համար, հոգուս միստիկ խորանում իմ անձայն ու անխօս աղօթքն էր մխում...

Հոգուս հետ մխում էր և սար, և քար, և ծառ, և ծաղիկ...

Աղօթում էինք մենք - ես և տիեզերքը...

Ժամանակի անծայր անապատով երկնային վայրկեանների
կարաւանն է անցնող...

Ճակատիս վրայ էլ չկան ամպեր. լազուր է ճակատս...

Հոգուս վրայ էլ չկայ գիշեր. լոյս է իմ հոգին...

Երջանիկ եմ, աւելի քան Աստուած երջանիկ...

Մեռնում է գիշերը...

Աղօթքիս վերջին շուկների հետ բարձրանում եմ ես...

Երկնքի դռներից Արարիչն է ինձ ժպտում:

Հաշտութիւն, հաշտութիւն...

Հաշտեցինք մենք - ես և Աստուած...

* * *

Եւ եկայ ես...

Լոյս երազներով ես քո դուռն եկայ...

1912 թ.

28

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

* * *

Մոյր իմ, ո՞վ վրէժխնդրութեան
Սրբազան գործիք, սիրում եմ քեզ...
Սիրում եմ և պիտ կտակեմ,
Որ գերեզմանիս վրայ դնեն քեզ...

Հոգ չէ, սուր իմ - երկաթէ ընկեր,
Թէ յանուն Ազատութեան քիչ
Անգամ մերկացար, չէ որ քո տէրը,
Քեզ կրողը, շատ տա՛ք, շատ
Ուժեղ սիրեց Ազատութիւնը...

1914 թ.

29

ՆԱԿԱՏՈՐՄԸ ԵՒ ԿԻՆԸ

Մեծ պետութիւնը չէ կարող կառավարել առանց նաւատոր-
մի, ինչպէս զարգացած կինն առանց կորսետի:

Նաւատորմը թոյլ տէրութեանը չէ կարող պաշտպանել ան-
կումից, ինչպէս և կորսետը կնոջը սայթաքումից ու ընկնելուց:

Նաւատորմը չէ կարող գոյութիւն ունենալ առանց ծովակալի,
ինչպէս և կորսետն առանց կնոջ:

Նաւատորմը ապրուստ է տալիս նրանց, որոնք տեղաւորում
են այնտեղ, իսկ կինը սնանկացնում է նրանց, ովքեր իրենց բախ-
տը կապում են նրանց հետ:

1914 թ.

30

ԷՍ ԳԻՇԵՐԸ...

Գիշեր էր, մէկն այն կախարդական գիշերներից, երբ օտակ
սրտերը քնել չեն ուզում...

Արագի ափն էինք իջել ես և նա - երկու ընկեր:

Անհուն կապուտակի վրայ նորահարսի չքնաղ նազանքով լու-
սինն էր լողում... ու նրա ճառագայթների տակ Արագի ափերն
աւելի գեղանի, խշշոցն աւելի միստիկ էր թում...

Ամէն ինչ այդ գիշեր - և ծառ, և ծաղիկ, և սար, և ալիք - ամէն
ինչ երգում էր, խօսում, աղօթում:

Երգում էին հազար ձայներ, խօսում հազար գոյներ ու այդ բո-
լորը միանում էր մի հզօր ու ներդաշնակ համերգի մէջ...

Երանութեամբ արբած՝ ծծում էին մեր հոգիները, անյագօրէն
ծծում Արարչի ձեռքով դեկավարող այդ համերգը:

- Լսի՛ր, - որպէս թոյլ արձագանգ, լսեց իմ ձայնը, - լսի՛ր, ես
էս գիշեր կամ մի այսպիսի գիշեր կուզէի մեռնել, չէ՛, չմեռնել... այլ
էութեամբ լուծել բնութեան մէջ ու այնպէս ապրել...

Լսո՞ւմ ես, տերևների էն խորհրդաւոր սօսափիւնը, հեծկլտա-
ցող հողերի էն երգը լալկան - լսո՞ւմ ես...

Ես նրանց մէջ, երկրի կրօքից բարձրացող էն յաւիտենական համերգի մէջ լուծել ու այնպէս ապրել եմ ուզում...

- Իսկ իմ հոգին, իմ հոգին էս գիշեր լալ ու աղօթել է տենչում, - շնջաց ընկերս ու ծունկ իջաւ...

Աղօթողի դրութեան մէջ նա լուռ էր, նրա շրթունքները չէին շարժում, բայց ես լսում էի նրա ձայնը... Աղօթում էր նրա հայեացքը, լալիս հոգին...

Ես ճանաչում էի նրա ասուածներին - նա Գեղեցիկին ու Անմահին էր աղօթում, Գեղեցիկի ու Անմահի համար լալիս...

Ծունկ իջայ և ես:

Ու ինձ թաց, որ մեզ հետ գլուխները խոնարհած՝ աղօթում են և լեռները սէգ, և ծաղիկները միստիկ...

Եւ աղօթեցինք մենք... մինչև արևի ոսկի ճառագայթներ՝ լեռների կատարների հետ և մեր ձակատները համբուրեցին...

* * *

Էն գիշերը, անի, էն կախարդական գիշերը, երբ երիտասարդ սրտերը քնել չեն ուզում...

1915 թ.

31

ԻՄ ԱՂՕԹՔԸ

Դու, որ կաս, Դու, որ չես կարող՝ չլինել, Դու, որին աղօթում է և էն կինը պիղծ, և էն հրեշտակն անբիծ... Դու, որին կանչում են բոլոր սրտերը - լսիր ինձ...

Փշրեցին, Տէր, վատ արարածները մէկիկ-մէկիկ ծիածանային անուրջներս... Փշրեցին յոյզերս, ոսկի յոյսերիս փարթամ ծաղիկները փետեցին...

Խաչեցին, Տէր, կեանքը և մարդիկ հաւատս խաչեցին...

Ու այն օրէն թախծի սև ամպերը ծակատս ծածկեցին, հոգիս՝ խաւարը, սիրտս՝ ցուրտ պարապը լցրեց...

Եւ էլ չունէի, հոգիս երազ, հոգիս արշալոյս էլ չունէի...

50

* * *

Իսկ այնպէս... դեռ կուզէի հաւատանլ ու սիրել ես...

Իսկ այնպէս... դեռ կուզէի վառ յոյսերով ու յոյզերով եռալ ու մտածել...

* * *

Դու, Տէր, որ կաս, Դու, որ չես կարող չլինել, Դու, որին դիմում է և հրեշտակը, և չարագործը... Դու, որին փնտրում են բոլոր հայեացքները - հասիր ինձ...

Շանթիր, Տէր, հրդեհիր, ցնցիր էութիւնս, Տէր...

Ապրել... անի, սիրել, մարտնչել... նորէն ապրել եմ ուզում...

Տէր, Տէր, Տէր...

1915 թ.

32

ԻՄ ՍԷՐԸ

Նրան, որը ներշնչեց ինձ

Իմ սէրը...

Լուսնկայ գիշերին ծնաւ, ոսկի երագներէս ու յոյզերէս ծնաւ, խնկարհոյր ու միստիկ ծաղիկների մէջ ծնաւ իմ սէրը...

Եւ լուսնի թովչութիւնն ու երագներիս քաղցրութիւնը, ծաղիկների արբեցուցիչ բոյրն ունի իմ սէրը...

* * *

Չէ, սե՛ն ու անասող գիշերին ծնաւ, կրքերիս կրակէն ու արեանս եռէն ծնաւ, շանթերի ու փոթորիկների մէջ ծնաւ իմ սէրը...

Ու կրքերիս կրակն ունի, արեանս խենթութիւնը, շանթի ահեղութիւնն ունի իմ սէրը...

51

* * *

Իմ սէրը – դա շունչն է՝ հեզ ու թաւշեայ, լալկան զեփիուռի...
Չէ, ծովերը յուզող, էն գոռ մրրիկն է իմ սէրը...

* * *

Իմ սէրը... իր ասիերի մէջ գգտող, ծաղիկների հետ համբուրող
էն առական է քաղցրահնչին...
Չէ, տարերային արշաւն էն[...]
Հեղեղի Նիագարայի ջրվէժն է իմ սէրը...
Չէ, Նիագարայի ջրվէժն է իմ սէրը...

* * *

Լեռների էն վախկոտ եղնիկը... չէ, կատաղի առիծն է իմ սէ-
րը...

1915 թ.

33

ՄԵՌՆՈՂ ՍՐՏԻ ՀԷՔԻԱԹԸ

Հիւանդ էր սիրտս, անյոյս հիւանդ...
Ճար էր պէտք ու փնտռում էի ես, փնտռում ամէն տեղ, ամէնի
մօտ...

- Տանեմ դաշտերը, - մտածեցի ես, - բնութեան ծոցը տանեմ
սիրտս...

Այնտեղ քաղցրահնչին առուակների ասիերին կ'ստեմ, կ'
թափառեմ ծաղկապատ հովիտներում, ծաղիկների խնկարոյր
թարմութիւնը կ'ծծեմ, լեռների էն սէզ կատարները կ'բարձրա-
նամ... ու այնտեղ աստղերի միստիկ երգի առաջ սրտիս դռները
կ'բանամ...

Գուցէ այսպիսով սաղանայ սիրտս...

Ու այնուհետն ամէն օր բնութեան հիւրն էի ես: Չ'մնաց, էլ չ'մ-

նաց մի թռչուն, որ չ'երգէր, մի ծաղիկ, որ չ'բուրէր ինձ համար...
Չ'մնաց մի առուակ, որի ասիին չ'ստեի ու երազէի արթուն...
Բայց չ'սաղացաւ սիրտս...
Յուսահատութիւնը սև թներով հոգիս գրկեց, սիրտս ասիտ-
սանքի ու դառնութեան արցունք թափեց...

Լացի ես՝ գետափում նստած...

- «Ես գիտեմ, ես գիտեմ...», - լսուեց մի ձայն գետից:
Բարձրացրի գլուխս - ալիքների վրայ իր ոսկէ մազերը փռած՝
ջրերի գեղանի հարսը, փերին էր լողում...

- «Հէք տղայ, եթէ լուսնի տակ կարողացար մի կաթիլ անկեղծ
արցունք, աննենգ մի ժպիտ գտնել - սիրտդ կը սաղանայ, կայրի
սիրտդ», - ասաց ջրերի աղջիկը ու սուզուեց ալիքների մէջ:

«Մի կաթիլ անկեղծ արցունք, աննենգ մի ժպիտ», - կրկնեցի
ես...

«Անկեղծ արցունք, աննենգ ժպիտ», - որպէս թոյլ արձագանգ
լսուեց սրտիս ձայնը...

Հիւանդ էր սիրտս: Ճար էր պէտք...

Երևակայութեանս թևաւոր նժոյգը նստած՝ ճանապարհ ըն-
կայ...

Սրտիս ցաւից խթանուած՝ թոցրեց ինձ հրեղէն նժոյգս, հասայ
ամէն տեղ, եղայ ամէնի մօտ...

Փնտռեցի սրտիս ճարը թէ՛ աղքատի, թէ՛ հարստի, թէ՛ բախտա-
ւորի, թէ՛ անբախտի մօտ...

Փնտռեցի, չկար - չ'գտայ...

* * *

Ա՛հ, ինձ չ'յաջողուեց ողջ աշխարհում աննենգ մի ժպիտ, մի
կաթիլ անկեղծ արցունք գտնել...

Կտորուեցան նժոյգիս թները, ցամքեց համբերութեանս ծո-
վը, օտար աստղերի տակ մեռնելու երկիրից խթանուած՝ յոգնած
նժոյգս ինձ նորէն այստեղ, սիրածս գետափը վերադարձրեց...

Փնտռեցի - չ'գտայ...

Ու այժմ սրտամեռ, գետափին նստած՝ յուսահատութեան աղի
արցունք եմ թափում:

Ջրերն աւելի տխուր են խշշում, թռչուններն աւելի տխուր եր-
գում...

- «Հէք տղայ, - լսում է ալիքների աղջկայ ձայնը, - փորձեցիր աշխարհում չեղածը գտնել»...

Փնտռեցի - չ'գտայ...

Ու ես մեռնել ուզեցի, մեռնել յուսահատութեան գրկում ու թաղուել գետափին բարձրացող էն հսկայ լեռան կրծքի մէջ...

Ես ուզեցի, որ էն վեհապանծ լեռն իմ գերեզմանը լինի, իմ դիակը գրկի...

Ուզեցի, որ և էն լեռան ճակտին քանդակեն իմ երկխօսք տապանագիրը՝ «Փնտռեց-չ'գտալ»...

* * *

Եւ կանգ կառնի անցորդը, հայեացքը լեռան ճակտին կուղղի... «Փնտռեց-չ'գտալ»...

Հառաչից պայթելու չափ կ'բարձրանայ նրա կուրծքը...

- Ինչ, արդեօք, Արդարութիւն փնտռեց... կ'շշնջայ նա ու կշարունակի ճանապարհը:

- Արդեօք, Ազատութիւն չտեսա՞մ աշխարհում, կշշնջայ ու կանցնի երկրորդը...

- Խնդ՞ մարդ, երջանկութիւն փնտռեցիր, - կասի մի ուրիշը...

Ու այսպէս անվերջ կ'գան, կանգ կառնեն, կ'հառաչեն ու կանցնեն և ոչ մէկն էլ չի իմանայ, թէ ինչ «Փնտռեց-չ'գտալ» էն հէք տղան...

Ու գերեզմանիս վրայ, լեռան սէգ կատարին յաճախ հոգու ընկեր արծիւը կերգէ:

Իսկ ներքևում, լուսնկայ գիշերներին ալիքների վրայ իր ոսկէ մագերը փռած՝ ջրերի հետ գետի փէրին կուլայ...

- «Հէք տղայ, աշխարհում չեղածը փնտռեցիր, աննենգ ժպիտ, անկեղծ արցունք փնտռեցիր»...

1915 թ.

ԿԱՄԱՒՈՐ ԶՈՅԳԸ

(Ազիզ ընկերներիս)

I

Նրանք կամաւորներ էին - Բելլան ու Դոննան, Ադրիականի չքնաղ ափերից:

Պատերազմն արդէն հռչակուած էր, յանուն դարերով մորթոտուող ժողովրդի ազատագրութեան արդէն պայթել էր պատերազմը և գալիս էր անվերջ շարաններով հեռու և մօտիկ երկրներից, գալիս ուրախ երգերով, գրկում հրացանը և դիմում կրուադաշտ:

Հասան նաև չքնաղ իտալացի երկու տաքարին զաւակները՝ Բելլան ու Դոննան, որոնց ես բախտ ունեցայ տեսնել իմ հրամանատարութեան յանձնուած վաշտի մէջ:

II

Մեր մեկնումի նախօրեակն էր: Արշաւանքի վերջին պատրաստութիւններն էինք տեսնում, երբ սպասեակս զեկուցեց ինձ, թէ երկու զինուոր ինձ տեսնել են ուզում:

Հրամայեցի ներս ընդունել:

Քիչ անց՝ դուռը բացուեց և անհաստատ քայլուածքով ներս մտան երկու կամաւոր:

Զինուորական բարեկից յետոյ առաջարկեցի նստել, բայց նրանք հրաժարուեցին և մէկը կարմրելով յայտնեց, որ իրենք խնդիր ունեն:

Ինչո՞ւմ է կայանում ձեր խնդիրը, - հարցրի ես:

- Պ. հրամանատար, մենք եղբայրներ ենք և կուզէինք երկուսս էլ լինել միևնոյն ջոկատի մէջ, - ասաց եղբայրներից մէկը և աւելի կարմրեց:

Խօսողի ձայնն այնքան երաժշտական էր, իսկ ինքն այնքան գրաւիչ, որ ուզեցի նրան երկար խօսեցնել:

Եւ նրանք ինձ շատ բան պատմեցին իրենց չքնաղ հայրենիքի մասին:

Խօսեցին բանաստեղծների իդէալ, Վենետիկեան գիշերներից, գոնդոլներից, սերենադներից:

- Անչափ սիրում եմ իտալացիներին և Իտալիան, կուզէի մի անգամ էլ տեսնել Վենետիկը, - աւելացրի ես:

Վենետիկը... կարծես հէրիք էր այդ անունը, որ հայրենասեր երիտասարդները ոգևորուէին և մի առանձին քաղցրութեամբ սկսէին խօսել իրենց հայրենիքի հրաշալիքների մասին:

Խօսակցութեան նիւթը փոխելու համար ես դարձայ դէպի միւսը, որ ամբողջ ժամանակ լուռ էր:

- Վախենում եմ ձեզ համար ծանր լինի պատերազմական կեանքը, դուք չափազանց փխրուն և նրբակազմ էք երևում:

- Հաւատացէք, պ. հրամանատար, որ թոյլ իտալուիին իր սիրածի կողքին առիծ կկտրի, դա իմ նշանածն է, - ձեռքը Դոննայի ուսին դնելով՝ ասաց նա:

Ջարմանքից հարցական նշան կտրեցի ես:

Ինձ հետ խօսողը զինուորական տարագով մի քնքուշ իտալուի էր, որ չէր ցանկացել, գուցէ և չէր կարողացել բաժանուել իր նշանածից:

Ես փորձեցի նրան համոզել, որ նա չափազանց քնքուշ է պատերազմական կեանքի դաժան պայմաններին դիմագրաւելու համար, որ նա ճանապարհին կմնայ, կհիւանդանայ դեռ վառօդի հոտը չառած:

Բայց իզուր, նա անյողդողդ էր իր որոշման մէջ:

- Նշանածիցս բաժանուել չեմ կարող, իսկ նա պէտք է գնայ, որովհետև պարտաւոր է գնալու, - վճռական շեշտով յարեց Բելլան:

Ինձ մնում էր զիջել:

- Լաւ, - ասացի ես, - ձեր խնդիրը կատարուած է, դուք անբաժան կմնաք իմ վաշտի մէջ:

III

Աշնանային մի անարև օր էր, երբ այրած մեր նաւերը՝ մենք շարժեցինք Ս.-ից:

Գեղեցիկ էին զինուորներս, նրանց դէմքերը պայծառ ու

ժպտուն էին: Տաքարին նժոյգիս վրայ նստած՝ հրճում էի իմ ջահել ու կայտառ վաշտով:

Դեռ Ս.-ի սահմաններումն էինք, երբ յանկարծ լսողութիւնս կախարդուեց մի քաղցր երաժշտական ձայնով, կանգնեցրի նժոյգս - չքնաղ իտալուիին էր երգողը: Ես չեմ տեսել երկրի վրայ Բելլայի նման գեղեցիկ էակ:

Ջինուորական տարագով, հրացանը գրկած՝ նա երկնային Քերովբէի էր նման: Նրա այտերի թարմութիւնն ու կարմրութիւնը գուցէ միայն Եդեմի վարդերն ունեն, հասակը՝ պարսկական չինարը, աչքերի սևութիւնը աշնանային անաստղ գիշերն ունի... իսկ նրա ժպիտը, Աստուած իմ, միթէ մարդկային էակը կարող է այդքան կատարեալ լինել:

Ես գերուած էի նրա ձայնից, կախարդուած՝ գեղեցկութիւնից: Ես կուզէի, որ լսողութիւնս անվերջ շոյէր նրա երգը:

Ես հմայուած էի, չէր շարժուում նաև իմ տաքարին ու խենթ նժոյգը: Ես ուզում էի շարժուել, առաջ անցնել, որ շարժուէր վաշտը, բայց դժուարանում էի իտալուիու դէմքից հայեացքս հեռացնել:

- Կհրամայէ՞ք զինուորներին հանգիստ տալ, պ. հրամանատար, - մօտենալով ինձ, հարցրեց արագ յիսնապետս:

- Այո՛, - պատասխանեցի ես, այս դրութիւնից դուրս գալու համար:

IV

Մենք արշաւում էինք՝ կռուելով բնութեան թշնամի տարերքի՝ ցրտի, քամու և անձրևների դէմ: Եւ որքան մօտենում էինք թշնամուն, այնքան բարձրանում էր զինուորներիս տրամադրութիւնը:

Մօտ էր սահմանագլուխը. երկու օր ևս և մենք ներս կթափուէինք թշնամու երկիրը՝ վրէժի և հատուցման գործը տեսնելու:

Անվախ շարժում էր վաշտս, ուրախ թրքիջով ու խանդավառ բացականչութիւններով օդը լցնում:

Վաղուց էր, ինչ բաժանուել էի նժոյգիցս. ես չուզեցի ձի նստել, երբ քնքուշ իտալուիին ոտքով էր գնում:

Նրանք՝ երկու սիրահարները, գտնուում էին վաշտի զօրասիւնեակի հի նց առաջին շարքում, և ես հնարաւորութիւն ունէի յաճախ լսելու նրանց խօսակցութիւնը:

Նրանք ժամերով խօսում էին իրենց ապրումներից, երազներից, ընկնող աստղերից, թառամող կանաչից, թշուառի արցունքից...

Ու այդ ընթացքին նրանք նման էին երկնքից երկիր ընկած երկու թախծող ու երազող հրեշտակների, քան արեան ծարաւի դէպ կուսող արշաւող մարտիկների:

Վաշտի մէջ միայն ես և աւագ յիսնապետս գիտէինք, որ Բելլան կին է, իսկ մնացած զինուորների համար Բելլան ու Դոննան երկու եղբայրներ էին:

– Բելլա, այսօր դուք յոգնած էք երևում, կարող էք ձեր հրացանը և փամփուշտակալը մեր պաշարակիր սայլերից մէկի վրայ դնել:

– Ներեցէք, պ. վաշտապետ, ինձ համար նոյնքան դժուար կլինի մի ընթացք անգամ հրացանիցս բաժանուել, որքան և նշանածիցս, – ասաց իտալուհին ու չարաձճիօրէն ժպտաց:

Մեծ հաճոյք էի ստանում նրա հետ խօսելուց, ուստի դիտմամբ ատելացրի.

– Բելլա, կռուի ժամանակ ձեր երկուսիդ պիտի տեղափոխեն վերջին շարքերը:

– Ո՛չ, դուք չափազանց բարի էք, դուք այդ չէք անի, չէ՛ որ դրանով սպանած կլինէք մեր կորովը, – ասաց նա:

V

Թշնամու երկրումն ենք:

Շտախոյզների բերած տեղեկութիւններից երևում է, որ թշնամին շատ մօտ է և պատրաստ՝ չափուելու մեզ հետ. կասկած չկար, որ շուտով տեղի էր ունենալու վաշտիս հրեղէն մկրտութիւնը և թշնամին բախտ չէր ունենալու զինուորներիս թիկունքը տեսնելու: Ինձ ծանօթ էր զինուորներիս ռազմական բարձր տրամադրութիւնը, ուստի կարիք չզգացի ատելի ևս բորբոքելու նրանց ոգևորութեան կրակը:

Մի քանի կարգադրութիւններ և վաշտս զօրաշղթայով շարժուեց դէպ թշնամու դիրքերը:

Քիչ անց օդը դդրդաց հրացանների կրակից: Թշնամու կրակի տակ շարունակուում էր մեր առաջխաղացումը: Ջինուորներիս երեսին վախի նշոյլ անգամ չկար:

Առաջին շարքերումն էին Վենետիկի երկու մատաղ զաւակները: Դոննան յաճախ նետուում էր Բելլայի առաջ՝ իր կրծքով պաշտպանելու նրան: Բելլան փոխադարձաբար աշխատում էր յետ պահել Դոննային, բայց իզուր, նա և՛ կրակում էր, և՛ հաստատ քայլերով առաջ անցնում:

Կռիւր բորբոքուեց: Հոսեց կարմիր արիւնը: Ջինուորներս կուում էին՝ կատաղաբար, հեզնելով վտանգն ու մահը:

Աչքի էր ընկնում Դոննան, խենթ ոգևորութեամբ բռնուած՝ նա մի վայրկեան մոռացել էր իր նշանածին, բաժանուել նրանից և ամենավտանգաւոր դիրքերը նետուել:

Թշնամին յամառում էր իր դիրքերը թողնել:

Հասել էր սուիսամարտի ժամը, պէտք էր յարձակուել և փշրել նրա յամառութիւնն ու կորովը: «Սուիսներով յառաջ, ուռա՛...» լսում է աւագ յիսնապետիս հրամանը: Ջինուորները դուրս են թռչում դիրքերից և տարերային թափով յարձակուում թշնամու վրայ: Թշնամին ցիր ու ցան թողնում է դիրքերը և փախուստի դիմում:

Լուռ են թնդանօթները, էլ չի գործում մահը...

Դադարել է կռիւր...

VI

Գիշեր է, աշնանային մի ցուրտ գիշեր: Լուսինը՝ մահուան չափ ցուրտ ու գունատ, լուսաւորում է կռուողաշտը, նրա ճառագայթների տակ սպանուածների դէմքերն ատելի խորհրդաւոր ու ահաւոր են թում: Հրամայել են իմ ընկած առիւծներիս հողին յանձնել:

Մի քանի զինուորներ եղբայրական գերեզման են պատրաստում, իսկ միւսները՝ դիակները հաւաքում: Մի բլրի վրայ կանգնած, հայեացքս դէպ թշնամու քաշուած կողմը սևեռած՝ յարձակման նոր ծրագիրներ են յղանում:

Յանկարծ ականջիս է հասնում իտալուհու թաւշեայ և կախարդող ձայնը:

Երգ, չէ՛, նա չի երգում երկինք, նա լալիս է, ողբում, անիծում...

Ես խելայեղօրէն նետուում եմ առաջ, ինձ կանչում է, ինձ քաշում նրա ձայնը... Մի քանի վայրկեան վազում եմ դաշտերով, կանգ առնում հասկանալու, թէ որտեղից է գալիս երգի ձայնը, նորից վազում:

- Ո՛վ է եկողը՝ բարեկամ, թե՛ թշնամի, - եթէ վերջինն է, թող
ասպետ լինի, աղաչում եմ, ինձ ժամանակ տալու, մինչև որ սի-
րածիս դիակը գտնեմ:

- Ես եմ, ես, պաշտելի Բեյլա, քո հրամանատարը, - ձայնեցի
ես:

Ա՛խ, դուք էք, ասացէք, դուք չտեսա՞ք երբ և ուր ընկաւ իմ
Դոննան:

Չտեսայ, բայց կգտնուի նրա դիակը, մեզ պէտք է վերադառ-
նալ այնտեղ, էն բլուրի ստորոտը, ուր մեր զինուորները գե-
րեզման են պատրաստում իրենց ընկած զինակիցների համար:
Շտապիր միայն, քանի դեռ հողին չեն յանձնուած դիակները, և
յուսան, որ կյաջողուի քեզ վերջին անգամ նշանածիդ, իսկ ինձ՝
քաջ զինուորիս ճակատը համբուրելու:

Մենք լուռ ու տխուր անցնում էինք դիակներով ծածկուած
դաշտերով: Բեյլան յաճախ յետ էր մնում ու կռանում դիակների
վրայ:

- Երկինք, շնորհակալ եմ քեզանից, - գրեթէ ճչաց իտալուհին.
նրա խօսքերին հետևեց գնդակի ձայնը: Ես ետ դառայ և նետո-
ւեցի դէպի նա: Բեյլան արնաթաթախ ընկած էր մի դիակի վրայ:

Կռացայ. Դոննան էր, որի սառած և վիրաւոր կրծքի վրայ մեռ-
նում էր իր նշանածը:

Նորէ՛ն միա...սին, շն...որի...հակալ եմ երկ...ինք, մեր հրա...
մանա...տար...ը բարի է, նա մեզ միա...սին, մի գեր...եզմանի մէջ,
սգաւոր ուռ...ենի...ների տակ կթաղի... Իմ Դոն...նան շատ էր սի-
րում ուռ...ենիներ:

Լռեց Բեյլան:

Կռացայ, երեսս կրծքին դրի, սիրտը դադարել էր գործելուց...

Ցանկարծ մոայլուեց գիշերը, երկինքը գլխիս սևացաւ և մի
բան սկսեց խեղդել կուրծքս: Ես ուզեցի ճչալ, հարայ կանչել...
Ես ինձ պարտուած էի զգում, չնայած թշնամու շարքերից անթի
կեանքեր էինք խլել, յաղթել նրան...

Պարտուած էի ես, որովհետև էլ չկային Բեյլան ու Դոննան -
երկու վրիժակ Քերովբէները:

Էլ ո՛վ պիտի թախծէր թառամող ծաղիկների, ընկնող աստղե-
րի համար...

Էլ ո՛վ պիտի լար թշուառի արցունքով... Երկու դիակների կող-
քին ծունկի եկած՝ խորհում էի ես դառնացած հոգով:

Ինչո՞ւ է մեռնում գեղեցիկը, լուռ երգը, ցնդում երազը...

Ինչո՞ւ մեռան այն երկու խորհրդապաշտ էակները... Բեյլան ու
Դոննան, չէ՞ որ կեանքն ու աշխարհը նրանցով է գեղեցիկ, երգն
ու երազը՝ նրանցով կենդանի...

VII

Արևելքն արդէն շառագունում էր, երբ ես ոտքի ելայ:

Մեր դիրքերի մէջ շարժում կար: Նշաններով ինձ մօտ կանչե-
ցի աւագ յիսնապետիս:

- Բեյլան և Դոննան, - ցոյց տալով դիակները՝ ասացի ես:

Նա խորը հառաչեց և վայրկենապէս մոայլուեց:

- Լսիր, - շարունակեցի ես, - այս դաշտի վրայ սգաւոր ուռե-
նիներ պիտ գտնել ու նրանց տակ Բեյլայի ու Դոննայի գերեզ-
մանը փորել: Դա երկու նշանածների ցանկութիւնն էր, որ սրբու-
թեամբ պիտի կատարուի:

Դէ՛, գնա և զանազան ուղղութեամբ զինուորներ ուղարկիր՝
սգաւոր ուռենիներ գտնելու:

Լոյսը բացուեց:

Մեր կրակի մատնած թշնամու այրուող գիւղերը և արհնտտ
սուրս ինձ իրականութեան գիրկը դարձրին, երազական տրա-
մադրութիւնս տեղի տուեց զգաստութեան:

Վերադարձան դեռ գիշերով դէպ թշնամու դիրքերն ուղար-
կուած հետախոյզներս: Թշնամին այնքան էլ հեռու չէր, ինչպէս
ենթադրում էինք մենք, յապաղելու ժամանակ չէր, պէտք էր յար-
ձակուել՝ ժամանակ չտալու թշնամուն, որ իր ահաբեկ և ցիր ու
ցան շարքերը կարգի բերէ:

- Պ. վաշտապետ, ձեր հրամանը կատարուած է. բլուրի ստո-
րոտում, եղբայրական գերեզմանից քիչ հեռու անցնում է մի գու-
լալ առուակ, որի ծաղկապատ ափերին գլուխները կախ՝ երազում
են Դոննայի սիրած սգաւոր ուռենիները:

Բեյլան ու Դոննան...

Ես մի վայրկեան մոռացել էի նրանց, էն երկու զարնուած
երազներին...

Ես դիմեցի դէպ այն կողմը:

Քիչ անց՝ քերեցին դիակները. գերեզմանի առաջ վաշտի դրօշակը խոնարհուեց... գոռացին հրացանները... Բելլային և Դոննային իջեցրին գերեզման:

Նորից ես ինձ պարտուած զգացի. նորից երազական տրամադրութիւնը համակեց ինձ, ու ինձ թուաց, որ Բելլայի հետ գերեզման է իջնում և գեղեցիկը, և երգը, և երազը... որ ջրերն էլ չեն ծփայ, էլ ոսկեշող աստղերը չեն պլպլայ... որ էլ գարուն չի գայ, ծաղիկ չի բացուի...

Գերեզմանը ծածկուած էր արդէն:

Մի անգամ էլ գոռացին հրացանները - դա մեր վերջին հրաժեշտն էր:

Մենք հեռացանք՝ թողնելով մեր վիշտը գուլպա առուակին ու լալկան ուռենիներին սգալու...

1915 թ.

35

ՄԱՐՏԱԿԱՆ ԽՈՇԵՐ

(Նւէր հայ կամաւորներին)

Զինւոր, մեռիք փառաւոր մահով, որ հայրենի հողը չկարմրի դիակդ գրկելու:

* * *

Քաջի ամենագեղեցիկ զարդը կուադաշտում ստացած վէրքն է:

* * *

Վախկոտները կուադաշտում սպանուում են պատահական «կոյր» գնդակով:

* * *

Որքան ուժեղ է զինւորի աստելութիւնը դէպի թշնամին, այնքան քաջ, այնքան յանդուգն է նա:

* * *

Յաղթում ենք ոչ թէ քանակով, այլ՝ որակով: Ուրեմն յարձակւիր առանց հարցնելու թշնամու քանակի մասին:

* * *

Յաղթում է նա, ով նպատակ է դրել յաղթել - յաղթել՝ ինչ գնով էլ լինի:

* * *

Թիկունքից զարնւած զինւորին, գիտցէք, պատուով չեն թաղում, չեն ավստում:

* * *

Կուադաշտից փախչող զինւորը ազգից ու հայրենիքից է փախչում:

* * *

Տառանւեցիք կուի ժամանակ - կորած ես, պարտուած:

* * *

Վատ է և անարժան այն զինւորը, որը չի ձգտում հրամանատար դառնալու:

* * *

Մեռի՛ր պատուով: Հէնց որ կորցրի՛ր պատիւդ, մնում է մեռնել:

* * *

Վախկոտները խորհում են, տատանուում, անվախները՝ վճռում, յանդգնում:

* * *

Փանք նրանց, հերոսներին – նրանց, որոնք վտանգն ու մահը հեզնել գիտեն:

* * *

Կուսակաշտում եղի՛ր անխնայ, բայց ոչ վայրագ:

* * *

Առաջինը եղի՛ր թշնամու վրայ գրոհ տուղներից, վերջինը՝ կուսակաշտը թողնողներից:

* * *

Յարձակման ժամանակ յիշի՛ր Զէյթունի, Ադանայի և Վասպուրականի աներները:

* * *

Ուզում ես յաղթել – յանդգնի՛ր:

* * *

Պատուով մեռնելու պատրաստակամութիւնը – ահա՛ յաղթութեան մայրը:

* * *

Չեն սիրում այն զինուորին, որն ընդունակ է միայն սովորական գործեր կատարելու:

* * *

Թշնամին տեսաւ թիկունքդ – կորած ես:

* * *

Երբէք չմոռանաք, որ ձեր անձնական պատիւը կապած է ձեր զինակիցների, ձեր զօրամասի, ձեր ցեղի պատւի հետ: Ուստի սովորեցէ՛ք գերադասել պատուաւոր մահը անպատիւ կեանքից – թէ՛ կռում և թէ՛ կռից դուրս:

* * *

Միշտ յառաջ... Խիզախները չեն լսում, քաջերը չեն կատարում «Ետ-մարշ» հրամանը:

1915 թ.

ՀՈՎԻՒՄՆԵՐ

Նրան, որը ներշնչեց

Ջահել որսորդ էի ու խենթօրէն սիրում էի Բարակիս հետ օրերով թափախել հայրենի գիւղիս դար ու դաշտերով:

Եւ միշտ էլ բախտը ժպտում էր...

Իսկ եթէ առաջին օրն անյաջող [էր անց]նում՝ մնում էի գիշերելու հովիւների մօտ և միւս օրը շատ վաղ վերսկսում թափառումներս...

* * *

Աշուն էր...

Օրը տարածանում էր, երբ լուռ ու միայնակ վերադառնում էի սերկացած դաշտերով:

Երկրորդ օրն էր, ինչ սար ու [քար] էի ընկել, բայց և այնպէս վերադառնում էի առանց որսի:

Առաջին անգամն էր որսորդի բախտը դաւաճանում ինձ:

Չարացած էի: Գոհ չէր և Բարակս՝ մի բան գտնելու յոյսը դեռ չէր կորցրել, ուստի յաճախ նետում էր այս կամ այն կողմը, մտնում առուակները, կորչում ձորերի ու անձաւների մէջ ու նորէն յայտնուում:

Ես յամրաքայլ առաջ էի անցնում, երբ յանկարծ Բարակս բարձր հաչոցով նետուեց առաջ. դա նշան էր, որ նա մի բան նկատել է:

Բարձրացրի գլուխս՝ օդի [մէջ] թևերը հպարտ թափահարելով [սաւառնում] էր արծիւը ու պատրաստուում [հանգ]իստ առնելու իր սիրած ժայռերի վրայ, որոնք աջ թևիս ուղղութեամբ հսկայ գերեզմանաքարերի պէս սևին էին տալիս:

- «Կրակի՛ր», - կարծես մէկը հրամայօրէն ճչաց ականջիս, ու ես բնագոյօրէն հրացանս ուղղեցի դէպ սաւառնող արծիւր:

Օդը թնդաց, ու նոյն վայրկեանին սուր ճիչով ժայռերի վրայ գլորուեց սպանւած արծիւր:

Բարակս նետուեց դէպի որսը...

- «Ոճրագործ». - դարձեալ նոյն ձայնը գոռաց ականջիս:

Ես քար կտրեցի:

Մի վայրկեան ինձ թւաց, որ գնդակն [իմ] սրտին է առել:

Ա՛հ, չէ՛ որ Արքաների մէջ միայն նրան էի սիրում... Գահերի մէջ միայն նրա գահը, լեռների էն հպարտ բաշերն էի ես սիրում... ու յանկարծ [փշրել] էի նրա թևերը... Ինչ ոճիր...

Եւ ուր էր թէ միայն թևերը փշրած լինէր, ես նրան կտանէի [կիսնա]մէի, մինչև կամրանար թևը ու [նորէն] Ազատութեան ու հպարտութեան այդ թևաւոր Արքային [իր սիր]ած գահերին՝ է՛ն բարձրաբերձ լեռն[երին] կվերադարձնէի:

Այս մտադրութեամբ ես ն[ետուեց]ի դէպի հսկայ ժայռը և քարացայ զարման[քից]... Երևակայածս թևաբեկ արծի տեղ, ժայռի մօտ ընկած էր մի ջահել տղայ...

Ուզեցի խելագարի պէս ճչալ, փախչել ես, երբ դժարութեամբ ձեռքը դէպի կուրծքը տարաւ ու ժպտաց:

Ես տեսայ նրա վէրքը:

- Ո՛վ բարի մարդ,- շարժեցին շրթունքները, - լուսնի տակ շատ բարութիւններ են կատարւած, սակայն քո արածը ամենամեծը կմնայ, թող օրհնեալ լինի այն բազուկը, որն իմ առաջ [երկնային] դռները բացեց...

Այս խօսքերի մէջ թոյն ու թշնամանք զգացի ու նորէն փախչել ուզեցի ես, երբ խորհրդաւոր [պահիս] շրթունքները նորէն շարժեցին:

- Տեսնում եմ, ո՛վ բարի մարդ, դու տանջուում ես՝ կատարածդ ոճիր [կար]ծելով: Դէ՛, որպէսզի արածդ բարութեան մեծութիւնն զգաս՝ լսիր իմ [տխուր] պատմութիւնը,- մի խոր հառաչով սկսեց մեռնողը ու լռեց մի պահ.

- «Չգիտեմ, անցորդ, չգիտեմ, թէ [ով] է ինձ աշխարհ բերել՝ այն պղտոր գ[ետը, թէ] սիրաշատ ու քնքուշ մի կին... Գուցէ և քարն է ինձ ծնել, չգիտեմ... [սևով] է անցել մանկութիւնս, որպէս [...] որք, մի բախտաւորի դռան [եմ] մեծացել...

Եթէ ճանապարհի եզերքին [թափ]ւած էն քարերը երբևիցէ գգել, [տա]քացել են մէկի կրծքին-զգուել եմ և [ես]...

- Մէր չեմ իմացել, իսկ համբոյրի քաղցրութիւնը, անհ, այժմ էլ չգիտեմ,- յուզմունքից խեղդւելով, շնչաց անբախտ վիրաւորն ու լռեց:

- «Մի երջանիկ մեծատան հովիւ էի ես», - կարծես երագի մէջ,- շարունակեց մեռնողը,- «օրս բնութեան ծոցում դ[ար] ու

դաշտերումն է անցել, չգիտեմ մեր դաշտերում մի անկիւն, մեր լեռներում մի անձաւ, ուր տարածած չլինէի հոտս...

Չգիտեմ մի թռչուն, որի երգը լսած, մի ծաղիկ, մի դալար, որի բոյրը ծծած չլինէի ես...

Ա՛խ, էն գիշերները, էն լուսընկայ ու անուշ գիշերները, երբ ծաղկավառ սարալանջերին, հովաշունչ գետափերի կամ ծիծաղկուն աղբիւրների մօտ պառկում էի թաւշէ կանաչների վրայ, [հով] ւական մաղախը գլխիս տակ, [սրի]նգը շրթունքներիս...

Անհամար թռչունների բներ [գիտ]էի ծառերի վրայ, արտերի մէջ, [ծեր]պերում ու ժամերով նստում էի նրանց մօտ, կարգի բերում, փափկեց[նում, քո]ղարկում, որ անձրևներից ու չար մարդկանց հայեացքից հեռու մնան:

Չէի մոռանում և մրջիւններին՝ [հատ]իկներ էի հաւաքում նրանց բների [մօտ], բների շուրջը մանր քարեր շարում, որ քամիներն ու հեղեղը չաւերեն նրանց:

Քնքշօրէն սիրում էի ծաղիկներին:

Ա՛հ, ե[ս] ինչպէս էի համբուրում նրանց [անու]շաբոյր թերթիկները, գուրգուրում, խօսում հետները... Խորշաց[ած] ու թանամող ամէն մի ծաղիկ [թր]ջում էր իմ աչերը՝ տխրեցնում... առականներից ափով ջուր էի կրում ես նրանց համար, իսկ այն տեղերում, [ուր] առականեր ու լճակներ չկային, [ինձ] համար պահած ջրի վերջին կաթիւն էի ցօղում թանամող ծաղիկների վրայ...

Մէրս չէ զլանում և թիթեռնիկ[ներին], սառածներին տաքացնում էի, շնչով [ոյժ] տալիս թևերին, թոցնում, թև[աբեկ] եղածներին էլ, որոնք աշնանը շատ են լինում, խնամքով ծաղիկների փարթամ թերթիկների վրայ տեղափոխում...

Իսկ երբ հեռուներից լսում էր գիւղական զանգերի քաղցր ղողանջը, ես [ծուխ]կ էի իջնում, խոնարհում ձակատս, ջ[երմօր]էն համբուրում մայր երկրի կուրծքն ու մրմնջում...

- Խորշակ թող չանցնի մեր դաշտերով, առակ չցամքի, ծաղիկ թող չթառամի մեր դաշտերում»...

Այսպէս էր անցնում իմ օրը բնութեան ծոցում,- հառաչեց մեռնողն ու նորէն լռեց:

* * *

«Գարուն էր ոսկեվառ:

Աղօթքի հրաւիրող գիւղական զանգերի թախծոտ ղողանջն ինձ [ծխ]կի էր բերել:

Աղօթքիս վերջին խօսքերն էի մրմնջում, երբ ականջս կախարդ[եց] [մի] անուշ ձայն:

Դարձրի գլուխս՝ սարի լանջով հօյտիս մօտով մի ծերուկի հետ [իջ]նում էր մի մատաղ կոյս: Նա[...խ]երի Ֆէեա* կարծեցի, բայց երբ աւելի մօտեցաւ՝ ես ճանաչեցի նր[տանտիր]ոջս աղջկան- աննման Սինամին:

Ես քիչ անգամ էի տեսել նրան, [մի]շտ էլ հեռուից ու չգիտէի, որ իմ գուրգուրած ծաղիկներից ու թիթեռնիկներից և ո՛չ մէկն էր նրա նման:

Եւ յանկարծ մի բան խփեց [կրծ]քիս տակ ու էլ չկարողացայ շարունակել աղօթքս... ոտքի ելայ:

- Մեր հովիւն է,- ցոյց տալով [ինձ]՝ ասաց հայրն աղջկան, ու հեռացան...

Սիրտս սկսեց աւելի արագ խփել: Առանց հասկանալու թէ ինչու, նորէն ծնկի եկայ: Ճգնեցի, բայց [չկա]րողացայ աղօթել... միայն աչքերս թացացան...

Խելագարի պէս ես ոտքի թռայ, ուզեցի վազել, հասնել Սինամին, մէկ էլ տեսնել նրա շարմաղ երեսը...

Բայց չէ՛ որ ես նրանց հովիւն էի, չէի կարող...

Եւ ես լացի դառնօրէն...

Օրը տարածամում էր:

Տխուր էի:

Խենթօրէն ուզում էի գուրգուրել, քնքշել մէկին:

Մօտեցայ ծաղիկներին, որոնք [Ս]ինամին տեսնելուց յետո՛յ՝ ինձ [գունատ] թացին: Գունատել էին թիթեռների երփներանգ թևերը...

Եւ ինչը Սինամի գեղեցկութեան առաջ, ի՛նչը չէր գունատի...

Ու էլ ոչինչ, բնութեան ծոցում էլ ոչինչ չէր գրաւում, չէր [մխ]ի թարում ինձ: Սրինգիս դիմեցի, դա էր իմ՝ միակ ընկերը, որը թռչունների [պէս] գեղգեղել, գետերի պէս մորմոքել [գի]տէր- նա

* Առասպելական յանրժառար (ծանօթ. խմբ.):

էլ լալահառաչ հողմերի լպէս) հեծկլտաց միայն...

- Սինամը, ծաղիկներից գեղեցիկ, թիթեռներից քնքուշ Սինամը... Գոռում էր ողջ էութիւնս...

Ես նորէն վերսկսեցի երկար ու երազկոտ թափառումներս՝ հ[անդից]- լեռ, լեռից-անձաւ... չկ[ար]...

* * *

Գիշեր էր:

Մարմանդ հովերը քնքշօրէն [սիր]աբանում էին քնաթաթախ ծաղիկների հետ, երբ ես ծնկի եկայ աղօթելու... Բայց նորէն Սինամի շարմաղ պատկերը խոռովեց հոգիս...

Ես խելագարում էի- նա չկար...

Մթութեան մէջ ուրագծում [էր] գիւղը:

Սինամը... ճչաց սիրտս ու [...ե..]՝ ց առաջ:

...Լուսինը նոր էր բարձրանում:

Հնալով վազում էի ես ու մօտենում գետի]ն, երբ գետից, որի միւս ափին ընկած [էր գիւղ]ը, լսեց մի ձայն:

Մօտեցայ ափին՝ ոսկէ մազերն ալիքների մէջ՝ փռած չքնաղ նազանքով ջրերի գեղանի...

- Փերին էր լողանում...

- Սինամը, - կանչեց սիրտս...

Ես նետուեցի ալիքների մէջ:

Սինամին յիշեցնող չար փերին [հազն]եց ու անյայտացաւ...

Չկար Սինամը...

Յուսահատ՝ ես էլ սուզեցի ու չար [ալի]քները խեղդեցին ինձ...

* * *

Դու լալին ես, անցորդ...

Տես, արդէն գունատում են լեռնակատարները:

Նրանց վրայ արևի վերջին շողերը մեռան:

Գունատում է և իմ ճակատը... լսիր...

- Սիրոյ համար անձնասպան եղող[ները] կեանքում տեղ չունեն:

* Անընթերցանի բառ:

Նրանց հոգիները դատապարտուած են ալեխուշների, եղնիկների, արծիւների պատկերացնելու աշխարհիս երեսին, մինչև որ [քեզ նման]... բարի մէկը նրանց առաջ երկ[նային] դոխերը կբացի...

Առաջին գարունը չէ, ինչ [ես շր]ջում եմ աշխարհում...

Շատ անգամ եմ բախել երկնքի [դար]պասները, բախել երկնքի դռները [պահ]պանող հրեշտակների հետ... ն[որից] իջել...

Շրջել եմ որպէս արքայական Ա[ռիւծ] երկչոտ եղնիկի պատկերով, իսկ [Սինամ]ին շիրիմին- սնի, նա վաղուց է մ[եռած], ինչպէս և այս անգամ. միշտ [թն առած] եմ եկել հպարտ Արծւի պատկերով...»:

Լռեց մեռնողն ու մի սրտաճաք [հառա]չից պայթելու չափ բարձրացաւ նրա կուրծքը, որի վրայ փարթամ վարդի պէս բացած վերքի շուրջը լճացել էր կարմիր արիւնը...

Ես ծունկի եկայ:

- «Թող օրհնի»... Ճզնեց շարունակել մեռնողը, բայց խօսքերի տեղ միայն նրա վերջին թոյլ հառաչը լսեց...

* * *

Տարիներ են անցել:

Ծաղիկներից գեղանի, թիթեռներից քնքուշ Սինամի ու բեմուրազ հովի պատմութիւնը գիտեն շատերը:

Ու շատերն են լացել այդ գոյգ հողաթմբերի վրայ՝ արցունքն աչքերին, շատերն են թախծել...

Հաւանաբար 1915 թ.

ԴԷՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՏԱՃԱՐԸ

Ամէն ինչ, ամէն ինչ նրա մէջ մատնում էր Հերոսին:

Տաք կարեկցութիւն դէպի իրաւագուրկն ու թոյլը, ֆանատիկ սէր՝ դէպի իր ցեղն ու նրա գուրգուրած ազատութիւնը, բիրիւա-

կան անշահասիրություն ու համեստություն, վտանգի ու մահուան բացարձակ անգիտացում, ռազմական անսահման էստուգիազմահա՛ Հերոսը, ահա՛ Քեռին:

Երբ հնչեցին պատերազմական փողերն ու ցնծաց Մարտը՝ հազարաւոր սրերի հետ մերկացաւ և նրա սուրը...

Չգիտեմ ով ինչո՞ւ՝ նա իր ցեղին արև ու ազատութիւն նուիրելու համար բարձրացրեց սուրը...

Ու այնուհետև քանի-քանի անգամ Հոռմի հպարտ որդուց աւելի, հպարտօրէն կարողացաւ ասել՝ «Եկայ, տեսայ, յաղթեցի...»:

Քանի-քանի անգամ, քանի ռազմադաշտերից նա մեզ յղեց հպարտ Կեսարի երեք բառը...

Քանի անգամ նա՝ հայ ցեղի վերածնութեան գաղափարի այդ աստուածաշունչ Հսկան հեզնեց վտանգը, անգիտացաւ, ժխտեց մահը, յանդգնեց, յաղթեց, մինչև որ պատերազմների քմահաճ աստուածը դաւաճանեց նրան...

* * *

Ընկան Քեռին...

Լռեց կովկասեան գորածակատի անպարտելի ու անզուգական Ռազմիկը...

Բայց դեռ երկար, շատ երկար սէզ Արտոսն ու Նեմրուժը, որոնք վկայ եղան հայ դիւցազնի սխրագործութիւններին, կպատմեն անցորդին՝

- «Ուրագանի պէս մեր փէշերով Քեռին անցաւ ու սրբեց տարաւ թշնամուն»...

Ընկաւ ալևոր «Արծիւր»...

Բայց դեռ երկար, շատ երկար նրա մոնչիւնը պիտի արձագանգէ Հայաստանի ու Իրանի ռազմադաշտերում...

Դեռ երկար նրա մեծ ստուերը պիտ գորավիզէ հայ կորիւններին...

1917 թ.

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՆԹԷՕՆԸ

I

Խոկում է Արարիչը
Փառապսակ Խէչօին*

Ի գուր սպասեց երկնքի դարպասների մօտ պահակող հրեշտակը՝ չերևաց տիեզերքի արարիչը:

Այդ օրը, ինչպէս ամէն առաւօտ, Նա չմօտեցաւ երկնքի դռներին՝ նորազարթ երկրի աղօթքը լսելու:

Եւ առաջին անգամ օրը բացեց առանց արշալոյսի, որովհետև այդ օրը Աստուած չժպտաց մեր երկրին:

Այդ ժամին իր գահի մօտ միայնակ խոկում էր Արարիչը... և տխուր էր Նա, տխուր, ինչպէս լռութիւնը Արաբիայի աւազուտ անապատների:

- «Նոր աշխարհների ծնունդ է երկնում մեր Տէրը», - երկիւղածութեամբ շշուջում էին Արարչին շրջապատող քերովբէները... և մտայլ էին նրանք, ինչպէս երկնքից արտաքսուած իրենց երբեմնի ապստամբ ընկերը:

- «Եւ ինձ թուում էր, - խորհրդաւոր լռութեան մէջ լսեց Արարչի ձայնը, - ինձ թուում էր, որ դէպ Յաւիտենականութիւնը դիմող վայրկեանների ու հազարամեակների անվերջ քարաւանները միշտ բեռնաւորուած են եղել արարածներիս նրբահիւս օրհներգերով...»

Որ և՛ մարդ, և՛ սողուն, և՛ թուփ, և՛ թռչուն, որ ամէն մի արարած, ամէն ժամ գոհութիւն շնչել ու իմ անունն օրհնել... Սակայն, Նա անթաղ մեռելներից, թշուառի արցունքից, անմեղի արիւնից-ստեղծած երկրի անէծքից և անկատարութիւնից խօսեց»...

Լռեց Արարիչը:

Ու նորից խորացան Նրա ճակտի ակօսները ու տխրութիւնը

* Խէչօ (Դաշնակցական Խէչօ) - Խաչատուր Ամիրեան (1868-1915) - հայոց ազգային-ազատագրական շարժման գործիչ, էին նախիջևանցի, երկրորդ կամատրական գնդի հեծելազօրի պետ, որի գլխաւորութեամբ հեծելազօրը առաջինը մտաւ Վան:

թանձր ստուերի պէս ծածկեց նրա դէմքը:

- «Չէ,- բարկութեամբ բացականչեց Արարիչը,- չէ, իմ ստեղծածը չի կարող կատարեալ չլինել. ինձ մօտ բերէք, ուզում եմ մէկ էլ լսել նրան»...

Քիչ անց, քերովբէների հետ տիրոջ առաջ ծառացաւ ՄԱՐԴԸ, որ նոր էր թողել մեր յանցաւոր աշխարհը:

- «Ո՛վ մարդ,- նորէն հնչեց Արարչի ձայնը,- խօսելով աշխարհի անկատարելութիւնից, չմեղանչեցիր դու»...

Պատասխանի տեղ երկնքի նոր հիւրը միայն ժպտաց դառնօրէն ու հեռացաւ...

Խոկում էր Արարիչը:

Եւ տխուր էր Նա, անելի տխուր, քան հազարամեակներ առաջ, երբ միայնակ ու անկայան շրջում էր ջրերի ու քառսի վրայ...

1917 թ.

39

ԿՈՉ ՀԱՅ ԶԻՆՒՈՐՆԵՐԻՆ

(*ուզմական խոհեր*)

Չինւորներ՝ երբեք չմոռանաք, որ ձեր անձնական պատիւը կապուած է ձեր ցեղի և նրա պատմութեան փառքն ու զարդը կազմող անմահ Եփրեմների, Քեռիների, Խէչօների* և նման աստուածաշունչ դիւցազունների պատւի հետ:

Գիտակցելով այդ՝ սովորեցէք և սիրէք գերադասել պատուաւոր մահը անպատիւ կեանքից- թէ կուում և թէ կուից դուրս...

Գիտակցելով այդ՝ անգիտացէք վտանգը, մեռէք փառաւոր ու

* Եփրեմ խան Դաւթեան (1868-1912), Քեռի - Արշակ Գաւաֆեան (1858-1916), Խէչօ - Խաչատուր Ամիրեան (1868-1915), Դուման - Նիկոլ Դուման - Տէր-Յովհաննիսեան (1867-1914) - հայոց ազգային-ազատագրական պայքարի ոսկւիրաներ:

անմահացնող մահով, որ հայրենի հողը չկարմրի ձեր դիակները գրկելու...

Գիտցէք և մի՛ մոռանաք, որ վախկոտները կուի դաշտում սպանում են պատահական «կոյր» գնդակով...

Որ քաջի ամենագեղեցիկ զարդը- դա կուաղաշտում ստացած պատույ վէրքն է...

Որ թիկունքից զարնւած զինւորին պատուով չեն թաղում, չեն արհեստում...

Որ կուաղաշտից փախչող զինւորը իր ազգութիւնից ու կրօնից է փախչում...

Գիտակցելով այդ բոլորը՝ միշտ յառաջ, զինւորներ...

Խիզախները չեն լսում, քաջերը չեն կատարում «ետ-մարշ» հրամանը...

1917 թ.

40

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՆԹԷՕՆԸ

III

Փառասպակ Զաւարեանին

(*Ecce homo! - Ահա մարդը*)

Ջոհաբերիր...

Ջոհաբերիր անվերջ՝ առանց մնացորդի:

Սովորիր և սիրիր զոհաբերել ու տանջել բաւականութեան լուսափայլ ժպիտը երեսիդ... և դու կմօտենաս Աստծուն, դու կդառնաս մարդ-Աստուած...

Այսպէս է պատգամում իմ մարգարէն իր հրեղէն խօսքը...

Մոռացիր քեզ...

Յանուն թշուառների մոռացիր քեզ, երբ հազար հազարներին սև ցաւն է ընկերանում, բռնակալ կարիքը նեղում...

Ուրախ քրքջալու ժամին մի՛ մոռանայ, որ դառնօրէն լացողներ

կան...

Սիրիք թշառին, ծառայիք սրան, թող քո ցաւը թշառի ցաւը,
քո Աստածը թշառի Աստածը լինի...

Այսպէս է պատգամում իմ մարգարէն իր ազատ խօսքը...

Եղիք հպարտ...

Գոյութիւնդ քարշ տալու համար մի սողալ, մի ստորանալ, և մի
ստիր...

Ստել՝ նշանակում է հայիոյել ճշմարիտը, ուրանալ՝ նշանա-
կում է դադարել մարդ լինելուց...

Եղիք ազատ...

Գիտակից ստրուկի և յանցագործի մէջ չկայ տարբերութիւն:
Խոնարհիք ճակատդ միայն իդէալիդ առաջ, միայն իդէալիդ
ազատ գերին եղիք...

Եղիք բացարձակ...

Եւ ո՛չ մի զիջում: Յանցանք է զիջելը: Զիջել՝ նշանակում է թոյլ
լինել, ամօթալի պարտութիւն կրել...

Այսպէս է պատգամում իմ մարգարէն իր աստածաշունչ խօս-
քը և հոգին՝ նրա հրեղէն պատգամներին գերի վեհօրէն իր թներն
է պարգում...

1917 թ.

41

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՆԹԷՕՆԸ

IV

Տապանագիր

Շուշաններ, շուշաններ

բերէք լիարուն

Փառապսակ Հրանտ-ին

Անցորդ, նա սիրում էր- էն հպարտ արծիւ ռազմիկը...

Հեռու մարդաբնակ վայրերից, բնութեան խորհրդատր
փսփսոցին ունկնդիր՝ նա սիրում էր ժամերով մի թփի տակ երա-

76

գել մենակ...

Նա սիրում էր մորմոքը լալկան առակի և հառաչը հեծկլտող
ու վայող քամիների...

Նա, անցորդ, այս գեղատխուր հողաթմբի տակ հող դարձող
պատանին սիրում էր և լեռները՝ ազատութեան էն արծանիստ
գահերը, որոնց ամպոտ կատարներին յաճախ իր հպարտ ճակ-
տին Արևի առաջին համբոյրն էր ընդունում...

Ա՛հ, նա սիրում էր և արշալոյսը պուրպուր, և վերջալոյսը
տխուր, և երգն անխօս ոսկեշող աստղերի...

* * *

Դու լալիս ես, անցորդ...

1917 թ.

42

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՆԹԷՕՆԸ

V

Փառապսակ Աշուղին

- «Յո՛ երթաս»

- «Հո՞մ՝ նորէն խաչելու»

«...Այնտեղ, Մասսի էն ստորոտում կայ մի երկիր, ուր դարեր
է, ինչ օրէնքի ու Արդարութեան տեղ գործում են երկաթն ու եա-
թաղանը, ուր դարեր է, ինչ հայ ցեղի եօթն անգամ խաչած մասի
օրը սևով է սկսում, գողգոթայով վերջանում»...

Այսպէս սկսեց նա իր պատմութիւնը Տաճկահայաստանի մա-
սին՝ Արաքսի ափին ընկած գիւղերից մէկում...

Ու այն օրէն «Մասսի էն ստորոտը» վառեց իմ երևակայութիւ-
նը, իրեն քաշեց իմ սիրտը, իմ հոգին, իր անունին կապեց իմ էու-
թիւնը...

Ու այն օրէն շատերի պէս ես էլ ուխտեցի էն չարաբախտ ժո-

77

դովրդի օր ու արևին մեռնել...

* * *

«Աշխարհը, ճի. այդ անսիրտ մայրը, որի լի ստինքները միայն կարող հզորները կծծեն...

Աշխարհը, ուր մերկն ու սովածը, ուր ճակատագրի խորթ ու գրկած որդիները տեղ չունեն, փայ չունեն»...

Այսպէս վերջացրեց իր խօսքը աշխարհի անարդարութեան՝ անարդար կարգերի ու օրէնքների մասին...

Ու այնուհետև մարդկությունը կերակրող, աշխարհը հարստացնող իրաւագուրկ բանուորն ու գիւղացին դարձան իմ աստածությունը, իսկ Աշուղի բարոզած սոցիալիզմը՝ իմ անտարանը...

* * *

Առաքեալ, բառիս ամենավսեմ իմաստով յեղափոխական առաքեալ էր Աշուղը:

Չկայ, Գողթնի երկնքի տակ, Արաքսի ափերում չկայ մի գիւղ, ուր լուսած չլինէր Աշուղի ծայնը:

Ու միշտ էլ՝ բիբլիական առաքեալների պէս՝ պարզ, ու միշտ էլ ոտքով շրջելիս:

Ու այդ այն սև շրջանում, երբ անեզր Ռուսաստանի միակ զարդերը կազմում էին ժողովուրդների երևակայութիւնն անաբեկող դժոխատիպ բանտերն ու զնդանները, կախաղաններն ու կառափնարանները, երբ ցարի ու խաւարի թագաւորութեան մէջ ազատ ու բարձր խօսքի տեղ անելի ազատօրէն բարձրանում ու իջնում էր ոստիկանական մտրակը:

Այն մղձաւանջային շրջանում, երբ շատերն էին փախչում Հռոմից ու յանդուգն, քչերին ուղղում իրենց... «Յո՛ երթաս»...ը, Աշուղը վերջին անգամ, յեղափոխութեան կարմիր անտարանը գրկած՝ մտաւ Հռոմ ու... խաչւեց...

Փանոբ...

1917 թ.

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՆԹԷՕՆԸ

I

ՔԵՌՈՒ ԱՆՈՒՆՆ ԷԼ ԷՐ ՅԱՂԹՈՒՄ

Փառապանծ Քեռուս

Թշնամու գերադաս ու թարմ ուժերը յամառօրէն գրոհում էին, խորտակում ու խորտակում, ետ քաշում՝ կարգի բերելու իրենց ցիրուցան շարքերը և նորէն ու նորէն յարձակում:

Յաղթութեան քմահաճ Աստուածը լքել էր մեզ՝ թշնամու կողմն անցել: Մեր շարքերում տատանում կար և մտադրութիւն՝ թողնելու մեր գրաւած դիրքերը, երբ սրարշաւ մեր զօրաշղթաներին մօտեցաւ զօրահրամանատարի թիկնապահը ու հաղորդեց Քեռուս օգնութեան հասնելու լուրը:

- «Յառանց, զինուորներ, մեզ հետ է Քեռին», - գոռացին վաշտապետները...

- «Յառանց», - արձագանգեց զօրաշղթան և որպէս երկաթէ պատնէշ շարժեց առաջ:

Քիչ անց, դեռ Քեռին չհասած, թշնամու խրամատները գերեզմանների վերածուեցին: Պարտուած էր թշնամին: Քեռու անունն էր յաղթողը...

II

ՔԵՌՈՒ ՎՐԱՆԸ

- «Դեռ կանգուն է Քեռու վրանը», - ասում էին կոզակները և առանձին վստահութեամբ անելացնում՝ նշանակում է դրութիւնը այնքան էլ անյոյս չէ»...

Թշնամու խաղերը հին ու փորձուած Ռազմիկին խաբել չէին կարող:

Նա գիտէր, որ թշնամու յաճախակի անվճռական յարձակումները ոչ այլ ինչ են, եթէ ոչ ռազմադաւեր: Ուստի շատ անգամ, երբ

հարևան զօրամասերը և վերջիններիս հրամանատարները իրա-
րանցման մէջ էին լինում՝

Քեռին խաղաղ ծխում էր իր վրանի դռանը նստած...

III

ՄՐՏԱՌՈՒՉ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Սակաւախօս էր Քեռին, ու այդ առթիւ նրա զինուորները կա-
տակով ասում էին՝ «Քեռին խօսում է ուրբաթէ ուրբաթ, վատերին
ծեծում շաբաթ օրերը, յաղթում ամէն օր»...

Լռակէր էր Քեռին, սակայն անելի սակաւախօս ու թախծոտ
դառաւ՝ բոլորից պաշտուած Խէչօի մահից յետոյ։

- «Նայում եմ Գրգուռին, - ասաց մի անգամ Քեռին Ախթամա-
րում, - նայում եմ և մտածում, թէ ինչպէ՛ս է՛ն բարձր սարի փէշերին
ընկաւ Խէչօն և թէ առանց ինձ ինչպէ՛ս է դադարել գերեզմանում...

Մենք չափազանց ուժեղ էինք սիրում միմեանց, որ կարողա-
նայինք անջատ ապրել ու մեռնել»։

* * *

Օրեր անցան։ Ու մի օր, Ռևանդուզի ճակատամարտում, Խէչօի
մեծ սուերը ալևոր առիծին առաջնորդեց դէպ յաղթութիւն՝ դէպ
հայկական փառատաճարը, որի մէջ ապրում էր ինքը։

1917 թ.

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՆԹԷՕՆԸ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

Մի պտղունց խունկ շրջիկ Զաւէնի յիշատակին
Գիշեր է...

Լուսնի ոսկեշող ցուքերի տակ գլուխս՝ վշտացած հրեշտակի
պէս գերեզմանաքարերից մէկին դրած՝ լուրթեան խորհրդաւոր
փսփսոցն եմ լսում.

- «Տեսնո՞ւմ ես, - փսփսում է լուրթինը միստիկ, - տեսնո՞ւմ ես
այն գեղատխուր հողաթումբը... Ա՛հ, նրա տակ, է՛ն հողի տակ հող
դարձողը երագում էր՝ Չարի ու Խաւարի ցահերն աներել, աշ-
խարհը երջանկացնել էր ուզում...

Երագում էր ու երջանիկ էր Նա, երբ լսեց Ֆալագի* չար քրքի-
ջը՝ շարժեց մանգաղը մահաբեր ու սպանեց երագն ու երագո-
ղին...

* * *

Այսպէս, լեզու առած փսփսում է լուրթինը միստիկ ու հոգիս
խեղդող թախծի գիշերն անելի սև, անելի ճնշող է դառնում...

Եւ ուզում եմ ճչալ ու փախչել ես...

Փախչել աշխարհից, Ֆալագի ձեռքից...

Փախչել հեռու, շատ հեռու...

Փախչել՝ դուրս գալ աշխարհից...

* Ճակատագիր:

ՄԻՆԻԱՏՈՒՐ

* * *

Ժպտամ, հրեշտակս, ժպտամ,
 Երբ ժպտում ես՝ կրծքիս տակ
 վարդեր են բացում,
 Եւ աշխարհն այնքան լայն,
 այնքան գեղեցիկ,
 Հեռուներն այնպէս թովիչ,
 այնպէս կանչող,
 Երանութեան կղզին այնքան մօտ,
 այնքան իրական է թում...

* * *

Ժպտամ, հրեշտակս, ժպտամ,
 Երբ ժպտում ես՝ հոգիս անմա-
 հութեան ափերն է գրկում,
 Արինս՝ գալիք գաղափարների
 թարմութիւնն է յուզում...

* * *

Ժպտամ, հրեշտակս,
 Երբ ժպտում ես՝ կրծքիս տակ
 վարդեր են բացում...

1917 թ.

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՆԹԷՕՆԸ

IX

ԱՐԾԻՒ...ԼԱԹՕՆ

Ճակատագրի պէս կոյր ու անողոք էր Նրա հարածը, որը չէր
 յապաղում իջնել այնտեղ, ուր գործել էին սկսում քիւրդ բէգերի
 կիրքն ու ախորժակը:

- «Քեզ, արքաների մէջ միայն քեզ, գահերի մէջ միայն քո գա-
 հր՝ լեռների էն սէգ ու անհաս բաշերը սիրեցի ես»...

Այս խօսքերը շնչացին Արծիւ Լաթօի բոցավառ շրթունքները,
 երբ մի օր, դեռատի պատանի, հայրենի դաշտերից Նրա հայեաց-
 քը՝ տիտան Արնոսի կատարին սաւառնող սև արծիւր գերեց...

Ու յուզած ու մտախոհ Նա վերադարձաւ տուն, պատից խլեց
 հօր հրացանը, համբուրեց, համբուրեց մէկ էլ, համբուրեց եօթն
 անգամ, գրկեց ու... լուսադէմին ջահել Ռշտունցին էլ չկար գի-
 ղում...

* * *

Օրեր անցան:

Արնոսի կատարէն Լաթօն իր արծալին թևերը տարածեց Ռշ-
 տունիքի վրայ ու այն օրէն մեղմացաւ աւարն ու աւերը, նւազեց
 արինն ու արցունքը այդ երկրում...

* * *

Պատերազմ էր: Ռուսական զօրքերը հասել էին Վան, կամա-
 տրները՝ Մոկս: Իր որդիների արինտվ եօթն անգամ սրբացած
 հայու երկիրը ընդմիջտ ազատած էր համարում, երբ պատե-
 րազմների աստածը, չէ, ցարի դիւանագիտութիւնը դաւաճանեց
 մեզ...

Սկսեց ռուս զօրքերի Հայաստանն աւերող ու ամայացնող

անփառունակ նահանջը... Լաթօն՝ Արևոսի հայարտ արծիւը չու-
զեց, չկարողացաւ բաժանել իր սիրած լեռներէն ու մնաց... Մնաց
մենակ, մենակ ամայացած երկրի մէջ ու մենաւորի անսահման
յուսախաբութեամբ կանչեց՝ «Ո՛ր ես, ցեղդ իմ, ո՛ր»։ Եւ երբ որ-
բացած երկրի դար ու դաշտերը, որպէս տխուր արձագանգ,
կրկնեցին. «Ո՛ր ես»՝ յուսահատ ու վրէժավառ հայորդին՝ որպէս
լեռան կատարէն պոկած հսկայ ժայռ՝ նետուեց դէպ առաջացող
թշնամին ու... ընկաւ: Փանոք...

1917 թ.

47

ՄԻՆԻԱՏՈՒՐ

II

Կէս օրից անց է,
Բայց անուշ քունը դեռ չի
Փակել աչերդ սև...
Ա՛հ, գիտեմ, հրեշտակս, սէրը
քուն չունի, սէրը չի քնում...

Կէս գիշերն անց է...
Ահա, յուշիկ ոտքի ելար մթութեան
մէջ հողանի թևերդ պարզեցիր,
Խլեցիր նրա պատկերը, սեղմեցիր
սրտիդ ու նորէն չքնաղ գլուխդ՝
արցունքից թաց՝ բարձին դրիր:

Կէս գիշերն անց է,
Բայց կուրծքդ՝ սիրոյ ծով՝ դեռ
չի խաղաղուել...
Ա՛հ, գիտեմ, հրեշտակս, դարդը
քուն չունի, դարդը չի քնում...

1917 թ.

48

ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ «ՀԱՅՐ ՄԵՐ»...Ը*

«Լսիր, Տէր, հայրենագորկ գաղթականն է քեզ կանչում:
Լսիր և մի տանիր զմեզ ի փորձութիւն՝ մեր սուրբ երկրէն
դուրս, օտարի դռանը, օտարի հացով երկար մնալու:
Այլ բաց, Տէր, մեզ համար միշտ բաց պահիր բոլոր ճանա-
պարհները դէպ Հայրենիք:
Եւ մօտեցնօր, Տէր, ոհ, փութացնօր երջանիկ օրը մեր դարձի:
Ամէն»:

1917 թ.

* Այս աղօթքով են սկսում աշխարհանքները «Տարօն», «Դուրան» արհեստա-
նոցներում և մի քանի որբանոցներում (ծանօթ. «Ժայռ» թերթի խմբ.):

ԻՄ ԵՐԳԸ

Լեռները...

Ես սիրում եմ այդ անմահ իգիթներին, որոնց բարձր ու բաց ճակատները ամէն օր կարմիր արշալոյսն է ոսկեգօծում, տխուր վերջալոյսը համբուրում:

Ես սիրում եմ այդ անյաղթ տիտաններին, որոնք գրանիտ կրծքերը կեանքի փոթորիկներին դէմ տուած՝ լուռ ու արհամարհօրէն մեր աշխարհին կնայեն...

Ես սիրում եմ լեռները՝ Ազատութեան այդ սրբազան ջահերը ու ամէն օր մեռնող արևի վերջին ցոլքերի հետ թողնում տափարակը, որի վրայ խեղճօրէն քարչ է գալիս մարդկային ցեղը և մտքով նրանց բաշերին տեղափոխում...

* * *

Գիշեր է...

Լեռան կատարէն՝ գրանիտ գահիս բարձունքէն ատելութեամբ ու ցասկոտ այն սև աշխարհին կնայեմ, որը դարերի անվերջ տարածութեան վրայ խունկ ծխել՝ պաշտել Անհաւասարութեան ու Անարդարութեան անսուրբ աստուածներին...

Աշխարհը, ոհ այդ անսիրտ մայրը, որի լի ստինքները միայն կարող հզօրները կծծեն...

Աշխարհը, ուր մերկն ու սովածը, անտէրն ու անճարը, ուր ճակատագրի խորթ ու զրկած զաւակները տեղ չունեն, փայ չունեն...

Ա՛հ, հոգիս կապստամբէ, մտքերս կընթոստանան այդ նամարդ աշխարհի դէմ և խենթ ցասումով բռնած գահիս բարձունքէն, լեռան կատարէն կուգեմ հարայ տալ, կանչել ու ասել.

- «Է՛յ գիտի նամարդ աշխարհ, որդիներիցդ մէկը կուլայ, որովհետև միւսը ոսկու ու պուրպուրի մէջ կգգու: Եւ դու կտեսնես այդ ճչացող անարդարութիւնը, կտեսնես ու կլռես... Ամօթ քեզ»...

* * *

Գիշեր է...

Լուսինը սև հագած իր թևերի տակն է առել ծովն ու ցամաքը...

Այդ լուռ ու տխուր ժամին քնել է և բախտաւորը, և անբախտը, մոռացել է և ցաւ, և ուրախութիւն...

Ա՛խ, քնէք աշխատութեան և թշուառութեան տանջած որդիներ, քնէք ցաւից հիւծուած, քաղցից մաշուած, սև կարիքի ճանկերում հեծող նահատակներ...

Քնէք բոլորդ, որոնց ջախջախել է կեանքը, խաբել բախտը, որոնց օրը սևով է սկսում, գողգոթայով վերջանում...

Ա՛խ, քնէք, որ մի վայրկեան ձեր դարդերն էլ քնեն...

* * *

Ես սիրում եմ խաւարը, անհունօրէն սիրում եմ գիշերը, որ գթաշատ մօր նման իր թևերի տակն է առնում, իր սրտին սեղմում կեանքի կուում ընկած յաղթածներին:

Ա՛հ, իշխէ՛, իշխէ՛ սրբազան խաւար, երկարիր գիշեր...

Բայց աւանդ, խաւարը թուլանում է, մօտ է արշալոյսը: Շուտով կբացի լոյսը, կգարթնի կեանքը: Դարձեալ մի տեղ հարուստի կուշտ ծիծաղ, միւս տեղն աղքատի սոված լաց...

Մի տեղ սև սուգ, միւս տեղն ուրախութիւն...

Դարձեալ անհաւասարութիւն, դարձեալ անարդարութիւն...

1917 թ.

ԷՆ ԳԻՇԵՐԸ

Գիշեր էր...

Մէկն այն կախարդական գիշերներից, երբ երիտասարդ սրտերը քնել չեն ուզում...

Արագի ափն էինք իջել: Ես և Նա՛ երկու ընկեր...

Անհուն կապուտակի վրայ նորահարսի չքնաղ նազանքով լուսինն էր լողում, իր ոսկի ցուլքերով Արագի ափերն ատելի գեղանի, խշշոցն ատելի միստիկ դարձնում:

Ամէն ինչ այդ գիշեր՝ և ծառ, և ծաղիկ, և սար, և ալիք՝ ամէն ինչ երգում էր, աղօթում, խօսում մեր հոգուն...

Երգում էին հազար ձայներ, խօսում հազար գոյներ և այդ բոլորը միանում էր մի հօօր ու ներդաշնակ համերգի մէջ...

Երանութեամբ արբած՝ ծծում էին մեր հոգիները, անյագօրէն ծծում Արարչի ձեռքով դեկավարող կախարդական այդ համերգը.

– «Լսիր, – որպէս թոյլ արձագանգ, լսեց իմ ձայնը, – ես կուզէի էս գիշեր, կամ մի այսպիսի գիշեր մեռնել...»

Չէ, չմեռնել, այլ էութեամբ լուծել բնութեան մէջ ու այնպէս ապրել...

Լսում ես, տերևների էն խորհրդաւոր սօսափիւնը, աստղերի անխօս երգը լսում ես... Իսկ հառա՛չը հեծկլտացող ու վայրդ քամիների...

Ա՛հ, ես նրանց մէջ, երկրի կրծքէն բարձրացող էն յալիտենական համերգի մէջ լուծել ու այնպէս ապրել եմ ուզում»...

– «Իսկ իմ հոգին, իմ հոգին էս գիշեր լալ ու աղօթել է տենչում», շշնջաց ընկերս ու ծունկ իջաւ...

Աղօթքի դրութեան մէջ լուռ էր նա, բայց ես լսում էի նրա ձայնը...

Աղօթում էր նրա հայեացքը, լալիս հոգին...

Ես գիտէի, ես ճանաչում էի նրա աստածներին...

Նա գեղեցկին ու վսեմին էր աղօթում, գեղեցկի ու վսեմի համար լալիս...

Ծունկի իջայ և ես...

Ու ինձ թւաց, որ մեզ հետ գլուխները կախ՝ անխօս աղօթում էին և՛ լեռները սէզ, և՛ ծաղիկները կոյս...

Եւ աղօթեցինք մենք, անձայն ու անխօս մխացինք մենք, մինչև արևի ոսկի ցուլքերը լեռների կատարների հետ և մեր ճակատները համբուրեցին...

1917 թ.

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՆԹԷՕՆԸ

X

ՀԱՆ ԽԱՉԱԿԻՐԸ

(փառապանծ Միհրանին)*

ՄԱՀՆ ԷԼ Է ՄԻՐՈՒՄ ԳԵՂԵՑԻԿԸ

Ինձ ասացին՝ էլ չկայ Միհրանը, և ես տխուր ժպտացի միայն, ինչպէս մի օր ժպտաց Մահը, երբ հայ խաչակիրը խթանեց իր քահել նծոյգին և շշնջաց՝

– «Տար ինձ, դէպ Միջագետքի աւազուտ անապատները թոցուր ինձ, ուր կիզիչ արևի տակ իմ ցեղի տխուր մասն է մարտիրոսանում»...

* * *

Ինձ գուժեցին՝ էլ չկայ Միհրանը և ասացի ես՝

– «Թող այդպէս լինի, թող միհրանաբար, դիցազնօրէն ընկնեն նորերն ու նորերը, եթէ ազատագրեալ Մեր Հայրենիքում դեռ կայ մի բուռ հող, որը ներկած չէ արիւնով»...

Ինձ ասացին՝ էլ չկայ Միհրանը և ասացի ես՝

– «Չեն լինի բոլոր խիզախները և յանդուգները, որոնք գի-

* Միհրան-Միհրան Բաղրամեան, այեքսանդրապոլցի մանկավարժ, մրաւորական, ազատագրական պայքարի մարտիկներից, աշխարակցել է «Ժայռ» թերթին, «Հորիզոն»-ին և այլ թերթերի: Չոհուն է 1917-ի յուլիսին Շարաթխանէում, թաղուել է Ալեքսանդրապոլում: Նոյն թուականին ի մի հաւաքելով «Դաշնակցութեան պանթէօնը» վերնագրի փակ փպագրած նիւթերը, Նժդեհն առանձին գրքով և նոյն վերնագրով դրանք հրատարակել է Ալեքսանդրապոլում (տես Ռաֆայէլ Համբարձումեան, Վարդ Նժդեհի, Երևան, 2001, էջ 41):

տեն հեգնել մահը, անգիտանալ վտանգը, որոնք լաւագոյնս են լաւերի մէջ, որոնց սիրում է Մահը...»:

1917 թ.

52

ՅՈՒԶԻԱԾ ԾՈՎԸ

Երկինքն արդէն վառել էր իր լոյսերը, երբ երկու ճամբորդները՝ հայր և որդի կանգ առան:

- «Այստեղ էլ գիշերենք հայր, ես սիրում եմ ծովը», - ասաց Սելիմը՝ յոգնած հայեացքը անսահման կապուտակին սևեռած...

- «Մնանք, սակայն չմոռանաս Մեծ Մարգարէի անունը նամազիդ մէջ եօթից աւելի անգամ յիշելու, - շնջաց ծերունին:

Կապուտաչեայ աղջիկներ ունի ծովը, - հմայածի պէս շարունակեց ծերունին:

Նրանք, է՛ն սիրատարփիկ ալէնուշները օրերով թափառում են խաղաղ խութերում ու այդ ժամին անխռով է ծովը:

Բայց երբ ծովեզրից կամ նաւի միջից ջահել ճամբորդի սուերն է ընկնում ջրերի վրայ, նրանք դուրս են նետում խութերից՝ նաւեր խորտակելու, փեսաներ որսալու...

Եւ մոնչում է ծովը, ալեկոծում...

Նաւը կորցնում է իր շաւիղը...

Ու երբ յուսաբեկ ճամբորդի հայեացքը ցամաքն է փնտռում չար ալէնուշները հերարձակ նետում են դէպ նա, գգում ու գուրգուրում նրան, լալիս ու հառաչում նրա համար, յուզում ու յուզում ծովի սիրտը... ու այսպէս անվերջ, մինչև որ ալիքները դիակն ասի կհանեն»...

- «Ճիշտ է, - հայր, հնչեց որդու ձայնը, - թէ ալէնուշները գիւզել են, ինչպէս Մեծ Մարգարէի խոստացած ջէննեթի փերիները»...

- «Եւ ինչպէս գարնան առաջին արևը, ինչպէս նորաբաց վարդը Շիրազի», - կարծես երազի մէջ աւելացրեց ծերունին ու նորէն խորասուզուեց նամազի մէջ...

Ծունկ իջաւ և Սելիմը:

Հայեացքը կանչող հեռուներին, էութիւնը ծովին գերի՝ նա փորձեց աղօթել, բայց նրա կողքին ու կրծքի տակ ալեկոծող ծո-

վերը անհնար դարձրին...

Վաղուց էր, ինչ քաղցր քունը ոսկի երագներով փակել էր ծերունու աչքերը:

Կէս գիշերն անց էր, բայց Սելիմը դեռ երագում էր արթուն...

- «Գուցէ և իմ սուերն է յուզել ծովի կապուտաչեայ աղջիկներին, ով գիտէ, - մտածեց ծովի պէս յուզած ջահելը ու յանկարծ ոտքի ելաւ, այրող հայեացքը մի ակնթաթթ քնած ծերունու վրայ դարձրեց և մի սուր թռիչքով նետուեց ծովը...

- «Ա՛խ, միայն թէ դիակս ավիր չհանէին ալիքները՝ միայն թէ յաւետ չխաղաղւէր ծովը», - ջրերի միջից հառաչի հետ լսեցին նրա վերջին խօսքերը...

* * *

Կարմիր արշալոյսն արդէն ոսկեգօծել էր լեռնակատարները, երբ ծերունի ճամբորդը բացեց աչքերը:

Ափից քիչ հեռու, աւագների վրայ փուած էր Սելիմի դիակը, որի կողքին վեօրէն ու խաղաղ թևածում էր ծովը...

1917 թ.

53

ԿԱՐՄԻՐ ԱՄԱՌԱՆՈՑ

Վաղուց չէ, ինչ Սելիմը շատ հեռու տեղից կուով փախցրեց, երագին տեսած, արևի պէս տաք, է՛ն արև Գիւզէլին...

Իգիթի վերքերը դեռ չէին սաղացել ու օրերով գլուխն իր փախցրած Գիւզէլի ծնկին, գինովի պէս նայում էր նրա ծով աչերին, նայում ու յուզում ծովի պէս...

* * *

Կռիւ էր ու գնում էին եզիդները, ձի նստաւ և Սելիմը ու բաժանելուց առաջ, սևաչեայ Գիւզէլին նա այսպէս ասաց.

- «Երբ մեր բակի առակը ցամաքի՝ գիտցիր էլ չկամ». այսպէս

ասաց ու մէկ էլ փարուեց, համբուրեց մէկ էլ, համբուրեց եօթն անգամ ու խթանեց ձիուն...

* * *

Օրեր անցան և երբ արծաթ առակը ցամաքել սկսեց, առակի ափին Գիւզէլը նստեց, նստեց ու լացեց, լացեց, քինջ արցունքով առակը վազեց...

* * *

Եւ մի օր էլ, երբ աչքերը կուրացան ու էլ արցունք չմնաց, եզիդ աղջիկը առակի վրայ կուրծքը պատռեց, որ իր արինով առակը հոսի...

* * *

Վաղուց է, ինչ ցամաքել է առակը Գիւզէլի բակում. մի շրջիկ աշուղ, եզիդ գիւղերում դռնէ դուռ ընկած, յուզիչ երգերով ասում է ամէնին.

- Ալաջա սարին Սելիմն ընկաւ...

1918 թ.

54

ՈՒՋԵՑԻ ՈՐ ՉԱՐՏԱՍՈՒԵՄ

Ուզեցի որ չարտասուեմ հոգւոյս Անդրին երկնակերտ
Ու կարմրագոյն տարտի զգացումները բոսոր...
Թաղեմ կրծքիս անհատնում խորխորատին մէջ անել
Որ չըլլայ թէ մի գուցէ, դու'ն ալ ինձ հետ արտասուես...

Ջերդ յաղթածի կամակոր, կեանքի շաղէն անգիտակ
Պաշտամունքի խորանիդ եղայ հըլու հպատակ

92

Ըղձացի որ ժպիտ տեսնեմ, քո շրթներուն յաւերժ հարս
Ու քո ժպտիդ լոյս ճաճանչէն, ուրուագծուի ճանապարհս:

Խենթի մը պէս, խենթի մը պէս... երջանկութիւնդ ուզեցի,
Վառ յոյսերուս, ախ վարդ փունջդ դագաղի մօտ մթաստուեր,
Կը մարմնի կ'աղերսէ, կը տենչայ միշտ խնդումիդ,
Վարկեան մը գուր շնորհք ըրէ կեանքը դժբաղդի հիլլէիս:

Այս իրիկուն այլայլուն մահիճիդ վրայ դու նստած'
Ինչո՞ւ լացիր ճվ աղջիկ, ու շիթ մ'արցունք աչքերէդ
Ինչո՞ւ տուիր իմ սրտին, որ փրփրալից ծովի պէս,
Մաշեց հոգիս ու փլեց անգօր քարափը կրծքիս...

Ինչո՞ւ ըսէ, թոյլ չտուիր, վարկեան մ'զքեզ դիտելու
Վարդ այտերուդ, վառ նայուածքիդ, ըսէ արժան չտեսար,
Ա'խ անգութիս, այնքան անգութ, որքան եղած չէ ոչ ոք,
Գոնէ խնդրեմ մեկնելէս ետք չի զղջացիր դու'ն հոգւով...:

Սիրտս անտէր թոչնակ մէ ձեռքդ, խնայել չես կրնար ոհ,
Ուրեմն լամ ես յաւէտ լամ, քանի այս է դատաստանդ,
Անգթութիւն չի վայելեր աստուածային կերտուածքիդ,
Երբ կարող ես գիրգ մատնեքով սրտիս սազը նորոգել:

Ծածկեցիր դու'ն դէմքդ անուշ, նայածքդ աղու անտարբեր
Ու խոցեցիր սիրտս մատաղ, այրող կրակ դրիր հոն,
Որ նոր կզգար սիրոյ բողբոջն, ճի փթթում է թէրևս,
Սէմին վրայ այդ աշխարհին ուզեցիր որ խամբեմ ես:
Ուզեցի որ խօսք մը լսեմ, ինչո՞ւ հիւանդիս ըսի
Լռութիւնդ ու ամչնալդ եղաւ ինձի պատասխան,
Ուզեցի որ չ'արտասուեմ սակայն կայլակ մ'արինի
Սրտէս եկած թարթիճներէս վար ինկաւ «թէ դժբաղդ մըն եմ ես»:

14 դեկտեմբեր 1916 թ.

93

ԵՐԱՋ

Գեղեցիկին, գեղեցիկին, հուրիներու պարուհին
Աստուածներու լոյս խորանէն իջնող աղւոր գեղուհիս
Մազերդ ի վար սրսկող շողեր երազներուս բագինին
Պարիկներն են թռչտող անվերջ ու միշտ յուզող անձկալիս...

Օ՛ պաշտեցի, քեզ հր[ե]շտակ մինչև եզերն սև փոսի,
Այնուհետու ինչ որ ըլլամ, եթէ շունչ մը թափառկոտ,
Աղաւնեակ մը անբոյն անսէր և կամ վարդ մը սիրալի
Կուգեմ ըլլալ՝ ով սէր Աստուած միշտ քեզի հետ, քեզի մօտ:

Դալկութիւնը մռայլ կեանքիս ասուպի պէս կ'անհետին,
Երբ որ կ'իջնեն, շաղւած, շողւած սիրտս վրան թներուդ...
Երբ որ կուգան կրծքիս թառել լողորդին պէս ովկեանին՝
Կը վերանամ, չկան՝* մեր աշխարհին քարքարուտ...
Կուգաս, կուգաս խոնջէնքիս պէս հանդարտ խոհուն,

յամրաքայլ

Կը պատրաստուիմ հաւատամքը սկսելու զգացուած,
Օ՛ Օ՛ Օ՛ հ ստինքներէդ թող կաթկթէ անայլայլ
Սէրդ հանապազ... ծծեմ անվերջ, և թող ներէ մեծն Աստուած:

17 յունիս, 1917, Թիֆլիզ

ՔԵԶԻ ՀԱՄԱՐ

Հեռու՛ հայրենի փլած օձախէն,
Հեռու՛ իմ ազիզ մօրկանս ծոցէն
Այսօր լուռ նստած անտէր տան մը մէջ
Յուզիչ յուշերով կ'ընեմ ել և էջ:

Իմ թախծոտ հոգին քեզի կարօտցած՝
Հայրենի երկիրս իսպառ որբացած,
Արին արցունքիս, կայլակն մահաբեր,
Աչքերս է բռներ, հագեր եմ սներ...:

Նոր երգս վշտոտ, ցաւոտ հոգիիս
Միմունջն է տխուր որ չունի Մասիս...
Չեմ կրնար երգեր արինէն անդին,
Աշխարհն գեղեցիկ, երազներն անգին...:

Քնարս անզօր զուլում երկունքէն,
Երբ աշխարհ եկաւ, լացէն արինէն
Ուրիշ բան երբէք, չի կրցաւ տեսնել,
Եւ կուզէ երգել քու ցաւդ անել:

Վերան աշխարհի ես անբաղդ զաւակ
Ժպիտս վշտին ու կեանքս համակ
Շաղած արցունքիս, ընկերն իմ լացի,
Ու սիրտս դարիպ քեզ կը կարօտի...:

11 հոկտեմբեր, 1917, Կարին

ԱԶԲԵՐԷԴ

Կուզեմ ըլլալ անտարբեր, սակայն կապ մէ անծանօթ,
Միրտս կայրէ, կը դիւթէ, մենակութեան մէջ անծայր,
Կը տառապիմ, կը տգնիմ, սուզիմ անդունդն երազի,
Բայց ավստն որ հոն ալ միշտ չորցած տերնն կը շարժի...

Րոպէն չանցած, խելայեղ խենթի մը պէս կայծակնահար
Կը որոնեմ, կը սուրամ, պատճառին մօտ լռակեաց,
Որ սակայն միշտ անքթիթ հոգւոյն խորը կը կարդայ
Ու կը թողու որ քալեմ մենակ ճամբան անապատ:

Որքան կիզիչ ու դժուար ըլլայ ուղին իմ կեանքի,
Որքան փուշեր ծլին հոն՝ քարերէն ոտքս արիւնի,
Ես անտեսած տառապանք յառաջ, յառաջ կ'ընթանամ
Եթէ երբեք դու'ն գոհես ականարկ մը վառ աչքերէդ...

Ջոհաբերումն այս կարմիր, ըսէ, հուր է կը հասնիս
Եւ կուզես որ կեանքս հատնի հեռուն խորշ մէ մխալէն,
Արիւնին մէջ դժբաղդի կուզես որ սիրտդ հրճուի,
Չ'երազելով թէ գուցէ անգութ մնալ քեզ կը խամրէ:

Անցնող օրերն այս գարնան, ինչո՞ւ կուզես որ ցրտեն
Եւ ինչո՞ւ թոռմի բողբոջն՝ անտէութիւնը կեանքի
Կաթիլ մը սէր ձօնէ ինձ սրտէդ հպարտ հրավառ,
Ու աչքերէդ, աչքերէդ նայուածք մ'ելաւ հրացայտ...:

3 յունվար, 1917, Երզնկա

ՅՈՒՇԵՐՈՒՍ ՈՐ ԿԱՆ

Տնոյն խոհերս, յաւերժօրէն, դառնօրէն,
Չորս ծայրերէն անցած աղւոր օրերուս,
Ինծի եկան և սիրտս լեցուն սէրերէն
Հին օրերու նուշ յուշերէն իմ հոգւոյս...:

Դաժանօրէն ստիպեցի ես ինծի
Որ չ'յիշեմ էն ծաղկանոցն հոտաւէտ
Էն երգերը, էն սէրերը անցեալի
Ջոր ապրեցայ, քու յուշերովդ գերդ պօժտ...

Կեանքիս ճամբուն քանի կոյսեր ժպտեցան,
Ինչո՞ւ արդէօք, ամէնուն մէջ փնտռեցի,
Կէտ մը գոնէ որ ըլլար քեզ յար նման,
Բարէ գուցէ, չպիտի գտնեմ իմ Անդրի:

Էս երեկոյ, երբոր բոլորն սիրալիք
Նոր երգերով, նոր սէրերով կը արբշին,
Նիւթէն հեռու՝, խարդաղանքի անյարիր,
Թող մօտենայ* քեզ երազող իմ հոգին...:

2 հոկտեմբեր, 1918
Իրկոսթա

* Չնագրում բառը անընթեռնելի է, գրած է «մորիէնայ», ինչը հաւանաբար Գ. Նժդեհի վրիպակն է, հաւանական եմ համարում «մօտենայ»: Ծան.՝ ծանօթագրողի:

ԷՆՈՐ (ՀԻՄԻԿ)

1 Երէկդ անցաւ, ալ ժպիտ չկայ
 Դաժան բաժանում, անողոք ջարդեր
 Ինձ շատ փոխեցին Աստուածդ վկայ
 Չեմ կրնար երգեր, չեմ կրնար սիրեր...
 Արին լոկ արին անցնող օրերուս
 Պիտ տեսնես աղտոյ թերթատել ուզես,
 Չի մնաց ինձի ոչ երգ ոչ ալ յոյս,
 Զուլումի օրեր չեմ ըներ անտես:
 Կուզես որ գրեմ իմ հին նամակներ
 Սիրոյ ու խանդի տողերով լեցուն
 Ներիր ինձ աղտոյս չեմ կրնար ըներ
 Հայրենիքն ամբողջ արնով է նախշուն:

ԷՆՈՐ (ԱՌԱԶ)

Այս իրկուն ով գեղուհի
 Նայուածքիդ տակ բոցավառ
 Սիրտս գերդ մոմ կը հալի:
 Սև աչքերուդ սևեռումս
 Մոռցուց գինին ու կեանքը
 Թախիծ մորմոք ու ցատում...
 Այս իրկուն աղտոյ իրկուն
 Սիրտս, սէրս ու հոգիս,
 Նայուածքիդ են խնկարկուն:

* * *

Կարմիր վարդի տեղ նշան
 Քեզի սիրտն իմ Ադրէան
 Իբրև նւէր յիշատակ
 Զգացումներս անապակ...

ԱՌՐԻԱՆԷԻ

Աչքերդ աղու հոգւոյդ ցոլքը կը սփռեն,
Նայուածքներդ մելամաղձոտ տարփալի,
Անթիւ սրտեր մեղկ հոգիներ կը դիւթեն:

Երկար ինչո՞ւ խորն աչքերուդ նայեցայ,
Ցաւագնօրէն, դժբաղդօրէն դառնօրէն,
Երազիս մէջ քեզի համար մարեցայ...:

Դուրսը կեանքը շոայլօրէն թող հեղու,
Աշխարհ բոլոր ճոխ փառքերով յղփանայ,
Թող թոյլ տրի ինձ՝ քեզ միայն դիտելու:
Բոպէն սահող որ քեզի հետ անցուցի,
Ցաւիտեան մ'իսկ չէի փոխեր նրա հետ,
Ջի այդ վայրկեան կեանքն ամբողջ վայելեցի...

Ինչո՞ւ աղտոյ մէնմէկ ժամուդ ցաւալի,
Չի լսեցիր սիրոյ տաղերս Բագինիդ,
Անցար հեզիկ սոսափին պէս տերևի:

Արդեօք ինչո՞ւ հոգիս այսքան տխուր է,
Երազներէ սին յոյսերէ սթափուած,
Ջի չի ժպտիր հոգիդ կերտուածդ մարմարէ:

«Նանիք չէ այն, երբոր սրտեր կը խօսին
Հրձուանքի բերկրանքի թելեր են,
Հոգին է այն պահուած թաքուն թանկագին...
Էհ ի՞նչ ընեմ այս երազներս հայունի,
Ջարդ ու աւեր, լոկ արիւն է մեր երկիր
Եւ արիւն է իմ կայլակներն արցունքի...»

23 յունիս, 1918, Կարին

ՔԵԶԻ...

Արևն բացեց հոգիս հրձեց ու ցնծաց
Սէրս ծաղկեց, երգս թռթռաց ուժգնօրէն,
Աղբիւրին պէս գուլալ, հանդարտ ու կամաց
Սէրս խօսեց կրծքիդ մօտիդ փսփսալէն...:

Սաթի պէս սև երկար մազերդ ամփոփուած
Թարթիճներդ յօնքերդ կամար ու սիրուն,
Շեղ նայուածքներդ երբ տեսնէ իսկ Աստուած
Պիտ խոնարհի, երկրպագէ մարմրուն...

Շքեղ կերտուած, անդրիններու դիցուիին,
Ոտքէդ գլուխդ փառահեղ ու խնկարկու
Երգի մը պէս կուզեմ ձօնել անհունին,
Մեծ անհունը դու'ն ես աղջիկ արևու...

Շողն արևու, ցոլքն աստղերու պսպղուն,
Գարնան եղեամ, մարգերուն ցօղն առտւան,
Սոխակին երգն, թովքը կարմիր վարդերու,
Նոյն ինքդ ես փառք բնութեան աննման...:

Շատ հանձարներ, քուրմերս Մուսայ աստուածիս
Անթիւ երգեր ու քնարներ ձօնեցին,
Գեղեցկութեանդ ու հմայքիդ փառաւոր
Նուիրեցին սէր, կեանք, հաճոյք անսովոր:

Հին սէրերու, հին օրերու խոր ծոցէն
Ըմբոստ քնարն ձեռքս առած քեզ կուզամ
Տես չեմ երգեր Անահիտին, Աստղիկին,
Քեզի կուզամ, նոր տաղերով, այս անգամ...

4 յուլիս, 1917, Կարին

ՄԻՐԱԾԻՍ...

Մազերդ ուսդ ի վար, յանձնած գեփիւռին ինձ եկար կրկին,
Սիրոյ ծովին մէջ հոգիով անբիծ լոգնալու եկար...
Փոթորիկն անեղ ծովը փոթորկեց ու աչքերս լացին,
Տխուր էր հոգիս որ չունէր անկիւն սիրածիս համար...:

Յոգնած ճակատս մատներուդ կարօտ փուշերով խոցուած
Հանգիստ մը կուգէր ծունկերուդ վրայ ու աչքերս տմոյն՝
Գամիլ բաղձացին աչքերուդ խորը սիրով արբեցած...
Բայց վիշտը կրծող թախիծը մահուան տարին ինձ հեռուն:

Աստղիկ դիցուիին հէք սրտիս սուլթան, սիրոյ պարուհին
Բանաստեղծօրէն հպարտ ու իշխող դուն ինձի եկար,
Ցասկոտ էր հոգիդ, թրջւած թարթիճներդ աղու լալագին...
Ու երգս լռեց, նայուածքդ յուզեց հոգիս հողմավար:

Ինչո՞ւ միասին այցի չի գացինք մեր հին պարտէզին
Երբէք չ'իշեցիր տաճարն աղօթքի սիրոյ չաստուածին...
Պահ մը կուրծք կրծքի աշխարհը մոռնանք, ցաւն ու հալածանք,
Մեր հին օրերու սիրոյ տաղերգը իրար փսփսանք...:

Իզուր յիշեցի սիրոյ տաղերը մեր հին օրերու
Չէ որ իմ երգը շաղւած է որբին անտէր այրիին
Լուռ հեծծեծանքին, սուգին ու լացին դժբաղդ մայրերու
Ա՛խ չունիմ աստղիկ հին տաճար չունիմ սիրոյ Բագինին...:

Երբ քեզ յիշեցի, քեզ հետ միասին սիրուել բաղձացի,
Մայր Հայենիքս անէծք նայուածքով իմ սիրտը խանձեց,
Երբ քեզ սրտովին պաշտել ուզեցի ու եկայ ծունկի,
Հազար տանջւածներ ու ջարդուածներ անթիւ պայքարն

ցոյց տւին:

18 մարտ, 1918, Սէլիմի լեռնանոց

ՉԵՄ ՄՈՌՆԱՐ

Գարնան ծաղկի օրերը մի՛ մոռնար, որովհետև այդ օրերուն
երագներովդ շատ անգամ ինձ սուրացիր ու հոգիիդ թռիչքներով
անմահութեան ուխտավայր մը շինեցիր – սրտիս բուրաստան մը:

Հաւատացած եմ, որ ուխտի տաճարը խորտակւած է... Բայց
գիտցիր թէ քանի քանի անգամ հոն ծնրադրած եմ, գիտցիր թէ
յոյզերով ու յոյսերով կանգնեցինք անոր աննիւթ խորանը:

Աղամանդ ու գոհար չչարեցի վարդերով ու յայսմիկներով
այդ մաքուր ու նուիրական տաճարը չի գարդարեցի: Ո՛վ գի-
տէ թերևս չար մը, նախանձոտ մը զանոնք աղարտած կ'ըլլայ իմ
խորանս սրբապղծելու համար: Հոն իմ սիրտս էր լուսաւոր քահի
տեղ որպէս խունկը հոտաւէտ, գոհարներ ու մարգարիտ, ծաղիկ-
ները երփներանգ...:

Գարնան գալուն չէի նայեր, չէի սպասեր որ փոթորիկն ու
քամին դադրին ու ձիւնը հալի: Մշուշի սարսափի օրեր ճամբայ
կ'ելլէի – պաշտամունքի խորանիս դիմելու՝ հոն սիրոյ նոխազը
ողջակիզելու համար: Գիտես այդ խորանը տառապանքի մարմ-
նացումովը շինեցինք: Շինեցինք կ'ըսեմ, որովհետև գիտես թէ
քանի անգամ անհամարձակօրէն ինձի օգնեցիր, կ'օգնէիր և կու-
զէիր որ ոչինչ չի գիտնայի քու ըրածիդ մասին, և դուն գոհ էիր որ
ոչինչ չէի գիտեր, բայց ժամանակն է ըսելու, որ ձմեռ օր մը երբ
ես սիրոյ խաչը շալկած խորանին մօտեցայ, այն խորանին, որուն
անդրանիկ վարպետն ու պատճառը եղար, ըսէ՛ այն ո՞վ էր երկար
սլացքներով թափ տուած թևին եկած էր այդ սրբավայրէն աստու-
ծային շնորհ մը առնելու: Ըսեմ, ըսեմ թէ ով էր այդ տրտում, այդ
թախծոտ մենաւոր վարուժանը... ուխտաւոր ծիծեռնակը...:

Սիրելիս այսօր դարձեալ ուխտաւոր մըն ես տարբեր սուրբի
մը, ուրիշ տաճարի մը, մեծ հաւատքի մը: Նոր ուխտի ճամբան
նեղ է դժնդակ մաքառումի գործը անյաղթ ու խաչը ծանր: Այդ
խորանը Հայրենիքն է, նոխազը մենք ու մեր գոհերը... Անոր փառ-
քը մէկ սիրտ չէ: Հոն՝ թշնամի սուլիներու ծայրը որբացած (պա-
տառուտած) անմեղ մանուկներու սիրտն է, բռնաբարումի ճամ-
բան մատաղ աղջիկներու անակնկալ ազատարարի մը սպասող
յուսալի նայուածքն է: Բազէի ճանկերուն մէջ բզբտուած ճնճղու-
կի պէս մեր յամառ ու տոկուն կոյսերու կուրծքն է, շիրմակարօտ

ծնողքներու հռնդիւններն են այդ կարմիր ու անաղարտ, վեճ ու գերագոյն խորաններու խորանին, Յիսուս – Քրիստոսը... Այլ հին ուխտաւոր մը չես ու չպիտի գաս երբեմն մեր հին ուխտավայրը այցելելու, որուն հիմը երազկոտ օր մը դրինք:

Երազները անցան, օրերը անցան, խորանն ալ փոխուեցաւ և նոր ուխտաւոր ես կարմիր ոտքերով, կարմիր կուրծքով, կարմիր ճակատով...

Միթէ սրբազան տաճարը իրեն ուխտի գնացողները կը մերժէ, միթէ հին ուխտաւորս ալ ինչպէս դու՛ն չեմ կրնար իր մեծութեան առջև՝ իրեն համար երդուել...:

Եւ չեմ մոռնար քեզ սիրելին, հաւատացած եմ որ դուն ալ չպիտի մոռնաս մեր օրերը երբեմնի, կեանքը անցեալի՛, խորանը հնամենի: Ու այդպիսով նոր օրան կեանքին ճամբուն վրայ կանգնող մեծ պատնէշները արգելք չպիտի ըլլան, փուշերը չ'պիտի դառնացնեն ու այն նեղ արահետներէն խիզախօրէն պիտի քալես երբ համոզուած ըլլաս թէ քեզ հետ հին ուխտի ընկեր մը ունիս...:

Մի մոռնար ինձ սիրելիս ու ես չպիտի մոռնամ քեզ:

12 մայիս, 1917, Տրապիզոն

65

ՀՐԹԻՌ

Թող գարունը գայ, թող մարգերը կանչեն ու թող բնութիւնս հրճի: Ես նժոյգս նստած բարձունքէ բարձունք պիտ անցնիմ գարնան հասնելու, թող գարունը գայ, ես նժոյգովս սարերը պիտ թռչիմ...:

Սարերու լանջին ձիւնածաղիկներ կան միայն, շուշանն ու յայսմիկը չեն ծլած՝ և սրտիս շուշանը իր ընկերուհին չպիտի գտնէ հոն:

Գիտէք, նժոյգս իր փռինչով գետինը կը ներկէ, ես մատնե-րովս աստղերու հետ կը խաղամ... Դիցուի՞իս աչքերը կը կարմրին, արցունք կարծես կայ երբ աստղերուն կը հասնինք...:

Գարունը թող գայ ես աստղերը կը ժողւեմ դիցուի՞իս կտամ... Շուշանն ու յայսմիկը, ելակն ու մեխակը ոտքերուն տակ կը

փռեմ ու բլբուլէն չի համբոյրած վարդը կուրծքին կը գառնեմ:

Քեզ հետ, քեզ հետ նստած նժոյգս դէպ գարունը կը թռչիմ...:

Կ'ըսեն չարեր կան աշխարհը ու բռնութիւն կայ լոյսը մարող, բայց իմ հոգին միշտ վեր է այդ բռնութիւնէն, այդ չարիքէն, սուգէն ու ցաւէն...: Հոգիս գարունի պէս թարմ, գարունի կարօտ սարերը կը վազէ, հովին անմեղութեան հետ կը խաղայ... Նժոյգս մտորը չի նայիր՝ ոտքերուն տակէն բոցեր կը ժայթքին ու բաշը ամեհիօրէն կը ցնցէ իմ սիրունիկ աշխէտս: Աշխէտս երբ իր ոտքերով բարձունքին վրայ կրակը կը խառնէր, երբ խռիւնջէն սարերը դողացին, դիցուի՞ին՝ գարնան ու աստղերուն ժպտեցաւ և երբ հոգիս աստղերուն հետ կը խաղար, արծիւր տարամերժօրէն թևերը փռեց ու բարձրութիւնէն ինկաւ ու ալ չտեսանք...:

Աչքերս չռած երկինք նայեցայ ինչ տեսնեմ. Աստուած կարմրած մեզ կը նայէր:

16 ապրիլ, 1918, Պեղիրկեան Կէչիւր դիրքին մէջ

66

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Անէծք անոր ճկ չի կուր չի փշրեր
Գազան թուրքին ծանր շղթան գազրելի,
Անօթ անոր ճկ չի տենչար մաքառիլ
Յանուն լոյսին իրաւունքին Սուրբ դատի:

Հայ հերոսներ ժամն է հանդէս իջնելու
Վերջին ճիգով Հայաստանը փրկելու,
Մերն է փառքը, մերն ապագան յաղթական
Եւ պիտ լինի այսօր, վաղը, անագան:

ՀԻԱՍԹԱՓՈՒՄ

Գարնան ծաղիկները, երգերը, յոյզերը, փառքերը ինձ հրապոյր չունին: Ամառան պաղ պաղ աղբիւրները ուռենիներու շուգը, խեղդող միօրինակ աշխատանքները ինձ վայելք չեն: Աշնան խաղողը, խնձորը ու բոլոր հարստութիւնն ու ...* մօտ զովութիւնը չեն փնտռեր և ձմեռան երկար գիշերներու օտար երդիքներու տակ, հէքիաթները չ'ուին երբէք այն որուն ես երկար բաղձացի և գուցէ ցվերջ պիտ բաղձամ...:

Ծաղիկ օրերս ինձ թանկ չէր ու ես զայն կը զոհէի հայրենի տան կարօտին ի խնդիր, որովհետև անոր մոխիրներուն տակ յոյս ունիմ գտնելու իմ անցած աղօր օրերուս այնքան գեղեցիկ, գողտրիկ ու անուշ յիշատակները:

Գարնան մի գեղեցիկ օր, երբ բնութիւնը իր բոլոր հրապոյրներով, պչրանքներով, գեղեցկութիւններով իր փառքը կը ցուցադրէր իմ առջև փակած գտայ լոյսի ճամբան: Ինձ համար հեռուն վառող ճրագը չ'կար ու ես սրտիս մէջ մենակ իմ Սուլթանը ունէի:

Օրեր չ'անցան խաւարը լոյսին յաղթեց ու զգացի որ մէկիկ մէկիկ կը մարին լոյսի ջահերը սրտիս, ու ես թներս այրած տատրակ անկաշկանդ աշուղ մ'ըլլալ ուզեցի: Իմ երգս սարերու լանջին գայլերը լսեցին ու վերջ տին իրենց ամեհի ոռնոցին, աղւէսները միամտած հառաչել սովրեցան, արծիւ վերէն հովանի ըրաւ ու Արսլանը արդար մոհնչը սկսեց:

Ես երգեցի մարդոց համար որոնք ինձ բոյն չտին, անգթօրէն պապերուս օճախէն քշեցին, ուրտեղ ծնողքս ինձ համար ոսկի երազներ հիւսած էին, ուրտեղ գերդաստան մը ժպիտն արցունքին շաղած երանութեան մը պէս դժբաղդութիւնը ապրած էր...: Զուլումէ զուլում ծնաւ ու զգացի որ ալ հեռու եմ բոլոր այն իրերէն որոնց համար կապրէի երբեմն: Զգացի որ մեծ աղբիւրի վրայ նորապսակ հարսի պէս կեցող ուռենին ու ջուրի թեթև ալիքներուն ժպտող տերևները չկան, չկան մարգերն ու ջրբոյսները, ցորենին ու կանանչ կապոյտին մէջ ցատկոտող ուլիկներն ու գառները: Հաւատացի որ չեմ տեսներ գառնարած պատանին, ձերմակ

* Անրթնանի բառ:

յանթան ու ...* հացի կտորը ձեռքին ու պզտիկ գաւազանը անութիւն տակ:

Համոզուեցի երբեք չեմ տեսնելու թոնիրին մէջ կռացած տանտիկնոջ թոնիրէն հաց հանելն ու թոռնիկներու չորս կողմէն, նա ինձ, նա Կարապետին. Միսագին, Սեդրակին ըսելը...: Հաշուեցի որ ախտի սենեակին, օճաղի գլխին բազմող մեծ հաւն ալ չմնայ մեզ թոռնիկներուս կեանքի արկածներէն պատմելու, կարմիր պաշն ձիուն մասին հրաշքներ ստեղծագործելու:

* * *

Չկան՝ ու այսպէս Քէրվանի նման եկան ու անցան տուն ու ընտանիք, մարդ ու մարդաստանք, ծանօթ բարեկամ, այգ ու այգեստան, յուշեր յուշարձան, և զգացի որ կեանքը ցնորք մէ, բաղձանքը երագ, յոյսերը ասուպ յոյզերը պղպջակ:

Այժմ ամէն բան օտար է չորս կողմս, սարերը ձիւն, քաղաքը ծուխ, ամէն կողմ գաղթ և ոչ մի բան այս բոլոր մեռելութեան վրայ ...** այն բոլոր հորիզոնները որ անցայ արիւնի և չարչարանքի ճամբէն քալեցի. դու'ն, իմ հայրենի տուն, հայրենի աւերակներ այնքան հեռու՝ այնքան մշուշի մէջ մնացիք, արնոտ անջրպետ մը կայ իմ և Ձեր մէջ, բայց նոյնքան մօտ էք իմ սրտին և քնանալ յոյշերովդ կապրիմ...: Քեզ չափ անտէր, գիւղ մենք այժմ, օդովդ, ջուրովդ, հացովդ ապրած ու սնած ու մեծցած կարօտովդ այրած 10 զինուորներ են շուրջս: Ես լռած մտիկ կ'ընեմ անոնց որ քու գովքդ կ'երգեն գիշեր ցորեկ աղբիւրներուդ վտակներուդ մարգերուդ վրան և սարերուդ լանջին կապրին իրենց հոգիով ու ես տխուր եմ, որ դուն չ'կաս, տխուր եմ որ այդ բոլոր յոյսի երազներէն հիասթափուեցայ...:

16 մարտ, 1918, Մէլիմ (պողոց հեք զինուորութեան օրերուս)

* Անրթնանի բառ:

** Անրթնանի բառ:

20Ն Ա.Թ....ին

Սիրտս խոցոտուած ու հոգիս տխուր
Կարօտ է քեզի, Ժպտիդ ցինջ մաքուր
Երգիք ինձ յուզած, իմ լոյս, իմ աղբիւր,
Քանի գարուն է ու կեանքն է փրփուր....:

Ինձ մի թող լալու ո՞ն երկար լացի,
Աչքերս տխուր քեզ կը պաղատի.
Ո՞հ կարեկցիր դուն, շոյիր նազելի
Ձեռներովդ անբիծ, վերքերս շարաւի....:

Բոպէ մը լսէ հեծծերս ողբունի,
Սիրոյ կայծերէն այրուած իմ սրտիս
Լուռ բաղխումներուն, շեշտ դիր սիրալի,
Երգիք գուրգուրիք վերջ դիր ցաւերիս...

Վանէ՛ թախիծը, ինչո՞ւ մենք պիտ լանք,
Քանի բերկրանք կայ ինչո՞ւ մենք տխուր,
Ժպիտով քաղցրիկ յոյս տուր, եղիք կեանք:
Երգիք՝ կարեկցիր – ծծոյլ ինձ բուռ բուռ:

Թոյր բոյրով ձօնէ՛ շուշանը մէջտեղ
Վարդը թագուհին ճակատը դուած
Յայսմիկն ու նարկիզ ըլլան զարդի տեղ
Ու սիրտդ վրան աստղով պսակած
Եւ կ'օրհնէ Աստուած...

1919.2.4

Վարդիվօսպոզ:

Այս կտորը անլացրել է Պ.Յ.Տ.Յովհաննէսեան
«Թոյր իմ նազելի»ի վրայ: Որը արտագրել է Ս. Թումեան:

ԿԱՐՆՈՅ ԱԻԵՐԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Իլիճէն թնթանօթները կը գոռան. Սուրատն ու Սեպուին են
այնտեղ, այդ երկու անձուէր հերոսները ճակատ ճակատի թրքա-
կան բանակին...

Ես գլուխս կախ կը յառաջանամ որբանոցէն դէմ գաւազ մէհե-
լին: Փոթորիկ կայ գանկիս մէջ, մարդոց կեանքի գոյութեան կուր
մասին կը խորհիմ, աւերակներու մէջէն կ'անցնիմ ու որբերը դեռ
աչքիս առջևն են: Ուստա Կարապետին տան առջևէն կ'անցնիմ,
սևցած պատերը միայն մնացած են. Իր տղան Սանասարեանի
բարձրագոյն կարգն էր վաղը շրջանաւարտ, նոր յոյսերով, վառ
երազներով: Բեղուն աշխատանքը պիտ սկսէր այս տան մէջ:
Օր. Եսթերն արդէն կարմրելէն կանցներ, Արսէնի սիրոյ ամօթէն
այն դուռնէն, որ այժմ քարերը սևցած են ու վերէն աստղիկնե-
րը տխուրօթէն կը դիտեն վարը փլատակներու տակ մարտդ յոյսի
աստղերուն:

Անվերջ փլատակներ... Հեռուն բամբիւնը ռումբի քով սևցած
դուռը ուստա Կարապետին ու մտքիս մէջը լացի...Աչքերը, կա-
րօսցած աչքերը որբերու...

Կանցնիմ խռովայոյզ ու մթին պատկերներ սուերներու պէս
կուզան ու կանցնիմ ու խորասուզած ցասումի ու բարկութեան
տապերու մէջ կը շփոթիմ:

Կը մտածեմ հայ ցեղըն այստեղ, այս մոխրակոյտներու տակ
իր անցեալի փառքը թաղած է, այստեղ հայ կանանց արեան ար-
ցունքովը թրջած են ու այս փլատակները մեր միակ յուշարձան-
ներն են մեր ապրած օրերու....:

Հազար անգամ մեր արիւնտով գնած հողը թշնամին մեզ չի
կամենար ու այդ կոիւն է կը մղենք, արևին տակ այս մոխրացած
անկիւնը չեն կամենար ու այդ հարածներու տակ կուրծք կտան
մերինները, ու ես կանցնիմ աչքերս կարմրած, սրտիս մէջ զայ-
րոյթ, սիրտս արդար պահանջի ցասումով խռով: Ըղձանքը կու-
նենամ դէպի մարտի, պայքարի դաշտը միասին զոհաբերելու,
միասին փչող քամիին ու թրքական բարբարոսութեան կուրծք
տալու այնտեղ ազգակիցներուս հէտ մէկ մեռցնելու և մեռնելու:

Որովհետև որբանոցին մէջ որբեր կուլան, որ հայր, մայր, տէր
ու տիրական չունին, այստեղ փլատակները կը մխան դեռ եր-

դիրդ այնքան վանտալ թուրք զօրքի բարբարոսութեան և սպառնալիքէն, հոն՝ փլփլած տան երդիքին տակ գաղթական կինս իր անտէրութիւնը կողբայ ու կը սգայ, ու բոլոր այս տառապանքները պաշտպանի պէտք ունին.....

Ես ալ կուգամ ու թող իմ ու բոլորիս արնով անգամն ալ ներկւի մեր առանց այդ կարմիր դաշտերը, ու թող հայր ու մայրերը չի սգան, թող ատերակները վերականգնին, և դահիճը թող հասկնայ, թէ քանթել դիրին, բայց շինել դժուար է, թող գիտակցի վերջապէս ճշմարիտ ու արդար զայրութի ու գինովութեան թափին:

Յավր 20 ... 1918
Կարին

70

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻ ՌԱԶՄԻԿ ԹԵՐԹԻՆ

Պիտի գրեմ գինուրի կեանքէն, սարերու լանջէն, դիրքերէն ... Պէզիրկեան կեչիւտ ենք, սարի բարձունքը: Թշնամի պահակները դիմացի սարէն կերկին և շատ անգամ խաղ կ'ընենք իրենց հետ, կրակի փամփուշտի խաղ:

Այդ խաղի արժէքը գիտենք սուղ է, բայց անուշ Ռազմիկ, սարերը բարձր են, օդը զով, գաղափարը վսեմ ու մենք հաշտուած ենք այդ թեթև խաղերուն հէտ: Այստեղ ամէն բան իդէալական է, սկզբունքային: Չէրչութիւն՝ չկայ խաբել ու խաբիլ, միայն կռիւ կայ, արդար իրաւունքի արդար մաքառում, ու մենք մեծ ենք հոգիով, որովհետև մենք պարտքի գիտակցութիւնը ունինք, կը պարենք փչող քամիին և զեփիւռին ալ հետ....

Ռազմիկ, դուն գինուրի ընկերն ես, կ'ըսեն, կոչումն ունիս անոր գաղափարական սնունդ տալու, գոհ ենք. գինուրն անշուշտ հպարտ է, որ քեզ ունի: Բայց ըսենք:

Ո՞ր են մեր քաղքենի պարոնները, երբեմնի ճառող ճառատող ձենթլմէները, պարտքի ու պարտականութեան մասին թէօրիաներ ստեղծող փիլիսոփաները. այսօր չեն գար չեն հետևիր դէպ այն սարերու լանջերն նոյն հասկացողութիւնէն մեզ տալու, այստեղ օդը զով է, բնութիւնը գեղեցիկ, տեղերը բանաստեղ-

ծական, հմայքն հրաշալի: Ինչո՞ւ հարուստները կը փախչին... ինչո՞ւ ինտելիգէնտները դիրքէն կը խորչին. Մենակ մտածել չի բաւեր, մտքերը իրագործելու ճիգ, աշխատանք ու զոհաբերում պէտք է: Մենք մեր ինտելիգէնտներու արժէքը կարող ենք հոս ալ գիտնալ, առանց մեզ նա ոչինչ է ու մենք անհովիւ առանց նրա: Դաւաճանութիւն է այսպիսի օրերուն Հայրենիքի հանդէպ պարտականութիւնը կատարելէ խուսափիլը:

Ռազմիկ, դուն հասկացուր ամէնուն, որ զինուոր ըլլալ մեռնիլ չի նշանակեր հապա ապրիլ. եկէք բոլորդ ալ կամովին, գիտակցօրէն, վեհանձնօրէն, մէկ հոգի, մէկ բաբախող սրտի պէս: Զգուշացէք, դուք գինուրին ատելութիւնէն, թուրէն ու մուրէն, որովհետև արդարօրէն նա պիտ ըսէ անէծք ու թուք թուք ու սև մուր ամէնուն. որոնք նորէն ևս չեն զգար վերքն հայուն, զգալը բաւական չէ, գործը մշակել, պարտականութեան լծիլ պէտք է: Յոյս ունինք, ամէն ոք գիտակցած իր դերին չպիտի՞ համարձակի չընել այն ինչ պարտի ընել....

Ռազմիկ, կանչէ, բոլորին, ըսէ պզտիկէն մեծին, հարուստին ու աղքատին, զօրաւորին ու տկարին ու այսպէս բոլորին անխտիր, որ ամէն ոք ընէ այն ինչ որ ազգը կը կամենայ, ինչ բանի մէջ որ նա ճշմարտօրէն գործ կրնայ ընել:

16 ապրիլ 1918
Պէզիրկեան կեչիւք

71

ՄՕՐՍ

Գերեզմանն իսկ, հեգնող տանջանքիդ վեհութեան առջև արիւնաքամ սիրտս դրի...: Երջանկութիւնը տառապանքին, զրկանքին ու նեղութեան մէջ փնտռող հոգիէդ սովորեցայ, դժբաղդներուն մտերմանալ ու անոնց վշտի զգացումները քինայոյզօրէն ապրեցայ...

Ո՞չ մի հանձար քեզ չափ հրամայականօրէն չի կրցաւ մարդն ու մարդկութիւնը, պարտքն ու պարտականութիւնը ճանչցնել: Կը խոնարհիմ մեծութեանդ առջև, ինչպէս բուրմերը չաստուածին:

Վիլիելմի, Էնվերի ու Թալէաթի դատաստանի ու դատախա-

* Գծոնութիւն, մանրախնդրութիւն, շահադիպութիւն, զօշարարութիւն:

գութեան օրերուն երբ շատեր չարչարանքներու տակ ես ին կը գիտակցէին, դուն այն ատեն ինքզինքդ մոռցար մայր:

Մտրակներէն կապուտցած մարմինէդ, լախտով փշուած արմուկէդ ու արիւնաներկ դէմքէդ անգիտակ մահուան սպառնալիքներով լի գիշերին, ինչ բանը քեզ դէպ սար առաջնորդեց...

...Մայրական սէրը:

Յարգանք ու երկրպագութիւն այդ սիրոյդ: Սադայէլներ, մարդակերներ չկային քեզ հետ, դահիճներդ յուսահատ քեզ հոգեվարքի մէջ թողուցին, երբ տեսան, թէ անտրտունջ կը տանիս հարուածները որդեսպան չի դառնալու:

Գիտէիր, որ տղադ անօթի է, ցաւերդ մոռցար, խօսք ունէիր ըսելիք կեանքդ ուրացար ու գիշերուան խեղդող մթութիւնէն անվախ արցունքովդ շաղւած կտոր մը հաց ու կսկծանքներովդ մակրուած քիչ մը պանիր բերիր:

Ջուակս մեր հայրենիքը մոխիր պիտ դառնայ, և ով գիտէ, թէ գիշերը իր խաւար երկունքին մէջ ինչ պիտ ծնի ... գուցէ ալ չպիտի տեսնուիք մահուան ճամբուն վրայ ենք և վախկնկեանը հազար չարիքներով յղի է:

Նայիր աչքերու՛ս...զգզուած մազերուս, բզբուած կուրծքիս նայիր, նայիր անվերջ տղամարդօրէն քու մօրդ: Կասկապոյտ մարմինին նայիր ծծերուս որ երբեմնի ծծած այնքան քաղցր կաթի փոխան այժմ արիւնն է որ կը կաթկթէ: Այս բոլորը քեզ մատնելու համար... քեզ սպանդանոցի յանձնելու համար: Էնվէրեան վոհմակներու կոկորդը հայի արիւնով մոլեգին արիւնիդ ի խնդիր-զաւակն իր մօր ձեռքով կապելու կը ցանկան:

Մայր մէի, պարտքիս գիտակցութիւնով անարգեցի բոլոր այդ ստեղծած չարիքները ու չի դաւաճանեցի կոչումս. բիւր նախատինք ու լուտանք կապարի պէս սրտիս ծանրացան, բայց երբեք երկմտանք թոյլ չտուաւ մայրական հոգիս...

Դուն տղան հայրենիքին ճշմարիտ զաւակ մ'եղիր, գիտցիր թէ ինձ պէս բիւր մայրեր իրենց արցունքովը լւացեր են այս հողը, գիտցիր, թէ մեր չարչարանքով, արիւնով ու տառապանքով նուիրագործուած ու սրբագործուած է մեր դժբաղդ *վէթանը** Համոզւէ, թէ ինչպէս հազար մայրեր հազար դարտով են մեռեր այս հողին վրայ: Երդուիր անոնց անունով պարտաճանաչ ըլլալ. ինչպէս մայրերու, ցաւի եղբայրներուդ, լացի քոյրերուդ, անտէր որբուկ-

ներուն համար ապրելու...Եւ խոստացած քու անունովդ, կաթովդ ու չարչարանքովդ զրկւածներու հալածուածներու, տանջուածներու եղբայրակցելու: Ու այդ ճամբայէն պիտ անցնիմ կեանքիս օրերուն.....

* * *

Երկու տարին կը բոլորէ մայր, որ հեռու եմ քեզմէ, կարօտ եմ իմ անգուգական սիրոյդ ու ծարաւի եմ քեզ որպէս անապատը անձրևի: Այս օրուան պէս միտքս են խօսքերդ հր[ե]լշտակային, թե-լադրանքներդ ծնրադրելի ու վիճակդ - ողբալի: Ալ թուրք Չէթէն ու ժանտարմը, Հաֆէզն ու Էհմէտը ինձ չեն հասնիր ծեծելու, փետտելու, բանտարկելու և լախտերուն տակ հարցնելու ու քու իղձերդ մասամբ իրականացան... բայց ասանդ դուն ինձմէ այնքան հեռու ես, այնքան չարչրկւած, բայց յուսացող զաւկէդ : Ու՛ր ես ով մայր, քեզ կը փնտռեմ, սակայն եղուկ, սա արիւնտո հորի-զոններէն անդին չեն կրնար տեսնել աչքերս մահկանացուի: Ու հեկեկանքներուս մէջ երեսի վրայ կիյնամ իմ արցունքը ծածկելու, իմ կրծող վիշտն ու թախիծս պահելու...

Այդ իմ հոգեկան փղձկումներուս մէջ մայր, քեզմէն սգաւոր ու վիրաւոր, բազմատանջ ու բազմախոց կնոջ մը առջև կը գտնեմ ինքզինքս ու զարհուրած կը բացականչեմ...

Ո՛վ ես դուն, որ այս գիշեր մահուան թափթփուկներով անուրջներս կարմրցուցիր: Ծէն...ծէն եղած քղանցքէդ ինչ կարմիր է, որ ճամբուդ երկայնքն ի վար կաթկթած է կին դու՛ կը սարսափիմ... փեճկած ալեխառն մազերդ ուսէդ մինչև դանակ դանակ ձեղքուած ծծերդ ո՛վ և ինչո՞ւ ներկեց: Ո՛հ կը սուկան:

...Օրհնէքէն մեծ ատելութիւնդ թշնամիին լեռնացած չարիքներուն վրայ փշրեցիր, և ինչ է այդ սարսափի աղաղակները անդրերկրեայ բացականչումները ծառացած. ինչո՞ւ ետևէդ կուգան... ինչ ձայներ են, ինչ կուգէն, մայր, որո՞նք են...

Մայր, մայր ալիքները կուրծքիդ տակ փշրած՝ ինչ փրփուրներ են բերնէդ վար, ինչ բոցեր են վշտէն մարած ու սգաւոր աչքերէդ... հիմակ կը խեղդիմ, գթութիւն.....

Ես արդարութեան բարկութիւնն եմ, ես խղճի բողոքը, լոյսի բոցը, վրէժի թոյնը ու Սիրոյ Չաստածը... Չարերը թող սարսափին, անարդարները երեսի վրայ իյնան, դահիճները սառստան:

* Հայրենիք (տողապակը Գ. Նժդեհինն է, Ռ. Հ.):

Ես այս գիշեր եկած եմ իմ զակրները ժողուելու. բոլորիդ իմ ցափ անմահ բաժակէն պիտ խմցնեմ ու ամէնքդ անխտիր տանջանքէն ծնած յաւիտեան պիտ ապրիք: Արդարութեան մարտիկներու լէգէօնը ետևես կուգայ որոնք ևս բողոքի հուրը ունին. բոլորդ... բոլորդ ելէք, թող վերջին ճշմարտութիւնը յաղթանակի...:

Մէկ մայր իմ, հազար ցաւ հազար խոց հազար վիշտ ունիմ, իմ զակրներս մէկ մայր թող ճանչնան, անէծք անառակներուն, անէծք – մոլորեալներուն:

Մայր Հայաստանն էր խօսողը, ես իր զակրներուն ամէնէն տկարը ծունկի եկայ ջեռմեռանդի մը պէս ու երկիւղածօրէն փսփսացի փառքս երկրպագութեան քու բարկութեանդ բողոքին լոյսին ու ցասումին...:

8 օգոստ. 1917
Կարին

72

“ԱԶԱՏԱՄԱՐՏԻ”

ՑԻՇԱՏԱԿԻՆ

Երբ արշալոյսը բացւեր գեղեցիկ, նախիրը տուարածի* կ'իջնէր դէպի դաշտ: Կ'երգէր գեղջկուհին, հերկէր գեղջուկը: Ժամն էր զարթօնքի:

Հոսուն վտակներ անուշ կարկաչով ծծողային կարծես, հայդուկը – որսի լեռներէն հպարտ երէներ շալկած դէպի գիւղ կ'իջնէր: Հայ հարսն ամչկոտ կուծն ուսն առած աղբիւրն վճիտ: Վարդերն ու յայսմիկ, մեխակն ու լելակ լեռ դաշտին բռնած: Մտքի վարպետը ծոցն էր գիտութեան: Այսպէս էր երկիրն մեր մայր Հայաստան, եղեմայ դրախտ:

* Տարած–հովի, նախրապան:

* * *

Բայց նախանձեցան... մէկմէկու ետև եկան շահ ապպաս անգուր ճէնկիզխան, զազիր Լէնկ Թիմուր: Եկաւ Համիտը, Էնվէր ու Թալանթ ու դահիճ Վիլիելմ: Եկան քանթելու երկիրն աւետեաց, մեր սուրբ հայրենիք, աշխարհ Հայաստան: Անգուր կոտորած պան ու թալան միշտ շարուէ շարան մեր երկրէն անցան:

Տեսէք դիմացէք անխիղճ քար դարձէք մարդիկ մարդաստանք: Լուռ մտիկ տուէք մոխրակոյտներուն կարմիրով ներկւած:

Լսեցէք ողբերգն բուերու գուժկան և արին լացէք վրէժով գինւած, ով վնի հայդուկներ:

Նամարտ թշնամին անգուր՝ ահարկու՝ անխիղճ՝ անկրօն, միշտ մոլեգնաբար թափեց մեր գլխին կրակէ լուտանք...: Խլեց ամէն ինչ, մեր ինչքն ու պատիւ, հաւատքն ու կրօն: Քանդեց ապշօրէն մեր տունն ու տեղը, դպրոցն ու մամուլ, վանքն ու յիշատակ պապերուս նախնեաց:

* * *

Տանջանքէ տանջանք արցունքէ արին կ'անցնինք յամբօրէն: Ջրկանքէ գրկանք, գրկանքէ կապանք կ'ապրինք անշունչ: Եւ թող բռնկի ընդվզումն կարմիր՝ մեզ աւետելու արշալոյս պայծառ:

Արին արցունքի, տանջանք գրկանքի երկունքէն մեզի յոյսը թող ծնի. յոյսն ազատութեան, վերագարթնումի ու վերականգնման:

Չկան Ջարդարեան, Ջօհրապ, Վոամեան, Շահրիկ, Վարուժան, Ատոմ, Ակնունի... Չկան և շատեր՝ մտքի վարպետներ ու մեծ կոթողներ:

Բայց կեանք առաւ ահա մեր դատի պաշտպան նոր «Ազատամարտ»:

* * *

Աքսորի ճամբուն յոգնած՝ ուժասպառ ճակատներն այրուած, ոտքերը բոքիկ, սրտերը թրծւած մեր գրողներուն յիշատակն այսօր մեզ կ'ոգևորէ: Ու ես ալ Տանթէն դժոխք կը նետեմ Դուրեան

գերեզման ինչպէս Վարուժան: Եւ մտիկ կ'ընեն անոնց մրմունջին, վեհ փսփսուքին գլուխս խոնարհած: Ես կ'երկրպագեմ անոնց ստուերին որք այսօր եկան: Եւ ցաւոտ սրտով կրծող կսկիծով մեծ մշակներուն սուրբ յիշատակին սիրտս կը խնկեմ: Յարգանք արտօրի ճամբին ինկած նահատակներուն, յարգանք պայքարի մեծ հերոսներուն և պատիւ անոնց լոյս յիշատակին: Մաղթանք վերածին և «Ազատամարտին»:

Պարծանք հաւատքիդ տանջւած ժողովուրդ ու յոյսիդ վսեմ: Փշոտ արահետք կրծքովդ բացած դէպ լոյս կ'ընթանաս: Քանի Ներոններ, Համիտներ վայրագ գլխովդ ինկան՝ իսպառ ջնջելու հետքդ լուսավառ ու խափանելու գնացքդ յաղթական:

Բայց դուն աննկուն, հպարտ հայեացքով, երկիրդ հայրենի արիւնովդ ներկած ապրեցար կրկին: Պիտ ապրիս յաւէտ:

• • •

Դժբախտ զաւակներդ աւերակներուդ բուն են ողբերգու, միշտ հալածական: Անտէր անթիկունք կոյսերը լալկան ճիկեր կսկիծով անվերջ կը մխան: Որբերը – խղճուկ, սոված մարմրած, գերթ յուղարկաւոր կը շրջին կուրծքիդ, ով մայր Հայաստան:

Քեզ չափ չարչրկուած, քեզ պէս բիւր մայրեր ողբ կ'եղերերգեն ու վշտի ծովէն, վաղայ փառապանծ գովքդ կը հիւսեն: Հաւատաւ մայր իմ մօտ է արշալոյս, մօտ է վախճանը քու ողբերգութեան: Եւ քու որդիքդ երդուեալ ուխտաւոր քու փառքիդ համար, քու վշտիդ համար պիտ զոհաբերուին: Ու պիտ վերածնիս դուն վշտիդ մեջէն աւելի փառահեղ ու միշտ գեղեցիկ, հմայիչ անվերջ... ու դահիճներդ ծնրադիր քեզի թողութիւն պիտ հայցեն:

Պիտ ներէս արդեօք...:

Օղակուած քաղցրիկ յոյշերով այսպէս՝ թոխք մը կ'զգամ երեկէն այսօր: Թոխք մը սակայն արիւնով շանթուած, որ հոգիս կը յուզէ: Հին երազներով, յոյսեր՝ յոյզերով նոր Ազատամարտ դողդոջ ձեռքս առած՝ անհուն բերկրանքով կը լեցուի սիրտս:

Պահ մը սահմուկած երկու իղձերու անջրպետին մէջ՝ արցունք... ժպիտի, ցաւի ու խանդի մահուան ու յոյսի յաւիտեան կ'ապրիմ:

Կոթնած կորովին, հաւատքին վսեմ մեր եղբայրներուն, կը մաղթեմ քեզի յաջող ասպարէզ, ճշմարիտ ձգտում, մաքուր իտէալ, սկզբունք վսեմ և իրագործման ջանք ու աշխատանք:

Անխոնջ մաքառէ, գնա տարածուիր հայրենի երկրին սուրբ դատին համար, լոյս սփռէ չորս կողմ, Թիֆլիզէն մինչև խորքերը մեր երկրի, ինչպէս երբեմն՝ Պոլսէն մինչև ներսերն Ասիայի:

1917 դեկտ. 10
Կարին

73

ԵՂՔՕՐՍ

Քաղաքէ քաղաք ու աւանէ աւան թշուառօրէն ու դժբախտօրէն անցայ: Շուրջս ծաղկէ հիւսկէնները թառմեցան, արտը կարմիր գգեցաւ ու ինկած բարեկամներուս ոսկորներու ճարձատիւնը ոտքերուս տակ, մահագոյժօրէն ու դաժանօրէն խարազանեցին իմ ցաւոտ ու չւառ հոգիս...

Ոչ ժպիտ, ոչ յոյս և ոչ նշոյլ մի աղօթքի գիս մեղմօրէն չի պարտեց: Արևմարին երկնքի կամարէն առաջին փայլող աստղին չափ մենակ՝ և խոժոր ամպերու փոթորիկ անձրևով յղի կուրծքը ձեռքելէն անցնող փայլակին չափ առանձին ըլլալս զգացի:

Տեսայ թշուառներ որ կեանքերնին լացին, վշտոտ հոգիներ, որոնք գալար աղիքներու պէս ձգմած հեկեկալ գիտցան: Էակներ, որոնց շրթներուն վերջին յոյսը կը մեռնէր, անցնողներ, որոնք մահամերձ տուայտանքի մը պէս այդ անվերջ, քարքարուտ կածածաններէն կ'անգօսնուէին...: Տեսայ բոլորին բոլորին այն արիւծաններէն կ'անգօսնուէին...: Տեսայ բոլորին բոլորին այն արիւծաններէն կ'անգօսնուէին...: Տեսայ բոլորին բոլորին այն արիւծաններէն կ'անգօսնուէին...: Տեսայ բոլորին բոլորին այն արիւծաններէն կ'անգօսնուէին...: Տեսայ բոլորին բոլորին այն արիւծաններէն կ'անգօսնուէին...:

Տեսայ՝ և մօտեցայ մեր հայրենի տան պարիսպներու առջևէն մեղմիկ զարնան զով գիշերներուն սրսփալով անցնող առուակին մեղկութիւնը...

Մոռցայ մեր թերթ, անվիշտ, անփուշ և անխարդախ կեանքի բոլոր ժպիտները ծաղկող... մեր գեղջուկի տունը, ուր ամեն ինչ պարզ գեղեցիկ ու բնական էր, մեր սեղանը փայտեայ, մեր ամանը հողէ ու այն այգին, որուն երփներանգ խաղողի ողկոյզներուն հետ մեր մանկութիւնը խաղաց:

Այր և մոռցայ այն հողը, ուրտեղ մեր ծնողքն իրենց քրտինքով

յոյսեր ծլեցուցին, ուրտեղ հերկի ակօսներուն մէջ մեր ապագայ երջանկութիւնը կերտել ձգտեցան: Ի փոխարէն կաթիլ մ'արցունք չունեցան իրենց անշիրիմ ոսկորները...

Թող ներէ ինձ ծանօթն ու անծանօթը, անհունն ու հիւլէն ես զանոնք սարսափի ցասումի օրերուն մոռցայ: Ես մոռցայ, երբ արհաւիրք ու խաւար, հալածանք ու զուլում սկսաւ:

Որովհետև ոչ մի արարած, ոչ մի գոյութիւն և ոչ մի շող մեզ չի մօտեցաւ մտերմօրէն ու բոյրօրէն...

Ես գիրքն առի հալածական ու դարիպ, անծնողք ու անթիկունք, անյոյս ու անուղեցոյց, ցիր ու ցան աստղերու պէս զանազան վայրեր ցաթած ազգի որբուկներուն հետ... Ես անոնց գրքով ու սրտով խօսեցայ: Անոնց դալկացած մահաբոյր շրթներուն յոյսի ժպիտ մը ծաղկեցնելու համար գիշերներ անցուցի: Երիտասարդ յոյզերս փշրած անոնց մէջ գերագոյն սուլթանը շինել ձգտեցայ, ու այսօր անոնք ալ չկան տարին տարին բոլոր ցեղիս գնացած չարչարանքի ճանապարհէն:

Ես գէնքն առի. ալ չէի երագեր, չէի երգեր դաշնակ ու դաշնամուր, ջութակ ու երգէօն փշրեցի բարկութեան ու ցասումի ապառաժներուն: Հեզնեցի բոլորին, որոնք տակաւին այն ու այն բուրգերուն կը խնկարկէին: Ըսի բոլորդ մէկ ուժին երկրպագեցէք: Ձեր սուլինի ծայրին թող ձօժի ձեր բարկութեան ազդանշանը, ձեր հրացանի փողին ծայրը թող հանգչի որդեկորոյս առիծի բոլոր մոհնչները ամենի. և թող ձեր ատելութեան գրոհը սկսի այն ատեն, երբ ցաւին ու տառապանքին մէջ խաղաղ ու ինքնագոհ սուգը խանգարեն...:

Փլցուած եկեղեցիներու բոլոր խորաններէն քանթած զանգակատուններու ամայութիւններէն, բոլոր երբեմնի մխացող օձաղներու երդիքներէն, աներած գերեզմանոցներու խաչքարերէն, հողաթմբերէն ու բոլոր սրբութիւններէն, ուր վանտալ ձեռքը հասաւ. մէյմէկ անէծքի ու զայրոյթի լեզէօն հանեցէք բարբարոս թշնամիին ճակատելու...:

Որովհետև ես կ'ուզեմ որ հատուցումը անխնայօրէն, քինայոյզօրէն ու ճշմարտօրէն տրուի, ես կ'ուզեմ որ արդարութեան և եղբայրակցութեան ապագայ դրօշը իրենց մէջ քէն ու ոխ չունենան: Որովհետև ես կուզեմ, որ հայ ազգը իր կեանքին մէջ թշնամին յաղթանակէ, ես կուզեմ որ խաղաղութեան ու եղբայրացումի դրօշը հաւասարապէս ծածանի բոլորի համար:

* * *

Այդ բոլորէն յուսահատ, օտար հորիզոններու և անարև երկնքի տակ, եղբայր ես ինքզինքս մինակ գտայ և տեսայ, որ բոլոր այդ իրականացման ճամբուն վրայ եղող իմ յոյզումնալի ըղձանքներս ասուպի պէս ցնդեցին:

Յուսահատ ճերմակ գիշերին լուսնկայի հետ շաղերով... շողերով, արցունքով ու հեկեկանքներով իմ սրտի բոցերը մարելու համար – արդար բախումը ունեցայ ու քեզ եղբայր, քեզ փնտոցի որ չկայիր:

ԿԱՊԱՆՔՆԵՐ

1. Շղթաներդ ոսկեցնցուղ ճվ պերճուի շամանդաղ Նայուածքներդ, շեղ ցոլարձանգ, սլացքներով խած. կիտող, Գիշերն ի բուն երագներուս ծափ ծփիկով միախաղ, Կեանք չ'թողիր, սէր չ'թողիր, ցաթեց իղձերն իմ սքօլ:
2. Էն որ անցար յուշիկ մուշիկ, հազար նազով պչրոտ, Էն որ ըսիր հազար ուխտով, կոյս ու անբիծ օրերուդ, Եօթը անգամ եօթը տասով քեզի պսակ ու նարօտ, Միթէ այսօր պիտի կարդամ. «Ես չեմ գիտեր զարթնելուդ»:
3. Ո՛վ կ'արգիլէ, կը կաշկանդէ, զգացումներս յորդ առատ, Սահման ունի կապել կրնան յուզումները պօժտի. Ո՛վ կը կտորէ սիրոյ գրիչն գեղեցկութեան ադամանդ Կոյս օրերուդ. հեշտանքներով նա ուռձացած թող յորդի:
4. Բագին չունիմ սիրոյ համար խնկարկուհիս, էյ, կին դու՛ Բոլոր քուրմերն շրջապատիդ անթօութեանդ ի խնդիր. Սպասումէն յուսալքուած, ինկան քեզմէ շատ հեռու՝ Ես եմ կանգնած տաճարիդ մօտ, բաց խորանդ ինձ լսիր:
5. Թափահարեմ կաշկանդումներս, որոնք հոգոյս կը փակին. Ազատ հոգիս թող վերանայ, վեր տիղմերէն լոկ կրքի.

Թող սրբութեամբ երկրպագէ. «Գեղեցիկին բարիին»:
Եւ ինչ է մեղքն, ո՞վ է. յանցանք այդ ուղին է այս կեանքին:

Նոյ. 20. 1918
Վրայր. Գազարնա

75

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

1. Իջիր հուրի, տանջուած հոգիս պարուրէ,
Դեռ չի ծաղկած ժպիտներէդ անուրջի
Հիսկէն մազն է ճաճանչօրէն գեղանի,
Սպիհներու բալասանի ի խնդիր,
Այս առաւօտ արևուն հետ ինձ խրկէ....:
2. Սիրերգներու թովքով յուշիկ այս առտու,
Մտքի անծիր թռիչքներով ճախրանքի.
Երբ նայուածքներս շողերուն պէս լուսնակին
Դրաս շեմին դարիպի պէս բախեցան յանդիպան
Տոհմիկ ցեղիս կարմիր արիւնը տեսայ:
3. Արև մարի հրաժեշտի թախծանքով
Եւ տուն և գիւղ և հայրենիք սրբազան
Եւ ուխտ, և սիրտ բոլոր սուրբերն պաշտումին
Երազանքի վերի վայրով մը խոհուն
Դիակներու տակ թաղեցի դառնօրէն:
4. Եկուր հու՛րի մթնշաղի մենութեամբ
Խաչուած սրտիս նայուածքներով այցելէ:
Շիկնած այտերդ մօտեցուր ինձ մեղմօրէն:
Արքայական բոց շրթներէդ փերթ առ փերթ,
Թափէ ժպիտդ աչքերուս մէջ ու այրէ:

25. 1. 1919
Վրայրիվուր. Գազարնա

76

ՔՕՆՖՐԱՆՍԻՆ ԱՌՋԵԻ.....

Ու բոլոր ուրուականներն այս գիշեր
Աչքերուս և հոգիս հետ Արշալոյսը պիտի սպասեն
Որպէսզի կեանքերնուն ծարարը յագեցնելու համար
Թերևս վերէն իրենց վրայ՝ կաթիլ մը լոյս իյնայ:
Միամտութեամբ

Տառապանքի թափառումէն յոգնած իրաւունքի ինքնագի-
տակցութեամբ մը արբշիռ, այս առաւօտ անհամար նահատակ-
ներու պատգամներէն ոգեկոչ՝ մարդկութեան բոլոր ոճրապարտ-
ներու դատավճիռը ձեռքիս մէջ Ձեզի եկայ....:

Վտարանդիի ծածկուած ցնցոտիներս արևի նախաշողերուն
երևումին հետ հոգիս ցաւի բոցավառ կայծկլտուքներովը այրե-
ցի. ... տանջանքի և արհաւիրքի ճնշող շպարէն անցած՝ բիրտը ու
պսպղուն արտացոլացումով, անցած վայրերուս, հրաժեշտի վեր-
ջին պատուէրներու ծրարը ահա կը բանամ....:

* * *

Այն ատեն՝ երբ բարտի հասակս աւիշի էր կարօտ, հոգիս լոյ-
սի, և կամքս ինքնայատուկ ոգևորութեամբ հաւատքի երկաթեայ
մուրձերով յոյսը կը կերտէր, ինձմէն ինչ ուզեցիք, որ չտուի:

Արագաստի շիկնտ կարմրութիւնով լուսաշաղ քոյրերուս սի-
րազեղ ողջագուրումներուն մահահոտ սառնութեամբ ժպտեցայ:
Եւ անոնց սիրոյ լացի հեկեկանքները, կոյս ձեռքերով առաջին եր-
կունքին համար ականակիտ ասեղնագործութեամբ՝ կոյս արիւ-
նով կարմրած խանձարուրները ինչո՞ւ անանուն անապատներուն
մէջ ցանեցիր:

* * *

Տեսէք նայուածքներուս խորը, և այնտեղ անվեհերօրէն հո-
գիս վճռականութիւնը պիտի կարդաք բարձրաբարբառ: Այս

առաւօտ կանուխ ասպնջականօրէն, արդարօրէն և եղբայրօրէն բոլոր պանդուխտներուն ցաւոտ հոգիներուն և արդարութեան մարտիկներուն դուռը կը բաղխեմ, երբ միւս կողմ շատեր յաղթանակէն հիասքանչացած քունով կը յափրանան:

Մախաղիս մէջ զղջումի գրեր ունիմ բոլոր հին դիւանագէտներէն և քաղաքական վարդապետներէն, որոնք լուսային համար այնքան արդար և անշահախնդիր ազգիս սուրբ իրաւունքները զգեստեցին:

* * *

Տեսէք դէմքս, որ մոայլ հորիզոններ փայլատակող կայծակին պէս ցասկոտ է և մահամերձի մը պէս տժգոյն ուրականումի մը պէս զարհուրելի է և հոգիի մը պէս բարի:

Ջայրութի պէս փոթորկոտ և խաղաղութեան մը պէս խոհուն, տառապանքի պէս տրտում և հաւատքի մը պէս անյողդողդ: Տեսէք սպիներով խաչանշուած կուրծքիս, որ իր ցեղին մերկութեամբը մերկ է և ովկեանի մը պէս խռով: Ահա ձեր առջևն եմ խնդրողի բոլոր ցնցոտիներս այրած ու մոխրացուցած՝ ոչ մէկ գութ, ոչ մէկ սփոփանքի խօսք և ոչ իսկ մէկ կարեկցութիւն, զանոնք չի կարող ինձ վերամբարձնել... ես այն աշխարհէն կուգամ, որ լացի տեղ բողոք, խնդրանքի տեղ արդար պահանջ, ողորմութեան տեղ սխրալի հերոսապատումով արդարութիւնը դարբնեց....:

* * *

Նայեցէք ինձ յանդգնօրէն, վեհանձնօրէն, ճշմարտօրէն և պիտ զար[ի]ուրհիք, որ արևոտ աշխարհին մէջ մեզ համար արև չէ ծագած և կապոյտ երկնականարին կարմիր վերջալոյստող աստղերն իսկ արին են լացեր մեզ համար: Պիտ զար[ի]ուրհիք, զար[ի]ուրհիք, զար[ի]ուրհիք ձեր բոլոր պճնանքներով, դափնեպսակներով, յաղթանակներով և հրաշակերտներով...: Որովհետև վայ այն արևին, որ ընտրեալներու համար միայն կը ծագի, վայ այն արդարութեան, որ չարիք կը ծնի և հազար վայ այն դափնիին, որ ոճիրով գեղազարդուած է....:

* * *

Նայեցէք ծունգերուս, բայց զգոյշ... չի խռովիք այդ արիւնը որ տակաին այնքան թարմ ու պարարտ է, ու մարմնոյս չորս կողմերէն կը կաթկթէ ահաւոր և սրտացունց յիշատակներ ունի իր մէջ...

Որ այսօր լուսաբացին դէմ՝ ձեր կանաչ ձերմակ սեղանները կը խաչանշէ, զգոյշ...անոնց այդքան ներդաշնակ կաթկթումին մէջ հազարաւորներու զայրոյթի բողոքի և ընդվզումի շեշտը կայ: Որոնց համար այս գիշեր զարնուած այծեամի «ճամբորդութիւն մը» ըրի... բռնեցէք այդ քալած ճամբուս արիւնի հետքը և դուք աշխարհի մը պիտի երթաք, որ գեղեցիկ է, բայց ամայի, որուն անունը դրախտի օրով Հայաստան դրին: Ահա այս սեղաններուն շուրջը կաթկթած արիւնն է կը պղպջայ և ձեր բոլորիդ զղջումի արցունքին և իրեն արդար հատուցման կսպասէ խաղաղութեան պատգամը աւետելու....:

* * *

Նայեցէք շղթաներու ծանրութիւնովը կոանուած բազուկներուս, որոնք երկնքէն չի հասնող գթութիւնէն յուսագերծ և խօստացուած ողորմութիւնէն անբաւական, ճշմարտօրէն, խիզախօրէն և մարտնչօրէն ձեռք բերուած իրաւունքի մը պահանջկոտութեամբ, պայքարով, պայքարով սրբագործուած դրօշի մը արքունական ձօղին կրթնած ձեզ բոլորիդ...բոլորիդ արդարութեան բարկութիւնով կ'արձագանգէ:

Եթէ տակաին երազանքի զգլխիչ ինքնաբաւականութեամբ Ձեր փառքի խենթութիւններով արբեցած չըմբռնեցիք մեր արհաւիրտ և մոլեգին ճիգերու գերբնական աղաղակները....:

Եթէ ձեր սեղաններն ու հոգիները այս առաւօտ մահուան ճէնձերներու գոլորշիովը չի խռովեցան, եթէ շրթներդ կսկծանքի յուզումներու փոթորկումով ինքնակորոյս աղաղակներուդ մէջ չի ձաթեցան....:

Եթէ, եթէ Ձեր սիրտը այնքան արիւններու և մահամերձ հոնդիւններու ի տես խօլական քրքիջներ չի սնոյց Ձեր կրծքին տակ...: Եթէ այս բոլոր մահասառսուր հրաժեշտի ծրարները ձեր էութիւնը չխռովեցին բարիին, ճշմարիտին և արդարին հատուցանելու: Այն ատեն բոլոր ձորձորներու խորերէն սարալանջերու,

ժայռերու խարակներու բարձունքէն, աշխարհի չորս ծայրերէն, անանուն և անհաշի առաթուր հոգիներ ոտքի ոտքի ոտքի թող ելլեն դաժանօրէն անխնայօրէն և քինայոյժօրէն Ձեզ և աշխարհը հրդեհելու....:

* * *

Անոնք որ անաղական խղճմտանքով բոլոր արհաւիրքներէն ետք տակաւին իրենց թափառական և պանդուխտի հոգիներու մէջ հայրենի կարօտը ունին... Անոնք որոնք ցաւատանց կործանքներուն տակ բարբարոսութիւններու և ոճրապարտներու պարանոցներու համար վրէժի և ատելութեան վերջին կայծն ունին դեռու....:

Անոնք որ մանուկներու, կիներու ծերերու և տկար հոգիներու վերջին փափաքի և յուսացող նայուածքներու յիշատակն ունին իրենց լալէն յոգնած աչքերուն մէջ...: Անոնք որ ցեղին տոհմիկ ասպետական հոգիի վերջին նշուլը ունին իրենց ճշումներով անհամբեր հոգիներուն խորը:

Եւ վերջապէս բոլոր անոնք որ ցեղին անհանդուրժելի տուայտանքներուն այնքան երկար սպասել և համբերել գիտցան և վաղուան անարգանքի և արհամարհանքի խուխէն կը սարսափին, թող բոլորը միասին արթուն աչքերով հսկեն այս առաւօտ արև-ծագին, որպէսզի դարաւոր սպասումներու Մեսիան երկունքէն մեզ համար մահուան ծնունդ մը չ'ըլլայ...:

«Ու բոլոր ուրուականներն այս գիշեր աչքերուս և հոգիիս հետ Արշալոյսը պիտի սպասեն... որպէսզի կեանքերնուն ծարաւը յագեցնելու համար անպայման վերէն իրենց վրայ ծով լոյս մը իյնայ»:

1919 28
Վլասիվօսթո

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Կարնոյ մէջ դարաւոր թշնամիդ ու զինակիցներուն այնքան խօստումներդ անտարբեր միլիոն մը արիւն արժող յանդգնութիւնէդ եթէ աշխարհը չի սարսափեց:

Տելիմանի, Սարիխամիշի, Երևանտուզի, Զիլանի, Պիթլիզի, Ոստանի ու Շատախի՝ ռուսական յաղթանակներու հերոսներուդ, Անդրանիկի և Դրօի, Իշխանի և Քեռիի, Համազասպի և Խէչօյի, Աւօյի և Սեպուհի և Սմբատի հայդուկներուն բոլոր մարտնչումներն եթէ ցարիզմի զօրացումով գահատումէն մեծ դաշնակիցները չկարմրեցան...:

Երբ ազգերը ռուսական քայքայումով հրճուանքի կայտոածքով կ'ոգևորուէին յեղափոխական Ռուսաստանի վերջին զինութեան հետ երբ 100 000 կտրիճներդ մինչև Գալիճիա դրութիւնը փրկել կը ձգնէին «Կրէնսքիի մը հայերը միակը եղան, որ չի դաւաճանեցին» բառովը եթէ փոխարինուեց...: Փրահայի մէջ 800 ուսանողներ Գերման ձակատին վրայ ընդվզումի կրակով մոլեգնտո իրեն ուշացած արդարութիւն մը վար առնելու կը մահանային եթէ իրաւունքը, խօսքը զլացուեց, Սիւրիոյ քարածերպերու վրայէն յաղթանակի մարմաջովը հրավառ թոխչքներով հայկական հերոսապատումը յավերժացնող «Արևելեան Լէգէոնի» կորիւններուն յաղթական արշաւանքը զօրավար Ալէնայի շնորհակալիքովը միայն եթէ յատկանիշուեց...:

Բագուի բարձունքներէն թուրք և թաթար հորդաներուն վայրագ աղաղակներէն անտարբեր յաղթանակի համար ծառացած Բագրատունիի՝ եթէ դաւադրութեան խօսք մը շարթել ուզուեց...:

Վերջապէս ճվ հայ ժողովուրդ, երբ դարերու ծով տառապանքի մրուրը կը քամէիր, և Գերման ինքնակալութիւնը դիակիդ վրայէն արևմուտքէն արևելք, իրեն յաւիտենական փառքի ճամբայ մը շինելու նպատակաւ Կովկասէն Թաթարիստան, Պարսկաստան, Հնդկաստան համիսլամական աշխարհի մը ոտքի կանգնեցնել կը ձգտէր, ինչո՞ւ դարաւոր կամքի տոկոնութեամբ, յուսահատական փոթորկումով առիծի ժանիքներէն սպրթուած մոնչեցիր, «եթէ պիտ մեռնինք պատուով մեռնինք»:

Եւ բոլորէն դաւաճանուած ութը ամիսներու մէջ առանձին 8 ամիսներու ընթացքին արևմուտքի և քաղաքակրթութեան հա-

մար ճակատ մը պահեցիր արդեօք քեզ համար մթութեան մէջէն թերևս քաղաքական էնթրիքները պատրաստուին...

Եթէ այս Ահարոնեան, Պ. Նուպար, Անդրանիկ, Բագրատունի, Նազար Պեկով շեփորն առէք և վերջին ահագանգը գրոհելու բռնոր անոնց որ մեր հոգեվարքին սպասեցին և ցեղին քաղաքակրթութեան ծառայութիւնները քողարկեցին...:

78

ԿՈՐՍՈՒԱԾ ՍԷՐԸ

Մինակ էի այս գիշեր, յուշերուս հետ առանձին, Աչքերս փակ, ես խոհուն: Մտքերս հեռու՛ն կը թռչին, Յիշատակներ թախծալից փրփուրներով լալագին Կ'յուշեն հոգիս տանջուած, մահերգ կ'հիւսեն եղեռնէն հրենցն եմ ես այս գիշեր յուշերուս հետ առանձին:

Կարծես ամպ մը կը ծակի, հրեղէն սիւն մ'կիջնէ վար, Շատրուանի մը հանգոյն շող ու ճաճանչ կը թափէ...: Կոյսն է կուգայ պչրուն, երագի պէս դիրավառ Կը զառնէ դուռն իմ սրտիս, տեղ կուտայ կուրծքս մարմարէ. Կարծես ամպ մը կը ծակի հրեղէն սիւն մ'կիջնէ վար...:

Ու կը հիւսեն յոյսերով երագներով ալ կարմիր Աշխարհի մ'անվիշտ անուրջի, որ կոյսն այնտեղ պիտ ապրի, Կը մոռնամ հեքն տանջանքին, տուայտանքներս անպատիր... Բնութիւնն է կը խօսի իր օրէնքէն անյեղլի, Ու կը հիւսեն աշխարհի մը երագներով ալ կարմիր...:

Պատրանք մ'անուշ դիւթական ինձ կ'օրրէ մի վայրկեան, Եւ կը մոռնամ անհամար զարհուրանքներն անցեալի Որ մաշեցին հէք կուրծքս, սիրտս ըրին անկենդան. Ու կ'ըմբռնան ակնթարթն որպէս միտքը այս կեանքի. Պատրանք մ'անուշ դիւթական, ինձ կ'օրրէ մի վալյրկեան...:

Երագն ինչպէս որ կանցնի, և ասուպը կը մարի, Երգին թոթիռն կը հատնի՝ կ'անցնին յոյզերն տենչանքին,

Բլբուլին սէրն կը շիջի, թռչնի երանգը ծաղկի, Անպէս Ամպը կը մրրկի, կը մթնի սիւն իմ ճամբին երագն ինչպէս որ կանցնի և ասուպը կը մարի...:

Ես չի լացի կորուստը զի չի կորաւ դեռ իմ մէջ Յիշատակի սարսուռ մը նա սրտիս մէջ ակօսեց Առանց յուշի չէ՛ սիրտն իսկ. ու՛ր գրուած կայ էջ առ էջ. Կեանքի միտքն ու նպատակ պարապութիւն մէ առեղծ, Ես չի լացի կորուստը, զի չի կորաւ նա իմ մէջ...: Յիշատակ մէ բաղձանքս. Դուն զայն պահէ սրտիդ մէջ...:

79

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

....Գիրկս երկնքէն քաղած աստղեր ունիմ ու շրթներուս, այնքան քաղցր ու քնքուշ ժպիտներ որ երագիդ մէջ միայն տեսած ես: Մելանոյշ նայուածքներուդ և անբասիր հոգիիդ համար աշխարհ չեկած ծաղիկներէն նարօտ եմ կապել դուն անոնց թոյրերու և բոյրերու մէջ իմ միակ ու անսման ծաղիկ, կեանքի նեկտարը ծծէ... ծծէ ու Չինար պոյ քաշէ իմ փոթորկոտ էութեանս երագանքներուն Չաստուածը ըլլալու:

Իմ անսման աստղիկ այս գիշեր խաւարի և մթութեան մէջէն քեզի քեզի քեզի եկայ և ահա բարձիդ վրայ ծփացող մազերուդ ալքերուն հետ ինչքան ինչքան ցնծացի... Դու՛ն աչքերդ կափարիչներով փակած քննանալէ աւելի մտազբաղ կը ժպտէիր. այդ ժպիտներդ այդ անզգուշ ցանուած ժպիտներդ որուն համար էր, արդեօք ինձ կը կանչէիր բայց ինչո՞ւ աչքերդ չի բացիր որ զիս բազուկներուդ մէջ ու կուրծքիդ ... դեռ նոր ծաղկած ծծերուդ վրայ առնէիր: Ոհ իմ անզուգական պարիկ իմ հոգիի թռչուն... Սևակս, ինձ համար դրախտն ու Եղևեան* դաշտերը քու հոլանի մէջքէդ սրկալէն վար թափող մազերուդ խուրձին մէջ է...:

Ինձ համար երկինքն ու կապոյտ կամարը աչքերուդ խորն է ու նայուածքներդ ախ այդ խաճնող հոգի հատցնող կայծկլտուն նայուածքներդ իմ երկնքին փայլուն աստղերն են... Ինձմէն հեռու, առանց քեզ այս դժոխք աշխարհը և անէծք այն կոյսերուն որոնք

* Եղևեան (Ելիսէեան (դաշտեր):

իմ տարուկ, կրակոտ ու սրբկոտ սէրը կը խռովեն....:

Եկու՛ր եկու՛ր, եկու՛ր, երագիս, տննչանքիս և պապակիս ատեն և դեռ չզգիտես, չզգիտես որ կեանքս պապակ մէ, ձգտում մը դէպ լոյսը, դէպ գեղեցիկը և դուն չզգիտես որ այդ բոլորին միակ ուղեցոյցն ու ռահվիրան էս, ի՞նչ իմ անզուգական – հոգիիս սիրոյս և մտածմունքիս պապղուն փարոսը:

Բոլոր երգերը յոյզերը, որ երգեցի այս առաւօտէն առաջ, ինձ պատրանք և խաբէութիւն կը թուի, և քեզի՛ քեզի՛ քեզի՛ նուիրուելու համար այն բոլորին այս առաւօտ ... անպայմանօրէն և յուսահախօրէն վառեցի, էլ ի՛նչ կուզես ինձմէ, սիրտս ահա մոխրացած առջևդ եմ դրել ... երգս, բայց կեանքս երգ մը գրած քեզի եմ ձօնել, հոգիս, բայց ի՛նչ է հոգին՝ երբ մտքերս, ճախրանքներս, մտածմունքներս, խոհերս կան ու պիտ մնան միշտ և յաւէտ քեզ համար:


Սարերէն չի ծնող եղնիկներ եմ բերեր արև չի տեսած աստղիկ հաւաքեմ լազուարթ երկնքէն գարնան գեփիտով պարարտ հիրիկներ եմ քաղեմ քու գեղեցկութեանդ ու փառքիդ զոհելու և վայելելու համար, և դեռ ինչեր ինչեր գիտես որ բնութիւնն ունի և մարդու ձեռքն ու երևակայութիւնը կը հասնի. ես անոնցմով քու էութիւնդ պիտի փառաւորեմ. պիտի ընդունիս իմ ջան, իմ կանթել և իմ աչքի լոյս Սեակ.....



Մայրը բռնուիտ՝ Գարեգին Նժդեհի եղբոր աղջիկ Օլեայի հետ (1930-ական թ.թ.)



Նժդեհի տիկին Եփիմէն եւ որդեգրած զաւակ Վրէժը



Նժդեհի ստորագրութեան առաջին գործածութիւնը 1903 թ. գրած իր ոտանատրի մէջ



Գարեգին Նժդեհը բուլղարական սպայի համազգեստով



Նժդեհը մակեդոնական հայրուկի զգեստով, 1906 թ.





Նժդիհ, 1919 թ.





Գարեգին Նժդեհ




Անդրանիկ



Հայկական գնդի հրամանատար Նժդեհը բախանեան պատերազմում, 1913 թ., Բուլղարիա



Գարեգին Նժդեհի կամաւորական ջոկատը, 1915 թ.



Նժդեհը գրող Համաստեղի հետ



Յեղակոսների զինանշանը, 1933թ.



Յեղակոսն Ուխտերի
հիմնադիր Գարեգին Նժդեհը,
իր յետևում՝ Տիգրան
Մուրադեան, մնացած
երկուսը՝ Յեղակոսն Ուխտի
անդամներ՝ հայկական եւ
ամերիկյան դրօշակներով



Հայկական գունդը բալկանեան պատերազմի սկզբին, 1912 թ. հոկտեմբերի վերջ,
առջեւում Նժդեհն ու Անդրանիկը

Ծանոթագրութիւններ

1. Բնագրերը պահուում են Վենետիկի Ս. Ղազար կղզու վանքի դիւանում, լուսապատճէնները՝ Եղ. Չարենցի անուան գրակ. եւ արուեստի թանգարանում:
2. «Սիրտս երգում է, այսպէս»: Արտատպւում է Նժդեհի՝ 1906 թ. հոկտեմբերի 15-ին Սոֆիայից մօրը եւ Լեւոն եղբորը գրած նամակից: (ՏՆՍ «Նախիջեւան», 2001, N 20, էջ 4):
3. «Այո, մեր աշխարհն այսպիսին է»: Արտատպւում է սպազայ կնոջը՝ Էփեմիային գրած անթուակիր նամակից: (ՏՆՍ «Նախիջեւան», 2001, N 20, էջ 4): Ընդարձակ տարբերակը՝ տես N 10:
4. «Իմ երգը»: Արտատպւում է «Ժայռ» (Ալեքսանդրապոլ, այժմ՝ Գիւմրի) թերթից. 1910, N 78, ստորագրութիւնը՝ Դարդունի: Տարբերակը՝ տես N 48:
5. «Գիւղն է ձեզ կանչում»: Արտատպւում է «Ընկեր» (Թիֆլիս) թերթից, 1910, հոկտեմբերի 2, N 34, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի:
6. «Մինիատիւր»: Արտատպւում է «Պատանի» (Թիֆլիս) ավանսախից, 1911, գիրք I, էջ 33, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի:
7. «Տխուր ակկորդներ»: Արտատպւում է «Խաթաբալա» (Թիֆլիս) սատիրական շաբաթաթերթից, 1911, N 41, էջ 488, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի: Որոշ գործեր տպագրուած են Itudiosus (Studiosus-ի առաջին տառի աղաւաղումով):
8. «Նւէր Ար-ին»: Արտատպւում է «Խաթաբալայից», 1911, N 42, էջ 497, ստորագրութիւնը՝ Itudiosus: Նժդեհը նկատի է ունեցել նիւթական ծանր վիճակի պատճառով՝ Թումանեանի մեզ անայտ գործերով զբաղուելու հանգամանքը:
9. «Չէ, չէ»: Արտատպւում է նոյն համարից, ստորագրութիւնը՝ նոյնը:
10. «Ա.-ի ալբոմում»: Արտատպւում է «Հորիզոն» (Թիֆլիս) օրաթերթից, 1911, հոկտեմբերի 16, N228, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի:
11. «Սիրելի Գերօ»: Արտատպւում է «Ընկերից», 1911, հոկտեմբերի 17, N 38, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի:
12. «Աֆորիզմներ կնատեաց փիլիսոփայի»: Արտատպւում է «Խաթաբալայից», 1911, N 43, էջ 509, ստորագրութիւնը՝ Studiosus: Որ այս ստորագրութեամբ գործերը եւս պատկանում են Նժդեհին, բաւական է համեմատութիւն կատարել նրա «Իմ մարգարէն» գործում տեղ գտած նոյն պարբերութիւնների հետ, որոնք գրեթէ նոյնութեամբ կրկնում են նրա ուրիշ «Աֆորիզմներում» («Խաթաբալա», 1911, N 48): Այսպէս՝ «Եղիր բացարձակ եւ ոչ մի գիշում Յանցանք է գիջել: Զիջել, նշանակում է ամօթալի պարտութիւն կրել, թոյլ, ստրուկ լինել» («Իմ մարգարէն»): «Եղիր բացարձակ. եւ ոչ մի գիշում:

- Ջիջել, նշանակում է անօթալի պարտութիւն կրել: Յանցանք է զիջելն» («Աֆորիզմներ»): I. Ըստ հին յունական դիցաբանութեան «Պանդօրեան արկղը» (սափորը) դժբախտութիւնների արկղ է, չարիքների շտեմարան. II. Արցիբաշևի Մ. Պ. (1878-1927) - ռուս գրող: III. Տոլստոյ Լ. Ն. (1828-1910) - ռուս գրող: IV. Պլատոն (427-347 մ.թ.ա.) - յոյն փիլիսոփայ:
13. «Մահուան կրգեր»-ից (Ե. Գրիգորեանի շիրիմի առաջ): Արտատպում է «Խաթաբալայի» նոյն համարից, էջ 511, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի: Այս արձակ բանաստեղծութիւնը գրուած է «Ժայռ» (Ալեքսանդրապոլ) թերթի խմբագիր, աշտարակեցի Եփրեմ Գրիգորեանի մահուան կապակցութեամբ (գոհուել է 1911 թ. ապրիլի 11-ին Ալեքսանդրապոլում):
 14. «Իմ մարգարէն»: Արտատպում է «Ընկերից», 1911, հոկտեմբերի 24, N 40, ստորագրութիւնը՝ Գ. Դ.:
 15. «Աշնան ալբոմից»: Արտատպում է «Խաթաբալայից», 1911, N 44, էջ 521, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի:
 16. «Էլ ինձ մի ասէք»: Արտատպում է «Հորիզոնից», 1911, հոկտեմբերի 30, N 240, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի:
 17. «Աֆորիզմներ»: Արտատպում է «Խաթաբալայից», 1911, N 48, էջ 572, ստորագրութիւնը՝ Studiosus:
 18. «Դուք գիտէք»: Արտատպում է «Խաթաբալայից», 1911, N 51, էջ 605, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի:
 19. «Խենթ ակկորդներ»: Արտատպում է «Խաթաբալայից», 1912, N 6, էջ 70, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի:
 20. «Էպիգրամներ»: Արտատպում է «Խաթաբալայից», 1912, N 10, էջ 115, ստորագրութիւնը՝ Յ.: «Տիկ. Լ.-ի վրայ», նուիրուած է բանաստեղծուհի Լեյլիին (Փառանձեմ Սահակեան), իսկ «Հին-Ն.-ի վրայ»-ը վերաբերում է Հին Նախիջևանին:
 21. «Կինը կանանց մասին» (Մոքեր): Արտատպում է «Խաթաբալայից», 1912, N 16, էջ 183, ստորագրութիւնը՝ Դարդունի:
 22. «Տապանագիր» (Ծաղ.-ի յիշատակին): Արտատպում է «Խաթաբալայից», 1912, N 17, էջ 195, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի: Այս Տապանագրի մի այլ տարբերակ նա տպագրել է 1917-ին՝ նուիրուած «Փառապսակ Հրանտ-ին», N 40:
 23. «Ինչո՞ն ես տխուր»: Արտատպում է «Խաթաբալայից», 1912, N 26, էջ 305, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի:
 24. «Յուսահատ ակկորդներ»: Արտատպում է «Խաթաբալայի» նոյն համարից, էջ 308, նոյն ստորագրութեամբ:
 25. «Աղօթքի երգերից»: Արտատպում է «Խաթաբալայից», 1912, N 39, էջ 464, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի:
 26. «Հաշտութիւնը»: Տպագրում է ինքնագրից, որը պահուած է Եղ. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանում (ԳԱԹ): «Աղօթքի կրգերից» գործի (N 24) տարբերակն է: Փակագ-

- ծում անկացուած բառերն ու մասնիկները, որոնք ծածկուել են էջերը սոսնձով միացնելիս, վերծանուած են մօտաւոր հասանականութեամբ: Ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի:
27. «Իմ աղօթքը, Նուր Լեյլիին»: Արտատպում է «Պատանի» ալմանախից, 1912, գիրք IV, էջ 43: Նուիրուած է բանաստեղծուհի Լեյլիին (Փառանձեմ Սահակեան, 1894-1951): Թւում է, թէ Լեյլիի՝ մէկ տարի առաջ «Հորիզոնում» (1911, հոկտեմբերի 16, N 228, որտեղ Դարդունին էլ տպագրել է իր «Ա.-ի ալբոմում» բանաստեղծութիւնը) յոյս ընծայած «Աղօթքի երգեր»-ից բանաստեղծութիւնն էլ նուիրուած պէտք է լինի Դարդունուն: Այդտեղ գրուած է. Ա՛, քեզ համար ես արցունքով կաղթեմ, Երկար ճամբիդ, որ դու լինես բախտաւոր, Քեզ ողջունեն հաճոյքները ժպտաղէմ, Որ չունենաս ցաւի համար ոչ մի օր: «Իմ աղօթքը» «Աղօթքի կրգերից» եւ «Հաշտութիւնը» արձակ բանաստեղծութիւնների ընդարձակ տարբերակն է:
 28. «***» («Մուր իմ, ո՞վ վրովսնդութեան»): Արտատպում է «Խաթաբալայից», 1914, N 14, էջ 6, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի:
 29. «Նաւատորմը եւ կինը»: Արտատպում է «Խաթաբալայից», 1914, N 15, էջ 7: Աֆորիզմների ձևով գրուած այս գործը ստորագրուած է «Ռագմիկ» ծածկանունով: «Ռագմիկ» բառի յաճախակի գործածութիւնն իր գրուածքներում, բուլղարական մարտահաշտից վերադառնալուց յետոյ գրած այս գործը հիմք է տալիս «Ռագմիկը» եւս դասելու Դարդունու ծածկանունների շարքը:
 30. «Էս գիշերը»: Արտատպում է «Խաթաբալայից», 1915, N 1, էջ 5-6: Ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի (Նժդեհ): Տարբերակը տպագրել է «Ժայռի» 1917 թ. N 18-ում: Առաջին անգամ այս գործի տակ է, որ Դարդունու կողքին փակագծում նշել է նաեւ «Նժդեհ»:
 31. «Իմ աղօթքը»: Արտատպում է «Խաթաբալայից», 1915, N 2, էջ 2, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի (Նժդեհ):
 32. «Իմ սէրը», նրան, որը ներշնչեց ինձ: Յայտնի չէ, թէ ո՞վ է ներշնչել եւ ո՞ւմ է նուիրուած: Ինքնագիր տարբերակը պահուած է ԳԱԹ-ում: Տպուել է «Խաթաբալայում», 1915, N 3, էջ 6, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի (Նժդեհ)՝ «Իմ սէրը» վերնագրով: Տարբերութիւնն աննշան է: Հիմք ենք ընդունել ինքնագիրը:
 33. «Մեռնող սրտի հեքիաթը»: Տպագրում է ինքնագրից (ԳԱԹ), որի տակ թուագրուած է՝ 1915, մարտի 23 (23.III.1915), Թիֆլիզ, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի: Տպագրուել է Թիֆլիսի «Հորիզոն» թերթի «Գրական, գեղարուեստական պատկերազարդ յաւելւած»-ի 1915 թ. ապրիլի 19-ի թիւ 22-ում (էջ 2): Նոյնը՝ շատ աննշան տարբերութեամբ տպագրուել է Բաքուի «Արևգ» թերթում, 1915, N 12, ապրիլի 5, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի: Տպագիր տարբերակը նուիրուած է Գևորգին:
 34. «Կամաւոր գոյգր» (Ազիզ ընկերներին): Արտատպում է «Արևգ»-

- ից, 1915, N 10, ապրիլի 3, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի:
35. «Մարտական խոհեր» (սւէր հայ կամաւորներին): Արտատպում է «Հորիզոն»-ից, 1915, N 195, օգոստոսի 30: Ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի:
 36. «Հովի սէրը» նրան, որը ներշնչեց [ինձ]: Տպագրում է ինքնագրից, որը պահուում է ԳԱԹ-ում: Փակագծում վերականգնուել են թղթի տանձած մասերում չլրււացող բառերը: Ստորագրութիւնը՝ Գար. Դարդունի:
 37. «Դէպի հայկական աստուածատաճարը»: Արտատպում է «Աշխատանքի» (Երևան) 1916, N 8-ից, մայիսի 28, ստորագրութիւնը՝ Գար. Նժդեհ: Գրուել է Հայոց ազգային-ազատագրական շարժման գործիչ, փառապանծ հայդուկապետ Քեռիի (Արշակ Գաւաֆեան, 1858-1916) մահուան առթիւ: Որոշ բառերի փոփոխութեամբ նոյնը, առանց վերջին տողի, տպագրուել է Քեռու տարեկիցին «Դաշնակցութեան պանթէօնը, փառապանծ Քեռուն» վերնագրով («Ժայռ», 1917, N 2, ապրիլի 15):
 38. «Դաշնակցութեան պանթէօնը», I, Խոկում է Արարիչը. Փառապասկ Խէչօին: Արտատպում է «Ժայռ»-ից (Ալեքսանդրապոլ, այժմ՝ Գիւմրի), 1917, N 1-ից, ապրիլի 8, ստորագրութիւնը՝ Գար. Նժդեհ:
 39. «Կոչ հայ զինուորներին» (ռազմական խոհեր): Արտատպում է «Ժայռի»՝ 1917, N 1-ից, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի: Որոշ մտքեր ու բնորոշումներ տեղ են գտել «Մարտական խոհեր»-ում (N 34):
 40. «Դաշնակցութեան պանթէօնը», III, Փառապասկ Զաւարեանին: Արտատպում է «Ժայռի»՝ 1917, N 4-ից, ապրիլի 30, ստորագրութիւնը՝ Գար. Նժդեհ: Որոշ մտքեր ու նախադասութիւններ օգտագործուած են «Աֆորիզմներ» (N 11) եւ «Իմ մարգարէն» (N 13) գործերում:
Զաւարեան - Սիմոն Զաւարեան (1866-1913), Հ.Յ. Դաշնակցութեան նրբ հիմնադիրներից, հասարակական-քաղաքական նշանաւոր գործիչ:
 41. «Դաշնակցութեան պանթէօնը», IV, Տապանագիր, Փառապասկ Հրանտ-ին: Արտատպում է «Ժայռի»՝ 1917, N 5-ից, մայիսի 5, ստորագրութիւնը՝ Գար. Նժդեհ: Տեքստի որոշ մասն օգտագործուած է եղել «Ծաղ. -ի յիշատակին» (N 21) գրած գործում: Հրանտի ով լինելը չկարողացանք պարզել:
 42. «Դաշնակցութեան պանթէօնը», V, Փառապասկ Աշուղին: Արտատպում է «Ժայռի»՝ 1917, N 6-ից, մայիսի 14, ստորագրութիւնը՝ Գար. Նժդեհ: Որոշ տողեր վերցուած են «Իմ երգ»-ից (N 3): Աշուղի ով լինելը չկարողացանք պարզել: Ալեքսանդրապոլի աշուղները, լսելով Նժդեհի մի դասախօսութիւնը, ցանկութիւն են յայտնել «կազմակերպել Հ. Յ. Դաշնակցութեան դրօշակի

- տակ, որպէս առանձին լսմբակ» «Աշուղ» անունով: («Ժայռ», 1917, N 9, յունիսի 1):
43. «Դաշնակցութեան պանթէօնը»: I Քեռու անունն էլ է յաղթում, II Քեռու վրանը, III Սրտառույք ընկերութիւն: Արտատպում է «Ժայռի»՝ 1917, N 7-ից, մայիսի 21, ստորագրութիւնը՝ Գար. Նժդեհ: Քեռու մահուան տարեկիցի առթիւ մայիսի 15-ին կազմակերպուած սգոյ միտինգում կոյրթ է ունեցել նաև Նժդեհը, որն իր ճառը վերջացրել է հետեւեալ խօսքերով՝ «Շատերն են տեսել Մասիսը, մօտեցել նրա փէշերին, փորձել բարձրանալ սարն ի վեր, բայց նրա կատարին հասնել չի յաջողուել և ոչ մի կին: Գրում են, գրում անվերջ, շարժում վսեմախօս շրթունքներ Քեռու մասին, բայց պատկերացնել անմահ դիցազունի հոգու մեծութիւնը՝ չի յաջողուել և ոչ մի կին» (նոյն տեղում):
 44. «Դաշնակցութեան պանթէօնը», Գերեզմանատանը, մի պտղունց խունկ շրջիկ Զաւէի յիշատակին: Արտատպում է «Ժայռի»՝ 1917, N 8-ից, մայիսի 28, ստորագրութիւնը՝ Գար. Նժդեհ: Զաւէի ով լինելը չկարողացանք պարզել:
Նոյն համարում տպագրուած է Գ. Նժդեհի՝ խմբագրին ուղղուած երկտողը՝ մայիսի 17-ին «Մարտիկ» եւ «Վասպուրական» խմբերի եւ մի խումբ յարգողների կողմից իրեն նուիրուած արծաթապատ սրի («Ժայռ», N 7) առթիւ. «Թոյլ տւէք, խնդրում եմ թերթիդ միջոցով շնորհակալութիւն յայտնելու Հ. Յ. Դաշնակցութեան Ալեքսանդրապոլի «Վասպուրական», «Մարտիկ» խմբերին եւ անհատ ընկերներին՝ ինձ նուիրաբերած ՄԻԻ համար: Յարգանք» Գ. Նժդեհ» («Ժայռ», N 8):
 45. «Մինիատիր»: Արտատպում է «Ժայռի»՝ 1917, N 9-ից, յունիսի 4, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի:
 46. «Դաշնակցութեան պանթէօնը», IX, Արծի-Լաթօն: Արտատպում է նոյն համարից, ստորագրութիւնը՝ Գար. Նժդեհ: Արծի Լաթօն է նոյն համարից, ստորագրութիւնը՝ Գար. Նժդեհ: 1883 թ.: Եղել է Հ.Յ. Դաշնակցութեան Ոգմի մարմնի խմբերի համակարգիչ, 1914 թ. աշնանից որպէս խմբապետ ընդգրկուել է Դրոյի հրամանատարութեանց գործող Բ կամաւորական խմբում, զոհուել է 1915 թ. յունիսի 6-ին (ՀՀ ՊԿՊԱ, §.121: Տուեալը տրամադրել է պատմաբան Մ. Կարապետեանը) Միկսի մօտերքի Բուրաս (Բուրանդ) գիւղի կոնիներին, երբ իր խմբով առաջադրանք էր ստացել հետախուզել գիւղը (տես Արամ, Յուշեր, «Հայրենիք» ամսագիր, 1923, թիւ 11, էջ 129; «Աշխատանք» թերթ, Երևան, 1916 թ., մայիսի 25, թիւ 7):
 47. «Մինիատիր», II: Արտատպում է «Ժայռի»՝ 1917, N 10-ից, յունիսի 11, ստորագրութիւնը՝ Գ. Դարդունի:
 48. «Արեւմտահայ գաղթականի քաղաքական «Հայր մեր»-ը»: Արտատպում է նոյն համարից, ստորագրութիւնը՝ Գար. Նժդեհ:

49. «Իմ կրգը»: Արտատպում I, «Ժայռի»՝ 1917, N 14-ից, յուլիսի 9, ստորագրությունը՝ Գ. Նժդեհ: Տարբերակը՝ տես N 3:
50. «Էն գիշերը»: Արտատպում է «Ժայռի»՝ 1917, N 18-ից, օգոստոսի 6, ստորագրությունը՝ Գ. Դարդունի: Այս նոյն գործը, աննշան փոփոխությամբ եւ «Էն գիշեր» վերնագրով, նախապէս տպագրուել է «Խաթաբալայուն», 1915, N 1 (N 29):
51. «Դաշնակցութեան պանթօնը». X, Հայ լսաչակիրը (Փառապանծ Միհրանին): Արտատպում է «Ժայռի»՝ 1917, N 19-ից, օգոստոսի 13, ստորագրությունը՝ Գ. Նժդեհ:
52. «Յուզած ծովը»: Արտատպում I, «Ժայռի»՝ 1917, N 20-ից, օգոստոսի 20, ստորագրությունը՝ Գ. Դարդունի:
53. «Կարմիր ամառանոց», Եզիդը: Արտատպում է «Զանգ» (Երեւան), 1918, N68-ից, նոյեմբերի 7, ստորագրությունը՝ Գար. Նժդեհ:
- 54-79. Բնագրերը պահում են Վենետիկի Ս. Ղազար կղզու վանքի դիւանում, լուսապատճենները՝ Երեւանի Եղ. Չարենցի անուան գրակ. և արուեստի թանգարանում և ՀՀ պատմութեան պետական դիւանում:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՄՏԱՄԱՍՈՒՆ-ՔՆԵՐԻՑ*

(Իր աշխատութիւններից, զուտ գրական երկերից, յօդածներից, նամակներից քաղեց Ռաֆայել Համբարձումեանը)

* * *

Անցիր հայ երիտասարդութիւն, անցիր Ռուբիկոնը, որի հանդիպակաց ակին քեզ յաղթութեան դափնին է սպասում:

* * *

Հոգեպէս ծոյլերն են սրելոծած դժուարին ու անկարելի խօսքերը: Քոյր ու եղբայր են չկամենալն ու չկարողանալը: Հազարամղոն ճամբորդութիւնն սկսում է մի հափիկ քայլով: Չկայ անկարելին, երբ կայ զօրեղ ու վճռական կամքը: Գիտցիր, եղել են կամքի հսկաներ, որոնք առաջարկել են Աղեքսանդր Մակեդոնացուն՝ իր արձանը կերտել Աթոս լեռը փաշելով:

* * *

Թագաւորը նա է, ով կարող է:

* * *

Ես ուզում եմ, որ դու լինես թագաւոր սերունդ:

* Բաղածս մրամասունքները փպագրել եմ հետեւեալ ժողովածուներում՝ բոլորի մէջ որոշակի յանդիմաներով: Վարք Նժդեհի, Երեւան, 2001 թ., 240 էջ: 2. Գարեգին Նժդեհ, Ասոյթներ, Երեւան, 2002 թ., 96 էջ: 3. Գարեգին Նժդեհ (Համառօտ Կենսագրական, ասոյթներ եւ կենսաբարեգրութիւն), Երեւան, 2003 թ., 210 էջ: 4. Ղարաբիլիսայի համալսարան իրաւաբան խումբի յաղթանակի վերածող ոգին, Երեւան, 2005 թ., 68 էջ: 5. Գարեգին Նժդեհ, Կենսագրական յանդիմաներ, անփոփոխ գրութիւններ ու խորհրդածութիւններ, Երեւան, 2005 թ., 500 էջ: 6. Գարեգին Նժդեհ, Համառօտ Կենսագրական եւ կենսաբարեգրութիւն, Երեւան, 2006 թ., 64 էջ: 7. Գարեգին Նժդեհ, Ամբողջական կենսագրութիւն, Երեւան, 2007 թ., 520 էջ: 8. Գարեգին Նժդեհ, Համառօտ վարք, ասոյթներ, կենսաբարեգրութիւն, Ա փպագրութիւն, Երեւան, 2008 թ., 224 էջ: Բ փպագրութիւն, Սրտփանակերպ, 2008 թ., 224 էջ: Գ փպագրութիւն, Երեւան, 2008 թ., 222 էջ: 9. Հժդեհ, Հարցուպատասխան, Ա փպագր., Երեւան, 2011 թ., 150 էջ, Բ փպագրութիւն, Երեւան 2012 թ., 196 էջ: 10. Հանգանակ հայ ինքնութեան, Բ փպագրութիւն, 124 էջ, Երեւան 2012 թ.:

* * *

Քանի դեռ գեպուսիին ես — փկար ես: Անցանք — կեսար ես:

* * *

Յաղթութեան ու պարտութեան միջև ամբողջ պեպուսիներ կան, ասել է Բոնասպարը:

* * *

Քո վաղուան յաղթանակի և պարտութեան միջև հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը կայ, հայ երկրասարդութիւն:

* * *

Ահա՛ թէ ինչու քեզ պէտք է յաղթել, քեզ պէտք է յաղթանակի լուսապասկ սրեղծել քո ժողովրդի անտան ու ճակարհի շորջը: Իսկ դրա համար քեզ պէտք է լինել աւելի քան հայ և Մարդ:

* * *

Կուտաշաշարում եղիր անխնայ, բայց ոչ վայրագ:

* * *

Կռուի նպարակը յաղթութիւնն է:

* * *

Յաղթանակը փարում է դեռ կոխը չսկսած — նախ բարոյապէս, նախ հոգիների մէջ:

* * *

Մահ չկայ, մեռնում է փոքրոգին, վախկոտը, մեռածն է մեռնում:

* * *

Ղեկավարները կան նշանակում են, կան յայտարարում: Մէկը կարարում է այն, ինչ որ հնարատր է համարում: Միւսը՝ իրեն հեղուկ գործին թէ ժողովրդին ներշնչում է անկարելին կարելի դարձնելու հզոր և հրաշագործ հաւատը:

* * *

Առանց գորատր խօսքի՝ չկայ իշխանութիւն հոգիների վրայ, իսկ առանց այդ իշխանութեան՝ չկայ յաղթութիւն:

* * *

Սպաննուածների, վիրատրների, գերուածների, ինչպէս և պարտազմական սուարի քանակը եղել է և շարունակում է մնալ պարտութեան երկրորդական ազդակը: Էականը այն բարոյական ազդեցութիւնն է, որը ունենում է կոտող կողմերից մէկը միւսի վրայ:

* * *

Ես նիթական հնարատրութիւնը չունէի և չպիտի ունենայի հաւասար ուժերով դիմադրելու թշնամու: Վաշտը՝ լաւագոյն դէպքում մօտ 100 հրացանաձիգ. ահա՛ իմ մարտական ուժերի այն միատրը, որը պիտի ճակարհէր թշնամու գումարտակի, գնդի, երբեմն էլ աւելի մեծ գորամասի դէմ:

* * *

Իմ ռազմավարութիւնը՝ բարոյական գերակշռութիւն սրեղծել և ապա հարուածել՝ ինձ հնարատրութիւն էր փալիս.

- Ա. Թշնամուն խուճապի մարտնէ և ապա ծեծել
- Բ. Թշնամու ուժերը ամբողջովին կամ մասամբ առնել փաքտիքական աքցանի մէջ և ապա ջարդել
- Գ. Յաճախ նրան շեղել իր գործողութեան ուղղութիւնից և օգտուել նրա սխալներից
- Դ. Միշտ էլ հարկատր կէտերի վրայ լինել գործօն, ակտիւ
- Ե. Ուժեղ լինել հարկատր վայրկեանում
- Զ. Գամել թշնամուն իրեն համար տեղագրական անյաջող պայմանների մէջ և պարտադրել կոխը
- Է. Խուսափել դիրքային ձգձգող կոխներից
- Ը. Ամենանուագագոյն չափերի հասցնել զոհերի թիւը և ռազմամթերքի ծախսը ևն

* * *

Լեռնահայաստանի երկամեայ կռիւների ընթացքում, թշնամուն՝ մուսավաթական Ադրբեջանին թէ Խորհրդային Ռուսաստանին՝ չյաջողուեց զինու ուժով տէր դառնալ մեր գիւղերից անգամ մէկին:

* * *

Թշնամին – թաթար, ռուս և թուրք – թուսալէս և փեքնիկալէս անլի քան հարիւր անգամ գերազանցելով Միւնիքի ուժերը, փոսա մեզից անլի քան հարիւր անգամ զոհեր, մի քանի հազար գերիներ, պարերազմական մեծաքանակ աւար: Մենք ունեցանք սպաննուած միայն և միմիայն 28 հոգի, և չլուսինք ոչ մէկ գերի, ոչ մէկ աւար:

* * *

1920 թ. յուլիսին Միւնիքում գործող բոլոր հակաբոլշևիկեան կոսակցութիւնները՝ Ազգային խորհուրդը, Հայաստանի Հանրապետական կառավարութեան ներկայացուցչութիւնը և իր կանոնաւոր զօրամասերը, ինչ-ինչ նկարատումներով դիմադրութիւնը անհնարին համարելով, լքեցին այդ երկրամասը և քաշուեցին Արարատեան Հայաստան:

* * *

Ապստամբ ժողովրդին միայն Աստուած կարող է յաղթել:

* * *

Կոյր և բարբարոս կոսակցամոլութիւնը – մի գարիտրելի ախար, որ պիտ թոլանայ, որ ուժեղանանք ազգովին:

* * *

Իր ընտիր մեռելների պաշտամունքը չունեցող ժողովուրդը՝ ապերախար ու բարբարոս, անարժան է անկախ հայրենիքի, որը միշտ էլ սահապակների սրբազան աճիւնից կը բարձրանայ:

* * *

Ազգերին, որպէս իրենց սրտերը, հեղուում է իրենց արժանի քախրը:

* * *

Հայրենապաշտպան դաստիարակութիւն – ահա մեր փրկութեան խարիսխար:

* * *

Աւարայրը կը մնա մարդկութեան պարմութեան ամենավեհափառ գործերից մէկը: Իր յաղթական նահապակների աստուածային խիզախումով ու դիւցազնական խոյանքներով նա անլի վեհ է ու գեղեցիկ, քան

մեր դարի ամենամեծ ճակատամարտերը:

* * *

Ռազմավարութիւն ասելով անլի կոռուեցնելու, քան կոռուելու արուեստ պիտի հասկանալ: Կոռուեցնել կարողանալ-ահա յաջողութեան գաղփիքներից մէկը:

* * *

1920-ի վերջերին քեմալական զօրքը, զինած ու զգեստաւորուած Մոսկոսայի միջոցներով, բոլշևիկեան բարձր հրամանաւարութեան ցանկութեամբ Հայաստանի Հանրապետութեան զինուորական բոլանրակ ուժերը քաշում է և զբաղեցնում Սարիղամիշ-Կարս ռազմաճակարի վրայ: Խորհրդային մի աննշան զօրամաս առանց կոռուի և դիմադրութեան մընում է Երևան: 1920 թ. դեկտ. 2-ին Հայաստանը, կրճարուած մինչև Արփաշայ, յայտարարում է խորհրդային:

* * *

Բարբարոս համիլալականութեան հեղ դաշնակցող ռուսական բոլշևիզմին պէտք էր շահել մոսսոլման մասսաների համակրանքը. ահա թէ ինչու պէտք էր Մոսկոսայի և Անգորայի մերձարևելեան նպարակների ճանապարհին ընկած Հայաստան երկիրը վերածել դիակների կամուրջի սև ու կարմիր զինակիցների միջև

* * *

Այո՛, ռուսական «յեղափոխութիւնը» մահմեդականութեան աչքին քաղցրացնելու նպարակով փաճիկներին նոսիրաբերեցին մեր արինաներկ երկրի մեծագոյն մասը:

Տաճիկներին Հայաստան մտցրեց Մոսկոսան, ահա՛ ճշմարտութիւնը, որը չպիտի կարողանայ սպաննել խորհրդային կացիւրը:

* * *

Տգիտութիւն, եսականութիւն և աշխարհաքաղաքացիութիւն – ահա երեքը հայրենասիրութեան անհաշտ թշնամիներից:

* * *

Բացարձակապէս հաշտելի են հայրենասիրութիւնն ու մարդասիրութիւնը:

Միայն ազգասէրը կարող է սիրել և մարդկութիւնը:

* * *

Եւ ո՛չ մի ընչագորկ՝ քո հողի վրայ: Խեղճերի արցունքից ու թոյլերի անարիութիւնից են քանդում հայրենիքները: Բոլոր որդիներդ անկա-
րօք և արի:

* * *

Մայիսի 28-ը-դա ո՛չ սովորական նուէր է մեծ ազգերի կողմից փրոսած
մեր ժողովուրդին, ոչ ողորմութիւն՝ աշխարհի խղճի կողմից մարդասի-
րաբար փրոսած մեզ, ո՛չ էլ հին հարստութիւն՝ թողնուած մեզ մեր պա-
պերից:

* * *

Դա արժէքն է մեր վարած այն մեծ, այն եզակի ազատամարտի, որի
նմանը չունի ազգերի փարեգրութիւնը: Դա արժէքն է մեր հոյակապ, մեր
աշխարհացունց մարտիրոսագրութեան:

* * *

Վերանորոգուելու անընդունակ ժողովուրդները մեռնում են ամէն
ժամ, ամէն վայրկեան:

* * *

Հոգեկան ցնցումների ընդունակ ժողովուրդները միայն կարող են
վերանորոգուել:

* * *

Դաստիարակութիւն, որ ազգային հզօր զգացումով և արթուն գի-
տակցութեամբ զինէր հայրութեանը, որ արիացնէր և դառնար մայրը
բարձր ժողովրդասիրութեան և գաղափարապաշտութեան... Դաստիա-
րակութիւն... որ մղէր հայ մարդուն մեռնել ապրելու և ապրեցնելու հա-
մար և ոչ թէ ապրել մեռնելու համար, որ իրականացնէր սոցիալական
հնարաւոր արդարութիւնը մեր ժողովրդի մէջ:

* * *

Հոգոս հիւանդութիւն ունեն ժողովուրդները, երբ դժգոհում են իրենց
հայրենիքից:

* * *

Հիանդ, դժբախտ ժողովուրդ, որ մինչև այժմ երկու առաքինութիւն է
ունեցել՝ իր դժբախտութիւնները վերագրել արտաքին պատճառների և
փրկութիւնը յուսալ արտաքին ոյժերից:

* * *

Պարտուեցինք, որովհետև մեր ցեղի ոգոս բովանդակ ուժերն օգտա-
գործելու փոխարէն հովանաւորներ փնտրեցինք:

* * *

Ուժ է ճշմարտութիւնը: Չկայ ուժ առանց ճշմարտութեան: Չկայ փրկու-
թիւն առանց ուժի:

* * *

Ճշմարտութիւնը - դա աստուածային այն լոյսն ու ջերմութիւնն է,
որով կը անուի ու կը հզօրանա հոգին՝ անհատի և ժողովրդի:

* * *

Պարտութիւն, սփրկութիւն, փառապանք - ահա կեղծիքին հարկապոս
ժողովուրդների ճակատագիրը:

* * *

Ճշմարտութեան մէջ ապրող անհատի և հասարականութեան հիմքը
դրոսած է լինում ժայռի, կեղծիքի մէջ խարխափողներինը՝ աւազի վրայ:

* * *

Հայ երիտասարդ... դու պիտի սպանես կեղծիք հրէշը, որ սպառնում է
մեր ազգի նիւթական և բարոյական գոյութեան: Վաղուց է, ինչ այդ եռագլ-
խանի հրէշը, յենուած մեր հասարակական կեանքի գոեհկոյթեան, չաստու-
ածաբար պաշտում է և իշխում մեր ժողովրդի որոշ փարթերի հոգոս և մտքի
վրայ: Նա մեռեալներ ունի ցցուած ամէն տեղ, ուր կը սողայ փկար, անարի,
անանձ հայր: Նա անստորք բազիններ ունի, որոնք դո՛ւ, Ավարայրի հերոսի
տրբազան կատարողութեամբ պիտի խորպակես:

* * *

Պիտի պարտի, պիտի մեռնի կեղծիքը մեր կեանքում, որ ապրի մեր
ժողովուրդը:

Նագովրեցին կ'ուսուցանէր. թէ մարդու մէջ ապրող հոգին աւելի արժի, քան ողջ աշխարհը:

* * *

Նախ մարդ: Դա նշանակում է զգալ իր հոգու մէջ ներկայութիւնը որնէ՛ք բարձր բարոյականի իղէալ: Դա նշանակում է իր էութեան մէջ զգալ անվերջ բոցավառումն այդ իղէալի սրբազան կրակի:

* * *

Իղէալ և աննուաղ ձգտում դէպ այդ վերջինը - ահա՛ թէ ինչն է մեզ իրաւունք փալխ մարդ կոչուելու:

* * *

Ինչո՞ւ կը փառապի մարդկային ցեղը:
- Որովհետրն միամիտ մարդը իրենից, իր հոգոց դուրս փնտրեց և կը փնտրէ երջանկութիւնը:

Որովհետրն նիւթականացած մարդը չճանաչեց ճշմարիտ երջանկութիւնը և իր կեանքը վերածեց դժոխքի:

* * *

Քո վաղայ յաղթանակի և պարտութեան միջև հայ ժողովրդի լինել - չլինելու հարցը կայ - հայ երկրասարդութիւն:

* * *

Կոսակցականի նշանաբանը կը դառնայ - կոսակցութեանս հեղ, բայց ազգիս համար:

* * *

Սրտեղծագործող, ոչ նմանող: Անձնասպանութիւն է նմանուելը:

* * *

Կ'ուզէի, որ դու, հայ երկրասարդ, որ դու իւրացնէիր ինքնաճանաչութիւնը՝ որպէս ուժի, յաղթանակի և բարձր երջանկութեան ամենակարճ և ամենասարոյց ճամբան:

* * *

Անյոսօրէն փոզները միայն չգիտեն այսօր, որ չօգտագործող ոչ

ժերի մի հսկայական պահեստ է մարդս, որից դժբախտաբար կարողանում են օգտուել քչերը միայն:

* * *

Մի նախասնձիր, քանզի աշխարհը ոչինչ չունի, որ չունենա քո հոգին: Թուլութիւն է չարութիւնը:

* * *

Ասպետ եղիր նախ անձիդ նկարմամբ:

* * *

Կրքերն ու կարիքները ծառաներ պիտի լինեն, ոչ թէ փէր ու բռնակալ:

* * *

Թոյլ մի փութ, որ վարերը իրենց բոյնը հիստեն ուղեղիդ մէջ:

* * *

Այն օրից, ընթերցող, երբ հայը վախենալ սկսեց մահից, այն օրից օրարը թագաւորեց Հայաստանում:

* * *

Ես փեսայ մեր վարած ճակատամարտերում, փեսա ամենարնտիրը հայո՛ւ - մեռնելու մտքի հեղ հաշտութեամբ, ամէն գնով յաղթելու անփոփոխ փալի վճռականութեամբ դէպ թշնամին խոյացող հայ զինուոր:

* * *

Հանգիստ սրտով պիտի մեռնիմ, երկրասարդ հայ, եթէ քո սերունդի օրով «հայօրէն» բառը մեր ժողովրդի բարեկամների և թշնամիների կողմից գործածի «քաջօրէն» բառի իմաստով:

* * *

Քանի դեռ իր ամբողջութեան մէջ քաջ և քաջանուն չէ հայութիւնը, նրա համար անցած չէ դեռ աշխարհի քարտէսից ազգովին անհետանալու վրանգը:

* * *

Արի է նա, ով իր մէջ սպանել է իր կաշի համար դողացող անասունը:

* * *

Հայ երիտասարդություն, պիտի կարողանան արտաքին վրանգի ծանակ ձեռքդ խղճիդ գոչել:

- Ես քո կենդանի սուրն եմ, հայրենիք, որ քեզ յաղթություն պիտի բերի:

* * *

Նախ հերոսների և նահապակների գերեզմանապուրն, ապա՝ ազապ ու երջանիկ հայրենիք:

* * *

Երբ որ մեր սիրտը և ուղեղը լցնողը ապառաժահիմն ու յաղթական հայրենիքի գաղափարն է՝ վաղուայ Հայաստանը չի կարող աւազահիմն, ապագոր և դժբախտ լինել:

* * *

Ազգերն ունեցել են, ունեն ու պիտի ունենան իրենց արժանի ճակատագիրը:

* * *

Երբէք և ոչ մի տեղ՝ առանց հոգևոր հայրենիքի:

* * *

Հայրենիք: Երկիւղած սէր և յարգանք դէպ մեր նախահայրերի յիշատակը, դէպ մեր կրօնը, որ ցեղի սիրտն է, դէպ մայրենի լեզուն, որ հայրենասիրութեան թթիւմորն է, դէպ փոհմիկ գրականությունը և արուեստները, որ ցեղի մտքի և հոգու կեանքն են, ազգային պատմությունը, որ «ցեղի հոգին ամրացնելու ճիգերի պատմությունն է», իրար յաջորդող սերունդների՝ հայրենի հողի վրայ թափած քրտինքն ու արիւնը, գեղջուկի հորովելն ու Տիգրան Աշխարհակալի սուրը, դէպ Անիի աւերակներն ու Հայկայ եռաթև աղեղը, դէպ մեր հեթանոս աստուածներն ու փառապաճարները, անասան հաւաքը դէպ մեր մեծ Յոյսը: Գումարիք, ընթերցող, գումարիք այդ բոլորը, և կը սրացի հոգևոր հայրենիքը:

* * *

Չկան մեծ և փոքր ազգեր: Կան հաւասար իրաւունքով անդամները մարդկութեան ընտանիքի: Երոպական դիւանագիտութեան կեղծ լեզուն

է ստեղծել «մեծ» և «փոքր» անունները: Ճշմարիտ մեծություն չէ թուական գերազանցությունը:

* * *

Հայրենիքը պիտի սիրել անկախ իր քաղաքական ուժիմից, ինչպէս և անկախ մեր քաղաքական համոզմունքներից:

* * *

Ամէն անգամ, երբ կը մտածեմ չարաբաստ հայսանունների մասին, կը պարկերացնեմ այն տեսարանը, որ տեղի է ունեցած հրէական ամբոխի և Հրէաստանի փոխարքայի միջև:

Ամբոխը - Եթէ ազապ արձակես սրան, - մարնանշելով Նազովրեցուն, - կնշանակի կեսարի բարեկամը չես:

Պիղապոսը - Ձեր թագաւորին խաչ հանել տալ:

Ամբոխը - Մենք ուրիշ թագաւոր չունենք կեսարից զապ:

* * *

Հայտնի, որ կարող է փոխարինել խաչափայտի առջև իր աստուածանման որդու վերքերը սզացող Տիրամօրը - հայ կինը աւելի հերոսուհի, քան թախծութեան մայր պիտի լինի:

* * *

Երբևէ տեսնուած չէ, որ ժողովուրդն աւելին չգար, քան կարող են պահանջել իր առաջնորդները:

* * *

Որ մարդիկ խոստովանում են իրենց փկարությունը, բայց չեն ամաչում փկար լինելուց - հոգևոր սպրկություն է փրկում այնտեղ:

* * *

Ծիծաղելի է փկարի ներումը, ինչպէս և նրա հաշտարար ոգին: Ներել էք ուզում - արիացէք, հզորացէք, յաղթէք նախ:

* * *

Մի օր հայությունը պիտի ների թրքութեան, բայց ոչ ծոնկի եկած նրա առջև, պարտուելուց յետոյ, այլ նրան ծնկի բերած՝ ծեծելուց յետոյ:

* * *

...Կոհը կը սկսի Ձիրաւի փափարակի վրայ... երբ Ներսէս Մեծը կը բարձրանա Նպար լեռը, ձեռքերը կը բարձրացնէ դէպի երկինք և աղօթելով, կ'իջացնէ ձեռքերը, մինչև որ չեն յաղթի հայերը:

Ահա՛ յաղթելու գաղթնիքը:

Ներսէս Մեծը լեռան վրայ!

Ինչպիսի վեհ պարկեր:

Ինչպիսի վստահական նիւթ հանձարեղ վրձնի և մրահայեցութեան համար:

* * *

Ես գրել եմ, որ այն բոլոր դէպքերում, երբ Ներսէս Մեծի նման մէկը «բարձրացել է լեռը», երբ մեր ցեղը լարել է իր բովանդակ ոյժերը և չի փկարացել հոգով, մինչև որ փեղի կը փար թշնամին – միշտ էլ յաղթութեան դիցուհին իր ոսկէ մարներով պսակադրել է հայ զինուորի ճակատը:

* * *

Արգասաւոր չէ թոյլի սէրը: Բծանք է թոյլի ներումը:

* * *

Քրիստոսը սիրում էր, որովհետև ուժեղ էր. նա սիրում էր, որովհետև սիրելու և ներելու չափ հզօր էր: Նրա անձնական կեանքը պիտի դառնա եկեղեցուն ուղեցոյց, Նրա մահուան խորհուրդը – հերոսական զոհաբերութիւն:

* * *

Պարզել անցեալի իրենց պարտութեանց պարճառները, նորէն մոռացութեան փալ պարտութեան խրատականը և ապա, նոր աղէտներից զարնուած՝ վերստին սերտել պարտութեան դասերը – ահա՛ անհեռաբեւ ազգերի ճակատագիրը:

* * *

Արիութիւն:

Միակ ճշմարիտ կրօնը, առանց որի ոչինչ արժեն կրօնները:

* * *

Դարապարտելի է ամեն մի դպրոց, եկեղեցի, կուսակցութիւն, որը արհադատան և արի չէ դարձնում մարդը որպէս անհապ և հաւաքակա- նութիւն:

* * *

Արիութիւն – միակ ճշմարիտ բարոյականը:

* * *

Անարիութիւն, ասել է՝ հոգևոր սնանկութիւն:

* * *

Յանձին Ալեքսանդր Մեծի՝ արիութիւնն էր որ յունական մշակոյթը Ասիա մտցրեց: Դա էր – նախավկաների յաղթական արիութիւնը, որ Նազովրեցու վարդապետութիւնը պարտադրեց բարբարոսներին: Դա էր, որ նոր հոբիզոնների փէր դարձրեց մարդկութիւնը, սանձելով ծովերի ամեհութիւնը, մեղմելով դաժանութիւնն անապարների և նուաճելով օդը:

* * *

Արի է անձնագոհը, մարդասէրը:

* * *

Մեծ սիրտ, ազնիւ նկարագիր, վսեմ մրաժում- արիութեան հարազատներն են այդ բոլորը, ճառագայթները միևնոյն արևի:

* * *

Շայտթիւնը չգիտէ իր պարմութիւնը, ասել է թէ չգիտէ օգտուել իր պարմութիւնից – ահա իր դժբախտութեան ակն ու աղբիւրը: Նա ծանօթ չէ իր արիական անցեալին, իր հաւաքական դիցազնականին և դրա չէ իր արիական անցեալին, իր գոյութեան թշնամիներին-նա հաւատում է համար էլ յուրախութիւն իր գոյութեան թշնամիներին-նա հաւատում է ամեն ինչի, միայն ո՛չ իր սեփական բազկի ոյժին, դրա համար էլ իր ամբողջութեան մէջ նա պարտոտողական է: Նրա համար Աւարայրի Մամիկոնեանը անելի նահապալ է, սուրբ, քան ռազմիկ և հերոս:

* * *

Պարմագիտօրէն փգէտ հայը, եթէ չգիտէ, որ հայ արիութիւնը հայոց

աշխարհի համար դարերով կարարել է հոգևոր շանթարգելի դեր՝ չէզոքացնելով ու զինաթափելով բազում արտաքին վրանգներ:

* * *

Մէկից անելի անգամ դժբախտութիւն եմ ունեցել լսելու ազգային պարմութիւն դասաւանդող հայ ուսուցչին և խորապէս ցաւել եմ մեր աշակերտող սերունդի համար: Մի կենդանի մեռել, մեռեալ շեշտերով խօսում է մեռելների մասին: Պարմութիւնը նրա համար անհոգի կմախք է և ոչ թէ բարբախտն սիրտ: Միևնոյն փրամադրութեամբ նա խօսում է և Տիգրան Մեծի, և Վեսպր Սարգսի մասին:

Հպարտանքից չեն դողում, չեն լայնանում նրա ռոնգերը, երբ պարմում է, թէ ինչպէս պարսից արքան, հայ սպարապետի անօրինակ քաջագործութիւններից հիացած, ամեն անգամ երբ գինու բաժակը շրթունքներին կը մտրեցնէր, կը դժուարանար չքացագանչել՝ «ձերմակաձին գինի խմէ»:

Սեղմ ասած՝ սրեղծագործ վերապրում չէ՛ նրա աւանդած պարմութիւնը, այլ անհոգի հնախօսութիւն, քանզի իրեն կը պակսի ազգային հպարտանքի նսիրական զգացումը:

* * *

Գերազանցօրէն հայրենապաշտ-ահա՛ թէ ինչպիսին պիտի լինի պարմութեան դասաբան: Այդպիսին չէ՛ - ասել է նրա տեղը դպրոցը չէ: Ասել է՝ բարոյապէս ազատ չէ իր ձեռքն առնելու մեր ցեղի կեանքի սրբական գիրքը:

* * *

Հայաստան երկրի վրայով չի անցել մի հափիկ դար, որի ընթացքում գերիշխան կեանքի յոյսերով ընդվզած չլինէր հայութիւնը: Նրա մտաւորական ընտրանին վերջին անգամ կէս դար առաջ իր ժողովրդի վերադաստիարակիչը լինելէ առաջ, նրա անցեալ մեղքերի քաւիչը հանդիսացաւ:

* * *

Այժմ իր (իրէութեան-Ռ. Հ.) բախտի կտորը կը քաշեն և՛ բոլշևիզմը, և՛ ֆրանսաւոսնութիւնը, և՛ միջազգային բորսաները, դրամատները, մամուլի մեծագոյն մասը ևն.: Բայց քինաթաքոյց ազգը չբաւականացաւ իր յաղթանակով: Հոգեպէս միշտ քաղցած մարդկութեան[ը] ներած իր մէկ-

երկու նորանշան գաղափարներով, ազգերի ծոցի մէջ նա վառեց դասակարգման արնուր պայքարի կրակը, և այսօր փէր աշխարհի ոսկու երեք քառորդին՝ նորանոր պայտերազմների և ընկերային յեղափոխութեանց սրտականով կը սպառնայ աշխարհին...

* * *

Մեր պարմութեան ընթացքում - գիտցէ՛ք և՛ այդ - մեծահարուստ հայր չեղբայրացաւ հայ մտաւորականին, ո՛չ էլ ազգերի բախտի հեղ խաղացող ոյժերի բարեկամութիւնը փնտրեց:

* * *

Միայն զմիտնիացի հայոց հարստութեամբ կարելի պիտի լինէր մի մեծ Հայաստան գնել: Այդ ծով հարստութեան մի չնչին մասն իսկ - որը քեմալականները քանոն փոխին - պիտի բաւէր հրէաբար կաշառելու մարդկութեան երեք քառորդի խղճմտանքը, զայն հայասէր դարձնելու աստիճան: Բայց - անէծք մեկուսի երջանկութեան դաւանանքին - հայ ցեղի ապրած և ապրուելիք բոլոր փեսակի դժբախտութեանց անիծուած ակաաղբիւրին անէծք...

* * *

Ոսկեքսակ հայը չկանգնեց ոսկեգրիչ մտաւորականի թիկունքում, և այդ՝ վերջինի լեզուն կարճ, խօսքն անլսելի եղաւ միջազգային արէօպագների մէջ:

* * *

Ահա ստորը Սահակը, սրբազան զայրոյթով գինովցած. «Բահանայանայ ի վերայ փիրանեւց, և փիրասպան և մարնիչ ժողովրդոյ ոչ կարեն»: (Ղ. Փարպեցի)

Ահա և Հայոց Հայրիկը, համակ սէր ու ճիշտ. «Միթէ՛, հայոց ժողովորդ, դու գռեհաց կաւ ես աշխարհիս երեսին»:

Հապա Ահարոնեանը՝ իշխանն ու փառքը մեր նորագոյն գրականութեան, որի սիրտը արևածաղկի պէս միշտ էլ արևը, Արարաբեան արևը փնտրեց:

* * *

Յանցապարտ է ան, ով չի հաւաքար իր ժողովորդի մէջ մրափող առիծի գոյութեան, բայց և այնպէս համարձակութիւնը կրնենաւ դէպի կրի առաջնորդել անոր զաւակները: Նմանը, անկարող հոգեպէս ցն-

ցելու իր ժողովուրդը, դէպի ստոյգ պարտութիւն և սպանդանոց կը մղէ զայն:

* * *

Վանի Հերոսամարտի: Ճակատամարտ մը, սեփական ուժերով քառասուն փառայեղ յաղթանակ մը, որ հայութեան վերածնութեան համար աւելի մեծ դեր կատարեց, քան կրնային կատարել հայ դպրոցն ու գրիչը երկու փասանեակ փարիներու ընթացքին:

* * *

Ազգային գրականութիւն - դա մեր հոգևոր ծովն է, ուր գալիս թափուում են ցեղի ոգու վարար գեպերը:

* * *

Ամէն մէկ «ես» յանցաւոր ապստամբ մը, ամէն մէկ «ես»-ականութիւն՝ բարոյական մահափորձ մըն է այն Մեծ Ամբողջին դէմ, որ ազգ կը կոչենք:

* * *

Իր սրբազան պսիւն ունի իմ ամէն մի օրը, երբ մտովին անհուն կարօտով կը սկսեմ իմ պրպտումները Հայոց Պարտութիւնը կերպող դարերի մէջ, քաղցրութեամբ կ'ոգեկոչեմ հայ զինուորին ու զօրավարին, որոնք հոգեկան-գեղեցկութեան անդիմագրաւելի արիութեան ու մեծագործ վեհութեան համբարելի հեղքներն են թողել Հայոց աշխարհում: Եվ կ'ոգեխառնուիմ նրանց հետ, կը վերապրեմ նրանց գոռ յաղթանակները և կարօտով կը բաժանուիմ նրանցից, մի օր անց՝ նրանց ազնուացուցիչ ընկերութիւնը վերափին վայելելու ցանկութեամբ: Այսպես կը սնուցանեմ ազգային հպարտանքի իմ զգացումը: Չը փկարանալու համար կը կատարեմ իմ ամէնօրեայ խորհրդաւոր զօրահաւաքը մեր պարտութիւնը զարդարող հոգիների, և կը խօսեցնեմ ու կը լսեմ նրանց:

* * *

Ապրումս իմ, որքան մեծ է արիների համասարեղութիւնը մեր պարտութեան երկնականարի վրայ: Եւ որքան շլացուցիչ է նրանց փայլը:

Պսակաւոր են, եօթնվէրք են բոլորը, փառքի սպիներ ունին բոլորը: Պարթև են, խայրակն, քաջագանգոյր: Բիբերի մէջ շանթեր ունին, ցաւում, դառնութիւն:

* * *

Չմնաց, աշխարհում գրեթէ չմնաց ցեղ, որ մեր բազկի ուժը չզգար:

* * *

Մարդկային ցեղերի պարտութիւնը արձանագրած չէ մի հափիկ իրոպիւն, որ իր անարգութեամբ զուգահեռով կարողանար հայութեան դէմ թրքո-բուլղարիկ զինակցութեան փաստի հետ:

* * *

Իր զգոնելիութեան մէջ այնքան կատարեալ այդ սև զինակցութեան երեսէն այսօր իրար զարնող երկու աշխարհների - հինի և նորի - միջև իր գլխիւր դնելու փեղ չունի հայ ժողովրդի կէտը:

* * *

Խեղճ է ժողովուրդը, երբ նրա առաջնորդն աւելի փառասէր է, քան հանձարեղ, երբ նրա առաջնորդին պակասում է մշակոյթը՝ սրտի և մտքի, երբ բռնութեամբ նախանձի չար դեով՝ նա փառասպում է բարոյական դեղնութեամբ, երբ նա դաւանում է անձնական երջանկութիւն խոստացող այս կամ այն զահավիժեցնող վարդապետութիւնը, երբ փկարտութիւն ունի մեծ թոսալու փանաքի գործերի մէջ, և փոքրիկ հանդիսանալու մեծ գործերում:

* * *

Անէծք է առաջնորդի փգիտութիւնը, եսականութիւնը, նախանձը: Չի եղել աւելի զարհուրելի թոյն, քան վազ օրինակը առաջնորդի, որ միշտ էլ վարակիչ է:

Եսական է՝ անասնանում են նրա հետ առնչողները:

Ծոյլ է մտաւորապէս՝ հոգևոր հնավաճառներ են դառնում նրան շրջապատողները:

Անհայրենասպան չէ՝ հակահայրենիք հրէշներ են վիպում նրա շուրջը: Իսկ երբ անարի է՝ զգալիօրէն երկչոր են դառնում նրա իշխանութիւնը վայելողները:

* * *

Կայ, սակայն, և կատարեալ առաջնորդը: Ահա՛ նրա հոգևոր դիմաստները մի քանի խոշոր գծերով.

- Նախ կրողը և ոստցիչն է նա ցեղային բարոյականի:

Գործել՝ նրա համար նշանակում է փարսաբել իր շրջապատի մրա տր խաւարը, թմրութիւնը, փկարութիւնները:

Դա նշանակում է՝ ոչինչ չթողնել իր շուրջը անթործ և խոտան, ծոյլ և մեռեալ վիճակի մէջ:

Ուժեղ ինացականութիւն, մեծ սիրտ և բոլորանուէր ծառայութիւն - ահա՛ նա:

Նրա մէջ եթէ դեռ չի մեռել, ապա հոգևարում է «ես»-ը:

Պարզաբնու է, վշտակիր, հերոս:

Յայտնուելով այս կամ այն միջավայրում՝ նա հոգեբանօրէն փոխում է այդ վերջինը:

Նրա ներկայութիւնը ազնուացնում է հոգիները, թևաւորում, գօրեպն դում:

Նրա շնորհիւ անկարելի համարուածը դառնում է դժուարին, դժուարինը՝ կարելի:

Նրան յաջողում է փոխել իր ժողովրդի հոգեբանութիւնը, ճակատագիրը, պատմութիւնը:

Սահման չէ դրած նրա սիրելու և զոհաբերելու կարողութեան:

Նա ծիծաղել գիտէ մարդկային մեռեալ օրէնքների վրայ:

Միտում է ամբոխը, բայց գիտէ յետ մղել նրա օրէնսդրութիւնը:

Իմաստուն է և գիտէ, որ «կան պարմական մոմենտներ, երբ ժողովրդին ծառայելու լուսագոյն ձևը հանդիսանում է նրա հայացքների վճռապէս հակադրուելու մէջ»...

* * *

Առաքեալի սիրտ, իմաստասէրի գլուխ, ադամանդէ ճակատ- ահա՛ կայարեալ առաջնորդը:

* * *

Հայ առաջնորդը մի ձեռքն Արևմտաբնում՝ այսօրեղի ճարտարութեան նորոյթները իրացնելու, իր միւս ձեռքում պիտի ունենայ ցեղի բարոյական օրէնսգիրքը:

Ո՛չ աշխարհի իրերի ու անցքերի վրայ նիթապաշտ փիլիսոփայութեան աչքով նայող բիրիցս զգուելի է պիկուրեանը... այլ կեանքի լի բաժակը արհամարհել գիտցող իդէալիստը՝ վսեմախոհ:

Ո՛չ հոգով գռեհիկը, որ եսականօրէն ըմբոստանում է սրբացոցիչ փառապանքի դէմ..., այլ հոգու պայազատութեամբ շեշտուածը, որ մտովի կհամբարէ այն խորհրդաւոր ձեռքը, որն իր հաճոյքների յորդող բաժակը կփշրէ:

Ո՛չ հոգևոր թգուկը, որ յաջողում է բարձրանալ հսկաների վրայ՝ մի քիչ հեռուն րեսնելու համար, այլ նա, որ գիտէ նախաբեւել անցքերը և ցանկալի ուղղութիւն փոխ նրանց. նա, որ փարոսօրէն լուսաւորել գիտէ իր ժամանակաշրջանը՝ նոր ուղիներ բանալով իր ժողովրդի մտքի բանակ ճամբաներէն դուրս:

Ո՛չ այս կամ այն դասակարգի ջարդագովը, ո՛չ էլ ներկայով կլանած կարճայուշ ժողովրդասէրը, այլ ցեղամերձը, որ իր բոլոր խորհուրդները ցեղէն կառնէ:

Ո՛չ անկապաշտը՝ նուստախոհ, վայնասողը՝ հոգեհաշմ, խոժանափարը՝ շոգմոգ, հերձուածողը՝ որոմնացան, ոչ էլ նեղհասար ու բաժանաւէր կուսակցական ցանցարկուն, որը աստ և անդ կազ ու կոխ կտերմանէ՝ իր հացն ու հանգիստն ապահովելու համար...

Այլ հայը ցեղագրեցիկ ու խորարթուն, նա, որ ունայն է հոշակել այն ամէնը - արուեստ, գրականութիւն, իմաստասիրութիւն - որոնք աճեցնելով մեր աշխարհածանօթութիւնը, մեզ չեն դարձնել աւելի՛ հայ, աւելի՛ գօրեղ:

Այսպէ՛ս պիտի լինի առաջնորդը փառապող և իր վերջնական ազատագրութեան սպասող հայութեան:

* * *

Մարտիրոսանալու կամքը եղել է և կը մնայ հայ հոգու գերագոյն հերոսականութիւնը:

* * *

Ամէն վախկոտ կենսաբանօրէն անբարոյական է:

* * *

Անհայրենիք դարձած մի ժողովրդի համար չկայ աւելի բարձր և նոփրական նպատակ, քան իր հայրենիքի՝ իր յախտենական սեփականութեան վերաբացումը:

Բոլշևիզմը - կոպիտ ուժի փիրապետութիւնը սարսափի միջոցաւ - մեր ժամանակի ամենամեծ չարիքն է, որի դէմ պայքարելն աւելի դժուար է, քան մարդկային ցեղի որևէ թշնամու: Դա մի նոր հեթանոսութիւն է, մի խելագար վերադարձ դէպի վայրենացում և ընկերային գայլութիւն:

Սուրբ ու կեղծիքը ոչ թէ պայքարի սուսական զէնքեր են նրա համար, այլ նրա երկրորդ բնաւորութիւնը: Անսման բարոզիչ է և լրբեւ հաւասարապէս. լրբեւ է ոչ թէ արհեստով, այլ հոգով: Իր անսանական

եսապաշարութիւնը նրան դարձրել է անխարողական: Այդ է պարճառը, որ նա լրկուեալ է մօրը, հօրը, քրոջը:

* * *

Ազգրից ի վեր հայութիւնն ու իր քրիստոնէութիւնը ձուլուած են ի մի բնութիւն: Այս երկուսի ճակատագիրը նոյնացած է:

* * *

Եկեղեցին նահապակներով է եկեղեցի: Նահապակ չունեցող եկեղեցին ամեն ինչ է, բայց ոչ եկեղեցի: Հայ եկեղեցին ազգային եկեղեցի է:

* * *

Ազգային բացառիկ մի աղէտի զոհերը, որպիսիք են վերջին կոտորածների զոհերը (Մեծ եղեռնի զոհերը - Ռ.Հ.), որոնք ընկան ո՛չ միայն իրենց զուր ազգային, այլև կրօնական հաւատին հաւաքարիմ մնալու գաղափարականութեան հեղուկներով - եկեղեցական նահապակներ են: «Հայ քրիստոնեաներ» էին նրանք, որոնք մեռան ո՛չ միայն իրենց «հայութեան», այլև «քրիստոնէութեան» համար:

* * *

Եկեղեցին, որ զուրկ է մարդկայնութեան բարձր իդէալից՝ դաւարակ է աստուածային շնչից:

* * *

Բաւական չէ հիացիկ վերաբերմունք, անգամ պաշտամունք ունենալ դէպի անցեալ սերունդը - պէտք է գերազանցել նրան: Հէնց սա՛ է յարգանքի այն պսակը, որ իւրաքանչիւր յեղնորդ պարտաւոր է դնել նախնեաց յիշատակների կոթողին:

* * *

Չկայ աւելի մեծ պղծութիւն, քան սեփական ժողովրդի պայմանութեան չարամիտ աղաւաղումը:

* * *

Կեղծել պայմանութիւնը, ասել է՝ եղծանել պայմանաւորեղ ժողովրդի կենսաբանական բարոյականը, հարուածել նրա արթուն բնագրը, վրանգել նրա հոգևոր առողջութիւնը, խեղել հոգին, ծռել նրա զարգացման

մամբան, անիրատել նրա մեծ մեռելներին, որոնք ընկան, որ հայրենիքը սրբանայ ու ապրի, շփոթի մարմնել պայմանութեան ենթակայի ներկան և խաբել գալոց սերունդներին:

* * *

Ես տեսա հոգով ազարը ստրկութեան մէջ և սիրեցի մարդը: Ես տեսա ստրուկը ազարութեան մէջ և գարշեցի մարդէն:

* * *

Թագ ու ձևական իշխանութիւն փնտրում են այն ոչնչութիւնները միայն, որոնք անթագ իշխել, թագաւորել չգիտեն:

* * *

Տարօնականութիւն - դա Մեսրոպի անմահ գործն է, որ կարելի դարձաւ, որովհետև հայ սուրբ պաշտպան կանգնեց նրան:

Դա հայ ռազմիկի գործն է, որ յաղթական եղաւ, որովհետև Հայ եկեղեցին օրինեց նրան:

Տարօնականութիւն... դա նոր ուխտ է փարօնաշունչ Մեսրոպների, Պարթևների, Խորենացիների շունչով օծուն իմացական նոր առիւծներ հասցնելու: Դա ձգտումն է՝ վազքը մեր ցեղի ոգու - դէպի արևը, կեանքի աղբիւրը, լոյսը:

Դա մեր հաւաքն է, թէ մեր այնքան արգասաւոր ցեղը դեռ պիտի երկնէ իր զօրաւոր զաւակները - Վարդանները, Մուշեղները, Վահանները:

Դա ցեղի անմահ ընկրանիի գործը շարունակելու ուխտն է:
Դա ասել է՝ մրաժոմիդ, ապրումիդ և գործիդ մէջ ցեղը դիր:
Դա և՛ հերոսապաշտութիւն է, և՛ նոր հերոսական ծարաւ:

* * *

Տարօնականութիւնը - դա ցասնմալի մի անէծք է Հայաստանին ծառայելու պայտրաստ հայր նոսիրումն ու գործը դժոխարացնող ներքին չարութեան դէմ:

Յաշտիշայր, զոհափառ, զոհաշար - ահա՛ այն անունը, որ կը խորհրդանշէ Տարօն աշխարհը և իմաստը կը կազմէ Տարօնականութեան:

Վերջապէս, Տարօնականութիւնը մի վճռական միջոց է օրոսայ մեր ազգային կեանքը թոնաւորող հոգևոր մանրոքի և գաղափարների քաւոսի դէմ: Դա մեր հասկացողութեամբ, միաժամանակ, մի բողոք է մեր

հաւաքական րկարութիւնը սնուցանող պարտողական, թուօրօր քարոզչութեան դէմ:

* * *

Ոգին է իմաստ և սրբազնութիւն հաղորդում երկրին: Ջրկէք երկիրն իր սրբազնութիւնից, իր հոգևոր նշանակութիւնից, և դա կը դադարէ հայրենիք լինելուց:

* * *

Մեր երկրագնդի վրայ ուխտերից ամենասրբազանը միշտ էլ կնքած է եղել Աստուծոյ և հայրենիքի համար: Deo et Patria! Նմաններից էր Ամսիկոնէից Ուխտը:

* * *

Որպէսզի հայը իր կեանքը քաղցրօրէն պարարագէր իր Հայրենիքին, նա պիտի ձգտէր բարձրանալ սովորական մարդկայնութիւնից, իսկ դրանում յաջողւելու համար, նա պիտի զգար կարիքը՝ մի գերագոյն արժէքի, որպիսին է ցեղի յաւիտենականը:

* * *

Մեռնելու կամք - դա ներքին ինքնարտոյի այն զգացումն է, անկի ճիշդը ներքին մղումը, որ ուխտածին ոյժ, արիւթիւն և ուրախութիւն է տալիս մեռնելու իր հայրենիքի և ցեղի համար: Կամ այդ կամքը - ասել է՝ ենթական յաջողել է հաշտեցնել իր անձը իր ցեղի յաւիտենականի հետ: ասել է՝ նա այլևս գրած է ինքն իրեն, այլևս ինքնաճանաչ է, որով և՛ փէր իր ցեղի թաքուն ոյժերին:

* * *

Մի օր հայութիւնը պիտի ների թրքութեան, բայց ո՛չ ծունկի եկած նրա առջև, պարտելուց յետոյ, այլ նրան ծնկի բերած՝ ծեծելուց յետոյ:

* * *

Լաւ բան է, անշուշտ, մի հասարակ զէնք անելի ունենալ, բայց ոչինչ բան է հազարներով իսկ անելի ունենալը, եթէ ռազմիկին վարողը մահուան գաղափարի հետ հաշտուած հերոսական ոգին չէ:

* * *

Միշտ էլ պարտուել են այն ազգերը, որոնք ունեցել են մի հասարակ յենարան - թիւր, քանակը: Կոռուղաշտը միշտ էլ պատկանել է որակին: Նրան են և վաղուայ յաղթանակները:

* * *

Թող հեռու մնա իր ժողովրդի ղեկավարութիւնից նա, ով մեռնել չգիտէ իր հայրենիքի համար: Ամէն ղեկավար - փասնապետ, զօրական, նախարար - ով հրաժարում է մեռնել իր հայրենիքի համար, յանցագործ է:

* * *

Ղարաքիլիսում և Սարդարաբադում քաջութեան հրաշքներ կատարած հայը չը կոռնեց Ղարսում: Սակայն նոյն Ղարսի պարտաւր դիցագնացաւ Միւնիքում: Մէկից անելի են ոգու անկման ու ակտիւացման պարճառները: Գլխաւորագոյնը, սակայն, կը մնա առաջնորդի անձը:

* * *

Ճշմարիտ առաջնորդ լինել չէ կարող եսասպաշտը, ընչասէրը, հոգով փչացածը: Առաջնորդ լինելու համար բաական չէ անգամ արտակարգ իմացականութիւնը: Քաջութիւնն էլ - որ բարձր յարկութիւն է զինորդի և քաղաքացու համար - բաական չէ մէկին ճշմարիտ առաջնորդ դարձնելու... Առաջնորդ կարող է լինել միայն հերոսը: Իսկ հերոս լինել, ասել է՝ յաւիտենարժէք բաների առջև ոչինչ համարել իր կեանքը:

* * *

Շերոս է նա, որի հայեացքը ուղղուած է յաւիտենականին. նա, ով ժպտել գիտէ ճակատամարտի բոցերի մէջ. նա, որի հոգին վրանգի ժամանակ զգում է մի գերագոյն ուրախութիւն - ճակատամարտի և անձնուրիշումի ուրախութիւն. նա, ով գրոհից առաջ սիրում է խօսել յաւիտենական բաների մասին:

* * *

Շերոս է Ջեռին, որ իր վրանգուած զինորդները փրկելու համար իր կործան դարձրեց կենդանի թիրախ թշնամու կրակին:

* * *

Մեծ են մեր ապրած օրերը, քանզի կեանքը հրապարակ է դրել մի քանի մեծ ճշմարտություններ: Մեծագոյնը այդ ճշմարտություններից ասում է՝ որպէսզի ցեղը ու հայրենիքը ապրեն, նրանց համար մեռնելու կամք ունեցիր: Մեր քարոզած Տարօնականութիւնը այլ բան չէ, եթէ ոչ մեռնելու կամք մեր վրանգոսած հայրենիքի և ցեղի համար:

* * *

Մարդկային ցեղի մեծագոյն ուսուցիչները միշտ էլ հանդիսացել են նրանք, որոնք մարդկանց վեհօրէն մեռնել են սովորեցրել: Այդ փեսակէտով, Մամիկոնեանները եղան և կը մնան հայութեան յաւիտենօրէն սրբազան ուսուցիչները:

* * *

Վերանորոգչական Տարօնականութիւնը, դա նմանուելու մի սկզբունք է. ասել է՝ նմանուիր Մամիկոնեան հային, որ զօրաւոր էր դէպի հայրենի երկիրն ու ցեղը փածած սրբազնութեան զգացումով և նրանց համար մեռնելու իր աննահանջ կամքով:

* * *

Մեր ժողովուրդը, որ կորցրել է հայ և հայրենասէր մնալու իր հաւատը, որ աշխարհում այլևս ելք, կեանքում հացից զաւր այլ նպատակ չի տեսնում այսօր, փրկուել կարող է միայն ճշմարիտ վերանորոգումի ճամբով: Դա Մամիկոնեաններին նմանուելու ճամբան է՝ Տարօնականութիւնը:

* * *

Հոգեբանօրէն անհայրենիք է նա, ով պատրաստ է՝ ամէն վայրկեան մեռնելու իր հայրենիքի համար:

* * *

Իմ հոգին զոյգ յենարաններ ունի - Աստուած և հայրենիք:

* * *

Մաճինիի հանդէպ խորագոյն յարգանք փածելով հանդերձ՝ չեմ ընդունում, որ հայրենիքէն աւելի ազապտութիւնն է սիրելի:

* * *

Ժաննա դ'Արկի հայրենիքը պարտուեց այն օրը, երբ մերօրեայ ֆրանսացու դեմօ-լիբերալիստական մրաձողութիւնը կենդանաբանական մի պարպէզի դռան վրայ գրեց. «Գիտութեան համար ոչ հայրենիք կայ, ոչ էլ կրօն»:

* * *

Ճշմարիտ մրաւորականութիւն, ասել է՝ ազգի հոգևոր ընտանիք, առաջնորդութիւնը: Սրամրաւորականութիւն է դա, եթէ այդպիսին չէ:

* * *

Ազգերը չեն ունեցել և պիտի չունենան աւելի մեծ թշնամի, քան նիւթապաշտ առաջնորդը:

* * *

Այն մրաւորականութիւնը, որը գրքի ծնունդ է և ոչ թէ իր ցեղի մեծութեան ու ժողովրդի փառապանքի - կեղծ և անպարտ մրաւորականութիւն է:

* * *

Միայն մեծ առաջնորդներին է յաջողում իրենց կամքի ողջ ուժականութիւնը փոխանցել իրենց ժողովուրդներին, առաւելապէս նրանց երկրասարդ սերունդներին: Եւ հենց դրանով են վերանորոգում զանգուածները՝ վերածուելով մի բարոյական ընդհանրութեան, միակամ և միտղի ազգի:

* * *

Միջազգային առաջնորդութեան մասին խօսում են անյուսօրէն փգէտները միայն: Պարմութեան դեռ անծանօթ է նմանը: Առաջնորդը - իբրև փոքր ազգի կուլտուր - ընկերային գործառնութեանց կիրարկիչը - միշտ էլ երևան է գալիս ազգային կնիքով:

* * *

Պարմութիւնը չգիտէ աւելի մեծ, աւելի սուրբ գործ, քան ապագայով վրանգոսած մի ժողովրդի վերանորոգումը:

* * *

Ձեռքդ դիր նախահայրերիդ հզոր աջի մէջ և դու պիտի զգաս, թէ ինչպէ՛ս ուժեղ է զարկում սիրտդ, զօրեղանում բազուկդ, պողպատանում կամքդ:

* * *

Օվիդիոսը մեր ցեղի ոյժը խորհրդանշած է վագրով: Իսկ «վագրը երբեք մեռեալ չէ»: Հէնց այդ չմեռեալ վագրայինն է մեր ցեղը, որի անունը, ըստ անգլիական պատմագիր Ֆինլէյնի, Բիզանդիոնի մէջ հոմանիշ էր ազնուականութեան:

* * *

Չկան մշտական կոնսերվատորներ և յեղափոխականներ: Իմաստուն գործիչը պիտի լինի միաժամանակ թէ՛ մէկը, թէ՛ միւսը: Ես պահպանողական եմ, երբ վրանգ կայ փողոցային անարխիայից, յեղափոխական՝ երբ հանրային մրաձողութեան ու կեանքի քարացում կայ:

* * *

Հոգով թաթարացած ոռոսը ազատութիւնը հասկացաւ այնպէս, ինչպէս որ հոգեհիւանդ Նիցշէն հասկանում է հզօրութիւնը՝ «Իմ մեծութեան արձանը պիտի ցցուի փլատակներից և դիակներից կազմուած մի լեռան վրայ»:

* * *

Ամէն բարեփոխում պէտք է սկսուի խղճմբանքից:

* * *

Ամենից անհասարար դաշինքն այն է, որ կնքում ես բախտի հետ:

* * *

Պատահական երջանկութիւնը կ'անարժէք է, կ'անարդար:

* * *

Մահկանացու՛, ինչո՞ւ՝ քեզանից դուրս կը փնտրես երջանկութիւնը, որը քո մէջ կը կրես: Սիրտանքի և փգիտութեան մտայլ ամպը խանգարում է քեզ՝ փեսանելու զայն:

* * *

Գերագոյն երջանկութիւնը այն է, որ պարճառ կը դառնաս և այլոց երջանկութեան:

* * *

Ճշմարիտ երջանկութիւնը այն է, որ միաժամանակ բարի է դարձնում մարդս:

* * *

Եթէ կեանքի նպատակը հաճոյքը համարեցիր, վախճանդ կորուսարն է:

* * *

Ըստ ամենայնի անբարոյական է իրեն երջանկ զգացող անհայրեկիքը, լինի դա անհայր, թէ ժողովուրդ:

* * *

Անկարելիութեան աստիճան դժար է բառերով «ինչ է ցեղը» հարցի սիրտը շօշափել: Մարդաբանութեան ցարդ փրած սահմանումներից և ո՛չ մէկն է ընդունելի՝ ինձ համար:

Ցեղը՝ դիմագծօրէն ազգային է, այն փիրապեղականը, որով ժողովուրդները փարբերում են իրարից:

* * *

Մեր օրերում ոչինչ այնքան չի փկարացնում ժողովուրդների պայքարունակութեան ոգին, որքան այն աղեղալի մոլորանքը, թէ իրենց ճակատագիրը բարոյքողը սեփական ճիգերը չեն, այլ ինչ-որ արտաքին ուժեր:

* * *

Մի ժողովուրդ, որն իրեն պէտք եղած ուժն իրենից դուրս է փնտրում - կորօրէն իր պարտութիւնն ու անկումն է նախապայտրաստում:

* * *

Ցեղը չի ծերանում, թիկնադարձութիւն չգիտէ և չի պարտում:

* * *

Երբ ժողովրդի մէջ ցեղը չի շնչում, նա ծայրում է արծուի իր թևերը:

* * *

Ժողովուրդը դա հայ հոգու մարտիրոս կողմն է, ցեղը՝ հերոսական:

* * *

Ժողովուրդը ներկան է, ցեղը՝ երէկը, այսօրը և վաղը:

* * *

Ժողովուրդը դպիրներ է ծնում, ցեղը՝ մարգարէներ:

* * *

Ցեղը ... այն խորախորհուրդ ուժն է, որ Նպաստ լերան վրայ լարած պահեց Մեծ Պարթևի երկնաբաղձ բազուկները, մինչև որ հայերը յաղթեցին:

* * *

Չէ, չէ, Մասիսը - Հայոց ցեղասպանության հրաբուխը - դեռ չէ շիջած. նոր, մենք նոր ցեղաշարժերի կը սպասենք... Եւ կը յաղթանակենք, քանզի ցեղի սպրտածները - Հայկ ու Վահագն - պիտի բարձրացնեն շանթընկեց մեր բազուկը և վարեն մեր հարուստները:

* * *

Ուսում, կրթութիւն, գիտական պաշար - անհրաժեշտ են սրանք, բայց դեռ բաւական չեն մէկին ճշմարիտ մտաւորական դարձնելու:

Ճշմարիտ մտաւորականը նա է, որ իր մտաւոր կարողութեան, ամէն բանից առաջ, միացնում է խորապէս բարոյական նկարագիր, բարձր գաղափարականութիւն, սրբեղծագործելու - նոր իրելալներ, արժէքներ, կեանքի ձևեր սրբեղծելու ընդունակութիւն, սրբազանի զգացում, տեսական խորմտանք, հոգևոր արիւթիւն, ժողովուրդին իր ամբողջութեան մէջ սիրելու, նրա համար փառապելու անսահման կարողութիւն:

* * *

Մտամտաւորականութիւնը վաւարանեց. «Ցեղակրօնութիւնը հիթլէրութիւն կը հոփի»: Նա այսպէս չարամեկնեց, գիտնալով հանդերձ, որ

ցեղակրօնութիւնը ծնունդ է առել մեր հայրենի լեռնաշխարհի գլխին կախած մեծ վրանգի օրերին, երբ մարդկութիւնը լսած չէր հիթլերականութեան մասին:

* * *

Յանձին մեր դաւիթբէգեան ցեղապահ ոսխարհի՝ 1920-ին գործեց ու յաղթեց ցեղակրօնութիւնը:

* * *

Ճշմարիտ մտաւորականութիւնը այն հոգևոր ոյժն է, առանց որի ժողովուրդ անուան փակ ամբոխներ կապրեն...

* * *

Մտամտաւորականը... Երեկ պարտուողական էր, այսօր նաև երկչորութեան քարոզիչ: Նրա համար հերոսը արկածախնդիր է, իղէալիստը՝ փիւմար, վախկոտը՝ խոհեմ, սրիկան՝ գործի մարդ...

Եւ այդ է պարճառը, որ այսօր հայ իրականութեան մէջ, ամէն քայլափոխում վարութիւնն է դարանակալել, որ աղուէսները առիծ են խեղդում, սինյքորները Յիսուսներ են խաչում:

* * *

Հայոց պարմութեան փիլիսոփայութեան ծանօթ ու հայրենազգաց ամէն մտաւորական հայ կը խոստովանի, որ Մամիկոնեանների Հայաստանը - թէկուզ յաճախ կիսուած, կիսանկախ, կիսակործան - աւելի հայկական է, աւելի հայրենիք, և աւելի պաշտամունք պարտադրող, քան էր նոյնը՝ Տիգրան Աշխարհակալի կամ Արտաշէսի օրով:

* * *

Ոգու ժողովուրդ ենք և այդ իսկ պարճառով այն բոլոր վարդապետութիւնները, որոնք դիմագորկ ոգու ծնունդ են, օրինակ, սոցիալիզմ, բոլշևիզմ, կոսմոպոլիտիզմ - մնում են անմարսելի և անհարազատ հայ հոգու համար: Ոգեշունչ էր քրիստոնէութիւնը, և հէնց այդ է պարճառը, որ նրա գիրկը նետուողներէն առաջինը եղաւ հայր:

* * *

Տարօնականութիւնն է մեր ցեղային նկարագրի յաղթական գիծը, մեր ցեղի գերագոյն առաքինութիւնը, հայ հոգու յալիւրենական խոռովքը - նրա

անմահութեան փնէչը, նրա մեծագործութեան կարօյրը, նրա հոգևոր պա-
յազարութիւնը:

* * *

Պարականութեան, հօրանքի և քաջութեան կրօն – ահա թէ ինչ է
նշանակում փարօնականութիւն:

* * *

Հայրենիք պաշտպանել վաղը կարող են նրանք միայն, որոնք... Մա-
միկոնեան մեր հրաշունչ ռազմիկներէն կտոկորեն ապրել ու գործել մի-
միայն այն բանի համար, որի համար արժէ մեռնել, և մեռնել այն բանի
համար, որի համար արժէր ապրել:

Միայ է, աւելին՝ ոճիր է կարծել, թէ բոլոր ճշմարտութիւնները մար-
դոս պէս մահկանացոս են, թէ նրանք էլ մեզ պէս ծնունդ են, ապրում,
սպառում, մեռնում:

Ո՛չ, ո՛չ, ճշմարտութիւններ կան, որոնք անմեռ են, յաւիտենական,
ինչպէս ինքը՝ ժամանակը: Այդ ճշմարտութիւններից են նրանք, որոնք
վերաբերում են հայրենիքին, մահուան, յաղթանակին, առաջնորդին,
պարականութեան և այլն: Այդ ճշմարտութիւնները իրենց արիւնով կն-
քած՝ դարերին և սերունդներին կրակ են թողել Մամիկոնեան ռազմիկ-
ները:

* * *

Տարօնականութիւն է Մամիկոնեան հսկաներէն ս. Վարդանի ուխտը.
– Այնպիսի գործ պիտի գործեն, որ ամբողջ աշխարհի[ս] պատմութի
մինչև յաւիտեան:

Դա դաւադրութեամբ Մուշեղ զօրավարի անձառելի դառնութիւնն է.

– Ուր էր թէ ձիւս վրայ հանդիպէր մահը:

Դա հայ սպարապետի լացն է, որ չէ մեռնում գոռ ճակատամարտե-
րում՝ Հայաստանի համար:

Տարօնականութիւնը – դա Մեսրոպի անմահ գործն է, որ կարելի
դարձաւ, որովհետև հայ սուրը պաշտպան կանգնեց նրան:

Դա հայ ռազմիկի գործն է, որ յաղթական եղաւ, որովհետև Հայ եկե-
ղեցին օրհնեց նրան:

* * *

Ինչ է նշանակում, երբ Հայ եկեղեցին սրբացնում է Մամիկոնեան

ոգին, այդ ոգոս կրողներին: Արդեօք դա միայն երախտագիտութեան
փնէչ է, թէ՛ նաև խորագոյն մրահոգութիւն հայրենիքի ապագայի հան-
դէպ: Սրբացնելով ու յաւերժացնելով Մամիկոնեանների ուխտը՝ եկեղե-
ցին մեր ժողովրդին փրսած է ինքնապաշտպանութեան զէնքերից ամե-
նահատուն ու յաղթականը – «մահ գիտեցեալը»:

Հէնց այդ է փարօնականութիւնը:

* * *

Ճշմարտութիւնը միայն սրտութեան հակաթէզը չէ, այլև բարին, սրա
կերպարանը, գիտակցութիւնը և յօժարութիւնը: Իմ խօսքը բարոյական
ճշմարտութեան մասին է: Այդ ճշմարտութեամբ է սնունդ ժողովրդների
ոգին: Առանց դրան մարդը մնում է անստեղծագործ, պատեհապաշտ,
խղճմտանքը՝ մեռեալ:

* * *

Եթէ Մամիկոնեաններից մեզ մնացած լինէր միայն Վարդան Զօրա-
վարի ճառը Աւարայրի ճակատամարտից առաջ, ես դարձեալ կմնայի
փարօնական ոգոս երկրպագուն, պաշտողը:

* * *

Ոչ թէ հինգերորդ դարում, այլև մեր ժամանակներում շարք թիչ ազ-
գերի մէջ զինուորութիւնը յաջողած է մշակել այն բարձր բարոյականը,
որով ապրեցին ու գործեցին մեր Մամիկոնեանները – մի հերոսական,
որին դժուար թէ դարերը կարողանան նոր բան աւելացնել:

* * *

Երբ մի ժողովուրդ վերելքի ու յաղթանակների փոխարէն անվերջ
խօսում է վրանգի մասին – հասկացէք, որ նա ոգեթափ է եղած:

* * *

Հերոսներ Մամիկոնեաններին, քանզի չկայ ցեղային աւելի մեծ առա-
ջնութիւն, քան ընթացող ցեղի հոգևոր առաջնորդների ճամբով, և քա-
ջութեամբ մեռնել «ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս մեր» –
ահա թէ ինչ է նրա հասկանում Տարօնականութիւն ասելով:

* * *

– Հաշտութեամբ մահուան գաղափարի հետ՝ մարդոս դառնում է եղբայրն

ու գինակիցը այն բոլորի, որոնք մարդկային ցեղի պայմանաբան բոլոր դարերում եկել ու անցել են մեր աշխարհով իբրև լոյսի, հաւաքքի և սրի հերոսներ:

- Ժողովուրդ, քո պայմանաբան բոլոր դարերի անունով երդուեցնում եմ սերունդներիդ չներել, չներել թուրքին, անգամ եթէ մի օր նրան փեսանես անկեալի վիճակում: Այո, ներում են թշնամուն, բայց ո՛չ և իր կէսի սպանիչին, ո՛չ և նրան, որը մի օր փորձեց գոյութեան գրքից քո անունը սրբել:

* * *

Չար անասուն է մարդս, երբ նախանձում է: Նման չարարուեստը էակներից շաղախուած մի ցածոգի ամբոխի, դարեր առաջ, արդարն Արիստիդէսին - իր ծայրայեղ ազնուութեան համար- հայրենի հողէն ու ջրէն օգտուելու իրաւունքից զրկեց. դա սպանեց Սոկրատէսին, և, աւազակների հեղձիկ խաչ հանեց Նազովրեցուն:

* * *

Մի ժողովուրդ, որի որդիները հաւասար չեն օրէնքի և մահուան առջև՝ յաղթական հայրենիք չի ունենայ:

* * *

Անհայր, հաւաքականութիւն-սրանք յախրեանականին կապում են իրենց հայրենիքի միջոցաւ:

* * *

Հայրենիքս և ես - մենք լծորդուած ենք իրար՝ ինչպէս հոգի և մարմին, ինչպէս նպատակ և միջոց. նա գերագոյն նպատակ է, ես՝ միջոց:

* * *

Սրբի և իմաստութեան փէր դասական ժողովուրդները մահապատժի փոխարէն փարագրութեամբ կը պարծէին դժբախտ ենթակային, նրան զրկելով հայրենի հողից և ջրից օգտուելու իրաւունքից: Այն ժամանակ էլ, ինչպէս այսօր, սրբի աստուածութիւն էր հայրենիքը:

* * *

Բարին, գերագոյն բարին, ինձ համար եղել է, է՛ ու կը մնայ Հայաստանը:

* * *

Հայաստան, քեզ սիրուր ծնա- դու ապրում ես սրբերի մէջ և ցերեմ- ջերմ սրբերի շնորհիւ միայն: Գուցէ եղել են և անսիրտ խելօքներ, որ սիրել են քեզ, բայց նրանք չեն խաչուել, չեն մեռել քեզ համար: Հայրենիքի համար մեռնում է, հերոսանում մեծ սրբի փէրը միայն:

* * *

Հայրենիքից զատ, հայրենիքից դուրս ինձ համար խաբուսիկ են բոլոր դրախտները:

* * *

Ամենաբարձր իրաւունքը, որ կարող է ունենալ մի քաղաքացի - դա իր ծնող ժողովուրդը առաջնորդելն է: Քիչերին է փրում այդ իրաւունքը, և շատ քիչերն են արդարացնում դա:

* * *

Ամեն առաջնորդ ըստ իր պատկերի է դիմակերպում իր ժողովուրդը: Առաջնորդ ես, ուրեմն եղիր ազնիւ, ազնիւ եղիր, էլի՛ ազնիւ՝ խղճմանքիդ հանդէպ - դա ձակարագրական նշանակութիւն ունի ժողովրդի ձակարագրի համար:

* * *

Չկայ ատելի մեծ չարագործ, քան առաջնորդը, որ իր ժողովուրդը պահում է անգիրակ իր դժբախտութեանց պայքարներին:

Նմանը, իր անձի հանդէպ մոռացում ապահովելու նպատակով, մութ ճամբաներով յաջողում է փարբեր ուղղութիւն փայ ժողովրդի ցատման, մղելով նրան իր դժբախտութեան պայքարները փնտրելու իրենից դուրս:

* * *

Ժողովուրդները չունեն ատելի մեծ թշնամի, քան կրօնապէս պաղ եկեղեցականը, անոգի ուսուցիչը, կաշոսպաշտ զօրականը: Խորագոյն անկումի իրենց օրինակով որքան են անբարոյացնում մարդը իբրև անհայր և հաւաքականութիւն:

* * *

Փառասէր է առաջնորդը – փառասէր է ճշմարիտ ամեն առաջնորդ – այդ ոչինչ, բաւական է, որ նա իր ազնուական ու սրբեղծագործ փառասիրութեան միացնում է իր շարժիչ միտքն ու մեծ սիրտը, բաւական է, որ խաչ կայ իր ուսին... Նրա առաջին թշնամին է կազմակերպուած միջակութիւնը՝ յանձին զանգուածների փոփոխութեան և փկարութեան քուէներով ընկրուած իշխանութեան:

* * *

Հայ մարդը, իմաստասիրական ջանքի պակասի պատճառով, «նոր սերունդ» հասկացողութեան մէջ դնում է միայն կենսաբանական բովանդակութիւն: Նորը, ըստ այդ վերջինի, որդիներն են, հինը՝ հայրերը: Տարիքի պարզ խնդիր է թէ՛ նորը, թէ՛ հինը: Սերունդները միայն հասակով են փարբերում իրարից: Ժամանակ կ'անցնի, և որդիները կ'այրանան ու կը բռնեն իրենց հայրերի փեղը: Այսքան ծիծաղելիօրէն պարզ և հեշտին է նոր սերունդի պրոբլէմը օրոսայ հայ մտածողութեան համար:

* * *

Սերունդ – դա կենսաբանական հասկացողութիւն է, «կանաչ հասկ» չէ՛ միայն, այլ և՛ հոգեբանական որոշ բովանդակութիւն: Դա էութիւն է հինէն խորապէս փարբեր:

Նոր սերունդը դա ցեղի պատմութիւնն է, ժողովրդի նոր օրը, նրա նոր խօսքը, նոր երգը, նոր առաջադրութիւնը, նրա նոր ճակատագիրը, նրա պատմութեան էջը նոր բովանդակութեամբ:

Դա ժողովրդի կենդանի ուժականութիւնն է, նրա պայքարների անզարդային ոյժը, որով և՛ նրա կեանքի զարգացման կրողը:

* * *

Հայրերի ուղիով, նշանակում է՝ աւելի մեծ թափով ու նսիրումով շարունակել նրանց գործը, և այդ դէպքում ո՛չ թէ կրկնելով նրանց փկարութիւնն ու սխալները, այլ՝ սրբագրելով:

* * *

Պատմութիւնը չը գիտէ մի յեղափոխութիւն, ազատագրական մի պայքար, մի մեծ գաղափար, որ պատկուած լինէր յաջողութեամբ՝ առանց նոր սերունդի մասնակցութեան: Միշտ էլ արդար է, միշտ էլ յաղթում է նոր սերունդը:

* * *

Որակ, որակաւորում – ահա՛ թէ ինչն է մարդկային զանգուածները վերածում միաշունչ ազգի, և ապադասակարգային կազմակերպմամբ սրբեղծում զօրաւոր պետութիւնը՝ արթուն պաշտպանը հայրենի հողի, մշակոյթի և անկախութեան:

* * *

Յաւերժ պիտի մնա արդար ու խաւազանող հայ մտքի առիծի խօսքը. «Եթէ ընկերվարական դրախտը պէտք է հիմնուի հայութեան դիակի վրայ, թող էշերն ապրեն այդ դրախտում»: (Իսաժակ)

* * *

Մի ժողովուրդ, որի հպարտ սերունդները ժամանակին ասել են. «Անին շէն, աշխարհն աւելր», իրաւունք չունի՝ չը հաւատարմութիւն իր ապագային:

* * *

Պէտք չէ մոռանալ, որ հայու մայրաքաղաքը՝ Աթէնքի, Հռոմի նման չը փրա իր վարաստեռումի և զեղխութեան մէջ, այլ աւերակ դարձաւ բարբարոսութեան հարուածների փակ:

* * *

Առանց ցեղային պատկանելիութեան զօրաւոր զգացումի՝ ժողովուրդները պիտի շարունակէին մնալ իբրև մարդկային դիմազուրկ զանգուածներ: Մի ժողովուրդ միայն այնքան է ակտիւ, սրբեղծագործ և կենսաբանօրէն լուսավետ, որքան կենդանի և արթուն է նրա ցեղային ծագման գիտակցութիւնը:

* * *

Այսօր, մասնաւորապէս, երեք բան զերծ պէտք է պահել սրահայրենասիրութեան պղծանքից – հայ խաչը, մանուկը, գիրը:

Կղեր, ուսուցիչ, խմբագիր–մեծագոյն օրհնութիւն, և չարիք միաժամանակ: Օրհնութիւն են, երբ ցեղն է վարում սրանց խղճմտանքը, անեծք, երբ ցեղից չեն առնում իրենց ներշնչումները:

* * *

Նիւթապաշտի հայրենիքը մի երկրամաս է լոկ և ուրիշ ոչինչ: Նմանը սիրում է իրեն կերակրող ու պատսպարող երկիրը, և այդ սահմանա-

փակ, գրեթե նախնական սէրը անուանում է հայրենասիրություն, որն ունի կենսաբանական, բայց ոչ և հոգևոր հիմքեր:

* * *

Բարոյական դեմոկրատիան, մարդկային արարածի անկախարժեքության պատճառով, կը մնայ երազ, ինչպէս երազ մնաց ճշմարիտ քրիստոնէութիւնը:

* * *

Անբողջ քսան փարի կրկնեցիւք ու կրկնեցիւք, թէ ո՛վ գիտակցաբար կամ անգիտակցօրէն հոկտեմբերեան բունփը համարում է յեղափոխություն, դա հայոյում, անարգում է պարտութեան ծանօթ բոլոր յեղափոխութիւնները: Դա ամեն ինչ էր - պարտութեան բունփ, աստուածամարտութիւն, հոգևոր վայրենացում, դարձ դէպի հեթանոսութիւն, պեփական բանդիփիզմ, զանգուածային աւազակութիւն բայց ոչ և յեղափոխութիւն՝ քաղաքական ու սոցիալական իմաստով:

* * *

Ազգերի յառաջադիմութեան զարկ փոսող յեղափոխական ցնցումները միշտ էլ եղած են լաւերի յղացում, լաւագոյնների գործ, ճշմարիտ յեղափոխութիւնը ծնունդ է առնում ոգոց, ոգու մարդկանցից, ընտրանիից: Ռուսականը արդիւնք էր վարերի ու վախկոտների - պարտականութեան ճակատից փախած զինուած խուժանների և դիւաբախ ու փզէտ խուժանավարների:

Այն իրողութիւնը, որ բուլշևիկները հոկտեմբերեան բունփի հենց առաջին օրերին, բացելով բանտերի դռները - այդ բանտերը բասփիլիա չէին - իրենց շարքերին միացրին հարիւր հազարի չափ գոնեիկ յանցագործներ այդ պարտական իրողութիւնը լրջագոյն հաստատութիւն է այն մասին, որ բուլշևիզմը ոչ թէ քաղաքական, այլ ախարաբանական երևոյթ է:

Հասանական ամեն հակահարուած անկարելի դարձնելու նպատակով՝ կեանքի կոչուեց ամենակոյ Չէկան՝ միահեծան փէրը աշխարհի մի վեցերորդ մասի վրայ ապրող ժողովուրդների հացի և ճակարագրի:

* * *

Բոնութիւնը հոչակուեց նորաստեղծ «պեփութեան միտքիկ բանակաւութիւնը»: Հազար շրթոնքներով քարոզուեց բոնութեան պաշտամունք:

մշակուեց բոնութեան կախարդանքը:

«Թող կորչի ռուս ժողովրդի 9/10-ական մասը, բաւական է, որ մի փասնէրորդականն ապրի մինչև համաշխարհային յեղափոխութեան մոմենտը» (Լենին):

«Ո՛չ մի յեղափոխութիւն հնարաւոր չէ, քանի դեռ գոյութիւն ունի ընփանիքը. քանդեցէք, քանդեցէք դա» (Կոմիւնիստներ):

* * *

Կրօնը յայտարարուեց «զերագոյն յիմարութիւն», և արէիզմ ասելով բուլշևիկները հասկացան ոչ միայն անաստութիւն, այլ թշնամախառն անհաւատութիւն դէպի ոչ համայնավար մարդը:

Երբ առաքինի և արդար է հսկածուող հանրային գործիչը, հալածանքը հարիւրապարկում է նրա հոգեկան ոյժերը, նրա իմաստութիւնը, ինչպէս և՛ նրա բարոյական ազդեցութիւնը:

* * *

Միշտ էլ, երբ զանգուածներին պակասել է Գաղափարի մարդու կողքին վճարար կանգնելու բարոյական արիութիւնը՝ մեր աշխարհի սրիկայութիւնը նորանոր Յիսուսներ է խաչել:

* * *

Նախանձ, թշնամանք, չարութիւն - այդ մութ ոյժերը գործի են անցնում հենց որ քուն է մտնում Աստուածայինը հասարակութեան մէջ:

* * *

Մի ժողովուրդ, որի կեանքում աղո՛ւէսներին յացողում է առիծ խեղդել՝ նոսազ, շափ նոսազ թոսով առիծասիրտ որդիներ է ծնում:

* * *

Երբ մի ժողովրդի մէջ - ինչպէս մեզանում-որոշ փարրեր ազատօրէն ժպտում են և՛ սրբութիւն, և՛ սկզբունք, և՛ Հայրենիք, առանց հասարակութեան ցասումը բորբոքելու իրենց դէմ, երբ մի ժողովրդի մէջ խօսքը աւելի գրգռում է, պառակտում է, բաժանում, երբ դա (խօսքը: Ռ.Ը.) կորցնում է լոյսն ու ցերմութիւնը-դա նշան է, թէ այդ ժողովուրդը նոսաւագած է, ընկած՝ իր խօսքի հեփ:

* * *

Հեռու առիծ խեղդող աղուհաններից:

* * *

Բարձրորդն հոգևոր կեանքի սկզբունքը հակասության սկզբունքն է: Պէջք էր մի յուրա, մարդկային մի սև չարութիւն, մի ուրացում, որպէսզի իրենց գերագոյն ողբերգութեան մէջ յաղթանակէին Նազովրեցին ու բարութիւնը:

* * *

Չէ կարելի ներքնապէս ճանաչել կուսակցութիւնները և վճռապէս չժխտել կուսակցականութիւնը:

* * *

Հայոց շարժումների վարիչները, դժբախտաբար, չեղան ամեն բանից առաջ համահայկականութեան, ցեղային ամենամիութեան, քաղաքական միակրօնութեան գաղափարախօսներ: Ազգային կոռ գաղափարախոսութեան պակասի պատճառով, օտար փոխառիկ գաղափարները եկան խոռովելու, շարժելու, բայց ո՛չ և յեղափոխելու մեր ժողովուրդը, նախ նրա մտածողութիւնը: Այդ իսկ պատճառով՝ ունեցանք շարժում, աւելի ճիշդը՝ շարժումներ, բայց ո՛չ ազգային վերանորոգիչ յեղափոխութիւն:

* * *

Այս կամ այն ժողովուրդը քաղաքականապէս ազատագրուելուց առաջ պէջք է՝ իբրև նախապայման - նախ ազատագրել նրա մտածողութիւնը օտար կապանքներից: Հայոց յեղափոխութեան առաջին գործը պիտի լինէր այնպէս դաստիարակել հայութիւնը, որ նրա հասարակական խաւերը զօրութենապէս լրացնեն և օժանդակեն իրար, և ո՛չ թէ կատարի պայքար բանան իրար դէմ:

* * *

Մեր մտաւորականութիւնը չհասկացաւ, որ ինքն- իբրև ազգի գիտակցութեան օրօրանը- կուսակցականանալով, դադարում է ծառայել ազգին: Այո՛, հարաւածականացած մտաւորականութիւնը ճշմարիտ մտաւորականութիւն չէ, նմանը մեղանչում է իր կոչումի դէմ:

* * *

«Բուն հայկական ինդիլը» - դա օտար լծերի փակ ուծացած հայկական գանգոսածները վերստին ազգի վերածելու մէջ է: Իսկ դա հնարաւոր է միայն քաղաքական միակրօնութեամբ:

* * *

Ազգերը դեռ չեն ճանաչել Հայր, որ իր պետութեան անկումից յետոյ իսկ մնաց արժէքապետը- օտար գահերին՝ թագակիրներ, բանակներին՝ յաղթական զօրավարներ, երկրներին՝ բարեկարգիչներ, արուեստներին ու գրականութեան՝ հանճարեղ վարպետներ փայլով: Իր բնաշխարհում թէ իբրև փարագիր՝ նա եղաւ սրբեղծագործ, որով և յաղթական կանգնեց ժամանակների ու մահուան դէմ ու յաճախ իր հանճարի լոյսով լուսաւորեց յաիդրենականի բարձունքները: Նա գիտցաւ արժէքագործել և դրանով հաստատեց երեք բան - այն՝ որ մեծ, շար մեծ է իր հոգևոր զօրութենականութիւնը, որ անխաթար է իր կենսաբանական բարոյականը, և որ ընդունակ է՝ իր ճակատագրի հանդէպ եղած անարդարութիւնները հաւորացել մարդկութեանը բերած իր ծառայութիւններով:

* * *

Չը կայ աւելի զարհուրելի բան, քան աննպատակ գոյութիւնը: Նպատակն է բարոյապէս շարժում անհատներն ու ժողովուրդները: Նա փրկում է մահացու ճահճացումից և բարոյական անկումից:

* * *

Անհատի և ազգի գոյութեան արևն է նպատակը: Նա համախմբում է մեր ոյժերը, լարում մեր կամքը և անդիմադրելիօրէն քաշում մեզ դէպի յաղթանակ: Նրա ճանապարհով անցնողը դառնում է թագաւոր - ժողովուրդ:

* * *

Ռուսը ազատութիւնը փեսնում է ենթարկուելու մէջ: Եւ այնպէս էր, որ մարդը մեքենացրին Ֆորդի մեքենաների նման և այդ մարդամեքենաներից սրբեղծեցին սովետներ:

* * *

Փայք ձեզ և այն բոլորին, որոնց մէջ ցեղի բարոյականն ու ոգին աւելի զօրաւոր եղան, քան ասիական բոլշևիզմը: Ի զոտ չէր, որ երկու

տասնամեակ տարիներ հայրենիքից դուրս, Հայոց Սփիւռքի մէջ գոռում էի ես, որ հայ մարդը էաբանօրէն չի կարող բոլջնիզմը հարազատել, նա չի կարող լենինահաղորդ լինել, որ Հայաստանում եկուր բոլջնիկներ կան, բայց բոլջնիզմ չը կայ:

* * *

Ամէն վերածնունդ ենթադրում է անկարարութիւնից կարարելութիւն, պակասաւորութիւնից լիարժէքութիւն, ոգեապառուածութիւնից գորութիւն, սեղմ ասած՝ մեզ տառապեցնող մի վիճակից մի երջանիկ վիճակ անցնելու անհրաժեշտութիւն: Աւելի պարզ՝ վերածնունդը ենթադրում է մի տազնապ իբրև արդիւնք գիտակցուած մի մոլորանքի, մի զգացուած անզօրութիւն, որից խթանուած՝ ժողովուրդները կանգ են առնում իրենց զարգացման ճամբի վրայ, վերաքննում են իրենց պակասաւոր աշխարհայացքը, իրենց դաւանանքը և վճռաբար կարարում իրենց անկիւնադարձը:

Հէնց այս անկիւնադարձով էլ սկսում է վերածնունդը:

* * *

Մեզ թշնամանեցին նրանք, որոնց մասին երկու հազարամեակ առաջ ասել է Նազովրեցին. «Միայն նա՛ կը հասկանայ, որին փրուած է հասկանալ»:

- Մեզ թշնամանեցին նրանք, որոնց համար ազգ պառակտելը համազօր չէ՝ ազգասպանութեան - կոսակցականացածները... Մենք հայօրէն ցաւում ենք Նազովրեցու կողմից աստուածօրէն արգահատուած դժբախտի համար, որին փրուած չէ մեզ հետ համազգայ ցեղը և հարազատել մեր քարոզած այն ճշմարտութիւնը, թէ առանց ցեղապրումի չկայ վերանորոգում, չկայ ճշմարիտ մշակոյթ, իսկ առանց այդ վերջինին՝ մեզ նման ոգեսպառ ժողովուրդների համար կայ ու՛կը մնայ սրոյգ մահը:

* * *

Կրօնականութեան պակաս, ասել է աստուածութեան, սրբութեան զգացումի պակաս, որի պատճառով հոգևոր շփոթի է մարնուած օրոտայ մարդկութիւնը:

* * *

Մեր օրերի հակակրօն հովերը պիտի բացապրել մարդկային փիլի հոգևոր անկարարելութեամբ: Առողջ հոգեվիճակ չէ՛ անկրօնութիւնը:

Մարդ միշտ էլ նախ հեռանում է իր նմաններից և ապա յետոյ՝ իր Աստուծոց:

* * *

Ո՛վ հեռանում է կրօնից, անձնասպանօրէն կարում է իր հոգևոր զարկերակը:

* * *

Կոյր պատրահականութեան ծնունդ չէ փիեզերքը, և ես միակ չեմ փիեզերական անսահմանութեան մէջ - այդ սփոփարար հաւատքն է տալիս մեզ կրօնը:

* * *

Նա, ով ընդունում է Աստուծոյ գոյութիւնը, ընդունում է նաև իր պարականութիւնը հանդէպ գերագոյն իրականութեանց - ազգ, հայրենիք, պետութիւն:

* * *

Ուզում էք խորապէս ճանաչել մէկին, խօսէք և խօսեցրէք նրան Աստուծոյ մասին, և նա իր պաշտանքի կամ անհաւատութեան միջոցաւ պիտի մարնէ իր հոգևոր հասակը: Անաստուած ես, ասել է գորկ ես սրբութեան նոսիրումից, պարտականութեան զգացումից, ասել է վաղ թէ ուշ որ պիտի դաւաճանես նմաններիդ:

* * *

Կրօնապէս փկարացաւ մարդկութիւնը և սահա՛ այլև երկինք չունի նա. փլաւ նրա յոյսերի աշխարհը, այսօր այնպեղ էլ մահն է գործում իր դէմ:

* * *

Մրբագրենք այն մեծ մոլորանքը, ըստ որի գոյութիւն ունի մի ընդհանուր, միջազգային, համամարդկային մշակոյթ... Կեղծիք է նման մշակոյթը, անգոյ: Ծշմարիտ մշակոյթը միշտ էլ կրում է տուեալ ժողովրդի անհապականութեան կնիքը:

Չկայ՝ մշակոյթ առանց կրօնականութեան զգացումի: Ցամաքում են նրա սրեղծագործ խանդի աղբիւրները, հենց որ դա դառնում է նիւթապաշտիկ:

* * *

Մի այլ մոյրուսք: Արդեօք ամեն ժողովուրդ կույրուրական է, քանզի լեզու և գրականություն ունի: Ոչ, իհարկե: Ճշմարտապէս կույրուրական կոչուելու համար բաւական չեն գրողն ու գիրքը, գիտնականն ու գիտութիւնը:

Մինչև որ մեր գոյգ սուրբերին՝ Սահակ-Մեսրոպին չմիանայ մութ-ծումի, ապրումի և գործի ազնւութիւնը՝ պիտի չկարողանամ առանց ամօթախառն ցաւի մեզ կույրուրական անուանել:

* * *

Մարդ և մարդկութիւն հասկացողութիւններն, ընդհանրապէս, որոշ իմաստ են ստանում միայն այս կամ այն ազգի ոգու միջոցաւ: Ազգային հանձարն է որոշ բովանդակութիւն հաղորդում համամարդկայինին: Ազգութեանց փրարակների վրայ ճշմարտի մշակոյթ չի կարող ծաղկել: Տուեալ ազգութիւնից դուրս՝ կեղծ են մարդն ու մարդկութիւնը:

* * *

Մարդկայինը ազգայինին ներդաշնակելով՝ շահում է թէ՛ մէկը, թէ՛ միւրը: Եւ, ընդհակառակը, ազգայինը «համամարդկայինին» զոհելով կորցնում է թե՛ ազգը, թէ՛ մարդկութիւնը:

* * *

Օրոսայ մարդը, աշխարհաքաղաքացիական խորթացուցիչ վարդապետութիւնների ազդեցութեան տակ, կորցնելու վրայ է իր իրական հոգևոր կերպարանքը, իր բնացեղային էութիւնը: Անհրաժեշտ է մի արմատական յեղափոխութիւն, մի դարձ անարիւն վերացական մարդկայնութիւնից՝ դէպի օրգանականը, դէպի ցեղամարդը - իրական մարդը, որն իր հողին և ցեղին կապուած է իր էութեան բոլոր թելերով:

* * *

«Եւրոպական մարդկութիւն (ԺԸ և ԺԹ դարերի), «Համաշխարհային մարդկութիւն» (Ի դարի) - ես չեմ հաւատում ո՛չ մէկին, ո՛չ էլ միւսին: Եթէ գոյութիւն ունեցած լինէր կրոնական մարդկութիւն, տեղի պիտի չունենային կրոնականութեան համար դարերով ասիական խաւար ոյժերի դէմ ճակատած մեր ժողովրդի աննախընթաց ջարդերը:

* * *

* * *

Անհար, ոյժերդ միացուր արիւնակիցներիդ ոյժերին՝ յանուն մեծ ամբողջի երջանկութեան - այս է օրոսայ և վաղուայ ընկերային հրամայականը: Այլ խօսքով՝ անհարն իր բարիքը պիտի փնտռէ հանրութեան բարօրութեան մէջ: Ո՛վ հակադրում է անհարն ընդհանրութեան՝ մեղանշում է թէ՛ մեկի, թէ՛ միւսի դէմ: Ազգի կեանքից, բովանդակութիւնից դուրս ոչինչ է անհարը:

* * *

Ընդհանրութիւնն է կամուրջ ձգում անհարների էութեանց միջև: Եւ ոգեխառնուելով միայն անհարը դառնում է հոգևոր անձնատրութիւն-արժէքատերէ՛ղծ ոյժ: Դասակարգային վարդապետութիւնները, պատակ-վեղով ազգը, զայն վերածում են դիմազուրկ զանգուածների: Ահա թէ ինչու մենք ժխտում ենք լիբերալիստօրէն խորհող և գործող անհարն ու դասակարգը և դաւանում ազգն իբրև արժէքային ամբողջութիւն:

* * *

Ո՛չ թէ սոցիալիստը, այլ սոցիալական մարդը: Լիբերալիզմը- ֆրանսական յեղափոխութեան այդ թունաւոր պտուղը պղծեց մարդկային բոլոր հոգևոր հասկացողութիւնները: Դա օրինականացրեց աղքատութիւնը, որով և ընկերային քողարկուած անբարոյականութիւնը: Միևնոյն ժողովրդի ծոցի մէջ մերձատրին փշրանք նետելը հոչակեց բարեգործութիւն: Անհարի իմ իրաւունքը և՛ քո իրաւունքն է, ինչպէս քո պարտականութիւնը նաև իմ պարտականութիւնն է:

* * *

Ազգի հետ և ազգի առջև խօսողի համար ներելի չէ մութամի ստորութիւնը:

* * *

Սովորեցէ՛ք հայօրէն մութել-դա է ազգային բարոյականի հիմքը:

* * *

Սեփական պարմութիւնն է մեր իմաստուն խորհրդականը, մեր ոգու դայեակը, մեր ազգային խղճմարանքի վարիչը:

* * *

* * *

Իր պարունութեան ծանօթը երկու բան լաւապէս գիտէ՝ նա գիտէ, թէ ինչ կարող է անել և ինչ պէտք է անել՝ Հայն ու Հայաստանը յանդիմանելու համար:

* * *

Մի ամբողջ յիսնամեակ է, ինչ հայրերը պայքարելով միջկուսակցական ներքին ճակատի վրայ, սպառում է իր ոյժերը և բաց աչքով ծառայում իր գոյութեան թշնամիներին:

* * *

Տուրք տալով կեղծ կրոնականութեան՝ հայ կուսակցութիւնները իրենց թշնամին և հակառակորդը փնտրեցին իրենց ժողովրդի ծոցի մէջ, և խախտելով ազգի հոգևոր ամբողջականութիւնը, թուլացրին ճակատագրի կապը արինակիցների միջև:

* * *

Շոյելով կուսակցական պարկանելիութեան զգացումը, կուսակցութիւնները իրենց հետևորդների մէջ փկարացրին ցեղազգային գիտակցութիւնը: Տկարացաւ հայկականը ի հաշիւ խմբակցականի: Նրանք դարձան փակ հասարակութիւններ հասարակութեան մէջ, որով մի գալիչ պատր իրենց և ազգի կենդանի ոյժերի միջև:

* * *

Հասկանանք, որ հայը պատրճառ չունի կուսակցականանալու: Իսկ մեր ժողովրդի թուական փկարութիւնը, մեր հայրենիքի աշխարհագրական դիրքը և երէկոսայ մեր եղեռնը կը բաւեն գիտակցելու, որ հայը կուսակցականանալու նաև իրաւունք չունի:

Հայրենիք - սկիզբն ու վախճանն է մեր մտածումի, ապրումի և գործի: Երբ մեր շրթունքները մրմնջում են ցեղի մասին, մեր աջը ցոյց է փալիս Հայաստանը: Մենք հաւատում ենք Հայաստանին՝ դա նշանակում է, որ կեանքում սրբազնագոյնը մեզ համար Հայրենիքն է: Մենք շնչում, ապրում ենք Հայաստանով, միշտ պատրաստ փառապելու, գործելու և մեռնելու նրա համար: Դա է արժէքների արժէքը մեզ համար: Դա է մեր սրբազան ցաւը, կարօտը, ուրախութիւնը, մեր գոյութեան իմաստն ու իրաւունքը, մեր անմահութիւնը՝ միաժամանակ:

* * *

Չկայ, կեանքն ազգին և հայրենիքին պատրաւագելու չափ մեծ երջանկութիւն չկայ աշխարհում:

* * *

Հայրենասիրութիւն - ահա վերանորոգչականի մեր դաւանանքը, որի իրականացումը պիտի ուշանայ այնքան, որքան ուշացաւ մեր ժողովրդի վերանորոգումը:

* * *

Մեր նորահասը պիտի իւրացնէ հայ վերանորոգչականի դաւանանքը - Աստուած, ցեղ, հայրենիք, որպէսզի իր ժողովրդի անցեալը, ներկան և ապագան կապակցաբար, սրբեղծագործութիւն ապրել կարողանայ:

* * *

Ազգերը մի հարիկ ծշմարիտ ազնուականութիւն ունին՝ դա էլ ընտրանին է: Նրա միջոցաւ են բարձրանում և նրա հետ են ընկնում ազգերը: Հասարակութեան մէջ շարժելով կարող են մեղանշել օրէնքի, բարոյականի, հաւաքական շահերի դէմ, բայց այդ մեղանշումներից չի խախտուի հանրային բարոյականը, չի անբարոյականանայ հասարակութիւնը: Սակայն, բաւական է, որ ընտրանին պարկանող մէկը կոպտօրէն մեղանշեց իր կոչումի դէմ՝ այլևս քանդուած համարէք ժողովրդի հաւատքը, համարումը, բարոյականը: Ընտրանին իր կեանքի կենդանի օրինակներով է վարում ժողովուրդը:

* * *

Կրօնապէս պանդ է եկեղեցականը՝ հակակրօն է ժողովուրդը: Հոգեպէս էսամֆ է ուսուցիչը, այլևս կարիք չկայ ատելի մեծ դժբախտութիւն բաղձալ նրա ազգին: Յաւիրենականի շունչից զոնրկ է գրողը՝ նա անխոսափելիօրէն պիտի դառնայ ստորնութեան քարոզիչը:

* * *

Եկեղեցական, ուսուցիչ, գրող, գիտնական, զօրական, գործիչ-ահա ընտրանին: Սրանց կոչումը հրամայողաբար պահանջում է ամբողջական և ներոյժ կեանք: Օրգանապէս ապաքաղաքական է ընտրանին, որով բացարձակապէս անկուսակցական պիտի լինի դա:

* * *

Արդեօք, այսօր խախտուած չէ՞ գաղութահայր ազգային բարոյակա-
նը: Այդ հարցին պատասխանելու համար պէտք է ճշտել, թէ իրենից ինչ
է ներկայացնում օրոսայ հայն իբրև միտք, զգացում և կամք: Աւելի պարզ՝
պէտք է ճշտել, թէ այսօր ինչպիսի՞ զգացումներ են փիրապետում նրա հո-
գում: 'Այդ իմաստով բարոյա-հասարակագիտական մի վերլուծում փրփ-
մութեամբ պիտի համակէ՞ ձեզ: Ինչ էինք երէկ: Այդ մասին թող խօսի
ինքը՝ դարերի հայր. «Մի փնից չէինք, բայց մի ձէտով էինք»: Տեղօրէն
բարոյական էր հայր. «Մէջք մէջքի փանք՝ սարեր շուռ փանք»: Սոցիալա-
պէս առողջ էր նա. «Հացն Աստուծոց, ես էլ հեպը, ո՛վ հասնի՝ թող ուրի»:
Սոցիալապէս արդար էր. «Այն մարդը, որ Աստուած ունի՝ աղքատ չէ»: Իդէալիստ էր նա. «Հող ու մոխիր կեր, մարդէն հաց մի՛ մտարար» Տեղօրէն
հպարտ էր. «Հայը չոգնի՝ չի՛ նստի». Տոլութեան հացը չսիրող է. «Ուրբո
քարին զարնուի՝ խղճմբանքը քննէ»: Բարոյապէս զգայուն էր. «Իր ծա-
ռը ծարաւ թողած ուրիշինը ջրողը ո՛չ յարութիւն ունի, ո՛չ էլ թողութիւն»: Ազգայնօրէն զգաստ էր. «Առիծը կատուին խեղդել չեմ փայ»: Տղամարդ
էր հայր:

Այս էինք երէկ- որակի ազգ:

* * *

Մէջբերածս՝ հայկական առածների այդ փոքրիկ ծաղկաքաղը, որի
մէջ մեր ժողովուրդը դրած է դարերի իր բարոյա-ազգային փիլիսոփա-
յութիւնը-կը բաւէ հաստատելու, որ սրբկութեան մէջ, օտար լրտեսի փակ
անգամ մենք եղել ենք ազգային բարոյականով զօրաւոր ժողովուրդ: Եւ
հենց դրանում չէ՞ գաղտնիքը, որ մենք կանք ու կը մնանք, իսկ մեզ հա-
սակակից շատ ազգերից մնացել է քարէ յիշատակ միայն:

* * *

Ազգային բարոյականը - ամեն բանից առաջ - պայմանաւորում է
մի ժողովրդի սրբեղծագործ համերաշխութեամբ: Դրսեցի թէ Կեղացի,
իմաստասէր թէ անգրագէտ, չէզոք թէ կուսակցական - հայ մարդիկ են
սրանք, որոնց հանդէպ փածածո պաղոթիւնը կայէնութեան է համազօր:
Ճակարագրի եղբայր է ամեն հայ: Աւելին՝ ամեն հայ դա դու ես- ահա
ազգային բարոյականի անխախտելի օրէնքը: Այդ օրէնքի դէմ մեղանշո-
ղը քանդում է իր ազգութեան հիմերը, դա թշնամին է իր ազգի: Որակի
ազգ էինք երէկ: Չաղէտութիւն և չկորչելու համար վերստին պիտի դառ-
նանք այդպիսին՝ հրամայողաբար: Անվերջ որակաւորութիւն, ազգ դառ-

նայու պրոցեսի մէջ են բոլոր ժողովուրդները:

* * *

Ազգովին խորհիւնք, ապրիւնք և գործենք այն, որ բարի է Հայաստանի
համար:

* * *

Հասարակական խղճմբանքը արդիւնք չէ պետական օրէնքների,
ընդհակառակը, պատմութիւնը հաստատում է, որ օրէնքներն են հայելին
հասարակական հոգոս, որ պետական ռեժիմը արտացոլում է ժողովր-
դական խղճմբանքը:

* * *

Երբ ժողովրդի հոգին անելի կուլտուրական է, քան իրաւակարգը,
պետական ռեժիմը փոխվում է բռնութեամբ, յեղափոխութեամբ:

Երբ հակառակ է՝ պետութեան ղեկավարութիւնը անցնում է բախարախն-
դիւնների ձեռքը, բռնակալներ, որոնք օգտուելով զանգուածների հոգեկան կու-
րութիւնից, երկիրը դարձնում են իրենց կրքերի և անձնական շահերի շա-
հաստան (այդպէս են Եւրոպայի հարաւարեւելեան երկրները՝ Յունաստանը,
Սերբիան, Ռումանիան, Բուլղարիան, Թուրքիան):

* * *

Ազգութեան նախապայմանը - ինքնատիրապետումն է, ինքնա-
յաղթահարումը, իր փկարութեանց յաղթահարումը:

* * *

Ամենախնամարտն և ամենազորաւոր յեղափոխականը ժամանակն է:

* * *

Դիպուածական և լրիւ ազգագրութիւն առանց հոգևոր վերադաստի-
արակութեան և առանց քաղաքացիական զորամարտացումի, գիտական
անհէթէթութիւն է:

Ռեժիմը չի ուղղում մարդկանց, ընդհակառակը՝ մարդիկ են սրբագ-
րում, փոխում ռեժիմը:

* * *

Չի կարելի արագօրէն հասունացնել: Արհեստականօրէն արագաց-

Լած պրոգրէտը-արհեստականօրէն արագացած անկում է:

* * *

Գազան -անասունը մարդու մէջ աւելի է ուժեղանում, երբ ուզում ենք
-մէկէն, առանց աստիճանական բարելաւումի-դարձնել կատարեալ էակ:

* * *

Պատմութիւնը մի բան գիտէ- աստիճանական փրանսֆորմացիա:

* * *

Ամեն քաղաք-սոցիալական բռնացում խեղում է ժողովրդի հոգին:
Իր աճումի մէջ բռնացումի ենթարկուող ժողովուրդը մեռնում է հոգե-
պէս:

* * *

Ընդհանուր բարիքը դառնում է չարիք, երբ չի արտացոլում մասնա-
որ բարիքը:

* * *

Իշխանութիւնը դառնում է օրինականացեալ անիշխանութիւն, երբ
ընդհանուր խղճմբանքի կոնսրոլ չկա:

* * *

Քաղաքական ազատութիւնը ծնունդ է առնում բարոյականից:

* * *

Սոցիալական խնդիրը բարոյական խնդիր է: Օրէնքը փոխելէ առաջ,
փոխիր մարդը:

* * *

Օրէնքները լինում են երկարատև միայն այն ժամանակ, երբ համա-
պատասխանում են բարքերին:

* * *

Գրուած օրէնքի աղբիւրը չգրուած օրէնքն է:

* * *

Ամեն բարեփոխում պէտք է սկսուի խղճմբանքից:
Իդէոլոգները սխալում են կարծելով, թէ ազատութիւնը կարող է
խնայութիւն ծնել, ընդհակառակը՝ խնայութիւնն է ծնում ազատութի-
ւնը:
Քաղաքականութիւնը հավասարակշռութեան գիտութիւն է:

* * *

Ամենից անհասարար դաշինքն այն է, որ կնքում են բախրի հետ:

* * *

Բախարը նախազգուշացնում է մեզ՝ դաւաճանելով:

* * *

Պատահական երջանկութիւնը և՛ անարժէք է, և՛ անարդար:

* * *

Եթէ երջանկութիւնը մեզ չի ազատում վախէն՝ անարժէք է դա:

* * *

Գերագոյն երջանկութիւնը այն է, որ պատճառ կդառնա և այլոց եր-
ջանկութեան:

* * *

Միայն ազնիւն է զօրավոր:

* * *

Արատաւորութիւնը տկարութիւն է, առաքինութիւնը հզօրութիւն է:

* * *

Չարերի հզօրութիւնը ցնորք է:

* * *

Մարտը մարմինը՝ դա անսահման ոյժերի ամբար է:

* * *

Ամեն ինչ կատարի արթուն խղճմունքիդ աչքի առջև:

* * *

Մի շարք օգար ժողովուրդների նման՝ փկարութեամբ, իմա՝ ցեղութեամբ, հայն էլ կարող էր փրկել իր ֆիզիքականը, բայց եօթնիցս փառք իրեն, նա չունեցաւ այդ փկարութիւնը գիտակցօրէն, թէկուզ շարք տեղերում կրաւորական հերոսացումով, նա գոհեց կէտը իր մարմինէն՝ ցեղի էութեան դէմ չմեղանչելու համար:

* * *

Ով գիտակցաբար հոկտեմբերեան բռնութիւնը համարում է յեղափոխութիւն, նա հայտնում, անարգում է պատմութեան ծանօթ բոլոր ճշմարիտ յեղափոխութիւնները:

* * *

Յաղթանակում, հերոսանում է նա, ով իր մէջ բնութիւնը ոգուն ենթարկելու աստիճան զօրաւոր է:

* * *

Վախը դադարում է, վրանգը տեղի է փոխու, մահը մեռնում է, հէնց որ մարդու որդին իր գիտակցութեան ամբողջ զօրութեամբ կրկնում է՝ ես էլ Աստու որդին եմ:

* * *

Հաշտուելով մահուան գաղափարի հետ՝ մարդս դառնում է եղբայրն ու զինակիցն այն բոլորի, որոնք մարդկային ցեղի պատմութեան բոլոր դարերում եկել ու անցել են մեր աշխարհով իբրև լոյսի, հաւատքի և սուրբի հերոսները:

* * *

Տեսական սարսափով ու քաղցով սրտեղծուեց արեան ընծիւնը (բոլշևիզմը, Ռ.Ը.), որ մի փասնամեակի ընթացքում ատելի փառապացրեց մարդկութեան մի մասը, քան պատմութեան ծանօթ որևէ մութ և բարբառոս հարիւրամեակ:

* * *

Անկրօն էակը հրաշունչ գիւտոր չի դառնա:

* * *

Մեռնում է բոլշևիզմը, որովհետև ապրել են ուզում կրոնական քաղաքակրթութիւնը, քրիստոնէութիւնը և մարդկային անունը:

* * *

Հայրենիքը յափտենական սրժէք է: Նրա փէրը ոչ թէ միայն այսօր ապրող հայերն են, այլև այն բոլոր սերունդները, որոնք եկել ու անցել են, նաև նրանք, որոնք դեռ պիտի գան ու անցնեն:

* * *

Հայրենասէրը մի քաղաքանութիւն է ճանաչում՝ ծառայել Հայրենիքին: Ես այդ ծառայութիւնից բացի ուրիշ դաւանանք չեմ ունեցել:

* * *

Մարդկային իմացականութեան դէմ խորապէս մեղանչում է նա, ով իրեն փրոսած հրամանը չէ գործադրում սրտեղծագործաբար:

* * *

Հայասրանը և ճշմարտութիւնը - ահա իմ աստուածութիւնները:

* * *

Պատմութիւն - դա անսուարք վէպ չէ, այլ՝ չսուարքուած ճակատաճարք, և էջերը՝ ուղմադաշտեր, որոնք արիւնով են ներկում եկող - անցնող սերունդները:

* * *

Պատմագրել՝ նշանակում է կոտի մտնել ժամանակի հետը՝ թոյլ չտալու համար, որ կա մարդկային ազգի անցեալն սպանի:

* * *

Ժողովրդի անմահութեան կոթողն է պատմութիւնը:

* * *

Մասին թէ Մեսրոպ – հաւասարապէս սրբազան կալարներ, որոնց փրոսած է գոյութեան բարձունքներում պահել հայ միտքն ու հայացքը:

* * *

«Իմ զաւակը չէ նա, ով ինձ համար մեռնելու հրաման չի աղերսում ինձանից», – անխօս ասում է հրաքիսի պէս արթնացած ժողովուրդը: Նման վայրկեաններին նա զօրաւորների մէջ փնտրում է զօրաւորագոյնին և նրա ափի մէջ դնում իր ձակարագիրը:

Այսպէս է աշխարհ գալիս ճշմարիտ առաջնորդը:

* * *

Կեանքում խղճմանը քաղու է անապատի երկու այլ դարաւորների և՛ Աստուած և ժողովուրդը: Առաջինի դէմ մեղանշեցի, երկրորդի դէմ երբեք:

* * *

Երկիրը – դա հայրենիքի աշխարհագրական գրահն է: Հայրենիքը – այդ երկիրը մշակող ժողովրդի ոգին է, նրա մշակոյթը:

* * *

Հայաստան երկիրը հայրենիք դարձրին Մեսրոպի այբուբէնը, Մամիկոնեանների ուխտը, Բագրատունիների շինարարական մեծագործութիւնը:

* * *

Իբրև հասկացութիւն՝ հայրենիքն ընդգրկում է ո՛չ միայն անցեալն ու ներկան, այլև՝ գալիքը:

* * *

Աշխարհակալութիւն – ահա՛ հայրենիքների թշնամին՝ հարազատ թէ օտար:

* * *

Խելագար անձնասպանութիւն է աշխարհակալութիւնը, հոգեւաստութիւն:

* * *

Մարդկային գործերի մէջ հայրենիքի պաշտպանութիւնն է ամենաարբազանը:

Հայրենիքի չափ նուիրական է և պատերազմը հայրենական: Հաւաքական աւազակութիւն և սպանութիւն է այլ կարգի ամէն պատերազմ:

* * *

Սոցիալապէս որքան արդար՝ այնքան զօրաւոր է հայրենիքը:

* * *

Ներիր, Տէր, ներիր, եթէ մի օր հայրենիքիս օգրակար լինելու համար մեղանշեմ Բո դէմ: Արդար է հայրենիքին ծառայել ամէն ինչով՝ բացի սպորտութիւնից:

* * *

Մտիր այնպէս, որ մահդ էլ ծառայի հայրենիքիդ – ահա՛ իմ դաւանած հայրենասիրութիւնը:

* * *

Զարեցէք նախահայրերի ածիւնը հայրենի հողից և դուք կունենաք երկիր մշակելի, բնակելի, բայց ո՛չ հայրենիք:

* * *

Ով չի գերազանցում իր նախորդներին, նա անարգում է նրանց անունը՝ մեղանշելով հոգոս զարգացման օրէնքի դէմ:

* * *

Աչքը կոշտ ժողովուրդ – ահա մի ուրիշը – ամենահայկականը հայոս գովելի յարկութիւններից:

* * *

Անցորդին է պատկանում թոնրից հանած հայ շինականի առաջին հացը:

Գերազանցն իր փեսակի մէջ - ահա ճշմարիտ հայն իբրև ոգի և կերպար:

* * *

Ահա մեր նախահայրերը լուսադաւան - Մեծն Ներսէս, Սահակ, Մերոպ, ապա՝ հերոսական փառանքը Մամիկոնեան զօրավարների - Մուշեղ, Վարդան, Վահան - կենդանի փահանը Հայաստանի պաշտպանութեան. Աշոտ՝ մարտերի բոցերում երկաթացած, իսկ նոր և նորագոյն ժամանակներում՝ Արովեան, Խրիմեան, Ալիշան, Պարկանեան, Զատարեան... Վերջապէս, յեղափոխականն ու ռազմիկը միշտ մահապարաստ, որոնց համար Հայաստանը աստուածութիւն էր, հայկականութիւնը՝ կրօն:

* * *

Հայն իր Վահագնը ուներ - Աստուածը քաջութեան: Քաջ և քաջապաշտ է նա... Քաջ են, ընդհանրապէս, ոգու ժողովուրդները: Սրանցից է հայը՝ գերազանցօրէն: Հեթանոս հայու քաջութիւնը չտկարացաւ նաև քրիստոնէական Հայաստանում: Միտազործելու իր փենչանքին զուգահեռ՝ դա ընդունեց արտաբնական մի նոր ձև ևս - նահապետութիւնը կամաւոր, որն իր խորքի մէջ ոչ այլ ինչ է, բայց եթէ՝ զիպակցական մահուամբ քաջաբար անմահանալու ձգտումը:

* * *

Օտար լծերի փակ երկարօրէն ապրած ժողովուրդներին յարուկ է մի հոգեգիծ, որը հոգեգիտութիւնը անուանում է «սրբկական երկիր»:
Այդ ամօթալից արարից, այդ չարիքից գերծ է հայ էութիւնը, որովհետև օտար իշխանութեանց լուծը կրելով հանդերձ, նա չէ դադարել իրեն զգալ աւելի բարձր իր երկրին բռնօրէն փիրողից:

* * *

Տրդարներից մինչև Մամիկոնեանները, և Դաւիթ - Բէգից մինչև մի բոռ յեղափոխականներով «Բանկ Օրտման»-ը գրաւող Բարկէն Միւնին՝ քաջութիւնը հայու համար եղել է այն, ինչ որ համը պոռոտի համար՝ բնօրէն:

* * *

Հայու համար շինարարութիւնն է գերագոյնը պայքարներից, և յաւերժացողը յաղթանակներից:

Լուսարանձ ժողովուրդ, որն ապրել, պայքարել, շինարարել է գիրքը ձեռքին:

Մեր երկրագնդի վրայ երկու ուժեր չեն յոգնում - ժամանակն ու հայը՝ մէկը կործանելով, միւսը՝ վերաշինելով:

* * *

Յատերժանալ շինարարելով, սրտեղծագործելով - ահա՛ հայկականը, չափազանց հայկականը:

* * *

Ճշմարտօրէն ազատ է նա միայն, ով չի զգում բոնութեան առկայութիւնը:

* * *

Ազատ կարող է լինել հզօրագօր ոգու փէրը միայն:

* * *

Հոգով փկարների համար մարտելի սնունդ չէ ազատութիւնը:

* * *

Ո՞րն է պարմութեան ամենատասանելի դասը.
- Չկորցնել չափի զգացումը, երբ դիպուածը մեր ախոյեանին մեր ձեռքն է յանձնել: Վաղը պարմութիւնը կարող է մեր ախոյեանին կարգել դաբաւոր՝ մեզ դարելու համար: Եղի՛ր արդար, արդար եղի՛ր, քանզի դա՛ է լավագոյն քաղաքականութիւնը: Գիտցի՛ր, մեր արդարութիւնից մենք ենք առաջին շահողը: Մեր երկրագնդի վրայ դեռ ոչ ոք չի զոջացել արդար լինելու համար:

Ճշմարտօրէն զօրաւորն է արդար:
Եւ միայն արդարն է ճշմարտօրէն զօրաւոր:

* * *

Պարմական անձը քարեղէն արձան, քարացած էութիւն չէ, այլ՝ յաւերժաշունչ ոգի:

* * *

Երկու բան չեն ներում մարդուն՝ իր սպորտութիւնները, որոնցով սնում է իր բարոյական փկարութիւնը, ապա՝ իր փկարութիւնը, որից ծնունդ են

առնում իր սրտորոթիւնները:

* * *

Ճշմարտօրէն ազատ է նա, ով ազատ է մահուան երկիրից:

* * *

Թէն ամէն ժողովուրդ իր հայրենիքն ունի, մարդկութիւնը, սակայն, դեռ մնում է անհայրենիք: Մարդկայնութիւնն է մարդկութեան հայրենիքը, որ դեռ գոյութիւն չունի:

* * *

Ինձ փրկած չէ առանց բարոյական զարհուրանքի դիպել մարդուն իր նոսասութեան մէջ:

* * *

Ես մերժում եմ այն բարոյագործի հասկացողութիւնը, թէ հայրենիքի շահը սրբագործում է ամէն միջոց: Սրտորոթիւնը չի դադարում սրտորոթիւն լինելուց և այն դէպքում, երբ այն կատարում է անզամ հայրենիքի համար... Սրտորոթեանը չեն պաշտպանում Հայրենիքը: Նրան՝ Հայրենիքին, վայել է բարձրօրէն մարդկայինը, ասպետականը, կորովին:

* * *

Մեծ պաշտօններն առանց հոգեկան մեծութեան, նման են կաւէ անդրիի՝ դրոսած ոսկէ պատուանդանի վրայ:

* * *

Ես իմ կեանքով հաստատեցի Հերոդոտոսի խօսքը. «Վրանգատը է չափից ատելին ցանկանալ»: Ես ուզեցի, որ մեր ցեղի գոյութեան թշնամին հէնց իմ օրով նստի իր հայրենիքի փախկանների վրայ, և վայէ՛ նախանձելով եօթնիցս անիրաւուած իմ ժողովրդի ձակապագրին:

* * *

Երկրասարդութիւն, աշխարհի անզերագանցելի գեղեցկութիւնն ես դու, երբ բարձրանապարակ ես:

* * *

Մարդկութիւնը փառապանքին կը պարտի իր հոգևոր ողջ մշակոյթը:

* * *

Անպարտելի է մնում նա, ով մահն է ընտրում իբրև առաջնորդ:

* * *

Կորուստ չկայ փեղեղեղ - կայ անդադրում մի շարժ, որի ընթացքում կերպարանափոխուելով հոսում է ամէն ինչ...

Եթէ էսպէս գոյութիւն ունենար մահը՝ յափտենական կորուստի իմաստով, չէր ապրի մարդկութեան անցեալը, որին կոթնելու կարիք է զգում եկող ու անցնող ամէն սերունդ:

* * *

Իբրև անօթ՝ վաղուց է խորտակուել Բեթհովէնը, չկայ նա. կան, սակայն, մնում են նրա ակորդներն աստուածային:

* * *

Մահ չկայ, կորուստ չկայ փեղեղեղ, կայ աստիճանական ոգիացումը նիւթի, ոգու անվերջ զարգացում, կատարելագործում կայ:

* * *

Չկայ մահ, կայ անցում մի այլ ոլորտ: Ամեն է մեզ սկզբնաւորող, մեզ շնչաւորող զօրութիւնը, բանը, ոգին:

* * *

Մահը փրկած է մարդուն՝ այն յաղթահարելու համար:

* * *

Միայն կամաւոր նահապակն է բացարձակ ազատութիւն վայելում:

* * *

Թիւն ու փեղեղեղական վճռական դեր են կատարում միայն այն դէպքում, երբ նրանից օգուտ ենք իբրև ահապարտութեան միջոցներից: Յաղթանակը օրինաչափօրէն թեքում է այն կողմը, որը յաջողում է ատելի երկար ժամանակ մահուան սարսափի փակ պահել իր հակառակորդին՝ ձգնելով խորտակել նրա դիմադրական ոգին:

* * *

Այո՛, ըստ էության՝ ռազմավարությունն այլ բան չէ, եթէ ոչ՝ սհավարություն: Եւ, որովհետեւ մահն է սհացուցիչը՝ մենք բնաւ մեղանշած չենք լինի լեզուի ոգու դէմ, եթէ այսպէս բանաձևենք ռազմավարությունը - հոգեբանօրէն առնուած՝ դա մահավարություն է:

* * *

Հանձար ու զինուոր էին Կեսարը, Հաննիբալը, Նապոլեոնը: Կարարելայրիպ հերոսներ էին Մամիկոնեան Մուշեղ, Վասակ, Վարդան զորավարները:

* * *

Կարելի է ռազմական տաղանդ, հանձար լինել, բայց և այնպէս հերոս չլինել:

Հերոսը բարոյական հանձար է, սրտի հանձար, և միշտ քաջաքաջ ու մահապարտաւար:

* * *

Հանձարը դա բանակի ուղեղն է, հերոսը՝ սիրտը:

Յաղթանակ կարելի է շահել նաև առանց հանձարի, առանց հերոսի՝ երբէք:

* * *

Ոգու մարդը - սհա՛ սիրագործելու, մեծագործելու կարող ղեկավարը: Այսպիսին էր նա, ով աշխարհակալ Հոռմի դէմ սպրտկների արելութիւնը շղթայագերծեց - Սպարտակը:

Այսպիսին էր Կարթագէնի ամեհի զաւակը:

Վերջապէս նա, ով Տղմուրի ամերում դարերին ու սերունդներին իմացեալ մահով անմահանալու ճամբան մարնանշեց՝ հրաշունչ Մամիկոնեանը, որն իր արինով հաստատեց, թէ չէ կարելի մարել այն, որն էութեամբ անմարելի է - հայկական ոգին:

* * *

Ռազմական փառքի կարարները՝ Ալեքսանդր, Հաննիբալ, Կեսար - այդ հրեղէն անունները գուցէ և մնային անծանօթ աշխարհին, եթէ պարտաձ լինէին իրենց առաջին ճակատամարտերում:

* * *

Արդար լինենք, զօրավար, դու՛ եթէ հանձարեղ իսկ լինես, դու միայն նահապարտաւարում ես յաղթանակը. այն շահում է զինուորը:

* * *

Յաղթում եմ, նշանակում է՝ հակառակորդիս գերազանցում եմ զդիպրութեան մէջ: Ահա՛ ռազմական դոկտրինայի այբն ու փիլիսոփայութիւնը:

* * *

Հայր միշտ էլ հերոսագործում է, երբ նրա առաջնորդներին յաջողում է, կռիւ ընթացքում, հաւաքական սիրտ սրեղծել:

* * *

Ոգու մեծագործութիւններ կան, որոնց իմաստն ու արժէքը ճշդելու համար բառեր դեռ չկան:

Ոգու, հայ ոգու այդ մեծագործութիւններից էր Աւարայրը:

* * *

Ահա և նրանք՝ ոսկրի իմ գերագոյն եղբայրները - նահապակներ ու հերոսներ, որոնք մի օր, անկարող աշխարհին իրենց անպատում ողբերգութիւնը ողբալու՝ երանեցին այսպէս. «Նրանց, որոնք գոռ մարտերի բոցերում իրենց ոգին են պողպատում, և զարնում իբրև պարտականութեան ջահել աստուածներ, երանի՛:

Արծուին, բարձունքներում՝ բիբերն աստղերին, հոգեվարող արծուին էլ երանի՛:

Եւ առիծին արքայական, որ մեռնելուց առաջ անապատների յաւերժութեանն իր վերջին մոնչիւնն է խառնում, երիցս երանի՛»:

* * *

Մեր հայրենիքի և ժողովրդի մեծութիւնը պէտք է չափել ո՛չ թէ Հայաստանի օրոսայ անձուկ սահմաններով, այլ հայ մարքի և արուեստի ազդեցութեան հորիզոններով: Պարմականօրէն առնուած՝ մերն է այն ամէնը, որ հայը տուել է աշխարհին: Մեր սրեղծածը պատմութեան իր դարում էլ և երկրագնդի իր կէտի վրայ էլ լինի՝ կը մնա սեփականութիւնը հայ ոգու:

* * *

Հայ մարտի և բազկի գործերը Հայաստանից դուրս՝ կը մնան իբրև հոգևոր գաղութներ:

* * *

Հայը օտար իշխանությունների լուծը կրելով հանդերձ չի դադարում իրեն զգալ անելի բարձր իր երկրին բռնօրէն փիրողից:

* * *

Կորցնելով սրբության զգացումը՝ մարդն անխուսափելիօրէն դառնում է շնական և մարդապետաց:

* * *

Մահուան դէմ յաղթանակելով է նուաճում կեանքը, ապրեցում հայրենիքը: Այսպիսին էին իրենց կեանքն ու մահը հայրենիքին ծառայեցնող Մամիկոնեանները-իմացեալ մահուան կեսարները. նրանք, որոնց համար ռազմարուեստը մահարուեստ էր, այսինքն՝ մահուան դէմ յաղթական կանգնելիս, մահից էլ զօրաւոր հանդիսանալու արուեստը. նրանք, որոնց ճակատներից անելի արժանաւորը մեր աշխարհում դեռ չէ շօշափել դափնին:

* * *

Յոռեպետութիւն - ո՛չ, ո՛չ, անտեղի է դա մարդկության ապագայի նկատմամբ, քանի որ մարդը ինքնամշակմամբ կարող է Սոկրատ դառնալ:

* * *

Հաննիբալ - ոգու հսկայ, որի ռազմական հանձարը, փառքն ու անձնական դժբախտութիւնը հաւասարապէս մեծ եղան, որը, սակայն, իր մեծ հայրենասիրության արժանի հայրենիքը չունեցան - քեզ, հոռմասաստը հերոս, իմ սքանչացումը քեզ...

* * *

Հայոց պարմութեան մէջ Մամիկոնեաններին է պատկանում առաջին ուխտի պարիւրը: Ուխտն է Վարդանների դիցազնութեան աղբիւրը: Ուխտ ունէր Կարթագէնի ամեռի գաւակը, և նա դարձաւ Հոռմը սարսփեցնող Հաննիբալ: Ուխտաւորներն են յաղթում մահուան և նրան ծառայեցնում կեանքին:

* * *

Ես յաճախ մտովի կայցելեմ մեր հին ու նորագոյն ռազմավայրերը, մեր պարմութեան ու յաջողութեան պարմաւորներն ինձ համար պարզելու ցանկութեամբ: Ես գրել եմ, որ այն բոլոր դէպքերում, երբ Ներսէս Մեծի նման մէկը «բարձրացել է լեռը», երբ մեր ցեղը լարել է իր բովանդակ ուժերը և չի փկարացել հոգով, մինչև որ փեղի կրար թշնամին - միշտ էլ յաղթութեան դիցուհին իր ոսկէ մարմերով պսակադրել է հայ զինուորի ճակատը:

Իսկ երբ չի գրնուել պարթևադիպ առաջնորդը, որ կարողանա լարած պատել ժողովրդի ուժերը, պարմութիւնն ու ամօթն են եղել հայ զօրքի բաժինը:

* * *

Կրելով կնիքը Հայաստանի բնութեան ու պարմութեան՝ հայ եմ ես: Մրաժոռով ու ապրումներով, սակայն ես մարդ եմ, համամարդ:

Ես ընկերն եմ անիրաւուածի, եղբայրը՝ հալածողի, և զինակիցը՝ բնեռ-բնեռ անելի արդար աշխարհի համար մարտնչողների: Դաւանանքս է - մարդկայնութիւն՝ անելի մարդկայնութիւն:

* * *

- Ամէն մարդ իր փեսանելի կամ աներևոյթ դաստիարակիչն ունի, որի դերն ու ազդեցութիւնն իր նկատմամբ շարունակում է մինչև գերեզման:

Մէկի փոխարէն՝ ես երկուսն ունեցա - Մամիկոնեաններն ու Մասիսը: Առաջիններն ինձ Հայրենիքի համար մեռնելու փենչ ներշնչեցին: Երկրորդը՝ սէր դէպի հոգևոր բարձունքները:

* * *

Դարեր, դարեր են անցել, և իմ էութեան մէջ դեռ որոտում, դրդում է Վարդանի աւարայրեան խօսքը՝ ուղղած հայոց բանակին. «Վախը թերահաւարութեան նշան է... Մահն ընդունե՛ք ուրախ սրտով»:

* * *

Քո հայրենիքում ընդհանուր պիտի լինեն ոչ միայն պարմականութիւնները, այլև իրաւունքն ու ուրախութիւնը: Սրանում է Հայրենիքների անսասանութեան գրաւականը:

Էլ թող չլինեն քեզանում ընչազարկն ու վախասիրտը: Նմանների

տրկարութիւնից են կործանում պետութիւնները:

Բոլոր զաւակներդ՝ անկարօտ, առաքինի և արի՛:

Ընկերայնօրէն արդար, քաղաքականապէս զօրաւոր Հայրենիք:

* * *

Հայկական լաւագոյնի-բարձր մարդկութիւն արտայայտող Գողթան երգերի բովանդակած վեհ գաղափարների-վերարծարծումն, նրանց պրոպագանդը հայ մտաւորականութեան կողմից ոչ միայն հայկական, հայրենասիրական, այլև համամարդկային պարտականութիւն է:

* * *

Ժողովուրդների կուլտուրական արժէքը պէտք է ճշտել համամարդկային այն գծերով, որ յարուկ են նրանց հոգևոր սրբեղծագործութեան: և հէնց այդ համամարդկայինը, մարդկօրէն այդ օրինակելին է կազմում ամէն ազգի լաւագոյնը:

* * *

Միայ և անարդար է կարծել, թե յանկարծակիի եկած արևմտահայութիւնը Եղեռնի օրերին դրսևորեց իր հոգոս միայն մարտիրոս կողմը...

Այդ օրհասարեք օրերին Թուրքահայաստանէն կարելի էր լսել «լացը շղթայուած հերոսութեան», իսկ որոշ վայրերում՝ մոնչիւնը դաւադրուած առիծների:

* * *

Ամէն հայ ընդունակ է մարտիրոսանալու, իսկ ամէն մարտիրոս կարող է հերոս լինել:

* * *

Աւելի լաւ է հայ մարդը համր լինի, քան օտարախօս:

* * *

Ես անշափ զարմանում եմ, երբ հանդիպում եմ անտաղանդ հայի:

* * *

Ահա և իմ վերջին խօսքը.

- Կուզէի աչքերս փակել մի ահեղ ճակատամարտում, յաղթութեան թևերի վրայ, զօրքերիս գոռ աղաղակների մէջ: Սակայն ուր էլ և ինչ-

պէս էլ մեռնեմ, թող սիւնեաց իմ նախկին ռազմիկները Խոսարուպ լերան սրբի մէջ ամփոփեն իմ մի բոռ աճիւնը:

... Ուր և երբ էլ մեռնեմ, հաւատա՛, իմ ազիզ ժողովուրդ, որ արքաքին վրանգներիդ ժամանակ իմ անհանգիստ հոգին այցի և օգնութեան պիտի փութայ իր հայրենի աշխարհին և աներևութաբար քո բանակները առաջնորդէ:

Զինոր զաւակդ՝ Նժդեհ, 1937թ., Սոֆիւս

* * *

Մարդս այս կամ այն կողմնորոշման օտար շահերի համար իր կեանքը վրանգի չի ենթարկում: Նա գիտակցաբար համարձակում է մեռնել միայն մի դէպքում. երբ նրա համար իր պաշտամունքի առարկան աւելի թանկ է, քան իր կեանքը: Իսկ իրաւ հայրենասէրի համար միայն Հայրենիքն ու ազգն են վեր կանգնած սեփական կեանքից:

* * *

Ո՛վ գիտակցաբար կամ անգիտակցօրէն հոկրեմբերեան բռնվրդ հանարում է յեղափոխութիւն, դա հայիոյում, անարգում է պատմութեան ծանօթ բոլոր յեղափոխութիւնները: Դա ամէն ինչ էր-պարտուածների թունտ, աստուածամարտութիւն, հոգևոր վայրենացում, դարձ դէպի հեթանոսութիւն, պետական բանդիտիզմ, զանգուածային աւազակութիւն-բայց ոչ և յեղափոխութիւն՝ քաղաքական ու սոցիալական իմաստով:

* * *

Ցեղն է այս կամ այն երկիրը դարձնում հայրենիք: Հողն առանց ցեղի, ասել է՝ մարմին առանց հոգոս: Ահա՛ թէ ինչո՛ւ հայոց հայրենիք ասել է՝ հայոց ցեղաստան:

Այսօր, մասնատրապէս, երեք քան զերծ պէտք է պահել սրահայրենասիրութեան պղծանքից—հայ խաչը, մանուկը, գիրը:

* * *

Ազգերը չունեն աւելի ճակատագրական պաշտօնեաներ, քան իրենց եկեղեցին, դպրոցը և մամուլը վարողները:

Կղեր, ուսուցիչ, խմբագիր-մեծագոյն օրհնութիւն, և չարիք միաժամանակ: Օրհնութիւն են, երբ ցեղն է վարում սրանց խղճմտանքը, անէ՛ծք, երբ ցեղից չեն առնում իրենց ներշնչումները... Պղծադաւան է այն հոգևորականը-որով և՛ ամենավրանգաւորը ազգի ներքին թշնամիներէն, եթէ

իր վարած եկեղեցին նա չէ դարձնում նաև ցեղի փոքր... Պաշտօնապղծություն է կարարում ուսուցիչը, որի մարգարէն ցեղամերժ Մարքսն է... Հասպա անցեղաշունչ թերթը, գիրքը, որոնց ամբողջ հայկականությունը կայանում է նրանում, որ հայապառ են: Հայրենիքի և հայրենասիրության մասին աղմկում են նմաններն էլ, առանց անդրադառնալու, որ պղծություն է կարարում ամէն անհապ, կազմակերպություն, հասարակություն, որի մրաժումի, զգացողության ու գործերի մէջ ցեղը փեղ չունի, բայց և այնպէս՝ խօսում է ազգի և հայրենիքի անունից: Հոգևոր չարաշահություն և անբարոյականություններից ամենազազրելիին է դա: Մրանք են խաթարում մեր ազգային ոգին, մրաժողությունը, նկարագիրը:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ՄԵՍՐՈՊԵԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՐՃԱՌՕՏ ՈՒՂԵՑՈՅՑ

Կոմունիստ կայսրութիւնը հայութեանը պարտադրած 1922 թ. ուղղագրութեամբ հայոց աստուածատուր այբուբենից դուրս նետեց **ւ, է, օ** տառերը, նաեւ **իւ, եա, ոյ** երկհնչյունները: 1940-ական թթ. **է, օ** տառերը ստիպուած վերադարձրեցին այբուբեն, իսկ **ւ-ը (հիւն)** ցայսօր մնացել է Սահակ-մեսրոպեան այբուբենից դուրս: Մեսրոպեան ուղղագրութեան մէջ **ւ-ն** առանձին տառ է, որն ընկած է ցո եւ փիւր տառերի միջեւ եւ որի թուային արժէքը 7000-ն է: **Ի-ը ե-ի** հետ միանալով՝ կազմում է **եւ** շաղկապը, իսկ **ո-ին** միանալով՝ **ու** շաղկապը: Սովետները այբուբենից հանած **ւ, է օ** տառերի փոխարէն իբրեւ առանձին տառեր այբուբեն մուծեցին **եւ, ու** շաղկապները, որոնք բառ էին դարձել **ե** եւ **ո** տառերին **ւ** տառի միացումից. այսպիսով, աղաւաղելով այբուբենը, Սբ Մեսրոպի զետեղած **ւ** տառը փոխարինեցին **ու, եւ** բառ-շաղկապներով:

Այդ ուղղագրութիւնը մեր լեզուն աղաւաղեց նաեւ բազմաթիւ սարքովի, անհերթեթ նոյնահունչ համանուններով, որոնցից նշեմ մի քանիսը:

1. Միասին-ի հոմանիշ **հետ** կապը եւ **յաջորդը, հետեւից եկող** իմաստն ունեցող **յետ** տեղի մակբայը խառնուեցին զիրար, դարձան նոյնը: Այսօր գրում են՝ «մերենան հետտուր, ինձ հետ արի, հետեւից եկածը» են: Մինչդեռ դասական ուղղագրութեամբ այդ խառնակութիւնը չկայ, քանի որ ոչ թէ գրում ենք «հետ արի, հետ տուր», այլ՝ «յետ արի, յետ տուր, յետագայ»: Իսկ **միասին** նշանակող **հետ** կապը դասական ուղղագրութեամբ գրում ենք **հո-ով**՝ «ինձ հետ, նրա հետ» ելն:
2. Զգացմունք արտայայտող **սէր** գոյականը նոյնացել է **կաթի սեր** բառին, քանի որ երկու բառերն էլ գրում են **եչ-ով**: Մինչդեռ մեսրոպաւանդ ուղղագրութեամբ զգացում արտայայտող բառը գրում ենք **է-ով**, իսկ կաթի սերը՝ **եչ-ով**: Իսկ ինչպէս իմանանք որեւէ բառի մէջ երբ է **եչ** գրում, երբ՝ **է**: Զանազանելը շատ հեշտ է: Եթէ զգացում արտայայտող բառն ենք ուզում գրենք, ապա այդ դէպքում բառի

է-ն սեռականում դառնում է **ի** (սէր-սիրոյ), իսկ **կարթի սեր** արտայայտող բառը սեռականում երբեք չի փոխում-դառնում **ի**, այլ միշտ մնում է նոյնը՝ **ե** («*կարթի սերի մէջ սուրճ լցրոս*»):

3. **Գետ** եւ **գէտ** բառերը: Այս բառերից մէկը նշանակում է **Արաքս գետ**, միւրը՝ **գիտութիւն** (լեզուագէտ, հնագէտ եւ այլն): Հայաստանին պարտադրուած այսօրուայ ուղղագրութեամբ երկու դէպքում էլ գրում է **եչ-ով**: Սակայն մետրոպոլիտան ուղղագրութեամբ **գիտութիւն** արտայայտող բառը գրում ենք **է-ով** (լեզուագէտ, հնագէտ եւ այլն), իսկ **Արաքս գետի ե-ն՝ եչ-ով**: Այստեղ էլ ենք բառերը իրարից տարբերակում հոլովելով: Գիտութիւն արտայայտող բառի **է-ն** սեռականում դառնում է **ի**, մինչդեռ **գետ** նշանակող բառի **ե-ն** սեռականում **ի** չի դառնում, այլ մնում է նոյնը՝ **ե** («*Արաքս գետի մէջ, Հրազդան գետից*» եւ այլն):
4. **Գեր** եւ **գէր** բառերը: Այս բառերից առաջինը (**գեր**) նախածանց է եւ նշանակում է չափից շատ, չափից մեծ (գերհզօր, գերագոյն, գերթանկ եւ այլն), իսկ միւս բառը **գէր** ածական է, որ նշանակում է չաղ-մսօտ: Հայաստանեան ուղղագրութիւնն այդ բառերը սարքել է նոյնահունչ, եւ երկուսն էլ գրում են **եչ-ով**: Մինչդեռ գիտութիւն նշանակող բառի **գէր-ը** գրում ենք **է-ով**, քանի որ սեռականում դառնում է **ի**, իսկ չափից շատ, չափից մեծ նշանակութիւն հարողողող **գեր** նախածանցը գրում ենք **եչ-ով**՝ «*գերազանց*» եւ այլն:
5. **ՀՀ-ում** գործող ուղղագրութեամբ նոյնահունչ համանուններ են նաեւ միեւնոյն տառով գրող **գէշ** («*գիշատիչ-գիշատել*») եւ **գեշ** (տգէղ) բառերը: Դրանց գրութիւնը նոյնպէս զանազանում ենք սեռական հոլովի վերածելով: Եթէ **գեշ** գրելով նկատի ունենք **տգէղ** բառը, գրում ենք **եչ-ով**, քանի որ բառի մէջ **ե-ն** սեռականում մնում է անփոփոխ: Իսկ եթէ **ե-ն** սեռականում փոխում-դառնում է **ի**, ուրեմն այդ բառը գիշատիչ բառի հոմանիշն է, որը պէտք է գրուի **է-ով**:
6. **ՀՀ-ում** այժմ գործող ուղղագրութեամբ համանուն են դարձել նաեւ սեռականում **ի** չդարձող **է-ակիր** փոքրաթիւ բառեր: Օրինակ՝ **հարկ** (պէտք, կարիք, պահանջ, տուրք) եւ **յարկ** (շէնքի որելէ յարկում անջատ բնակարան նշանակող բառ, յարկաբաժին): Մետրոպեան ուղղագրութեամբ **յարկ-յարկաբաժին** նշանակող բառը գրում ենք **յ-ով**, իսկ **պէտք, կարիք, պահանջ, տուրք** նշանակող բառերը

գրում ենք **հո-ով** (օր.՝ **հարկապահանջ, հարկադիր, հարկադրանք, հարկաւոր**, ըստ պահանջել **հարկին, հարկահան, հարկատու** եւ այլն):

7. **Նոյնը** նաեւ **հոտ** (բոյր) եւ **հօտ** (ոչխարի հօտ, իրենց եկեղեցականի տնօրինութեանը յանձնած հաւատացեալների խումբ) նշանակութեան տարիմաստ բառերը, որոնք հայաստանեան ուղղագրութեամբ գրուելով նոյն **ո** տառով, միաւորուել-դարձել են անիմաստ համանուն: Ուստի **բոյր** նշանակող բառը գրում ենք **ո-ով**, իսկ **ոչխարի հօտ** նշանակող բառը՝ **օ-ով**:

Ձեռնեղում եւ Փարիզի «Մաշտոց» կառոյցի հրապարակած «Ուղղագրական կանոններ» ձեռնարկի՝ հայերէնի նոյնանիշ բառերի ցանկը, որ նշածս կառոյցը գետնեղել է իր հետեւեալ կայքէջում:

www.association-machtotz.com/regles_orth_arm.html

Դարձեալ շեշտեն, որ հայերէնում **ի** հնչող փոքրաթիւ բառեր կան, որոնք թէեւ նոյն հնչումը ունեն, այսինքն՝ նոյնահունչ են, բայց տարբեր իմաստ ունեն: Օրինակ՝ **համր** (**մունջ**) եւ **յամր** (**դանդաղ**), **հար** (**զարկ**) եւ **յար** (**միշտ**) եւ այլն: Մետրոպեան ուղղագրութեամբ այդ նոյնահունչ բառերի իմաստը իրարից տարբերելու համար բառը գրում ենք **հ-ով** կամ **յ-ով**: Միաւասիկ այդ բառերի հանդիպադիր ցանկը, որ պէտք է անգիր յիշել:

համր (մունջ)	յամր (դանդաղ)
հանգել (մարել)	յանգել (հասնել)
հար (զարկ)	յար (միշտ)
հարել (զարնել, ծեծել)	յարել (խօսքին խօսք անելացնել, կցել)
հարկ (պէտք, տուրք, անհրաժեշտութեւ, կարիք)	յարկ (բնակարանի յարկեր)
հեղ (հեղուկ, անգամ)	յեղ (վիճակի փոփոխութիւն (յեղափոխութիւն))
հետ (միասին)	յետ (յաջորդը, հետեւից եկողը)
հետագայ (հետ եկող)	յետագայ (յաջորդ, յետոյ եկող)
հոլով (գլորուել)	յոլով (շատ)
հոյլ (խումբ)	յոյլ (ծոյլ)
հօտ (ոչխարի խումբ, հաւատացեալների խումբ)	հոտ (բոյր)
հոռի (հին հայկական ամիսներից)	յոռի (վատ, գէշ)
հօր (հայրիկին)	հոր (փոս, փորուածք)

Գասական ուղղագրութեամբ ընթերցելու կարելորագոյն կանոնները:

1. Բառասկզբում յ-ն հայերէնի բոլոր ձայնաւորներից առաջ միշտ **հ** է կարդացում (գրում ենք յառաջ-կարդում ենք **հառաջ**, յայտնի-**հայտնի**, յանուն-**հանուն**, յերկրի-**հերկրի**, Յիսուս-**Հիսուս**, Յակոբ-**Հակոբ**, յօդուած-**հօդուած** են):
2. **Ջ**-ն բաղաձայնից առաջ կարդացում է **ըզ** (գրում ենք զբնակութիւն-կարդում ենք **ըզ**բնակութիւն, գրում ենք զխորհուրդ- կարդում ենք **ըզ**խորհուրդ, **զ**տէր-**ըզ**տէր են):
3. Բառավերջին **ա** եւ **ո** տառերից յետոյ գրում է **յ**, բայց չի արտասանում (գրում ենք ապագայ, կարդում ենք ապագա՝ առանց յ-ն արտասանելու, նոյնը՝ երեկոյ-երեկոյ): Բացառութիւն են միայն **Նոյ, խոյ, բայ, ճայ, վայ, հայ, գոյ** միավանկ 7 բառերը, որոնց վերջում գրուած յ-ն արտասանում է:
4. Ոյ -ը միշտ կարդացում է **ոյ** (գրում ենք լոյս, կարդում ենք **լոյս**, գոյն-գոյն, բոյս-բոյս):
5. Եա-ն գրում ենք **եա**, կարդում ենք **յա** (մատեան-մատյան, Դուրեան-Դուրյան, սենեակ- սենյակ), իսկ եօ-ն՝ գրում ենք **եո**, կարդում ենք **յո** (գրում ենք եօթ-կարդում ենք **յոթ**, գրում ենք արդեօթ- կարդում ենք **արդյոթ** են):

Բացառութիւն չունեցող 20 կանոն, որ կարելի է իւրացնել շատ արագ եւ մօտ 80 տոկոսով տիրապետել դասական ուղղագրութեանը:

- ա. **Վ** հնչիւնի համար հայերէնն ունի երկու տառ՝ **ւ** եւ **վ**: **Խ**-ն արտասանում է **վ**, բայց բառասկզբում երբեք **ւ** չի գրում, այլ միշտ՝ **վ** (վարդ, վահան, վերջ, վիզ, վկայ, վռան):
- բ. Մեր լեզուում **ու, ո, օ**, եւ է ձայնաւորներից յետոյ **վ** լսուելիս երբեք **ւ** չի գրում, այլ միշտ գրում է **վ**, որպէսզի ո-ն չդառնա ու, իսկ ու-ն աւելորդ **ւ** չստանա:
- գ. Բառավերջում լսուող **վ** -ն(վե) գրում է **ւ** տառով (անիւ, արծիւ, հովիւ, շնորհիւ, պատիւ, սեւ, արեւ, հարաւ, թեթեւ):
- դ. Բառամիջում եւ բառավերջում ու լսուելիս **ու** էլ գրում ենք (խոստում, ուսում, ուսելիք, կատու, թթու, մեղու):
- ե. Բառամիջում եւ բառավերջում **ա, ե, ի** ձայնաւորներից յետոյ **վ** լսուելիս միշտ գրում է **ւ** (աւարտ, բաւական, խաւար, անձրեւ, Երեւան, Մեւան, նաեւ, տերեւ, հիւանդ, շիւ, թիւ):
- զ. Բաղաձայնից յետոյ **վ** լսելիս գրում ենք **ու** (Աստուած, գուարթ, թուական, Նուարդ), իսկ ձայնաւորների միջեւ **վ** լսելիս, գրում ենք **ւ** (սաւան, հիւանդ, օթեւան, առաւօտ):

- Բացառութիւն է միայն **հովիւ** բառը, որտեղ **ու** եւ **ի** ձայնաւորների միջեւ գրում է ու թէ **ւ**, այլ՝ **վ**, որպէսզի տառը չդառնա ու:
- է. Բառի սկզբում երբ լսում է **վո**, երբեք **վ** չի գրում, այլ միշտ գրում ենք **ո** (որսորդ, որպէս, ոսկի, որովհետեւ): Բացառութիւն է միայն **վոհմակ** բառը, երբ բառասկզբում **վո** լսուելիս գրում է ոչ թէ **ո**, այլ **վ**:
- ը. Բառասկզբում **վ** լսուելիս միշտ **վ** ենք գրում (վէպ, վերջ, վարորդ, վսեմ եւ այլն): Այդ բառերը բարդացուելիս գրում են նոյնութեամբ (պատմավէպ, ամենավերջ, ամենավսեմ, անվաւեր են) :
- թ. **Վ** լսուելիս միշտ **վ** ենք գրում նաեւ գրաբարից չփոխանցուած օտար բառերում (Սալվադոր, Կալվին, Դեվրիկ):
- ժ. Մ տառից առաջ **հ** լսող բոլոր բառերը գրում ենք **հ**-ով (հսկայ են): Բացառութիւն է միայն մէկ բառ՝ **յստակ**:
- ժա. Բառավերջում է լսելիս, երբեք **ե** չի գրում, միշտ եւ ամենուր գրում ենք այնպէս, ինչպէս լսում ենք՝ է (թէ, գրեթէ, նախօրէ, որեիցէ, երբեւէ, օրըստօրէ, միջօրէ ելն):
- ժբ. Բառասկզբում **ե** (յէ) լսելիս միշտ գրում ենք **ե** (երբ, եթէ, եղբայր):
- ժգ. Բառամիջում ձայնաւորներից առաջ **ե** լսելիս միշտ գրում ենք է (րոպէական, գործունէութիւն, հոգէորդի): Բառամիջում **ե** լսուելիս է ենք գրում նաեւ այն բառերում, որոնց մէջ է-ի փոխարէն կարող ենք գործածել նաեւ **այ** (հէր-հայր, գէլ-գայլ, ծէր-ծայր):
- ժդ. Բառամիջում է ենք գրում բոլոր այն դէպքերում, երբ բառերը վերջանում են **աւէտ, եղէն, օրէն, էն, էք** ածանցներով (արդիւնաւէտ, ոսկեղէն, յամառօրէն, անգլերէն, երկուստէք):
- ժե. Միշտ է-ով է գրում բայերի հրամայական եղանակի յոգնակի 2- րդ դէմքի **էք** վերջաւորութիւնը (բերէք, նայէք, վերցրէք):
- ժզ. **Ամէն** արմատն ունեցող բառերից միայն **ամէն** եւ **ընդամէն** բառերն ենք գրում է-ով: Ամենա-ով կազմուած մնացած բոլոր միւս բառերը գրում ենք **ե**-ով՝ ամենայն, ամենալաւ, ամենամեծ ելն:
- ժը. Բառասկզբում **օ** լսելիս **օ** էլ գրում ենք (օր, օրինել, օդ, օրինակ): Բացառութիւն են միայն **չորս** բառ՝ **ով-ովքեր, ովկիանոս, Ովսաննա** եւ **ովագիս**, երբ թէւ **օ** ենք լսում, բայց գրում ենք ոչ թէ **օ**, այլ **ո**:
- ժթ. Բառավերջում երբ լսում ենք **օ**, գրում ենք **ոյ** (երեկոյ, ներ-

քոյ, յետոյ, պահածոյ): Բացառութիւն են միայն այո եւ քո բառերը, որոնք յ-ով չեն վերջանում:

Իւրացնելի 7 հիմնական կանոններ եւ երկու բառացանկեր

Վ, Ի-ի ուղղագրութիւնը

1. Պէտք է վերականգնուի հայոց այբուբենից 1922 թ. վտարուած **ւ** (հին) տառը, նաեւ **իւ** երկհնչիւնը: Մետրոպեան այբուբենից դուրս նետուած **ւ-ի** վերականգնումով վերականգնում է նրա թւանիշը՝ 7000-ը:
2. **Ի-ի** վերականգնումով վերականգնում է **իւ-երկհնչիւնը**. բառասկզբում եւ բաղաձայների միջեւ **իյու** լուսելիս գրում եւ արտասանում ենք ոչ թէ օտարաբան **յու**, այլ՝ հայերէն **իւ** (ծիւն, հիւր, արիւն, իւրային, հիւսել, սփիւռք, միութիւն, հարիւր, հնչիւն, իմաստութիւն, իւղ են): Օտար բառերում **յու** հնչիւնը ձայնաւորից առաջ գրում է **իու** (սիուանս, ստիուարտ):
3. Ինչպէս նշեցի, **վ** հնչիւնի համար հայերէնն ունի երկու տառ՝ **ւ** եւ **վ**: Դասական ուղղագրութեամբ **վ** հնչիւնի համար գործածում է նաեւ **ու-ն**: Որոշակի յստակ կանոնները թելադրում են, թէ **վ** լուսելիս որ դէպքում ինչ տառ պիտի գործածուի: Այսպէս.
 - ա. Հայերէնում **ւ-ով** սկսուող ոչ մի բառ չունենք: Այսինքն՝ բառասկզբում արտասանող **վ-ն** երբեք **ւ** չի գրում, այլ միշտ գրում է **վ** (վարդ, վահան, վերջ, վիզ, վկայ, վարդան, վռան): Այս բառերը բարդացուելիս, այսինքն՝ բարդ եւ ածանցաւոր դառնալիս, **վ-ի** գրութիւնը պահպանում է (գաղթավայր, պատմավէպ, անվճար, ինքնավստահ են):
 - բ. **Ի(ւ)** տառն արտասանում է **վ**, բայց երկու ձայնաւորների միջեւ, նաեւ բառավերջում ձայնաւորից յետոյ **վ** լուսելիս, գրում է **ւ** (աւան, անիւ, Երեւան, աւելի, գտաւ, հիւանդ, առաւօտ): գ. **Վ** լուսելիս **ու** ենք գրում բաղաձայնից յետոյ (Աստուած, զուարթ, թուական, Նուարդ), իսկ ձայնաւորների միջեւ գրում ենք **ւ** (սաւան, հիւանդ, օթեւան, առաւօտ):
 - դ. Բառամիջում **ո, ու, օ** տառերից յետոյ **վ** լուսող տառը երբեք **ւ** կամ **ու** չի գրում, այլ միշտ գրում է **վ**, որպէսզի **ո-ն** չդառնա **ու**, իսկ **ու-ն** աւելորդ **ւ** չունենա (սով, զով, ծով, գովել, որովհետեւ, հովանոց): Միայն **հովիւ** բառն է, որտեղ **ո** եւ **ի** (ինի) ձայնաւորների միջեւ գրում է ոչ թէ **ւ**, այլ՝ **վ**, որպէսզի բառը չխաթարուի-չդառնա **հուիւ**:
 - ե. Բառամիջին եւ բառավերջին **ա, ե, ը, եւ, ի** ձայնաւորներ-

- րից յետոյ երբեք **վ** չի գրում, այլ միշտ գրում է **ւ** (նաւթ, կարեւոր, ծրայ, Երոպա, հիւանդ, թիւ):
- զ. **Ի** տառը **ի-ին** միանալով կազմում է **իւ** բաղադրեալ ձայնաւորը, որը մի քանի բառերի սկզբում հնչում է **յու**, (իւղ, իւրացնել, իւղաներկ):
- է. Բառավերջում լուսող **վ-ն** գրում է **ւ** տառով (անիւ, արծիւ, հովիւ, շնորհիւ, պատիւ, սեւ, արեւ, հարաւ, թեթեւ):
- ը. Կրաւորական ձեւերում լուսող **վ** հնչիւնը գրում է **ւ** (բացում է, գրում է, նշում է են):
- թ. **վ** հնչող **ու-ն** տողադարձի ժամանակ վերածում է **ւ-ի** (Աստ-ուած կամ Աստ-ւած, նը-ւաճել, տեղատը-ու-թիւն են):
4. Վերականգնել **ոյ** երկհնչիւնը եւ հայերէնին պարտադրուած օտարաբան **ույ-ի** փոխարէն ամենուր գրել **ոյ** (գոյն, սոյն, նոյն, բոյս):
5. Վերականգնել **եօ** երկհնչիւնը եւ **յո-ի** փոխարէն գրել **եօ**՝ արդեօք, ընտանեօք, եօթ ելն:
6. Վերականգնել **եա-ն** եւ բաղաձայնից առաջ **յա-ի** փոխարէն ամենուր գրել **եա** (Դուրեան, մատեան, եարուս, ամեակ):

Ե, Է վերականգնել բառավերջի է-ի գրութիւնը:

- ա. Բառավերջում է լսելիս երբեք **ե** չի գրում, միշտ եւ ամենուր գրում ենք այնպէս, ինչպէս լսում ենք՝ է (թէ, գրեթէ, նախօրէ, որեւիցէ, երբեւէ, օրըստօրէ, միջօրէ են):
- բ. Բառասկզբում **ե-ով** սկսուող բառերը եօթն անգամ աւելի են, քան է-ով սկսուողները: Դրա համար պիտի յիշենք: **Ածանցական յեղադաս եան, եայ, եակ, եղէն, երէն, ենի, գեր, եցիկ, եցի, երորդ, եր-ներ, ելի-ելիք, ենք-ենց, ենական** մասնիկներ ունեցող բառերը գրում ենք **եչ-ով**. **եան** - ատեան, յախտեան, ամերիկեան, Յակոբեան (ազգանուններ), **եայ** - բրդեայ, միօրեայ, գործունեայ, ոսկեայ, արծաթեայ, **եակ** - քառեակ, հնգամեակ, 50-ամեակ, 100-ամեակ, սենեակ, **եղէն** - հրեղէն, բոցեղէն, լուսեղէն, **երէն** - հայերէն, ֆրանսերէն, անգլերէն, **ենի** - ծիրանենի, խնձորենի, սալորենի, **գեր** - գերադաս, գերիվեր, գերագոյն, **եցիկ** - ազդեցիկ, գեղեցիկ, ընկեցիկ, **եցի** - դրսեցի, կարսեցի, մշեցի, հայեցի, **երորդ** - տասներորդ, հինգերորդ.

եր-ներ - (յոգնակերտ մասնիկներ) տեղեր - պատուհաններ,
ելի-ելիք - ունելի, տեսանելի, զգալի, պառկելիք, գրելիք.
ենք-ենց - Պետրոսենք-Պետրոսենց, Երուանդենք - Երուանդենց.

ենական - հայրենական, հորենական, մորենական

գ. Բառամիջում ձայնաւորներից առաջ է լսուելիս միշտ գրում ենք է (րոպէական, գործունէութիւն, հոգէորդի): Բառամիջում է լսուելիս է ենք գրում նաեւ այն բառերում, որոնց մէջ է-ի փոխարէն կարող ենք գործածել նաեւ այ (հէր-հայր, գէլ-գայլ, ծէր-ծայր):

դ. Բառամիջում է ենք գրում բոլոր այն դէպքերում, երբ բառերը վերջանում են **աւէտ, եղէն, օրէն, էն, էք, օրէն** ածանցներով (արդիւնաւէտ, ոսկեղէն, աղէտ, անգլերէն, այժմէն, տնօրէն):

ե. Ի-ով վերջացող բառերը ածանցման կամ բարդացման դէպքերում **ե**-ով ենք գրում (ապակի-ապակեգործ, գինի-գինեգործ, ոսկի-ոսկեջուր):

զ. Բառամիջում բաղաձայնից առաջ **ե** լսելիս (բայց ոչ վերջին վանկում) միշտ **ե** ենք գրում (ամենի, ամենեւին, անհեթեթ, ատետիս, ատերակ, բերան, թզենի, ճեմարան, ճերմակ, փերեզակ են):

է. Միշտ **ե** ենք գրում նաեւ երկու բաղաձայնից առաջ (բերդ, խնդդել, հրածեշտ): Սոյն կանոնը գրաբարեան յոգնակերտ **ք** մասնիկին չի վերաբերում (օրինակ՝ անէծք, այսինքն՝ անէծքներ):

ը. Զայնաւորից առաջ է լսելիս գրում ենք է (քրէական, անէական են):

թ. Է-ով ենք գրում այն յատուկ անունների վերջաւորութիւնները, որոնց մէջ լսում է ոչ թէ **յե**, այլ՝ **է** (Յովհաննէս, Միքայէլ, Ներսէս, Արմէն, Յովսէփ): Բացառութիւն են **պետ** վերջաւորութիւնն ունեցող յատուկ անունները (Հայրապետ, Կարապետ, Հազարապետ):

ժ. Է-ով է գրում բայերի հրամայական եղանակի յոգնակի 2-րդ դէմքի **էր** վերջաւորութիւնը (բերէք, նայէք, վերցրէք):

ժա. Եթէ հոլովելիս (հիմնականում՝ սեռական հոլով) կամ բարդացման դէպքում բառամիջի է-ն հնչիւնափոխուում-դառնում է **ի**, այդ բառը՝ մօտ 15 բացառութիւններով (աշխէտ, հէն-աւագակ, խլէզ, կրկէս, հելլէն, պարէն, պարէտ, տէգ, քարտէզ են), միշտ գրում է է-ով (սէր-սիրո, տէր-տիրոջ, գէտ-գիտութիւն): Եթէ սեռականում է-ն **ի** չի դառնում, գրում է **ե** (կաթի սեր-սերի, Արաքս գետ-գետի են): Ժբ.

Է-ով ենք գրում նաեւ **աւէտ, ապէս, օրէն, էրէն, եղէն** ածականներով վերջացող բառերը (արդիւնաւէտ, մեծապէս, նրբօրէն, հայերէն, ոսկեղէն են):

7. Բառավերջում **ա**-ից եւ **ո**-ից յետոյ մեծամասամբ գրում է **յ**, որը թէեւ չի արտասանուում, բայց բառը բարդացնելուց եւ ածանցունելուց յետոյ այդ **յ**-ն գրում եւ արտասանուում է (արքայ-արքայութիւն, ծառայ-ծառայի-ծառայութիւն, Սարո-Սարոյի, հանածոյ-հանածոյի): Դա ճշտուում է այսպէս. եթէ տղայ կամ հանածոյ բառը գրում ենք առանց **յ**-ի, բայց հոլովելիս կարդում եւ գրում ենք տղայի, հանածոյի, այդ դէպքում **յ**-ն որսեղից եկաւ...

Բացառութիւններ.

ձայնաւորից յետոյ յ չի գրում հետեւեալ դէպքերում.

ա. Հրամայական բայեր՝ խաղա՛, գնա՛, մի՛ գնա: Բայց նոյն բառերի հարկադրականը կամ ժխտական դերբայը գրում է **յ**-ով (կը գնայ, չեմ գայ):

բ. Սա, դա, նա, քո դերանունները, նաեւ՝ ահա, ապա, հապա, հիմա, այո, հա:

գ. Ցատուկ անուններ՝ Աննա (բայց՝ Աննայի), Սիրիա, Սերաստիա, Մարօ (բայց՝ Մարոյի):

դ. Բառավերջում **յ** չեն յաւելում նաեւ **ա**-ով վերջացող օտար բառերը՝ գիմնագիա, լամպա են:

Ո , Օ

Մտերոպեան այբուբենում **օ** տառ չկար, օ-ն գրում էին աւ-ով (աւր- օր, կաւշիկ-կօշիկ, ծաւտ-ծուօտ): **Օ** տառը այբուբեն մտաւ Ժ-ԺԱ դարերում, երբ **աւ** երկբարբառը վերածուեց **օ** հնչիւնի: Այդ ժամանակ մտերոպեան **վո** հնչիւնի **ո** տառը գործածուում էր բաւասկզբին (ոչ, ոսկի, որակ, որոշ):

ա. Բառասկզբում **օ** լսելիս միշտ **օ** ենք գրում (օր, օրհնել, օր, օրինակ): Բացառութիւն են միայն չորս բառ՝ **ով-ովքեր**, **ովկիանոս**, **Ովսաննա** եւ **ովասիս**:

բ. Բառասկզբում **ո** (վո) լսելիս **ո** էլ գրում ենք (որդի, ոսկի, որ, ոգի են): Բացառութիւն է միայն **վոհմակ** բառը, որը թէեւ հնչում է **վո**, բայց գրում ենք ոչ թէ **ո**-ով, այլ՝ **վո**-ով:

գ. Բառամիջում **օ** լսելիս մեծամասամբ գրում ենք **ո** (գործ, բոլոր, մոլորակ, անորոշ): Բառամիջում քչաթիւ բառերում է, որ **օ** լսելիս **օ** էլ գրում ենք՝ կարօտ, խօսք, առաւօտ:

դ. Բառամիջում **օ**-ով են գրում նաեւ **օն** եւ **օնք** ածանցներ ունեցող բառերը (գործօն, կտրօն, զարթօնք):

- ե. Այն բառերը, որոնք վերջանում են **օ** հնչյունով (երեկո, անհաճո, մեծարգո), բառի վերջին անելացնում ենք **յ** (երեկոյ, անհաճոյ, մեծարգոյ): Բացառություն են միայն **այո** եւ **քո** բառերը, որոնք թէւ **օ** **հնչյունով** են վերջանում եւ պիտի վերջում յաւելինք **յ**, բայց գրում ենք առանց **յ** -ի յաւելումի:
- զ. Հայերէն ոչ մի պարզ բառ ձայնաւորից առաջ **օ** տառով չի գրում:

Յ-Հ ուղղագրութիւնը

Յ-ն բառասկզբում պէտք է կարդալ **հ**, քանի որ **հ** տառի նման է հնչում:

- ա. **Հ** լսուող բառերի մեծ մասը գրում ենք **հ**-ով, փոքր մասը, մօտաւորապէս 100 բառ, գրում է **յ** -ով:
- բ. Եթէ գրական լեզուի **հ**-ով սկսուող բառասկզբի **հ**-ն Վանի, Խոյի, Բայազէտի եւ այլ բարբառներում հնչում է **խ**, այդ բառերը գրականում գրում ենք ոչ թէ **յ**, այլ **հ** (խաց-հաց-խայ- հայ, խա- հա):
- գ. Եթէ բառասկզբի **հ**-ն հանելուց բառի իմաստը չի փոխուում, այլ մնում է նոյնը, այդպիսի բառերի բացարձակ մեծամասնութիւնը գրում ենք **յ**-ով (աջող-յաջող, օնք-յօնք, առաջ-յառաջ, արձակուել-յարձակուել): Նոյնը վերաբերում է նաեւ բոլոր այն յատուկ անուններին, որոնք խոսակցականում գործածուում են նաեւ առանց **յ** տառի: Այդ անունները գրում ենք **յ**-ով: Օրինակ՝ Յակոբ-Ակոբ, Յարութիւն- Արութիւն, Յովհաննէս- Օվանէս, Յովսէփ-Օսէփ, Յովակիմ-Օվակիմ եւ այլն: Կան **Յ**-ով սկսող եւս մի քանի յատուկ անուններ, որոնք գրում ենք **Յ**-ով. Յիսուս, Յոր, Յովհան, Յուդա, Յուսիկ, Յասմիկ:
- դ. Բաղաձայներից առաջ **հ** լսելիս միշտ գրում էք **հ**, ոչ թէ **յ** (հրաշք, հրուանդան, հմուտ, հսկայ, հնազանդ, հայարտ, հոշակ, հզօր եւն): Բացառութիւններ են միայն **դ**-ից առաջ գրող ընդամէնը 4 բառերը (**յղի, յղել, յղկել եւ յղփանայ**), երբ բաղաձայնից առաջ **հ** լսուելիս ոչ թէ **հ** է գրում, այլ **յ**:
- ե. **Մ** տառից առաջ **հ** լսող բոլոր բառերը նոյնպէս գրում են **հ**-ով (հսկայ եւ այն): Բացառութիւն է միայն մէկ բառ՝ **յստակ**:
- զ. Անանդական ուղղագրութեամբ բառավերջի **ա** եւ **ո** տառերից յետոյ միշտ գրում ենք չարտասանող **յ** տառը (ծառայ, երեկոյ, գուլպայ, փեսայ եւն): Այստեղ անհրաժեշտ է յիշել մէկ բացառութիւն: Քանի որ մեր լեզուում **յ** է գրում միայն

ա եւ **ո** տառերից յետոյ, ուստի **օ** **հնչյունով** վերջացող որոշ յատուկ անուններ (**Դրօ, Խէչօ, Մարօ, Վանօ** եւն) ուղղական հոլովում **յ** չեն ստանում, քանի որ ուղղականում վերջանում են ոչ թէ **ո** տառով, այլ **օ** տառով: Այդ նոյն բառերը սակայն երբ հոլովում ենք, **հոլովուելիս օ**-ն դառնում է **ո**: Այդ պատճառով, ուղղականում **օ**-ով վերջացող յատուկ անունները հոլովուելիս իրենց **օ**-երը դառնում են **ո**, ուստի այդ **յ**-ն ստանում են: Այսպէս՝ **Դրօ**-ն ուղղական հոլովում գրում ենք առանց **յ**-ն յաւելելու՝ **Դրօ**, քանի որ բառը վերջացել է ոչ թէ **ո** տառով, այլ **օ** տառով: Բայց սեռական կամ ցանկացած այլ հոլովում **Դրօ**-ն ոչ թէ **օ**-ով ենք գրում (**Դրօյի**), այլ՝ **ո**-ով՝ **Դրօյի-Դրօյից, նոյնը նաեւ Խէչօ- Խէչոյի- Խէչոյով- Խէչոյից, Մարօ-Մարօյի-Մարօյից** եւն:

Հայոց այբուբենը, փաստանունները եւ փառերի թոսային արժէքները

Ա-այբ -1	Ժ-ժե - 10	Ճ-ճէ - 100	Ռ-ռա - 100	Օ-օ
Բ-բեն - 2	Ի-ինի - 20	Մ-մեն - 200	Ս-սէ - 2000	Ֆ-ֆէ
Գ-գիւ - 3	Լ-լիւ - 30	Յ-յի - 300	Վ-վն - 3000	
Դ-դա - 4	Խ-խէ - 40	Ն-նու - 400	Տ-տիւ - 4000	
Ե-եչ - 5	Ծ-ծա - 50	Շ-շա - 500	Ր-րէ - 5000	
Զ-զա - 6	Կ-կեն - 60	Ո-ո - 600	Ց-ցո - 6000	
Է-է - 7	Հ-հո - 70	Չ-չա - 700	Ի-իւն - 7000	
Ը-ըթ - 8	Ձ-ձա - 80	Պ-պէ - 800	Փ-փիւր - 8000	
Թ-թոյ - 9	Ղ-ղատ - 90	Ջ-ժէ - 900	Ք-քէ - 9000	

ԱՄՓՈՓԻՉ ԲԱՌԱՅԱՆԿԵՐ

0

- օդ** գօղել, յօդ, յօդուած, վառօդ
- օթ** աղօթք, ամօթ, անօթ, եօթ, թօթափել, թօթուել (բայց թօթովել), ծանօթ, տօթ
- օղ** ղօղանց, Պօղոս, ցօղ, ցօղուն, քօղ
- օն** արտօնել, գործօն, զարթօնք, զգօն, թափօն, կտրօն, կրօն, ձօն, յօնք, տօն
- օշ** դրօշ (բայց՝ դրոշմ), լօշիկ, կօշիկ, յօշոտել, շօշափել

- ou** ալօս, գրօսնել, խօսք-խօսել (բայց՝ խոստում, խոստովանել), Սօս, սօսի,
- oun** աղօտ, առաօտ, արօտ, գօտի, կարօտ, համառօտ, հետազօտել, հօտ (ոչխարի հօտ, բայց բուրմունքի համանիշը գրում է ո-ով՝ հոտ), ծղօտ, ծնօտ, մօտ (բայց՝ մրոտ, կեղտոտ)
- op** եղբօր, հօր, մօր, գօր (ք), թափօր (բայց՝ Թաբօր լեռ), հզօր, Մեծամօր, մօրուք, յօրանջել, յօրինել,
- օրէն** լրջօրէն, մեղմօրէն
- օք** արդեօք, իրօք, խելօք, օրօք, ցաւօք, առօք-փառօք

Հ հետ- հետք, հետել, որովհետեւ, հետագիծ, հետամուտ, հետազօտել, հետախոյզ, հետապնդել, հետաքննել:

Յ յանիրաւի, յանձն, յանձնել, յանձնաժողով, յանպատրաստից, յանուն, յասմիկ, յարձակուել, յարատեւ, յարգելի, յարդ (դարման), յիրաւի, յղի, յղել, յօգուտ, յօղս ցնդել, յտնկայա:

յա յագենալ (բայց՝ հագնել, հագագ), յախճապակի, յախտն, յաղթել, յաճախ, յամառ, յայտ, յայտնի, անյայտ, բացայայտ, ակնյայտ, արտայայտել, յանգ, յանգել (յանգել ինչ որ բանի, բայց՝ հանգիստ, հանգչել, հանգանակ), յանդիման, յանդուգն, յանկարծ, յանցանք, յապաղել, յապաւել, յաջող, յաջորդ, յառել, յասմիկ, յատակ, յատուկ, յարաբերութիւն, յարգանք, յարդարել, յարել (միանալ, բայց՝ հարել-հարուածել-խփել), յարիւր, յարկ շէնքի (բայց՝ հարկ-պարտատրութիւն), յարմար, յարութիւն-Յարութիւն, յաւակնել, յաւելում, յաւերժ, յաւէտ, յաւիտեան, յափշտակել, յարաբերութիւն-փոխյարաբերութիւն:

յար (միշտ) յարատեւ, յարակայ (բայց՝ հարել-հարուածել-խփել):

յարա յարաբերութիւն, յարակատար (բայց՝ հարեան):

յարկ յարկաբաժին

յեա երեկոյեան, ախոյեան, հայեացք, կայեան, դայեակ, Հմայեակ, Աղայեան, Սարոյեան (բայց՝ Գայիանէ):

յեղ յեղափոխական, յեղաշրջում, ծայրայեղ, խելայեղ, յեղեղուկ (բայց՝ հեղել, հեղինակ, հեղուկ):

յեն յենուել, յենարան (բայց՝ ծովահեն, հենք):

յետ (դէպի յետ, բայց՝ հետ-միասին):

յետ-յետա յետ, յետպատերազմեան, յետգրութիւն, յետայսու, յետոյ, յետելից, յետին, յետնորդ, յետոյք, յետաձգել, յետադարձ,

յետամնաց, յետադաս:

յի յիմար, յիսուն (բայց՝ հինգ):

յղ յղի, յղել, յղկել, յղփանալ:

յո յորելեան, յոգնած, յոգնակի (բայց՝ հոգի, հոգալ, հոգս), յոխորտալ, յոռետես, յովագ, յորդ, յորդոր, յորձանք:

յոյ յոյս, յոյն-Յունաստան, յոյզ, յոյժ (բայց՝ հուժկու):

յու յուզել, յուղարկաւորել, յուշել, Յունան, Յունիկ, յստակ:

յօ յօդ, յօդուած, յօժար, յօնք, յօշոտել, յօրանջել, յօրինել:

Է

էլ Միքայել, Սամուէլ եւ աստուածաշնչեան այլ անունները, բացի Աբել-ից, գրում են էլ-ով (բայց՝ Առաքել, Գնել, Արիստոստել, Մարսել):

էն Արսէն, Արսէն, Շահէն եւն (բայց՝ Արսն):

էն/կէն արդէն, ծուէն, նորէն, հեղէն, ծակոտկէն, հիւսկէն:

էս-էաս Վաղէս, Յովհաննէս, Անդրէաս (բայց՝ Գալիլիա, Հերակլեա):

էո լեզէոն, պանթէոն, նեոպատոնիզմ, Գէորգ-Գետորգ, Գեղէն, Թէոդոս, Թադէոս, Բարթօլոմէոս:

էք արժէք, կողպէք, նշանդրէք, ջրօրհնէք, կաղանդչէք (բայց՝ ամենուրեք, երկուստեք):

է-ակիր այն բառերը, որոնց մէջ հնչող **ե-ն** սեռականում փոխում է **ի-ի** (սէր-սիրոյ, գէտ-գիտութիւն, գէր-գիրութիւն, մէզ-միզել եւն), գրում են է-ով. օրինակ՝ անէծք, ապաւէն, գրագէտ, հագէտ (բայց՝ Արաքս գետ, գետին), գէր (մսեղ, բայց՝ գերագոյն, գերբնական), դէզ, դէմ, դէմք, ընդդէմ, դէպի, դէպք, հագուադէպ, գէնք, անգէն, ծէս, անկէզ, ողջակէզ, կէս, հանդէպ, հրաւէր, ձէթ, մէզ, մէզ-միզել (բայց՝ մեզ մօտ), մէջ, մէջք, յաւէտ (յաւիտեան), նուէր, շէկ, շէն, շէնք, հրէջ (շիջել-շիջանել), անշէջ, պատուէր, պարտէզ, պէս-պէս, ինչպէս, այսպէս, պէտք-պիտոյ (բայց՝ պետ, Հայրապետ), սէր-սիրել (բայց՝ սերել, սերունդ եւն), ջրվէժ, գահավէժ, վէճ, վէմ (վիմակառոյց), վէպ, վէրք, վրէժ, անվրէպ, ժամանակավրէպ, տէր, փոխարէն, քէն-քիսօտ, օրէնք, տնօրէն:

է-ալլուիա, աղէտ, աղուէս, ամէն, ամէնքը, ընդամէնը (բայց՝ ամենալաւ, ամենայն, ամենուրեք), առնէտ, ասպարէզ, բզէզ, գահրնկէց, երէց, գէթ, գոմէշ, եղէզ, երէկ (բայց՝ երեկոյ), Երուսաղէմ, թէւ, թէկուզ, թէպէտ, ժապաւէն, խէժ, կէտ (եւ նշանը, եւ կենդան-

նին), կրկես, հենց, հրէշ (բայց՝ հրեշտակ), մէկ (բայց՝ մեկին, մեկուսի, մեկնել), մէն-մի, մողէս, պատնէշ, պատճէն, պարէն, պարէտ, պեպէն, տարեցտարի (բայց՝ տարեց), քարտէզ, քրէական:

Է-ով գրուող այն պարզ, բարդ կամ ածանցաւոր բառերը, որոնք պէտք է մտապահել. Դարձեալ մէջբերում են Փարիզի «Մաշտոց» կառոյցի հրապարակած «Ուղղագրական կանոններ» ձեռնարկից (www.association-machtoz.com/regles_orth_arm.html):

Աթէնք (բայց՝ աթենացի), ախտաժէտ, ակնդէտ, Ալեյուիա, աղեկէզ, աղէտ, աղուէս, ամէն, այսպէս, այդպէս, այնպէս, անգէտ, անզէն, անէծք, անշէջ, անպէտ, աշխատասէր, աշխէտ, ապաւէն, ապաքէն, ապօրէն, առնէտ, ասպարէզ, աստղագէտ, արալեզ, արէն (հայերէն, յունարէն, չինարէն), արդէն, արժէք, բանասէր, բարեսէր, բզէզ, բուէճ, բրէտ, գահավէժ, գէթ, գէշ, գէս, գէտ (գրագէտ, տգէտ), գէր, գմբէթ, գոմէշ, գրագէտ, դէզ, դէմ, դէմք, դէն, դէպի, դէպք, դէտ, ելակէտ, ելեւէջ, երէց, Երուսաղէմ, զէնք, զէնիթ, էակ, էգ, էշ, ընդդէմ, թէ, թէն, թէժ, թէկն, թէպէտ, ժամկէտ, ժապաւէն, լեզնոն, լէզ, խաբէութիւն, խէթ, խէժ, խլէզ, ծակոտկէն, ծէս, ծովահէն, ծուէն, կէս, կէտ, կողպէք, կուզէկուզ, կրկէս, կրէտ, հակամէտ, հանդէպ, հանդէս, հէգ, հեյլէն, հէն, հիւսկէն, հրաւեր, հրակէզ, հրէշ, հրշէջ, ձէթ, մէգ, մէզ, մէկ, մէն, մէջ, մէտ, մողէս, յարալէզ, յաւէտ, յետադէմ, նշանդրէք, նուէր, Շահէն, շէկ, շէն, շէնք, ողջակէզ, որպէս, ուղէշ, չէզոք, պանթէն, պարէն, պարէտ, պարտէզ, պէտ(ք), (չշփոթել «պետ» բառի հետ), պնակալէզ, ջրվէժ, ջրօրհնէք, սէգ, սէզ, սէր, սպառազէն, ստէպ, վէզ, վէժ, վէճ, վէմ, վէպ, վէս, վէրք, վրէժ, վրէպ, տեսակէտ, տէգ, տէր, տէրունական, տէրտէր, տնօրէն, փոխարէն, փորձագէտ, փրփրադէզ, քարտէզ, քէն, քնէած, քրէական, օրէնք:

Բացառութիւն – Որոշ բառերի է-ն չի հնչիւնափոխուում (օրինակ՝ աղէկութիւն, աշխէտ, երէկուան, հէն, կրկէս, խլէզ, հեյլէն, պարէն, պարէտ, տէգ, տնօրէնութիւն (որե՛ն հիմնարկի վարչական մարմինը գրում է մեծատառով, չշփոթել «տնօրինութիւն» բառի հետ, որ նշանակում է ղեկավարման ձեւը, ուստի գրում է փոքրատառով), քարտէզ:

Է-ն չի հնչիւնափոխուում նաեւ կցական բարդութիւններում (օրինակ՝ երէցկին, մէջտեղ, թէկուզ, թէպէտ, չէզոք:

ՅԱԻԵԼԵԱԼ ԲԱՌԱՑԱՆԿ

Օ աղօրիք, անօթ, անօթի, անօսր, ապարօշ, առաւօտ, արտօնել, արտօսր, արօր, բօթ, դօղօշ, եօթն, զգօն, զօդել, զօրք, թօն, թօշնել, լօլիկ, լօշտակ, լօռ (ուտ), խօլ, խօսք, կրօն, ճօճել, Մօրիկ, նարօտ, պարեգօտ, Պոշ, Պօղոս (բայց՝ Պողիկոս, Պողիկարպոս, Ապօղոս), սքօղել, սօսափին, ցող, ցողուն, քօղ, օրօր:

Յ յագենալ, Յաբէթ, Յազկերտ, յածել, յակինթ, յամենալ, յամառ, յամրաքայլ (բայց՝ համր-մունջ), բայց ամսանունը հ-ով ենք գրում՝ հոռի), յովատակ, Յովել, յորջորջել, յուշկապարիկ, յուրթի, յուռուք, Յուստինոս, Յուստինիանոս:

Է Աթէնք (բայց՝ աթենացի), ախտաժէտ, ակնդէտ, Ամաղէկ, հրեայ (բայց հրէական, Հրէաստան), աշխէտ, ալէտ (բուրաւէտ, ծաղկաւէտ), արալէզ, արէն (չինարէն-հայերէն), Արձէշ, Բաղէշ, Բէլ, բուէճ, բրէտ, գեղուղէշ, գէշ-գիշատիչ-գիշատել (բայց գէշ-վատ), գէջ, գէս, գէտ (գրագէտ, տգէտ), դէտ-դիտող, խլէզ, խէթ, ծուէն, կարեւլէր հէզ, հէն-աւազակ (բայց՝ հենել-հենուել), ծովահէն, հէնք (գործուածքի հիմած մասը, փոխաբերաբար ինչ-որ բանի հիմքը), մէջ, մէտ (հակամէտ-կենտրոնամէտ, հակամէտ), Մժէժ, Մէթ, Մէմ, ստէպ, Վարդգէս, վէզ, վէս, վէտ, արդիւնավէտ, տէգ, քարավէժ, քարընկէց, Քորէք:

«Ամփոփիչ բառացանկերը» իրաւագիտութեան դոկտոր, պրոֆէսոր Թոմ Սամուէլեանի:

ՈՒՂԵՅՈՅՅ-ԴԱՍԱԳՐՔԵՐ

1. Եղիեայեան Հ. Ս., Ոսկեփոքիկ հայերէն ուղղագրութեան (ծօցի համար), Պլովդիւ, 1941:
2. Արեղեան Արտաշէս, Ուղղագրական բառարան հայոց լեզուի, Շտուտգարտ, 1947:
3. Հրաչեայ Աճարեան, Գրաբարի ուսուցիչ, Երեւան, 1954 թ.:
4. Արեղեան Արտաշէս, Ուղղագրական բառարան, Իրան, 1962 թ.:
5. Իշխանեան Ռաֆայէլ, Դասական ուղղագրութեան կանոններ, Երեւան, 1991 թ.:
6. Աւանդական ուղղագրութեան ուսուցման ձեռնարկ, աշխատասիրութեանը Թ. Սամուէլեանի, Տ. Յարութիւնեանի, Արմէն Սիմոնեանի, Երեւան, 2005 թ.:
7. Գոճանեան Պօղոս, Ուղեցոյց դասական ուղղագրութեան, Երեւան, 2006 թ.:
8. Գոճանեան Պօղոս, Դասական գրաբարի գործնական քերականութիւն, Վիեննա-Երեւան, 2011 թ., էջ 7-23:
9. Փարիզի «Մաշտոց» կառոյցի «Ուղղագրական կանոններ, Մեսրոպեան ուղղագրութեան տարբերուող կանոնների ուսուցումը» ձեռնարկի՝ հայերէնի նոյնանիշ բառերի ցանկը հատուածը:
Կայքէջ՝ www.association-machtoz.com/regles_orth_arm.html:

ՑԱՆԿ

ՄոհՏՔ	5
ԴԺԲԱՂԴ	11
ՍԻՐՏՍ ԵՐԳՈՒՄ Է ԱՅՄՊԷՍ	23
ԱՅՈ, ՄԵՐ ԱՇԽԱՐՀՆ ԱՅՄՊԻՍԻՆ Է	23
ԻՄ ԵՐԳԸ	24
ԳԻՒՂՆ Է ՁԵՋ ԿԱՆՉՈՒՄ	26
ՄԻՆԻԱՏՈՒՐ	27
ՏՆՈՒՐ ԱԿԿՈՐԴՆԵՐ	28
ՆՈՒԷՐ ԱՐ - ին	28
ՉԷ, ՉԷ	29
Ա-Ի ԱԼԲՈՍՈՒՄ	29
ՍԻՐԵԼԻ ԳԵՐՈ	30
ԱՖՈՐԻՋՄՆԵՐ	31
«ՄԱՀԻԱՆ ԵՐԳԵՐ»-ԻՑ	32
ԻՄ ՄԱՐԳԱՐԷՆ	32
ԱՇՆԱՆ ԱԼԲՈՍԻՑ	34
ԷԼ ԻՆՉ ՄԻ ԱՍԷՔ	34
ԱՖՈՐԻՋՄՆԵՐ	35
ԴՈՒՔ ԳԻՏԷՔ	37
ԽԵՆԹԻ ԱԿԿՈՐԴՆԵՐ	38
ԷՊԻԳՐԱՄՆԵՐ	39
ԿԻՆԸ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ	41
ՏԱՊԱՆԱԳԻՐ	42
ԻՆՉՈ՞Ւ ԵՍ ՏԻՈՒՐ	43
ՅՈՒՍԱՀԱՏ ԱԿԿՈՐԴՆԵՐ	44
ԱՂՕԹՔԻ ԵՐԳԵՐԻՑ	45
ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ	46
ԻՄ ԱՂՕԹՔԸ	47
ԱՆՎԵՐՆԱԳԻՐ	48
ՆԱԻԱՏՈՐՄԸ ԵՒ ԿԻՆԸ	49
ԷՍ ԳԻՇԵՐԸ	49
ԻՄ ԱՂՕԹՔԸ	50
ԻՄ ՍԵՐԸ	51
ՄԵՈՆՈՂ ՄՐՏԻ ՀԵՔԻԱԹԸ	52
ԿԱՄԱԻՐ ԶՈՅԳԸ	55
ՄԱՐՏԱԿԱՆ ԽՈՇԵՐ	62
ՀՈՎԻՒ ՍԵՐԸ	66
ԴԷՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՏԱՃԱՐԸ	71
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՆԹԵՕՆԸ	73
ԿՈՉ ՀԱՑ ԶԻՆԻՈՐՆԵՐԻՆ	74
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՆԹԵՕՆԸ	75
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՆԹԵՕՆԸ	76
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՆԹԵՕՆԸ	77
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՆԹԵՕՆԸ	79

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՆԹԵՕՆԸ ԳԵՐԵՋՄԱՆԱՏԱՆԸ	81
ՄԻՆԻԱՏՈՒՐ	82
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՆԹԵՕՆԸ	83
ՄԻՆԻԱՏՈՒՐ	84
ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆԻ ԶԱՂԱՔԱԿԱՆ «ՀԱՅՐ ՄԵՐ» Ը	85
ԻՄ ԵՐԳԸ	86
ԷՍ ԳԻՇԵՐԸ	87
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՆԹԵՕՆԸ	89
ՀԱՆ ԽԱՉԱԿԻՐԸ	89
ՄԱՀՆ ԷԼ Է ՍԻՐՈՒՄ ԳԵՂԵՑԻԿԸ	89
ՅՈՒՋԻԱԾ ԾՈՎԸ	90
ԿԱՐՄԻՐ ԱՄԱՌԱՆՈՑ	91
ՈՒՋԵՑԻ ՈՐ ՉԱՐՏԱՍՈՒԵՄ	92
ԵՐԱՋ	94
ՔԵՋԻ ՀԱՄԱՐ	95
ԱՉՔԵՐԷՂ	96
ՅՈՒՇԵՐՈՒՄ ՈՐ ԿԱՆ	97
ԷՆՈՐ (ՀԻՄԻԿ)	98
ԷՆՈՐ (ԱՌԱՋ)	99
ԱՌԻԱՆԵԻ	100
ՔԵՋԻ	101
ՍԻՐԱԾԻՍ	102
ՉԵՄ ՄՈՐՆԱՐ	103
ՀՐԹԻՈ	104
ԱՆՎԵՐՆԱԳԻՐ	105
ՀԱՄԹԱՓՈՒՄ	106
ՉՕՆ Ս.Թ. ին	108
ԿԱՐՆՈՑ ԱԻՐԱԿՆԵՐՈՒՆ ՍԷՋ	109
ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻ ՈՒՋՄԻԿ ԹԵՐԹԻՆ	110
ՄՕՐՍ	111
“ԱՋԱՏԱՄԱՐՏԻ”	114
ՅԻՇԱՏԱԿԻՆ	114
ԵՂՐՕՐՍ	117
ԿԱՊԱՆՔՆԵՐ	119
ԱՆՎԵՐՆԱԳԻՐ	120
ՔՕՆՖՐԱՆՍԻՆ ԱՌՋԵԻ	121
ԱՆՎԵՐՆԱԳԻՐ	125
ԿՈՐՍՈՒԱԾ ՍԵՐԸ	126
ԱՆՎԵՐՆԱԳԻՐ	127
ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ	129
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՇԻ ՄՏԱՄԱՍՈՒՆՔՆԵՐԻՑ	135
ՅԱԻԵԼՈՒԱԾ	199
ՄԵՍՐՈՊԵԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՐՃԱՌՕՏ ՈՒՂԵՑՈՑՑ	199
ԱՄՓՈՓԻՉ ԲԱՌԱՑԱՆԿԵՐ	209
ՅԱԻԵԼԵԱԼ ԲԱՌԱՑԱՆԿ	213
ՈՒՂԵՑՈՑՑ-ԴԱՍԱԳՐՔԵՐ	213

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

ԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Կազմեց, առաջաբանը և ծանոթագրությունները
գրեց Ռաֆայել Համբարձումեանը
Խմբագիր՝ Վահան ծայրագոյն վարդապետ Օհանեան



ԷԴԻՏ ՊՐԻՆ
Իրատարակչություն
EDIT PRINT
Publishing House



Պատմաբան, ազգային, քաղաքական և հանրային գործիչ, հրապարակագիր, հայ ազգային էնթուսիստներ սահմանած հիմնադրոյթների հեղինակ, հայոց ազատագրական պայքարի նորագոյն փուլի գաղափարախօս, ծն. 1948 թ., ազգային-քաղաքական գործունէութեամբ զբաղուիմ է1970 թուականից: «Թուղթ ընդհանրական» (1980 թ.) և «Յորդորակ» (1987 թ. օգոստոս) քաղաքագիտական աշխատութիւններում հիմնադրել ու կանխարեւել է հայոց ազատագրական պայքարի բռնկումը, կոմունիստական կայսրութեան վերացումը և Հայաստանի անկախացումը: Այդ աշխատութիւնները իր խմբագրութեամբ լոյս տեսնող «Անկախութիւն» և «Ազատ Հայր» թերթերում

գրագրուած 1988-1990 թթ. քաղաքական յօդուածների հեղ միասին էական ազդեցութիւն են թողել արցախեան ազատամարտի (համայնամարտը անուանադրեց Արցախական) և ընդհանրապէս Հայաստանի և Սփիոքի քաղաքական մտքի զարգացման վրայ: 1987 թ. հոկտեմբերի 17-ին Օսերայի հրապարակում անցկացրել է կայսրութեան սահմաններում առաջին քննադատական-քաղաքական հանրահաւարը: 1988 թ. մայիսի 28-ին կազմակերպեց և եռագոյն դրօշներով անցկացրեց ՀՀ անկախութեան 70-ամեակի 1920 թ. ի վեր առաջին փոսակատարութիւնը Հայաստանում: 1989 թ. ապրիլին հիմնադրած «Ազգային Միասնութեան ուխտ» կառոյցի ծրագրի մէջ մտնելով Հայաստանը հանրային նորընտրելի խորհրդարանով անկախացնելու ծրագիրը, որը նոր ուղի բացեց Արցախեան ազատամարտում: Ծրագիրը քաղաքական բոլոր կառոյցների ջանքերով իրագործելու նպատակով նա 1989 թ. մայիսի 7-ին հիմնեց Նախախորհրդարանը: Նշուած գաղափարը 1989 թ. օգոստոսի 16-ին իրագործեց Արցախի քնակչութիւնը՝ սրելով ելով կրեմլեան բռնավարչախմբից անկախացած ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԳԱՐԱՆՆ ՌԻԿՈՒՎԵՐՄԵՆԹԻՒՆԸ (Ազգային Խորհուրդ) և դատնալով Մոսկուայից անկախ գործող անդրանիկ տարածքը վարչաւեան բռնադաշնութիւնում: Ռ. Համբարձումեանն այդ տարիներին զբաղուիմ էր նաև Հայկ Նահապետի հիմնած, հայոց Ոսկեդարում մշակուած և Ը դարում Ուխտ մամկունէից անուանուած, 1919-1930-ական թթ. Գարեգին Նժդեհի և Հայկ Ասպրեանի վերականգնած-լրացրած հայոց ազգային գաղափարախօսութիւնը (ցեղակրօնութիւն-տարօնականութիւն) վերականգնելու քարոզչութեամբ: Նա 2000-2011 թ թ. կազմակերպեց և անցկացրեց նախ՝ Սեյի ղաշնագրի ստորագրման 80-ամեակին նուիրուած առաջին գիտաժողովը և ղաշնագիրը կնքելու 70, 75, 81-83 և 85 ամեակների նշումը, ապա՝ 2006-2007 թթ. Հայաստան-Թուրքիա սահմանը ճշտելու նպատակով միջազգային Իրաւարար վճիռ-քարտէզը կազմած Վուդրո Ուիլսոնի ծննդեան 150-ամեակը: 2007 թ. նոյեմբերի 22-ին ՀՀ ԳԱԱ ակադեմիայում Ռ. Համբարձումեանի անցկացրած՝ «Վուդրո Ուիլսոնի միջազգային Իրաւարար վճիռ մասին» առաջին գիտաժողովը էական նշանակութիւն ունեցաւ հայկական հարցը ուիլսոնեան Իրաւարար վճիռ-քարտէզի կենսագործումը դարձնելու գործում, որը համահայկական գործելակերպի վերածուեց 2010 թուականին, երբ Ռ. Համբարձումեանը նախաձեռնեց և Հայաստանում և Սփիոքում կազմակերպեց Իրաւարար վճիռ-քարտէզի հրատարակման 90-ամեակի նշումը:



ԷՆԻՑ ՊՐԵՏ
հրատարակչություն

